

Ն. Յ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Մ. Դ. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ
Ռ. Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ARMENIAN MOUNT ARARAT



ՀԱՅԱՍՏԱՆ-ՀԱՊՈՒԻԱ



NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

YEREVAN INSTITUTE OF THE HUMANITIES

HOVHANNISYAN N. H.
AMIRKHANYAN M. D.
KARAPETYAN R. K.

ARMENIA-JAPAN

POLITICAL, ECONOMIC, CULTURAL
AND SCIENTIFIC RELATIONS

A 11
8.9.94
8.9.94

YEREVAN 2005

アルメニア国立科学アカデミー
東洋学研究所

イエレヴァン人文大学

ホヴァニッシャン N. H.
アミルハニヤン M. D.
カラペチャン R. K.

アルメニア・日本

政治・経済・文化・科学的な交流

イエレヴァン 2005

947+ 952.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ԵՐԵՎԱՆԻ ՑՈՒՄԱՆԻՏԱՐ ԻՆՍԻՏՈՒՏ

Ա. Յ. ՋՈՎՃԱՂՆԻՍՅԱՆ
Մ. Դ. ԱՄԵՐԻԽԱՆՅԱՆ
Ռ. Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԲԱՊՈՆԻԱ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՏԱՏԵՍԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

A II
89897



Ե Ր Ե Վ Ա Ն 2 0 0 5

*Տպագրվում է Հայաստանի գիրուրյումների ազգային ակադեմիայի
արևելագիրուրյան իմադիրութիւն գիրական խորհրդի որոշմամբ*

Գլխավոր խմբագիր՝ Նիկոլայ Յովհաննիսյան, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

*Աշխագրությունը կարարվել է Շապոնիայի հետ
գիրական համագործակցության ժրագրի շրջանակներում*

Ծրագրի գիտական ղեկավար՝ Նիկոլայ Յովհաննիսյան (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Ասիայի բաժնի վարիչ, ՀՀ արտաքին գործերի նախարարության Դարավարևելյան Ասիայի երկրների վարչության պետ), Միքայել Ամիրյանյան (բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Երևանի հունականիտար ինստիտուտի ռեկտոր)

ՀՏԴ 327+339.9

ԳՄԴ 66.4

Հ 854

Յովհաննիսյան Ն.Յ. և ուրիշ.
ՀԱՅԱՍՏԱՆ-ԲԱՊՈԽՆԱ. ԶԱՐԱՐԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ
ԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԱՎԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ/Յովհաննիսյան Ն.Յ., Ամիրյանյան Ս.Դ.,
Կարապետյան Ռ.Վ.-Եր.: «Զանգակ-97», 2005.- 180 + 144 (ճապ.) էջ:

Աշխատությունը, որը հրատարակվում է հայերեն և ճապոներեն, առաջին փորձն է՝ ամփոփ կերպով ներկայացնելու հայ-ճապոնական տարարնույթ շփումներն ու հարաբերությունները նորագույն շրջանում: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել Հայաստանի և ճապոնիայի քաղաքական, տնտեսական և գիտամշակութային հարաբերությունների լուսաբանմանը 1991 թ. հետո, երբ Հայաստանը վերագրավ իր պետական անկախությունը, և պաշտոնական դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին Հայաստանի երրորդ հանրապետության ու ճապոնիայի միջև:

Ուսումնակիրությունը պարունակում է Հայաստանի համառոտ պատմաշաշար-հագրական ակնարկ, որը հասցեագրված է օստարագիք ընթերցողին:

Աշխատության բաժինների հեղինակներն են՝ Յովհաննիսյան Ն. Յ. (նախարար, գլուխ 1), Կարապետյան Ռ. Վ. (գլուխ 2, 3), Ամիրյանյան Ս. Դ. (գլուխ 4) հեղինակ և գլխի պատասխանատու):

Նախատեսվում է միջազգայնագետների, արևելագետների, պատմաբանների, մշակույթի բնագավառի մասնագետների և ընթերցող լայն շրջանների համար:

**Հ 0802000000
0003(01)-2005 2005**

ԳՄԴ 66.4

ISBN 99941-1-010-1

© Յեղինակներ, 2005 թ.
© «Զանգակ-97», 2005 թ.

Ծրագրի հովանակոր՝ «Ճապոնական հիմնադրամ», *Sponsor of the Programme: «The Japan Foundation», Tokyo*
主催機関 国際交流基金

Թարգմանությունը հայերենից ճապոներեն՝ Կ. Գ. Զարամյանի
ճապոնական տեքստի խմբագիր՝ Կումիկո Կոբայաշի

アルメニア語から日本語に翻訳 カラミヤン カリネ
日本語校正 小林 久美子

本研究の出版はアルメニア国立科学アカデミー東洋学研究所
の学会の決議で認められた

編集長：歴史学博士、ニコライ・ホヴァニッシャン教授

本研究は日本国との科学的協力のプログラムの枠内である

科学指導者：歴史学博士、教授、アルメニア国立科学アカデミー東洋学研究所所長 ニコライ・ホヴァニッシャン

共同長：歴史学修士 ルベン・カラペチヤン、アルメニア国立科学アカデミー東洋学研究所アジア諸国部長、外務省東洋アジア諸国部長

文学博士、教授 ミカエル・アミルハニヤン、イエレヴィアン
人文大学学長

本書の各章の作者：

N. H. ホヴァニッシャン 入門、第1章

R. K. カラペチヤン 第2章、第3章

M. D. アミルハニヤン 第4章 (筆者、担当者)

アルメニア語と日本語で出版された本研究は近代のアルメニアと日本の様々な交流を総括し発表する初めてのものである。特に1991年、アルメニアが独立し、第三次アルメニア共和国が日本国と外交関係を結んで以来の両国の政治・経済・文化・科学的な交流を中心として書かれている。

本書は外国人に向けたアルメニア史の概要を含んでいる。
本書は国際学者、東洋学者、歴史学者、文化学者および一般読者に向けられている。

Նախարան

Րայաստանը և ճապոնիան գտնվում են միկնույն մայրցամաքում՝ Ասիայում, սակայն նրա տարրեր ծայրամասերում և միմյանցից հեռու են հազարավոր կիլոմետրեր: Բայց դա խոչընդոտ չէ, մանավանդ մեր օրերում՝ գիտության և տեխնիկայի աննախաղեա զարգացման դարաշրջանում, նրանց միջև տարաբնույթ մոտ հարաբերություններ հաստատելու և զարգացնելու համար: Իսկ դրա համար անհրաժեշտ է փոխադարձ հետաքրքրություն և քաղաքական կամքի դրսւորում: Բարեբախտաբար, այս երկու գործոններն ել առկա են:

ճապոնիան աշխարհի ամենազարգացած երկրներից մեկն է, որը հասել է տպավորիչ հաջողությունների գիտության, տեխնիկայի և մշակույթի ասպարեզներում և առաջատար դիրքեր է գրավում համաշխարհային տնտեսության մեջ:

Յայաստանն աշխարհի իինավուրց երկրներից մեկն է իր ինքնատիպ քաղաքակրթությամբ, որը համաշխարհային մշակույթը հարստացրել է անկրկնելի կորողներով: Նա ունի բարձր զարգացած մշակույթ և հայտնի է իր գիտական ներուժով ու այսօր զգտում է ստեղծել ժամանակակից առաջավոր տնտեսություն՝ օգտագործելով զարգացած երկրների, այդ բվում նաև ճապոնիայի ուսանելի փորձը:

Չնայած աշխարհագրական հեռավորությանը՝ այս երկու երկրների միջև հաստատվել են բարեկամական բնույթի քաղաքական, տնտեսական և մշակութային կապեր, որոնք զարգանում են հաջողությամբ՝ իշխան երկու երկրների: Յայերը և ճապոնացիները միմյանց նկատմամբ տաօտում են խոր հարգանք և բարձր են գնահատում միմյանց հոգեւոր և նյութական արժեքները:

Քոլոր տարբերություններով հանդերձ Յայաստանը և ճապոնիան բազում նմանություններ ունեն՝ բնական հարուստ պաշարների բացակայություն, հզոր մարդկային և մտավոր ներուժ, աշխատասիրություն, հակում գիտության նկատմամբ, պատմական հարուստ անցյալ, ազգային ինքնատիպ մշակույթ և այլն:

Ե՛վ Յայաստանում, և ճապոնիայում մարդը և բնությունը գտնվում են մշտական մրցակցության ու պայքարի մեջ: Երկուսն ել գտնվում են ակտիվ սեյսմիկ գոտիներում: ճապոնիան նույնքան լեռնոտ երկիր է, որ-

քան Հայաստանը: Անգամ նման են երկու երկրների խորհրդանիշ լեռներ՝ բիբլիական Արարատը և Ֆուձիյաման:

Սակայն բնության դաժանությունը և ժլատությունը Հայաստանում և ճապոնիայում փոխհատուցվում են հայ և ճապոնացի ժողովուրդների ստեղծագործական կենսաուժով, աշխատասիրությամբ և համառությամբ: Նրանք կարողացել են մշտապես համընթաց զնալ համաշխարհային զարգացումների հետ: Հայաստանը, հանդիսանալով աշխարհում առաջին քրիստոնյա պետությունը և կարևոր ռազմական դիրք գրավելով Արևմուտք-Արևելք և Յյուսիս-Դարավ տանող ճանապարհների խաչմերուկում, եղել է պատմական «Մետաքսի ճանապարհի» ամենաակտիվ մասնակիցներից մեկը: Իսկ ժամանակակից աշխարհն անհնար է պատկերացնել առանց ճապոնիայի նվաճումների առաջավոր տեխնոլոգիաների, ելեկտրոնների ասպարեզներում:

Հայաստանի և ճապոնիայի միջև միջպետական հարաբերությունների հաստատման առաջին քայլերն արվել են 1918–1920 թթ., երբ Վերականգնվեց հայոց պետականությունը, և կազմավորվեց Հայաստանի առաջին հանրապետությունը: Չնայած այդ հանրապետության կարճատև գոյությանը և նրա առջև կանգնած դժվարություններին՝ նա կարողացավ դիվանագիտական հարաբերություններ հաստատել աշխարհի մի շարք պետությունների հետ, բացել իր դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսությունները, այդ բվում նաև ճապոնիայում: Այս երկրում Հայաստանի առաջին հյուպատոսը եղել է Դիանա Արգարը:

Հայ և ճապոնացի ժողովուրդների միջև հարաբերությունները որակական նոր մակարդակի բարձրացան 1991 թ.: Հայաստանի անկախության հոչակումից և երկու երկրների միջև 1992 թ. սեպտեմբերի 7–ին դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո: Այդ պահից սկսած հայ–ճապոնական հարաբերությունները զարգանում են որպես միջպետական հարաբերություններ, որոնք ներառնում են քաղաքական, տնտեսական, առևտրաֆինանսական, գիտական, մշակութային և մարզական ոլորտները:

Այդ բոլորը հիմք հանդիսացան նախաձեռնելու սույն աշխատությունը, որն առաջին լուրջ փորձն է ամփոփ կերպով հետազոտելու և ներկայացնելու հայ–ճապոնական երկկողմ հարաբերությունները, որը, համոզված ենք, ունի ոչ միայն գիտական, այլև քաղաքական նշանակություն:

Աշխատությունը կազմված է չորս գլուխներից, որոնցից յուրաքանչյուրը նվիրված է որոշակի հիմնախնդրի լուսաբանությանը:

Առաջին գլխում համառոտակիորեն տրված են Հայաստանի զարգացման պատմական ուղին և պետական, քաղաքական և հոգևոր զարգացումները դարերի ընթացքում: Այն գրված է հաշվի առնելով գլխավո-

բապես օտար, տվյալ դեպքում ճապոնացի ընթերցողին, որին շատ բան հայտնի չէ Հայաստանի մասին:

Երկրորդ գլխում ներկայացված է հայ-ճապոնական քաղաքական հարաբերությունների ողջ պատմությունը և ժամանակագրությունը: Այս-տեղ ընդգծված է այն միտքը, որ Հարավային Կովկասում ռազմավարական կարևոր դիրք գրադարձնող Հայաստանը՝ որպես տարածաշրջանի առավել կազմակերպված և կայուն երկիր, կարող է վստահելի գործընկեր լինել ճապոնիայի համար:

Երրորդ գլխում նվիրված է Հայաստանի և ճապոնիայի համագործակցությանը տնտեսական ոլորտում:

Եվ, վերջապես, չորրորդ գլխում քննարկվում են հայ-ճապոնական հարաբերությունները մշակույթի և գիտության բնագավառներում:

Եվ եթե միջազետական հարաբերությունների քննարկումը ժամանակագրական առումով ընդգրկում է 1991–2004 թթ., այսինքն՝ հիմնականում Հայաստանի երրորդ հանրապետության շրջանը, երբ Հայաստանը դարձավ անկախ պետություն, դուրս եկավ միջազգային ասպարեզ, և դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին նրա ու ճապոնիայի միջև, ապա ժամանակագրական այդ սկզբունքը չի պահպանվել, երբ խոսքը գնում է նրանց հարաբերություններին կամ շփումներին տնտեսական, մշակութային և գիտական ոլորտներում:

Սույն աշխատության իրականացմանը նպաստող գործոնների շարքում հարկ ենք համարում նշել երկու հանգամանք:

Առաջինը՝ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի կազմում Հայաստանի կառավարության 2003 թ. որոշումով Արևելյան Ասիայի երկրների բաժնի ստեղծումը, որը Հայաստանում ճապոնիայով, Չինաստանով և Հնդկաստանով գրադարձ միակ գիտական կենտրոնն է:

Երկրորդը՝ Երևանի հումանիտար ինստիտուտի ստեղծումը, որտեղ առաջին անգամ Հայաստանում սկիզբ դրվեց ճապոնական գրականության և արվեստի, ճապոններնի մասնագիտական ուսումնասիրությանը: Այդ ինստիտուտն արդեն տվել է իր առաջին հայ շրջանավարտները:

Յեղինակները խորին շնորհակալություն են հայտնում «ճապոնական հիմնադրամին»՝ համապատասխան դրամաշնորհ տրամադրելու համար, ինչպես նաև Սոսկվայում ճապոնիայի դեսպանությանը՝ ի դեմս ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Խսեյ Նոմուրայի՝ սույն աշխատությանը մեծապես օժանդակելու համար:

Գլուխ առաջին

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴԱՄԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ. ՀԱՄԱՌԱՋ ՊԱՏՄԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Յայերն աշխարհի հնագույն քաղաքակիրք ժողովուրդներից մեկն են, ժամանակակիցները շումերների, ասորեստանցիների, արածաների և խեթերի, հրեաների, հույների և պարսիկների, Առաջավոր Ասիայի այլ ժողովուրդների, որոնք հնագույն ժամանակներից եղել են մերձավորարևելյան տարածաշրջանի բնիկները:

Յայերի բնօրրանը Յայկական լեռնաշխարհն է, որն աշխարհագրական առումով գրավում է շատ կարևոր դիրք Առաջավոր Ասիայում: Արևելքում նա սահմանակցում է Իրանական, իսկ արևմուտքում՝ Անատոլիական բարձրավանդակի հետ: Յուսիսում Յայկական լեռնաշխարհը պարփակված է Պոնտոսյան լեռնաշղթայով, իսկ հարավում՝ Յայկական Տավրոսով:

Յայկական լեռնաշխարհը հարուստ է ջրային պաշարներով: Այստեղ են գտնվում տարածաշրջանի երեք կարևոր լճերը՝ Ուրմիայի, որն այժմ գտնվում է Իրանի, և Վանի, որը գտնվում է Թուրքիայի, և Սևանի, որը Յայաստանի Յանրապետության տարածքում է:

Յայկական լեռնաշխարհից են սկիզբ առնում մերձավորարևելյան–անդրկովկասյան տարածաշրջանի համարյա բոլոր կենսական կարևոր նշանակություն ունեցող գետերը, այդ թվում Տիգրիսն ու Եփրատը: Եփրատ գետը, ըստ Աստվածանցի, դրախտը սմուցող չորս գետերից մեկն է¹:

Յայկական լեռնաշխարհի կարևոր ջրային ուղիներից են նաև Արածանին, Արաքսը, որը հայերը սովորաբար կոչում են «Մայր Արաքս», Դրազդանը, Ախուրյանը, Որոտանը և բազում այլ գետեր և գետակներ, որոնց ջրերը, խառնվելով Արաքսին, այնուհետև թուռ գետի հետ միասին թափվում են Կասպից ծովը:

Յայկական լեռնաշխարհում են գտնվում մի քանի բարձրազագար լեռներ, որոնց մեջ առաջին հերթին պետք է նշել Յայաստանի խորհրդա-

1 The Holy Bible. Containing the Old and New Testaments. The New King James Version. The Gedeon International in Australia, Printed in Korea, 1987, p. 2.

Ծիշը հանդիսացող բիբլիական Արարատը: Բնության զմայլելի այդ հրաշքը բաղկացած է երկու լեռնագագաթներից՝ Մեծ Արարատ կամ Մեծ Սասիս, որի բարձրությունը 5156 մ է, և Փոքր Արարատ կամ Փոքր Մասիս՝ ծովի մակերևույթից 3914 մ բարձրությամբ: Մեծ Արարատն է այն լեռը, որի վրա, ըստ Աստվածաշնչի, հանգրվանել է Նոյան տապանը համաշխարհային ջրեփեղի ժամանակ, և որի շնորհիվ փրկվել են մարդկությունը և ողջ կենդանական և բուսական աշխարհը²:

Յայկական լեռնաշխարհի բարձրագագաթ լեռներից հիշատակության են արժանի նաև Սիփանը (4434 մ), Արագածը (4095 մ) և այլն:

Յայկական լեռնաշխարհի գգալի մասը կազմում են դաշտավայրերը և հովիտները, որոնք հնուց ի վեր հանդիսանում են գյուղատնտեսության և այգեգործության զարգացած կենտրոններ: Դրանց մեջ իր առանձնահատուկ տեղն ունի Արարատյան դաշտավայրը՝ ամենամեծը և ամենաբարեբերը, ինչպես նաև Բասենի, Շիրակի, Ալաշկերտի, Մշո և այլ դաշտավայրեր:

Յայկական լեռնաշխարհի ընդհանուր տարածքը կազմում է մոտ 300 հազ. քառ. կմ: Սակայն ժամանակակից Յայաստանը զբաղեցնում է դրա լոկ մեկ տասներորդ մասը՝ մոտ 30 հազ. քառ. կմ: Յայկական լեռնաշխարհի գերակշիռ մասը գտնվում է Թուրքիայի տարածքում, իսկ որոշ մասեր՝ Իրանի, Ադրբեյջանի և Վրաստանի սահմաններում:

Յայաստանի Յանրապետությունը հյուսիսից սահմանակցում է Վրաստանի, արևելքից Սղոբեջանի, հարավից Իրանի Խոլամական Յանրապետության, իսկ արևմուտքից Թուրքիայի հետ:

Յայերը Յայկական լեռնաշխարհի բնիկներն են, նրա պատմական և հրավական տերերը: Այստեղ է նա ծևավորվել որպես ժողովուրդ:

Յայկական լեռնաշխարհի այդ բնիկ ժողովուրդը հայտնի է «հայ» և «արմեն» անուններով: Դրանցից առաջինը հայերի ինքնանվանումն է, որը վկայված է նաև խեթական սեպագիր աղբյուրներում «հայաս» ծևով:

Խեթական պետությունը կազմավորվել է կենտրոնական Անատոլիայում և գոյատևել մ.թ.ա. XVII–XIII դարերում: Խեթերը իրենցից արևելք ընկած հարևան երկիրն անվանել են Յայասա, որի ժողովրդի ինքնանունն է հայ: Ընդունված է այն տեսակետը, որ «Յայասան հայերի օրրանն է»³:

Բացի խեթական աղբյուրներից, «հայ» ինքնանվանումը հաստատում են ավելի ուշ շրջանի, մասնավորապես մ.թ. Վ դարի և հետագա շրջանի հայկական գրավոր աղբյուրները, հայ պատմիչներ Մովսես Խորե-

2 Ibid., p. 7.

3 Կալանցյան Գ. Խայասա – կոլյելը արման, Երևան, 1947.

նացու, Փավստոս Բուզանդի, Ագաթանգեղոսի, Սեբեոսի, Ղազար Փարպեցու, Ղևոնդի և այլոց թողած գրավոր հուշարձանները:

Օտարները հայերին անվանում են արմեններ: «Արմեն» անվանակոչումն առաջին անգամ վկայված է Աքեմենյան Պարսկաստանի արքա Դարեհ I-ի Բեհիսթունյան եռալեզու (պարսկերեն, էլամերեն և քարելուներեն) արձանագրության մեջ մ.թ.ա. 520 թ: Դայերն ունեն իրենց սեփական լեզում՝ հայերենը, որը տիպաբանորեն պատկանում է հնեպվրոպական լեզվանտանիցին: Դայերենը անգնահատելի դեր է խաղացել հայ ժողովորի կազմակորման, կրնութիղացիայի, զարգացման և ինքնության պահպանման գործում:

Դայ ժողովուրդն իր երկարամյա պատմության ընթացքում անցել է զարգացման տարրեր փուլեր, մշտապես շփվել տարրեր ժողովուրդների հետ, ծանր է եղել և օգտվել Արևելքի և Արևմուտքի տարրեր քաղաքակրություններից, Վերցրել նրանցից շատ արժեքավոր բան, ինքն էլ իր հերթին հարստացրել նրանց և շատ բան տվել իր հոգևոր-մշակութային ինքնատիպ արժեքներից: Գտնվելով Արևելքի և Արևմուտքի սահմանագծում՝ հայ ժողովուրդը վերին աստիճանի զգայուն և ընկալու է եղել նոր հասարակական, քաղաքական, սոցիալական, մշակութային, կրոնական, գաղափարական և այլ առաջադիմական երևույթների հանդեպ: Դայ ժողովուրդը մշտապես համընթաց է գնացել ժամանակի հետ՝ հաճախ իր վրա վերցնելով ռահիպիրայի դերակատարումը:

Այդ տեսակետից կցանկանայինք նշել երկու կարևոր հանգամանք, որոնք բացառիկ դեր են խաղացել հայ ժողովորի պատմական ճակատագրում:

Առաջին՝ քրիստոնեության հոչակումը Դայաստանում մ.թ. 301 թ. որպես պետական կրոն: 2001 թ. համայն հայ ժողովուրդը, պետությունը և Եկեղեցին մեծ շուքով նշեցին քրիստոնեությունը Դայաստանում պետական կրոն ընդունելու 1700-ամյակը: Դա լայն արձագանք գտավ ամբողջ աշխարհում և ծեռք բերեց ոչ միայն էկուունների իմաստ, այլև ստացավ յուրահատուկ քաղաքական հնչեղություն:

Այդ իրադարձությանը նվիրված տոնակատարություններն իրենց ներկայությամբ պատվեցին Հռոմի պապ Յովիաննես Պողոս II-ը, Կոստանդնուպոլիսի Տիեզերական Եկեղեցու պատրիարք Բարդուղիմնոսը, Մոսկվայի և Զամայն Ուլսիո պատրիարք Ալեքսի II-ը, Քենտրոբերիի, Անտիոքի, Ղատիմերի և աշխարհի այլ քույր Եկեղեցիների պատրիարք առաջնորդները: Նրանք իրենց ներկայությամբ հավաստեցին Դայաստանում քրիստոնեությունն առաջինն աշխարհում պետական կրոն հռչակելու պատմական իրողությունը:

Երկրորդ՝ հայկական քաղաքակրթության զարգացման, հայերի հոգևոր-մշակութային արժեքների պահպանման և զարգացման, հայ ժողովրդի էթնիկական ինքնության ապահովման տեսանկումից անգնահատելի, բացառիկ նշանակություն ունեցավ հայոց գրերի գյուտը, որն իրագործեց Մեսրոպ Մաշտոցը մ.թ. 405 թվականին:

Մեփական ազգային գիր ունենալուն Հայաստանում տրվում էր համազգային և պետական առաջնակարգ նշանակություն: Գրերի գյուտն աննախադեպ կերպով խթանեց հայկական քաղաքակրթության և մշակույթի զարգացումը՝ դնելով դրանք ավելի բարձր նակարդակի վրա, իսկ նրա ստեղծող Մեսրոպ Մաշտոցը դասվեց սրբերի շարքը:

Գրերի գյուտից հետո հայկական գիտությունը, պատմագրությունը և փիլիսոփայությունը, գրականությունը և արվեստը՝ իր ամբողջության մեջ վերցրած, զարգացան բուռն թափով և նվաճեցին անհասանելի թվացող բարձունքներ:

* * *

Հայ ժողովուրդը մշտապես ծգտել է ունենալ իր սեփական պետությունը՝ դրա մեջ տեսնելով իր էթնիկական ինքնության պահպանման, ազգային անվտանգության ապահովման, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային առաջադիմության հուսալի գրավականը: Եվ պետության ստեղծման, պահպանման կամ վերականգնման հիմնախնդիրը եղել է հայ ժողովրդի ազգային պատմական իդեալը և կազմել նրա մաքառումների հիմնական բովանդակությունը:

Հայ ժողովուրդն արձանագրել է բացառիկ նվաճումներ իր պետականության ստեղծման բազմադարյան պատմության մեջ: Նա պատկանում է այն ժողովուրդների շարքին, որոնք իրենց պետականությունը կերտել են դեռևս հնագույն ժամանակներում:

Հայկական առաջին պետություններից մեկը, որը հաստատվում է խեթական աղբյուրներով և նորագույն ուսումնասիրություններով, թերևս եղել է Հայասա թագավորությունը, որը խեթական թագավորության արևելյան հարևանն էր: Նա զբաղեցնում էր Եփրատ, Ցորոխ և Արաքս գետերի վերին ավազանները և ծգվել է մինչև Սև ծովի հարավային ափերը: Հայասա պետությունը գոյություն է ունեցել մ.թ.ա. XV–XII դարերում և նշանակալի դեր խաղացել ժամանակի քաղաքական կյանքում, միջազգային հարաբերություններում և երկարատև ու համապայքար մղել իր անկախության համար⁴:

Հայերի կերտած պետությունների շարքում իր նշանակությամբ բացառիկ տեղ է գրավում Արտաշհայան թագավորությունը (մ.թ.ա. 190–մ.թ. 1 թթ.), որն իր հզորության գագաթնակետին հասավ Տիգրան II-ի օրոք (մ.թ.ա. 95–55 թթ.), որն ավելի շատ հայտնի է որպես Տիգրան Մեծ: Նա հանդիսացավ Հայկական կայսրության հիմնադիրը. ավարտեց բուն հայկական տարածքների միավորումը մեկ միասնական հայկական պետականության շրջանակներում, ապա իր տիրույթներին միացրեց հարևան թագավորությունները: Հայկական կայսրության մեջ մտնում էին Միդիան (Աստրապատականը), Յուլսիսային Միջագետը, Սիրիան, Փյունիկիան (Լիբանանը), Պաղեստինը, Հրեաստանը, Կոմմագենը և այլ երկրներ: Կայսրության սահմաններն ընդունաւ մոտեցան Եգիպտոսին: Պարթևների թագավորը Տիգրան Մեծին գիշեց «արքայից արքա» տիտղոսը:

Հայաստանը Տիգրան II-ի ժամանակ դարձավ Մերձավոր Արևելքի ամենահզոր պետությունը, որի հետ հաշվի էին նստում հզոր Շոռնը և Պարթևստանը: Որոշ ժամանակահատվածում ծևավորվեց Շոռն–Հայաստան–Պարթևստան եռամկյունին, որը տնօրինում էր աշխարհի այդ կարևոր հատվածի քաղաքական ճակատագիրը:

Մ. թ. 1 թ. Արտաշհայան հարստության անկումից հետո, որոշ ժամանակ ստեղծված քաղաքական խառնաշփորթ Հայաստանը կարողացավ հաղթահարել հաջողությամբ: Մ. թ. 66 թ. Հայաստանում հաստատվեց Արշակունիների դինաստիան, որը թագավորեց մինչև 428 թ.:

Այս շրջանում ևս Հայաստանը շարունակում էր մնալ Առաջավոր Ասիայի ազդեցիկ պետություններից մեկը, որոշակի գործոն, որն իր կարևոր դերակատարումն ուներ տարածաշրջանում:

428 թ. Արշակունիների անկումից հետո մինչև VII դ. կեսերը Հայաստանը նտնում էր Պարսկաստանի, իսկ VII դ. կեսերից մինչև 885 թ. Արաբական խալիֆայության կազմի մեջ՝ պահպանելով, սակայն, յուրատեսակ ինքնավար կարգավիճակ: Այդ ժամանակահատվածում հայկական քաղաքական ուժերն այնքան աճրան աճրանախվեցին, որ ի վիճակի եղան կրկին վերականգնել հայոց պետականությունը:

Դա տեղի ունեցավ 885 թ., երբ Արաբական խալիֆայությունը ստիպված էր ճանաչել Հայաստանի անկախությունը, խալիֆա Մութամիդը թագ ուղարկեց հայոց արքա Աշոտ I Բագրատունուն:

Հայաստանը վերստին սկսեց կարևոր դեր խաղալ Անդրկովկասի և Առաջավոր Ասիայի քարդ քաղաքական կյանքում և միջազգային հարաբերություններում: Նա կարողացավ ապահովել Հայաստանի անվտանգությունը և համեմատաբար խաղաղ պայմաններ ստեղծել նրա գոյության համար, որը մեծապես նպաստեց երկրի տնտեսական զարգացմա-

Նը և մշակույթի ծաղկմանը: Հայաստանը թևակոխեց զարգացման մի փուլ, որը հետազոյւմ Եվրոպայում ստացավ Վերածնունդ անվանումը:

1045 թ. Բագրատունյաց Հայաստանը կամ Մեծ Հայքը գոհ գնաց Բյուզանդական կայսրության նվաճողական քաղաքականությանը:

Սակայն բուն Հայաստանում պետականության կորուստը չէր նշանակում, թե հայերը հրաժարվեցին իրենց պետությունն ունենալու գաղափարից:

Անբարենպաստ քաղաքական պայմանների ծննդան ներքո հայկական հոծ զանգվածներ հարկադրված էին հեռանալ հայրենիքից և հաստատվել այլ վայրերում: Մեծ թվով հայեր իրենց իշխանական տոհմերով հաստատվեցին Կիլիկիայում Փօքր Ասիայի հարավում, Միջերկրականի ափին: Այդ երկրամասը բնակ էլ օտար երկիր չէր նրանց համար, քանի որ ժամանակին այն կազմում էր հայոց Տիգուան Մեծ արքայից արքայի կայսրության մի մասը:

Կիլիկիայում հաստատված հայ իշխանական տների մեջ առանձնանում էին Ռուբինյանները, որոնց ջանքերով 1080 թ. Կիլիկիայում հաստատվեց Ռուբինյան իշխանապետությունը, որը 1198 թ. վերակազմակրվեց քաջավորության: Սա պատմության այն եզակի դեպքերից մեկն է, երբ մի ժողովուրդ, իր բնօրրանում կորցնելով պետականությունը և արտագաղթելով մեկ այլ երկիր, այնտեղ հաստատում և կերտում է իր պետականությունը:

Կիլիկյան Հայաստանը, որի անկախությունը ժամազում էին մոտակա և հեռավոր հարևան քաջարիկ պետություններ, կարևոր դեր էր իսաղում տարածաշրջանում: Հատկապես հարկ է նշել նրա դերակատարումը խաչակրաց արշավանքների ժամանակ, երբ Եվրոպական խաչակիրները Անգլիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից և այլ երկրներից, Հռոմի պապական ուժերը իրենց արշավանքների ժամանակ անցնում էին Կիլիկյան Հայաստանի տարածքով և վայելում նրա օգնությունը և աջակցությունը:

Կիլիկյան Հայաստանը մշտապես մաքառել է իր գոյության և անկախության համար, մարտնչել իր զանազան հարևանների, մասնավորապես Բյուզանդիայի, Իկոնիայի սելջուկյան սուլթանության և Եգիպտոսի մամլուքների նվաճողական ծգտումների դեմ: Նա պայքարել է մոնղոլների արշավանքների դեմ, որոնք XIII դարում հայտնվեցին նրա սահմանների մոտ:

Կիլիկյան Հայաստանը որպես պետություն գոյատևեց մոտ 300 տարի և ընկավ Եգիպտական մամլուքների հարվածների տակ 1375 թ.:

XI դարից սկսվում է Մերձավոր և Միջին Արևելքի, Անդրկովկասի, Փօքր Ասիայի և հարակից տարածքների քաղաքական վիճակի, մարդագ-

րական պատկերի և աշխարհաքաղական իրադրության շեշտակի փոփոխություն, որը հետագայում շատ հեռուն զնացող հետևանքներ ունեցավ ամբողջ աշխարհի համար: Այդ երևույթն ուղղակիորեն կապված էր տարածաշրջան թուրք քոչվորական զանազան ցեղերի ներխուժումների հետ: Նրանք՝ սելջուկ թուրքերը, մոնղոլները, օղուզները, Թիմուրի հորդաները, կարա-կյունլու և ակ-կյունլու թուրքմենական և այլ ցեղախմբեր Ալթայից և Կենտրոնական Ասիայից ալիք առ ալիք, միմյանց հաջորդելով ներխուժեցին Իրանի, Միջազգետքի, Փոքր Ասիայի և Կովկասի տարածքները՝ իրենց ճանապարհին կործանելով վաղուց կազմավորված պետություններ, ավերելով շեն գյուղերն ու քաղաքները, արվեստի կորողները, գերեվարելով և ստրկության մատնելով խաղաղ բնակչությանը:

Միևնույն ժամանակ դա հանգեցրեց թուրքական էրնոսի հարածուն տարածնանը և նրա թվական անհայտեա աճին, որը համապատասխան մարդագրական փոփոխություն առաջ բերեց տարածաշրջանուն: Բնիկներին՝ արաբներին, հայերին, հույներին, պարսիկներին, վրացիներին և այլ ժողովուրդների, ավելացան եկվոր թուրքալեզու տարբեր ցեղեր, որոնց հիմքի վրա տարածաշրջանում հետագայում կազմավորվեց թուրք ժողովուրդը: Եվ տարածաշրջանի ժողովուրդների հետագա պատմությունն ընթանում է այս նոր իրողության ներքո:

Նորահայտ նվաճողների տեսադաշտից չեր կարող դուրս մնալ նաև Անդրկովկասը, այդ թվում նաև Հայաստանը: Այդ երկրամասը նույնպես հայտնվեց նրանց տիրապետության տակ: Սելջուկյան, մոնղոլական, թիմուրյան և օղուզա-օսմանյան արշավանքները մեծ արհավիրքներ բերեցին և նոր ավերածություններ պատճառեցին հայ ժողովրդին: Հայաստանի, ինչպես և նվաճված մյուս երկրների տնտեսությունը և մշակույթը մեծ անկում ապրեց:

1299 թ. թուրքական օղուզ ցեղախմբի առաջնորդ Օսմանի կողմից հիմնվեց մի նոր թուրքական պետություն, որը նրա անունով կոչվեց Օսմանյան: Այս պետությունը կոչված էր արտակարգ դեր խաղալու ոչ միայն Փոքր Ասիայի, այլև ամբողջ Ասիայի, Եվրոպայի և Աֆրիկայի ճակատագրում:

ճակատագրական եղավ օսմանյան պետության դերը նաև հայ ժողովորդ պատմության մեջ:

Օսմանյան պետությունը վարում էր ակտիվ նվաճողական քաղաքականություն: Արևմտություն նա իր տարածքները շարունակաբար ընդարձակում էր Բյուզանդական կայսրության հաշվին: Քենց նա էլ դարձավ այդ կայսրության գերեզմանափորը:

1453 թ. սուլթան Մեհմեդ II-ը գրավեց Կոստանդնուպոլիսը և վերջ տվեց մոտ հազար տարի գոյատևած Բյուզանդական կայսրության գո-

յությանը: Քաղաքակիրք Բյուզանդական կայսրության կործանումը, որը Արևելքը Արևոտքի հետ կապող կարևոր օղակ էր, ծանր հարված էր համայն քաղաքակիրք աշխարհին և մեծ սպառնալիք Արևոտքին:

Դրանից հետո օսմանյան պետության առջև բացվեցին նվաճումների մեծ հնարավորություններ, որը շարունակվեց ավելի քան երկու դար:

Օսմանյան պետությունն ակտիվ նվաճողական քաղաքականություն էր վարում նաև Արևելքում: 1516 թվականից սկսվեց արաբական երկրների գրավումը: Դեռը հասավ նաև Յայաստանին:

A 89897

Յայաստանի նվաճման քաղաքականությունն իրականացնելիս Օսմանյան կայսրությունը բախվեց Պարսկաստանի հետ, որտեղ դեռևս 1502 թ. հաստատվել էր Սեֆյան դինաստիան: Սեֆյաններին հաջողվել էր իրենց մականի ներքո Յայաստանի հետ միավորել բուն Պարսկաստանը, Ատրպատականը, Միջազգետքը և Վրաստանը: Երկու պետությունների միջև սահմանագիծ էր հանդիսանում Եփրատ գետը:

Օսմանյան սուլթան Սելիմ I Յավուզը (Ահեղը) 1514 թ. Զալդրանի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ջախջախեց շահ Իսմայիլին և գրավեց Արևելյան Յայաստանը: Պատերազմական գործողությունները նրանց միջև ընդմիջումներով շարունակվեցին մինչև 1639 թ., երբ Կասր Շիհինում նրանց միջև ստորագրվեց հաշտության պայմանագիր:

Այդ պայմանագրով Յայաստանը բաժանվեց երկու մասի՝ Արևելյան և Արևմտյան: Արևմտյան Յայաստանն անցավ Օսմանյան կայսրությանը, իսկ Արևելյան Յայաստանը մնաց Պարսկաստանի տիրապետության ներքո:

Արևելյան և Արևմտյան Յայաստանի զարգացումը ընթացավ տարբեր ուղիներով:

Արևելյան Յայաստանն իր երևան, Նախիջևան, Արցախ (Ղարաբաղ), Շիրակ, Գուգարք և մի շարք այլ շրջաններով XIX դարի առաջին քսանամյակում 1804–1813 թթ. և 1826–1828 թթ. ոռու–պարսկական պատերազմների հետևանքով անցավ Ուլուսական կայսրության տիրապետության ներքո: Նրա քաղաքական և ազգային գոյության, սոցիալ–տնտեսական և մշակութային զարգացման համար ստեղծվեցին նոր, համեմատաբար ավելի բարենպաստ պայմաններ:

Իսկ Արևմտյան Յայաստանը շարունակեց մնալ Օսմանյան կայսրության կազմում, որի քաղաքական, տնտեսական համակարգը և պետական կառուցվածքը չէր նպաստում ոչ թուրք ժողովուրդների զարգացմանը և առաջընթացին: Դեռ ավելին՝ ոչ թուրք ժողովուրդների գլխին մշտապես կախված էր նրանց երնիկական վերացման վտանգը: Նման վտանգ էր կախված նաև Օսմանյան կայսրության տարածքում գտնվող Արևմտյան Յայաստանի հայերի գլխին:



Արևմտյան Հայաստանը զբաղեցնում էր նախկին միասնական Հայաստանի մեծագույն մասը՝ մոտ 230 հազ. քառ. կմ: Այստեղ կենտրոնացված էր հայ ազգանրակչության ճնշող մեծամասնությունը՝ մոտ 2,5 մլն: Իսկ եթե նկատի առնենք նաև Արևմտյան Հայաստանից դուրս, ամբողջ Օսմանյան կայսրությունում, այդ թվում նաև մայրաքաղաք Ստամբուլում, Զմյուռնիայում և այլ քաղաքներում ու բնակավայրերում ապրող հայերին, ապա այդ թիվը XIX դարի կեսերին մոտենում էր 3 մլն-ի⁵:

Ահա այստեղ Օսմանյան կայսրության շրջանակներում առաջանում է Հայկական հարցը, որը դառնում է Արևմտյան հարցի բաղկացուցիչ մասը:

Օսմանյան սուլթանները և կառավարող ռազմավատական վերնախավը վարում էին հայերին և նյուև ոչ թուրք ժողովուրդներին ստրկացնելու, իրենց քացարձակապես ենթարկելու և հլու-հնազանդ պահելու քաղաքականություն, որն օսմանյան Թուրքիայի պաշտոնական պետական քաղաքականությունն էր:

Օսմանյան կառավարությունն Արևմտյան Հայաստանը զավթելուց հետո անմիջապես ծեռնամուխ եղավ նրա ժողովրդագրական կազմի շեշտակի փոփոխությանը՝ նպատակ ունենալով նվազեցնել հայկական բնակչությունը: Նա խրախուսում և հովանավորում էր ոչ հայկական էթնիկական տարրերի՝ թուրքերի, հատկապես քրդերի, ինչպես նաև չերքեզների ներթափանցումը և բնակեցումը Արևմտյան Հայաստանում:

Թուրքերի, քրդերի և չերքեզների բնակեցումը հայկական շրջաններում և տեղաբնիկ հայերի քանի հողագործումը հարցի մի կողմն էր: Հարցի մյուս, ոչ պակաս կարևոր կողմն այն էր, որ օսմանյան իշխանություններն անընդհատ բախումներ էին հրահրում եկվորների և տեղաբնիկ հայերի միջև, արհեստականորեն նրանց լարում միմյանց դեմ՝ պաշտպանելով նորաքանակներին ընդդեմ հայերի: Դեռ ավելին՝ օսմանյան իշխանությունները շատ հաճախ քրդերի և չերքեզների ծեռքով էին հրականացնում հայկական ջարդերը: Կարելի է ասել, որ հայերի համար իրենց սեփական տանը ստեղծվել էին գոյության դժոխային պայմաններ:

Հայերը, ինչպես կայսրության մյուս բոլոր քրիստոնյա ժողովուրդներ՝ ասորիները, բուլղարները, հույները, սերբերը, ռումինները և այլն, գտնվում էին իրավագործ վիճակում: Նրանք համարվում էին ռայյա, ճորտ, ոչ լիարժեք, թուրքերի հետ համեմատած՝ երկրորդ կարգի ժողովուրդներ: Պետք է նշել, որ ծանր վիճակում էին գտնվում նաև ոչ թուրք մահմեդական մյուս ժողովուրդները, մասնավորապես արաբները:

Օսմանյան կայսրությունում չկար սահմանադրություն, երկրում տիրում էր սուլթանի՝ փառիշխահի կամքը, իսկ տեղերում տեր ու տնօրեն

5 Տե՛ս Հայկական հարց: Հանրագիտարան: Երևան, 1996, էջ 233:

էին վալիները և փաշաները, որոնք հայտնի էին իրենց կամայականություններով: Գործում էին շարիաթի՝ մուսուլմանական իրավունքի, և ադաթի՝ սովորութային իրավունքի նորմերը, որոնք իրավական առումով չէին պաշտպանում հայերի և մյուս քրիստոնյաների շահերը:

Հայերը՝ որպես քրիստոնյաներ, զրկված էին գենք կրելու իրավունքից, որը նրանց լրիվ անպաշտպան էր դարձնում թուրքերի, քրդերի և չերքեզների հարձակումների և ոտնձգությունների դեմ հանդիման: Հայերը չէին կարող դատարանում վկայություն տալ, իրավունք չունեին ծի նստել, քանի որ հեծալ կարող էր լինել միայն թուրք կամ մահմեդականը, որին հանդիպելիս հայը, ըստ ադաթի, պարտավոր էր նրան գիտել ճանապարհը: Նման ստորագուցիչ, հայի արժանապատվությունը նստացնող սահմանափակումները և արգելքները շատ ու շատ էին:

Հայերը չունեին գույքի և անձի ապահովություն և անձեռնմխելիություն: Գործող օրենքները, նորմերը և սովորույթները նրան նման երաշխիքներ չէին տալիս: Անպաշտպանվածության զգացումը մշտապես հետապնդում էր հային և նրա ու նրա ընտանիքի կյանքը վերածում մղջավանջի:

Կար նաև կրոնի հարցը: Օսմանյան կայսրությունում սովորական երևույթ էր քրիստոնյա հայերի կրոնական զգացմունքների ոտնահարումը: Կրոնական հալածանքները, իշխանությունների բռնի թուրքացման քաղաքականությունը, միահյուսված հայերի ծանր, նույնիսկ կարելի է ասել անելանելի սոցիալ-տնտեսական վիճակի հետ, օսմանյան իրականության բնորոշ գծերն էին:

Համանման վիճակում էին գտնվում Օսմանյան կայսրության տարածքում բնակվող նաև մյուս բոլոր քրիստոնյա ժողովուրդները:

Ահա թե ինչու պատմագիտական գրականության մեջ ընդունված է Օսմանյան կայսրությունը բնութագրել որպես «ժողովուրդների քանտ»:

Օսմանյան կայսրությունը, որը տիպարանորեն պատկանում էր ռազմաֆեոդալական կասրությունների կատեգորիային, խոր համակարգային ճգնաժամ էր ապրում, որը ներառել էր պետական, քաղաքական, իրավական, սոցիալական, տնտեսական, ազգամիջյան, կրոնական, հոգևոր-մշակութային ոլորտները:

Հայերի պահանջները չափավոր էին: Նրանք ձգտում էին դիմակայել հայերի էթնիկական և կրոնական ծովալման բոլոր բացահայտ և սրողված փորձներին, որ դրսկորվում էին Օսմանյան կայսրությունում իշխանական բոլոր մակարդակներով, պահանջում էին հայերին տրամադրել մարդկային նվազագույն, տարրական իրավունքներ՝ անձի և գույքի ապահովություն, մարդկային և ազգային արժանապատվության, ընտանիքի և ազգային ավանդությունների և սովորությունների հարգում:

Հայերը զգույշ էին, ուստի և ձգտում էին իրենց պահանջները լուծել գոյություն ունեցող օսմանյան իրողությունների շրջանակներում, առանց որևէ ցնցումների՝ շատ լավ գիտենալով, որ անեն մի անգույշ քայլ, ամեն մի անգամ աննշան ցնցում անկանխատեսելի ողբերգական հետևանքներ կարող էր ունենալ նրանց համար: Ուստի հայերը նախընտրում էին ապավինել համամարդկային տարրական նորմերին՝ դրանց կիրառման մեջ տեսնելով իրենց անվտանգության և ազգային ինքնության պահպանման գրավականը:

Սակայն Օսմանյան կայսրության համար անընդունելի էին նման պահանջները՝ դրանց իրագործման համար չկային համապատասխան քաղաքական, իրավական, սոցիալ-տնտեսական, ինչպես նաև կրոնական բարենպաստ պայմաններ: Նրա կառավարողները բնավ մտադիր չէին հրաժարվել բռնությունների, հալածանքների և ջարդերի քաղաքականությունից, որն առանձնահատուկ դաժանությամբ սկսվեց կիրառվել, երբ 1876 թ. օսմանյան սուլթանների գահին նստեց Աբդուլ Ջամիլ II-ը, որը 30 տարուց ավելի՝ մինչև 1909 թ., երկարյա ծեռօվկ կառավարեց կայսրությունը՝ ահ ու սարսափի մեջ պահելով բոլորին՝ թե իր հակառակորդներին և թե իր կողմնակիցներին, բոլոր ժողովուրդներին, այդ թվում նաև թուրք ժողովրդին: Նրա գահակալության տարիները Օսմանյան կայսրության պատմության մեջ մտել են որպես զուլումի՝ սարսափի և միահեծան դիկտատուրայի տարիներ, որի բնորոշ գժերից մեկը ժողովուրդների զանգվածային կոտորածներն էին:

Աբդուլհամիդյան նոր քաղաքական «կուլտուրայի» բաղկացուցիչ մասն էին կազմում կայսրության ոչ թուրք ժողովուրդների զանգվածային ջարդերը, որոնց առաջին զոհերից մեկը եղան հայերը: Հայկական կոտորածները, որ կիրառեց Աբդուլ Ջամիլ II-ը, ոչ պատահականություն էին և ոչ էլ սուլթանական քմահաճույք: Դա նրա մոտ հայեցակարգային բնույթ էր կրում: Ենց նա որդեգրեց «Հայկական հարցի լուծման լավագույն ձևը հայերի ֆիզիկական բնաջնջումն է» բանաձեռ, որը ձգտում էր անշեղորեն կիրառել:

Իր արյունարրու քաղաքականության համար Աբդուլ Ջամիլ II-ը ստացավ «կարմիր սուլթան» մականունը: Նրա հատուկ իրամանով արգելվեց կայսրության ողջ տարածքում «Էրմենիստան»՝ «Հայաստան», անվան օգտագործումը:

1878 թ. Բեռլինի միջազգային կոնգրեսն այլ հարցերի հետ միասին քննարկեց նաև Հայկական հարցը: Դրանով իսկ Հայկական հարցը ներուսմանյան հարցից վերածվեց միջազգային հարցի: Բեռլինի կոնգրեսից հետո սուլթանը և օսմանյան կառավարող վերնախավն ավելի ամրապնդվեցին իրենց այն համոզման մեջ, որ Հայկական հարցի լուծ-

ման լավագույն լուծումը հայերին ոչնչացնելն է: Նրանք այժմ դրա մեջ էին տեսնում կայսրության ներքին գործերին եվրոպական պետությունների միջամտությունից ազատվելու իրական ուղին: Այդ տերություններու շայկական հարցը, հայկական շրջաններում բարեփոխումների հարցը օգտագործում էին որպես պատրվակ Թուրքիայի ներքին գործերին միջամտելու համար: Ուստի անհրաժեշտ էր վերացնել այդ պատրվակը և գրկել տերություններին կայսրությունից գիջումներ կորզելու հնարավորությունից:

Օսմանյան իշխանությունները բարեփոխումների վերաբերյալ հայերի պահանջները, որոնք ամրագրված էին նաև Բեռլինի կոնգրեսի որոշումներում, օգտագործեցին որպես պատրվակ հայկական ջարդեր կազմակերպելու համար:

XIX դ. վերջին օսմանյան իշխանությունների կազմակերպած հայկական ջարդերի գագաթնակետը հանդիսացան 1894–1896 թթ. կոտորածները խաղաղ պայմաններում, անզեն բնակչության նկատմամբ, որոնք իրագործվեցին ինչպես հայկական նահանգներում Վիլայաթներում, այնպես էլ կայսրության մայրաքաղաք Ստամբուլում, որտեղ գոյւթյուն ուներ հայկական հոծ քազմություն:

1894–1986 թթ. կոտորածների ժամանակ զոհվեց 300 հազար հայ:

Սակայն հայերի կորուստները միայն դրանով չեն սահմանափակվում: Ստեղծված անասելի հուսահատական պայմաններում մոտ 100 հազար հայ բռնի դարձավ մահմեդական, և մոտավորապես այդքան էլ հայեր հարկադրված հեռացան իրենց հայրենիքից: Դա ոչ թե տեղական, սահմանափակ, այլ տոտալ կոտորած էր, որն իր բնույթով գենոցիդային էր:

Օսմանյան կայսրությունը XX դար մտավ որպես հետամնաց, դիկտատորական և կայսրության տարբեր ժողովուրդների զանգվածային ջարդեր կազմակերպող երկիր: Ավելի խորացավ նրա քաղաքական, տնտեսական և հասարակական համակարգը համակող ճգնաժամը:

Երկրում ավելի ու ավելի էր հասունանում արյունարբու սուլթանից ազատվելու գաղափարը, որն իրագործեցին երիտասարդ թուրքերը: 1908 թ. հուլիսի 23-ին «Սկզբանական և առաջադիմություն» կուսակցությունը կատարեց հեղաշրջում և գրավեց իշխանությունը: Սուլթան Աբդուլ Համիդ II-ը 1909 թ. գահընկեց արվեց:

Կայսրության բոլոր ժողովուրդները՝ մահմեդական թե քրիստոնյա, ցնծությամբ ընդունեցին «կարմիր սուլթանի» տապալումը: Մարդիկ կարծում էին, որ նոր դարաշրջան է սկսվել Օսմանյան կայսրության պատմության մեջ: Դրանց մեջ էին նաև հայերը: Ինչպես վկայում է արար

պատմաբան Մուսա Պրինսը, էյֆորիայի մեջ գտնվող «հայերը, թուրքերը, հույները գրկախառնվում էին փողոցներում»⁶:

Բայց, ինչպես պարզվեց շատ շուտով, երիտրուրքերը դիմակավորված մոլի նացիոնալիստներ և ռասխատներ էին, որոնք շարունակեցին իրենց նախորդ սուլթանների հալածանքների և ջարդերի քաղաքականությունը: Նրանք կայսրության բոլոր ազգերին ձուելու և «նաքուր» թուրքական ազգ ստեղծելու գաղափարակիրներ էին՝ գտնելով, որ հանուն այդ գաղափարի իրագործման չպետք է կանգ առնել անգամ զանգվածային կոտորածների առջև:

Հայկական հարցի լուծման մեկ այլ տարրերակ էր հանդիսանում Օսմանյան կայսրության ապակենտրոնացման մողելը, որն առանձնապես մեծ տարածում գտավ 1908 թ. երիտրուրքական հեղաշրջումից հետո: Նա իր ջերմ կողմնակիցներն ունեցավ կայսրության համարյա բոլոր ժողովուրդների մոտ:

Ըստ այդ մողելի՝ նախատեսվում էր Օսմանյան կայսրության ազգային ծայրամասերին ինքնավարություն տալ և դրա հիման վրա ստեղծել իրավահավասար պետական կազմավորումների կոնֆեներացիա:

Օսմանյան կայսրության ապակենտրոնացման կողմնակից էին նաև հայերը:

Սակայն օսմանյան կառավարողները, որոնք խիստ կենտրոնացված պետական համակարգի կողմնակիցներ էին և ոչ թուրք ժողովուրդների հանդեպ վարում էին ջարդերի և բռնի թուրքացման քաղաքականություն, կտրուկ դեմ էին ապակենտրոնացմանը՝ դա համարելով կործանարար կայսրության գոյության համար:

Եվ, վերջապես, շրջանառության մեջ էր գտնվում Հայկական հարցի լուծման և մեկ տարրերակ, որի մասին հիշում և քննարկում էին ժամանակ առ ժամանակ: Դա այսպես կոչված «Լեռնալիբանանի մողելն» էր: Դրա երթունը հետևյալում էր:

Լեռնալիբանանում 1861 թ. հաստատվեց կառավարման մի յուրահատուկ ձև: Սուլթանը եվրոպական պետությունների ճնշման ներք հաստատեց Լեռնալիբանանի Օրգանական ստատուտը, որով այդ երկուամսին տրվում էր վարչական ինքնավարության՝ մութասառիֆիայի կարգավիճակ: Սուլթանը նշանակում էր տեղապահ կառավարիչ՝ մութասառիֆ: Բայց մութասառիֆը կարող էր լինել միայն քրիստոնյա, որի թեկնածությունը պետք է հավանության աժանանար եվրոպական պե-

տությունների կողմից: Վերջիններս հանդես էին գալիս նաև որպես Լեռ-
նալիքանանի ինքնավարության երաշխավորներ⁷:

Լեռնալիքանանի առաջին մութասարիֆ հաստատվեց հայազգի
Կարապետ Արթին Դաուդյանը:

Դամանման սկզբունք, որոշ փոփոխություններով, 1877–1878 թթ.
ռուս–թուրքական պատերազմից հետո կիրառվեց նաև Բուլղարիայի
հարցում:

Արևմտյան հայերը դեմ չէին, եթե իրենց տրվեր նույն սկզբունքների
վրա խարսխված վարչական ինքնավարություն: «Ուժշնչված լիբանա-
նյան նախադեպով, – գրում է այս հարցի լավագիտակ Մուսա Պրինսը, –
հայերը ցանկանում էին ստանալ մի համեստ վարչական ինքնավարու-
թյուն, պակաս հավակնոտ, քան Լեռնալիքանանի միջազգային ստա-
տուտը»⁸:

Այս տարրերակին շահագրգիռ կողմերը կրկին վերադարձան
1912–1914 թթ., երբ Ամենայն Դայոց կաթողիկոս Գևորգ Յինգերորդը դի-
մեց ռուսական կառավարությանը՝ վերստին արծարծել հայկական բա-
րենորոգումների հարցը: Ընդառաջելով հայերի հոգևոր առաջնորդի
խնդրանքին՝ ցարական կառավարությունը մշակեց հայկական բարենո-
րոգումների նախագիծ, որի հիմքում դրված էին Լեռնալիքանանի ինք-
նավարության հիմնադրույթները:

Առաջարկվում էր հայկական վեց վիլայաթները՝ Երզրումի, Բիթլիսի,
Խարբերդի, Սվագի, Վանի և Դիարբեքիրի, միավորել և ստեղծել մեկ
հայկական նահանգ, որի գլուխ կանգնած էր լինելու նահանգապետը:
Նա նշանակվում էր սուլթանի կողմից, եվրոպական պետությունների
համաձայնությամբ, իննու տարի ժամանակով, պետք է լիներ օսմանա-
հպատակ քրիստոնյա կամ եվրոպացի: Նահանգապետի ձեռքում էր
կենտրոնացված ամբողջ գործադիր իշխանությունը: Նրան կից ստեղծ-
վում էր վարչական խորհուրդ և վեց խորհրդականներ՝ երեք քրիստոնյա
և երեք նահմեդական, ընտրվում էր նահանգական խորհուրդ, որտեղ
քրիստոնյաները և նահմեդականները ներկայացված էին հավասար քա-
նակով և այլն:

Այս նախագիծը լավագույնն էր այն բոլոր առաջարկություններից,
որ երբեք ներկայացվել էր Դայկական հարցի լուծման համար:

7 Николай Оганесян. Арабская историография по новой истории Армении. В кн.: Новая
история Армении в трудах современных зарубежных авторов. Ереван, 1993, с.
187–188.

8 Moussa Prince, Un génocide impuni. L' Armenocide, p. 28.

Դիվանագիտական երկարատև պայքարից հետո, որը տևեց մոտ մեկ տարի, Ռուսաստանին հաջողվեց Թուրքիայի հետ 1914 թ. հունվարի 26-ին ստորագրել համաձայնագիր հայկական բարենորոգումների վերաբերյալ՝ փոփոխված տարբերակով:

Դամաձայնագրով ընտրվեց նոր տարբերակ: Արևմտյան Հայաստանը բաժանվեց երկու գոտու: Առաջին գոտու մեջ միավորվեցին Երզրումի, Սվագի (Սեբաստիայի) և Տրապիզոնի վիլայաթները, իսկ երկրորդ գոտու մեջ՝ Բիթլիսի, Վանի, Խարբերդի և Դիարբեքիրի (Տիգրանակերտի) վիլայաթները: Յուրաքանչյուր գոտու դեկավար էր նշանակվում ընդհանուր տեսուչը, որը պետք է լիներ օտարերկրացի: Ընդհանուր տեսուչին նշանակում էր օսմանյան կառավարությունը եվրոպական մեծ պետությունների երաշխավորությամբ:

Տեղական խորհուրդների անդամներն ընտրվելու էին քրիստոնյաների և մահմեդականների միջև թվական հավասարության պահպանման սկզբունքով: Այդ նույն սկզբունքով էին նշանակվելու նաև պաշտոնյաները⁹:

Թուրքական կառավարությունը եվրոպական տերությունների համաձայնությամբ առաջին գոտու ընդհանուր տեսուչ նշանակեց Նորվեգիայի քաղաքացի Յոֆին, իսկ երկրորդ գոտու ընդհանուր տեսուչ՝ Յուլանդիայի քաղաքացի Կեստենենկին: Սակայն երկուսն էլ չհասցրեցին անցնել իրենց պարտականությունների կատարմանը: Շուտով սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, և, Թուրքիան, օգտվելով դրանից, չեղյալ հայտարարեց հայկական բարենորոգումների վերաբերյալ 1914 թ. հունվարյան ռուս-թուրքական համաձայնագիրը:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ արևմտահայությունը ծգտել է իր հարցը լուծել Օսմանյան կայսրության շրջանակներում և պաշտոնապես երթեք չի դրել նրանից անջատվելու և անկախ պետություն ստեղծելու հարցը: Նրա համար ընդունելի են եղել և՝ բարենորոգումների, և՝ ապակենտրոնացման, և՝ Լեռնալիբանանի ինքնավար ստատուտի տարբերակները:

Դժբախտաբար, զանազան հանգամանքների բերումով այդ տարբերակներից և ոչ մեկը հնարավոր չեղավ կենսագործել: Գործադրվեց միայն մի տարբերակ՝ հայերի ցեղասպանության տարբերակը:

Որո՞նց էին 1915 թ. հայոց ցեղասպանության պատճառները և նրա իրագործմանը նպաստած պայմանները:

9 R. Davidson, The Armenian Crisis. 1912–1914, The American Historical Review, W., 1948, vol. 3, No 3. Сборник дипломатических документов. Реформы в Армении 26 ноября 1912 года—10 мая 1914 года. П., 1915, с. 158–180.

1915 թ. ցեղասպանությունը բնավ էլ պատահական կամ անակնկալ չէր: Նա տրամաբանորեն բխում էր նախորդ տասնամյակների, եթե ոչ հարյուրամյակների ընթացքում թուրքական սուլթանների, ապա նաև եռութուրքերի դաժան, ազգայնամոլական և ջարդարարական քաղաքականությունից, որ նրանք վարում էին կայսրության ոչ թուրք ժողովուրդների, այդ բվում նաև հայերի նկատմամբ: Դա պաշտոնական պետական քաղաքականություն էր:

Օսմանյան կայսրության մեջ տարիների ընթացքում թուրքերից, քրդերից և չերքեզներից ծևավորվել էր մի ստվար սոցիալական խավ, որը մասնագիտացել էր սպանությունների և կոտորածների մեջ: Դա մասնագիտության պես մի բան էր, որը դարձել էր նրանց գոյության և անօրինական ծանապարհով հարստություն դիմելու մշտական աղբյուր, որը միաժամանակ նրանց ապահովում էր որոշակի տեղ և դիրք օսմանյան պետական աստիճանակարգում:

Դենց այս խավն էլ հանդիսանում էր հայոց ցեղասպանության մեջ ամենաշահագրգիռ սոցիալական խավերից մեկը, որը միաժամանակ դարձավ արմենոցիդի և հենարանը, և իրագործողը:

Պետք է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք ևս: Օսմանյան կայսրությունում պարբերաբար կիրավող ասորիների, արարների, բուղարների, հայերի, հույների, սերբերի և մյուս սլավոնների ջարդերը հանգեցրել էին նրան, որ թուրքական հասարակությունը վարժվել էր ոչ թուրք ժողովուրդների կոտորածներին, և դրանք չին կարող պատճառ հանդիսանալ թուրքական հասարակության ընդվզման կամ թեկուզ ամենաքույլ բողոքի համար, քանի որ նա վարժեցված էր:

Այսպիսի երկրում և նման պայմաններում հեշտ էր մորիլիզացնել նրանում առկա մոլոր, խավարամոլ և արյան ծարավ տարատեսակ ուժեղին ոչ միայն զանգվածային կոտորածներ և ազգային մաքրագույններ, այլև ցեղասպանություն կազմակերպելու և իրագործելու համար: Հայերն ընկան այս թափանիվի տակ:

Օսմանյան կայսրության անտառմիայի մասնագիտական ուսումնասիրությունը բերում է այն եզրակացության, որ նա ոճրածին և ցեղասպանածին պետություն էր և տիպարանորեն պատկանում է «ցեղասպան պետություն» կատեգորիային:

Ջարդերին և ցեղասպանությանը միտված օսմանյան պետական համակարգը զինված էր համարժեք հայեցակարգով, որը տեսական հիմք ծառայեց հայոց ցեղասպանության նախապատրաստման և իրագործման համար:

Սկզբնական փուլում շրջանառության մեջ դրվեց օսմանիզմի կոնցեպցիան, համաձայն որի՝ կայսրության բոլոր ժողովուրդները՝ մահմե-

դական և քրիստոնյա՝ թուրքերը, արաբները, քրդերը, հայերը, հույները, սլավոնները, ասորիները և ուրիշներ, հայտարարվեցին օսմանցիներ: Նրանք, ըստ այդ տեսության, կազմում էին մեկ միասնական ազգ՝ օսմանական ազգը: Օսմանիզմի հայեցակարգը կայսրության բոլոր ժողովուրդներին ծովագալու թերևս առաջին հրապարակային մանիֆեստն էր:

Ոչ թուրք ժողովուրդներին դժվար չեղավ կրահել, թե իրենց գոյության համար ինչ ահավոր սպառնալիք էր թաքնված օսմանիզմի գաղափարախոսության հետևում, և նրանք միահամուռ ընդդիմացան օսմանյան կառավարողների այդ վերին աստիճանի վտանգավոր քաղաքականությանը: Օսմանիզմի գաղափարախոսությունը ծախողվեց:

Օսմանյան գաղափարախոսները դրանից հետո, հատկապես Երիտրուրքերի իշխանության գլուխ գալուց հետո, հրապարակ նետեցին և ապավինեցին թուրքիզմի–թուրանիզմի տեսությանը, որն ավելի վտանգավոր դուրս եկավ, քան օսմանիզմի հայեցակարգը: Թուրքիզմը դարձավ նրանց պաշտոնական գաղափարախոսությունը:

Թուրքիզմն ունի երկու երես կամ կողմ:

Մի երեսն ուղղված է դեպի ներս՝ Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդներին: Նրա խնդիրն էր հող նախապատրաստել, քաղաքական, ռազմական և սոցիալական պայմաններ, նպաստավոր բարոյահոգեբանական մթնոլորտ ստեղծել բոլոր մահմեդական և քրիստոնյա ժողովուրդների բռնի թուրքացման համար: Նրանք ոչ թե հայտարարվում էին թուրքեր, այլ պետք է թուրքացվեին: Սա շատ կարևոր տարրերից հանգամանք է, քանի որ այն պարտադիր կերպով ենթադրում էր բռնության կիրառում:

Դա նախատեսվում էր իրականացնել երեք մակարդակներով. առաջին՝ մահմեդական ժողովուրդների բռնի թուրքացում, իսկ քրիստոնյա ժողովուրդների նաև բռնի մահմեդականացում, երկրորդ՝ եթնիկական մաքրում կամ գտում, որը ենթադրում էր բոլոր այն եթնիկական խմբերի բռնի արտաքսում, ովքեր հրաժարվում էին թուրքացումից, և, երրորդ՝ եթնիկական մաքրուց խմբերի և ժողովուրդների բնաջնջում, այսինքն՝ ցեղասպանություն:

Այս քաղաքականության նպատակն էր ստեղծել «մաքուր» թուրքական պետություն՝ ելակետ ունենալով թուրքական եթնոսի գերազանցության, նրա «քարձու լինելու» ռասայական նոտեցումը:

Դա ուներ նաև մեկ այլ նպատակ՝ պահպանել Օսմանյան կայսրության ամբողջականությունը և կանխել նրա հետագա տրոհումը:

Թուրքիզմի տեսության մյուս երեսն ուղղված էր Օսմանյան կայսրությունից դուրս գտնվող մյուս բոլոր թուրքալեզու ժողովուրդներին, որոնք բնակվում էին Կովկասում, Կենտրոնական Ասիայում, Ուսւաստանի մերձուրալյան նահանգներում, Ղրիմուն և այլն: Նրա նպատակն էր

Օսմանյան կայսրության գլխավորությամբ ստեղծել «Մեծ Թուրանական կայսրություն», որն ընդգրկելու էր մի վիթսարի տարածք՝ Փոքր Ասիայի եվրոպական ափերից մինչև Արևմտյան Սիրիո և Հինաստանի սահմանները: Այս ծրագիրը, որի ջատագովները կան նաև ժամանակակից Թուրքիայի քաղաքական որոշ շրջանակներում¹⁰, հանդիսանում է պանթրութիզմի կենտրոնակետը: Պանթրութիզմի այս ծավալապաշտական նկրտումները մեծ վտանգ էին ներկայացնում Ռուսաստանի, Իրանի, արաբների և տարածաշրջանի տարրեր երկրների և ժողովուրդների կենսական շահերին:

Նա մեծ վտանգ էր ներկայացնում նաև հայությանը, որը աշխարհագրական առումով հայտնվել էր պանթրութիզմի խաչմերուկում: Այդ կապակցությամբ երիտրուքների ղեկավար գործիչնեից մեկը՝ Ալի Իհսանը, նշել է, որ եթե չլիներ Հայաստանը, ապա Կովկասը վաղուց իրենցը կլիներ: Ուրեմն հայությունը դրվել էր երկրներանքի առջև՝ կամ ընդունել թուրքիզմը, կամ վերանալ պանթրութիզմի ճանապարհից:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ հայերի ցեղասպանությունը լիովին տեղավորվում էր «մաքուր» թուրքական պետություն ստեղծելու, Օսմանյան կայսրության տերիտորիալ ամբողջականությունը պահպանելու և թուրանիզմի՝ պանթրութիզմի երիտրուքական ծրագրերի իրականացնան շրջանակների մեջ: Եվ հայերի ցեղասպանության պատճառները պետք է փնտրել նաև այստեղ, այսինքն՝ երիտրութերի «տեսական» հիմնադրույթների և դրանց վրա հիմնված քաղաքականության մեջ:

Իր դերը խաղաց նաև մեկ այլ դրդապատճառ: Հայերին ոչնչացնելով՝ օսմանյան կառավարող վերնախավը ցանկանում էր վերացնել կայսրության ներքին գործերին միջամտելու և նրանից գիշումներ կորցելու եվրոպական պետությունների հնարավորությունները, որից նրանք օգտվում էին հայերին «օգնելու» պատրվակի տակ:

Եվ Թուրքիան Առաջին համաշխահային պատերազմի տարիներին ձեռնամուխ եղավ և հաջողեցրեց կենսագործել իր այդ դիվային ոճիրը:

Դա հաջողվեց, որովհետև առկա էին բոլոր նախադրյալները՝ քանությունների, հալածանքների և զանգվածային արյունալի ջնդունակ և դրանց իրականացման մեջ հարուստ փորձ կուտակած և հմտացած պետական համակարգ, համապատասխան տեսություն (օսմանիզմ, թուրքիզմ, պանթրութիզմ), համապատասխան մեխանիզմ, նպաստավոր պայմաններ:

10 Graham Fuller, Turkey Faces East. New Orientations Toward the Middle East and the Old Soviet Union, RAND, Santa Monica, 1992.

Ահա այսպիսին էին ընդհանուր գծերով XX դարի առաջին ցեղասպանության՝ արմենոցիդի նախադրյալները և դրդապատճառները:

Սակայն այդ նախադրյալները հավանաբար չէին կարող կյանքի կոչքել, եթե չլինեին միջազգային բարենպաստ պայմաններ, որոնք երևան եկան շնորհիվ Առաջին համաշխարհային պատերազմի:

Այսպիսով՝ նախավառված ներքին և արտաքին բարենպաստ պայմաններից, օսմանյան պետությունը, որի գլուխ կանգնած էր Երիտրութական «Սիություն և առաջադիմություն» կուսակցությունը, Երիտրութերի առաջնորդներ Թալեարի, Ենքերի և Զենալի ղեկավարությամբ 1915 թ. իրագործեցին հայերի սպանությունն իրենց պատմական հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում:

Դա նախօրոք ծրագրված և լավ նախապատրաստված ոճրագործություն էր, որը Օսմանյան կայսրության ղեկավարությունը կիրառեց ամենայն դաժանությամբ՝ օգտագործելով պետական մեքենան, բանակը, ժանդարմերիան, քրեական տարրերից կազմված հատուկ ջոկատները և քրդական ցեղերի գինված ավագակախմբերը:

Հայոց ցեղասպանության սկիզբը համարվում է 1915 թ. ապրիլի 24-ը:

1915 թ. մայիս ամսից սկսվեցին հայերի զանգվածային կոտորածները և տեղահանումները Բիթլիսի, Դիարբեքիրի, Էրզրումի, Խարբերդի, Սեբաստիայի (Սվագի) և Վանի վիլայաթներում, այսինքն՝ բուն Արևմտյան Հայաստանի վեց նահանգներում, ինչպես նաև Տրապիզոնի վիլայաթում:

Չնայած անբարենպաստ պայմաններին՝ ցեղասպանության ընթացքում մի շարք վայրերում հայերն այնուհանդերձ կարողացան կազմակերպել դիմադրություն և ինքնապաշտպանական մարտեր մղել թուրքական կանոնավոր գործերի դեմ, ինչպես Շապին-Գարահիսարում, Վանում, Մուսա լեռան շրջանում, Սասունում, Մուշում, Ուրֆայում, Յաջնում և այլ վայրերում՝ գերադասելով մեռնել, պաշտպանելով իրենց ու իրենց ընտանիքի, հայրենիքի պատիվն ու ազատությունը:

Հակառակ պատերազմի ժամանակ գոյություն ունեցած ռազմական գրանցնությանը և լրատվության տարածման խիստ սահմանափակումներին՝ այդուհանդերձ աշխարհին հայտնի դարձավ Երիտրութերի կողմից իրականացված հայերի ցեղասպանության մասին: Միջազգային հանրությունը ցնցված էր անհավատալի թվացող ոճրագործությունից, որը, ի վերջո, նա ընդունեց որպես ոճրագործություն համայն մարդկության դեմ:

Տարբեր երկրների կառավարությունները, պետական, քաղաքական և հասարակական ականավոր գործիչները, հոգևորականները, գրողները, արվեստի մարդիկ և այլն, իրենց բողոքի ծայնը բարձրացրին

ընդդեմ Երիտրուքերի ոճրագործ ղեկավարության հանցավոր արարքների և ի պաշտպանություն հայ ժողովրդի:

1915 թ. մայիսի 13-ին Լոնդոնում, Փարիզում և Պետրոգրադում միաժամանակ հրապարակվեց Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարությունների համատեղ պաշտոնական հայտարարությունը Օսմանյան կայսրությունում հայերի կոտորածների և բուրքական կառավարության անդամների անձնական պատասխանատվության մասին: Նրանում ասվում էր, որ «Նկատի ունենալով այդ նոր ոճրագործությունները, որ կատարվում են Թուրքիայում մարդկության և քաղաքակրթության դեմ՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դաշնակցային կառավարությունները սույնով հրապարակայնորեն հայտարարում են Բարձր դռանը, որ նրանք այդ բոլոր ոճրագործությունների համար անձնական պատասխանատվությունը դնում են բուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև նրա այն տեղական ներկայացուցիչների վրա, որոնք մասնակից են նման կոտորածին»¹¹:

Դայլական ցեղասպանությունը խորապես մտահոգեց Յորմի պապ Բենեդիկտոս XV-ին: Նա 1915 թվականի սեպտեմբերի 10-ին դիմում է օսմանյան սուլթան Մուհամմադ V-ին՝ թույլ չտալ հայերի կոտորած՝ խստագույնս դատապարտելով Երիտրուքական ոճրագործներին «անմեղ ժողովրդի»՝ հայերի ջարդերի համար¹²:

Դայլական ցեղասպանությունը դատապարտում էին նաև մուսուլմանական աշխարհի երեսելի դեմքերը՝ գտնելով, որ այն, ինչ անում էր բուրքական ղեկավարությունը հայերի նկատմամբ, հակասում էր իսլամի սկզբունքներին:

Այդ առումով բացառիկ նշանակություն ունեցավ մուսուլմանական աշխարհի այնպիսի մի բարձր և անառարկելի հեղինակության, ինչպիսին մուսուլմանական աշխարհի գլխավոր սրբավայր Մեքքայի շերիֆ՝ Քիշազի կառավարիչ Յուսեյն իբն Ալի ալ-Քաշիմի դիրքորոշումը: Նշենք, որ նա ուղղակիորեն սերում էր Մուհամմադ մարզարեի տոհմից, և այդ հանգամանքը մի առանձին կշիռ էր տալիս նրա խոսքին:

11 Свет, № 124, 13 мая 1915г.

12 Այդ մասին կրկին հիշեցրեց Յորմի Քոփհաննես-Պողոս II պապը 2001 թ. սեպտեմբերի 26-ին Երևանում, ուր նա ժամանել էր մասնակցելու Դայաստանում քրիստոնեությունը պիտուական կրոն հոչակման 1700-ամյակի տոնակատարություններին: Նա եղավ Եղեռնի հուշահամալիրում, որտեղ Լոռիքան պատի վրա դրվեց Բենեդիկտոս XV պապի հուշաքարը: Յուշաքարը դրեց նաև Յովիհաննես-Պողոս II-ը, որի վրա գրվեցին նրա հետևյալ տողերը. «Քիշիր, Տէ՛ր, այս ազգի որդիների տառապանքը և օրինի՞ն Դայաստան» («Դայաստան Դամբապետություն», 27 սեպտեմբերի, 2001 թ., Երևան, էջ 1):

Հուսեյն իբն Ալին 1916 և 1917 թթ. ուղերձներով դիմեց մուսուլմանական աշխարհին: Երկու ուղերձներում էլ նա խստորեն քննադատում էր երիտրուքական «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը, նրա պարագլուխներ Թալեաթին, Էնվերին և Զեմալին Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդներին բռնի ուժով թուրքեր դարձնելու, արաբների նկատմամբ թշնամական վերաբերմունքի և կայսրության ամբողջ տարածքում հայերի զանգվածային կոտորածների համար պատերազմի տարիներին¹³:

Մեքքայի շերիֆը հատուկ ուղերձ է հոլում Էմիրներ Ֆայսալին և Արդել Ազիզ ալ-Զարբային, որոնք այդ ժամանակ զիսավորում էին օսմանյան տիրապետության դեմ ուղղված արաբական ապստամբությունը, և հրամայում նրանց ամենալայն օգնությունը ցույց տալ ջարդերից փրկված հայերին և պաշտպանել նրանց, «ինչպես պաշտպանում եք Զեր անձը, Զեր որդիներին և Զեր ունեցվածքը, որովհետև նրանք (հայերը – Ն. Դ.) մահմեդականների գիմմիներն են»¹⁴: Նա, անարգանքի սյունին զամելով երիտրուքերին, պահանջում էր նրանցից կապերը խսել իսլամական աշխարհի, սրբազն Կորամի և Սուլնայի հետ, քանի որ նրանց ոճրագործությունները ընդհանուր ոչ մի բան չունեն իսլամի և նրա առաջնությունների հետ:

Ի պաշտպանություն հայերի՝ իրենց բողոքի ծայնը բարձրացրին աշխարհի տարբեր երկրների հասարակական, քաղաքական և կրոնական գործիչները, գորողները, գիտնականները, արվեստի գործիչները և այլն: Դրանց թվում էին լորդ Չեյմս Բրայսը և XX դարի խոշորագույն պատմաբաններից մեկը՝ Առնոլդ Թոյնբին Անգլիայից, բողոքական հոգևորական

13 Տե՛ս Արաբական աղբյուրները հայերին ոչնչացնելու ոճրագործության մասին, Բեյրութ, 1988 (արաբերեն):

14 Նույն տեղում: «Զիմնի» բառացիորեն նշանակում է «ճարդիկ», որոնք գտնվում են հովանավորության ներքո» կամ «ենթականավորյաներ»: Դրանք, ըստ միջնադարյան արաբա-իսլամական սովորության իրավունքի, իսլամական պետության սահմաններում բնակվող այն ժողովուրդներն էին, որոնք թեև մահմեդական չէին, սակայն ունեին իրենց սուրբ գիրքը: Դրանց թվին էին պատկանում քրիստոնյաները, իրեաները, զրադաշտականները, որոնք ունեին իրենց սուրբ գիրքը՝ համապատասխանարար Աստվածաշունչը, Թորան, Ավեստան և այլն: Նրանք իրավունք ունեին պահպանել և դաշտել իրենց սեփական կրոնը, երաշխավորվում էր նրանց կյանքը, ազատությունը և ունեցածքի անձնությունը և այլն: Այլ կերպ ասած, իսլամական պետությունը և Կորամը հովանավորում էին նրանց և նրանց նկատմամբ ոտնձգությունը, առավել ևս զիմնի՝ ներահվանավորյալի սպանությունը ըստ երիկական-կրոնական պատկանելության, համարվում էր անբույլատերնելի:

Տե՛ս Խլամ. Կրաτкий справочник. Москва, 1983, с. 37. Ն. Դովիաննիսյան, Արաբական երկրների պատմություն, հ. I, Երևան, 2003:

Իոհանես Լեփսիուսը, Արմին Վեգմերը, Կարլ Լիբկնեխտը և Ռոզա Լյուքսեմբուրգը Գերմանիայից, Անատոլ Ֆրանսը և Ռոմեն Ռոլանը Ֆրանսիայից, Ֆրիտյոֆ Նանսենը Նորվեգիայից, Կալերի Բյորուսովը և Յուրի Վեսելիվսկին Ռուսաստանից, Յերբերտ Գիբբոնսը և Յենրի Մորգենթաուն ԱՄՆ-ից, արարական հայտնի քաղաքական-հասարակական գործիչներ Ֆայեգ Էլ-Ղոսեյնը և Ասադ Դաղիրը և շատ ու շատ այլ գործիչներ:

Այսպիսով՝ կարելի ասել, որ սուլթան Աբդուլ Համդի II-ի և Երիտրութերի, Երանց առաջնորդներ Թալեբի, Ենքերի, Զեմալի, Նազիմի, Չակիր Բեհատողինի և մյուսների ոճրագործ քաղաքականությունը հայերի, ասունիների, հույների, արաբների և մյուս ժողովուրդների նկատմամբ իրավունք է տալիս եզրակացնելու, որ օսմանյան պետությունը XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին վերածվել էր ցեղասպան պետության:

Դայոց ցեղասպանությունը հայության համագոյացին ողբերգությունն էր, որը շատ ծանր հետևանքներ ունեցավ Երա համար:

Արևմտյան Դայաստանում և Օսմանյան կայսրության ամրող տարածքում սպանվեց 1,5 մլն և բանի տեղահանվեցին և աքսորվեցին հայութիազարավոր հայեր: Դայերի բնօրրանը դատարկվեց իր բնիկ բնակչությունից՝ հայերից: Դրա փոխարեն ուժեղացավ թուրքերի և հատկապես քրոների Ենթափանցումը հայկական շրջաններ, որը սկսվել էր դեռևս նախորդ դարերում:

Դայերը կորցրեցին իրենց հայենիքի ամենամեծ մասը՝ Արևմտյան Դայաստանը, որը կազմում է Դայկական լեռնաշխարհի 9/10-րդը: Դայերի տնօրինության տակ մնաց միայն այդ տարածքի 1/10-րդ մասը, որի վրա այսօր գոյություն ունի անկախ Դայաստանի Դանրապետությունը:

Տեղահանության պատճառով հայերը ցրվեցին աշխարհի տարբեր մայրցամաքների՝ Ասիայի, Եվրոպայի, Ամերիկայի և Աֆրիկայի բազմաթիվ երկրներում, որտեղ կազմակորպվեցին հայ համայնքներ իրենց ազգային, կրթական, մշակութային և եկեղեցական կառույցներով: Առաջացավ հայ սփյուռքը, և հայությունը երկիրեղվեց: Նախկին բաժանմանը՝ արևմտահայության և արևելահայության, փոխարինելու եկավ նոր բաժանում՝ Դայստանի հայություն և սփյուռքահայություն:

Դայոց ցեղասպանությունը կամ արմենոցիդը XX դարի պատմության սկզբն է:

* * *

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին յուրահատուկ դրության մեջ հայտնվեց նաև Արևելյան Դայաստանը, մանավանդ Ռուսաստանում 1917 թ. փետրվարյան և հոկտեմբերյան հեղափոխություն-

Առերից հետո: Առաջինը տապալեց ցարական ինքնակալությունը և Ռուսաստանում հաստատեց բուրժուադեմոկրատական հանրապետություն: Կովկասում վերացվեց փոխարքայությունը, և մարտի 9-ին ստեղծվեց կառավարման նոր մարմին՝ Անդրկովկասի հատուկ կոմիտե՝ Օզակոն: Նրա հիմնական խնդիրն էր նոր կարգերի հաստատումը Անդրկովկասում: Հայաստանում և Անդրկովկասում զգալիորեն աշխուժացավ քաղաքական կյանքը, ակտիվացրին իրենց գործունեությունը Դաշնակցություն և Հնչակ կուսակցությունները, ստեղծվեց նոր քաղաքական կուսակցություն՝ Հայկական ժողովրդական կուսակցությունը, Շուշիում, Թթիլիսիում և Բաքվում ձևավորվեցին Հայկական ազգային խորհուրդներ և այլն:

Օգակոնը լիազորված էր գործելու նաև Արևմտյան Հայաստանի այն մասերում, որոնք ազատագրված էին ռուսական զորքերի կողմից և գտնվում էին նրանց հսկողության տակ: Ժամանակավոր կառավարության որոշմամբ՝ 1917 թ. ապրիլի 26-ին ստեղծվեց Թուրքահայաստանի գլխավոր կոմիսարի պաշտոն: Ամենայն Հայոց կարողիկոս Գևորգ V-ը, դիմելով Պետրոգրադում հաստատված Ռուսաստանի ժամանակավոր կառավարությանը, հույս հայտնեց, որ «Վերանորոգված Ռուսաստանը, դաշնակիցների համաձայնությամբ, կստեղծի նախկին տաճկական վիլայաթների վրա ազատ Հայաստան»: Ժամանակավոր կառավարությունը Արևմտյան Հայաստանում ստեղծեց մեկ ընդհանուր Հայկական նահանգապետություն, որը քաղկացած էր երգործի, Վանի և Խնուսի շրջաններից:

Հայկական քաղաքական կուսակցությունները և քաղաքական ուժերը հանդես էին գալիս ազգերի ինքնորոշման իրավունքի պաշտպանությամբ՝ ակնկալելով ազգային-տարածքային ինքնակարություն Ռուսաստանի կազմում:

Սակայն բուրժուադեմոկրատական հեղափոխության խորացումը կասեցվեց 1917 թ. հոկտեմբերի 25-ին (նոյեմբեր 7-ին) Պետրոգրադում ռուսական բոլշևիկների կողմից իրագործված սոցիալիստական հեղափոխության պատճառով: Ժամանակավոր կառավարությունը տապալվեց, և իշխանությունը Ռուսաստանում գրավեցին բոլշևիկները Վ. Ի. Լենինը՝ Լենինի գլխավորությամբ:

Դրա հետևանքով նոր քաղաքական իրադրություն ստեղծվեց Անդրկովկասում, այդ թվում նաև Հայաստանում: Այստեղ հիմնական քաղաքական ուժերը՝ վրացական մենշևիկները, աղրբեջանական մուսավարականները, հայ դաշնակցականները, սոցիալիստ-հեղափոխականները և սահմանադրական դեմոկրատները, հանդես եկան սոցիալիստական հեղափոխության և Անդրկովկասում խորհրդային իշխանության հաստատման դեմ: Օգակոնը լուծարվեց, և նրա փոխարեն վերոնշյալ

քաղաքական կուսակցությունները 1917 թ. նոյեմբերին ստեղծեցին կառավարման նոր մարմին՝ Անդրկովկասյան կոմիսարիատ, որը փաստորեն տեղական կառավարության ֆունկցիաներ էր իրականացնում: Նա իր գլխավոր խնդիրներից մեկը համարեց «պայքարն Անդրկովկասում անհշանականության և Խորհրդային Ռուսաստանի դեմ»: Սակայն այս մարմինը երկար կյանք չունեցավ և 1918 թ. փետրվարի 10-ին իր տեղը գիշեց Անդրկովկասյան սեյմին, որը 1918 թ. ապրիլի 9(22)-ին Անդրկովկասը հայտարարեց Ռուսաստանից անկախ, իսկ հաջորդ օրը՝ ապրիլի 10(23)-ին, հոչակեց Անդրկովկասի Ֆեդերատիվ Դեմոկրատական Հանրապետություն, որի կառավարությունը գլխավորեց Ա. Չիսնելին:

Այսպես ավարտվեց Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու գործընթացը:

Անդրկովկասի և հատկապես Յայաստանի համար ստեղծված անքարենպաստ պայմանների առաջացնան մեջ իր վճռական դերն ունեցավ Գերմանիայի և նրա դաշնակիցներ Թուրքիայի, Ավստրո-Հունգարիայի և Բուլղարիայի հետ 1918 թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում խորհրդային կառավարության կնքած սեպարատ հաշտության պայմանագիրը:

Ըստ Բրեստ-Լիտովսկու պայմանագրի և Թուրքիայի հետ ստորագրված լրացուցիչ պայմանագրի՝ Ռուսաստանը Թուրքիային էր վերադարձնում Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ գրաված բոլոր հայկական տարածքները: Դեռ ավելին՝ խորհրդային Ռուսաստանը Թուրքային էր գիշում նաև Արևելյան Յայաստանի մաս կազմող Կարսի և Արդահանի շրջանները:

Այսպիսով՝ սարսափելի վտանգ էր կախվում Յայաստանի վրա, որն ավելի սպառնալից էր դառնում, եթե նկատի ունենանք, որ ռուսական գործերը լքում էին Կովկասյան ռազմաճակատը և տուն վերադարձնում:

Ռուսաստանի գիշողական և անհեռատես քաղաքականությունից չհապաղեց անմիջապես օգտվել Թուրքիան:

Թուրքական գործերը, որոնք ռուսական գործերի հեռանալուց հետո արդեն գրավել էին հայկական Երզնկա, Բայբուրդ, Էրզրում, Սարիղամիշ և Արդահան քաղաքները, 1918 թ. մայիսին վերսկսեցին հարձակումը, ընդհուպ մոտեցան Կարսին ու Բաբունին և ներխուժեցին Երևանի ու Թբիլիսիի նահանգները: Մայիսի 16-ին նրանք գրավեցին Արևելյան Յայաստանի տնտեսական և ճշակության կարևոր կենտրոն Ալեքսանդրապոլը: Շարունակելով խորանալ Արևելյան Յայաստանում՝ նրանք շարժվեցին Երևանի ուղղությամբ:

Թուրքական բանակի գործողություններն Արևելյան Յայաստանում շարունակությունն էին օսմանյան կառավարողների ցեղասպան քաղաքականության, որը նրանք հաջողությամբ իրագործել էին Արևմտյան

Հայաստանում: Նրանց նպատակն էր ոչ միայն նորանոր տարածքների նվաճում Անդրկովկասում, այլև հայկական էթնոսի խսպառ ոչնչացում:

Ալեքսանդրապոլը գրավելուց հինգ օր անց թուրքական զորքերը գրավեցին Սարդարապատը և շարժվեցին Երևանի ուղղությամբ: Բայց այդ պահին տեղի ունեցավ այն, ինչ կոչվում է հրաշք: Հայոց սակավաթիվ բանակի զորացուկատները, համայն հայ ժողովուրդը ոտքի ելան թուրքական զորքերի դեմ և 1918 թ. մայիսի 21–28-ը ջախջախիչ հարվածներ հասցրեցին ու պարտության մատնեցին թուրքական բանակին Սարդարապատի, Բաշ Ապարանի ու Ղարաբղիլիսայի մոտ տեղի ունեցած ճակատամարտերում, ազատագրեցին բազմաթիվ բնակավայրեր ու թշնամուն հետ շարտեցին մինչև Ալեքսանդրապոլ: Դա հայ ժողովորդի բազմադարյան պատմության ամենափառավոր էթերից մեկն էր, որը բախտորոշ նշանակություն ունեցավ հայ ժողովորդի համար:

Մայիսյան հերոսամարտերի շնորհիվ վերացավ հայ ժողովորդի գլխին կախված մահացու վտանգը: Այն ունեցավ նաև քաղաքական մեծ նշանակություն: Այդ պատմական հաղթանակների շնորհիվ հայ ժողովորդին հաջողվեց հինգ դար անց վերականգնել իր պետականությունը: 1918 թ. մայիսի 28-ին հոչակվեց Հայաստանի առաջին հանրապետությունը, որի ստեղծման մեջ արտակարգ դերակատարում ունեցավ Արամ Մանուկյանը: Կազմվեց Հայաստանի Հանրապետության կառավարությունը, որի մեծամասնությունը դաշնակցության կուսակցության անդամներ էին: Առաջին հանրապետության առաջին կառավարությունը գլխավորեց Հովհաննես Քաջազնունին:

Կառավարությունը ծեռնամուխ եղավ իշխանության մարմինների ստեղծմանը՝ պետական շինարարությունը հանրաելով իր կարևորագույն խնդիրներից մեկը: Հայոց պառլամենտը Հայաստանի առաջին հանրապետության գոյության երկուսուկես տարիների ընթացքում ընդունեց 300 օրենք: Լուրջ քայլեր կատարվեցին դեմոկրատական հանրապետություն կառուցելու ուղղությամբ: Հայոց լեզուն հայտարարվեց պետական լեզու: Ապահովվեցին ազգային փոքրամասնությունների իրավունքները: Կարևոր նշանակություն ունեցավ հայ ազգային բանակ ստեղծելու վերաբերյալ պառլամենտի ընդունած օրենքը: Իսկ 1919 թ. մայիսի 28-ին՝ անկախ հայոց պետականության ստեղծման առաջին ամյակին, Հայաստանի կառավարությունը պաշտոնապես հոչակեց միացյալ և անկախ Հայաստանի ստեղծումը, որը նշանակում էր Արևմտյան Հայաստանի միավորումը Հայաստանի Հանրապետությանը:

Հետագա դեպքերը ցույց տվեցին, որ այդ որոշումը ծևական բնույթ չէր կրում: 1919 թ. հայոց բանակը թուրքերից ազատագրեց Կարսի մարզը և Նախիջևանի գավառը, որի շնորհիվ Հայաստանի Հանրապետու-

թյան տարածքը կազմեց մոտ 70 հազ. քառ. կմ: Դրա շնորհիվ ստեղծվեցին ավելի բարենպաստ պայմաններ երիտասարդ հանրապետության գոյության և նրա առջև ծառացած խնդիրների լուծման համար:

Սակայն շատ ծանր էր հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը: Քայլքայված էին երկրի արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը, որի մեջ իրենց մեծ բաժինն ունեին բուրքական բանակների կողմից իրագործված թալանը, կողոպուտը և գողությունը, չեղ գործում երկաթուղին և այլն: Զափիազանց բարձր էր գործազրկությունը: Դրությունը բարդանում էր նրանով, որ մեծ թիվ էին կազմում արևմտահայ գաղքականները, որոնք ապաստան էին փնտում Հայաստանում, որբերը, որոնք ողողել էին գյուղերն ու քաղաքները: Նրանց պետք էր ապահովել սնունդով, բնակարանով և աշխատանքով, որի հնարավորությունը, ցավոք, Հայաստանը դեռևս չուներ: Չեղ բավականացնում ցորենը և առաջին անհրաժեշտության այլ սննդամթերքը: Շատ շրջաններում սով էր սկսվել:

Կառավարությունը փորձում էր ելք գտնել ստեղծված անելանելի թվացող վիճակից: Քայլեր էին ծեռնարկվում արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը և արհեստագործությունը զարգացնելու ուղղությամբ: Թեև դանդաղ, բայց աստիճանաբար նկատվում էր տեղաշարժ սոցիալ-տնտեսական կյանքում:

Միաժամանակ ուշադրություն էր դարձվում կրթությանը և մշակույթին, բացվում էին դպրոցներ և մշակութային զանազան կենտրոններ, ինչպես հանրային գոադարաններ, ազգագրական թանգարաններ, իսկ 1920 թ. հունվարի 30-ին Ալեքսանդրապոլում բացվեց համալսարան, որի մասին երազել էին հայ մտավորականների մի քանի սերունդներ: Շատ մասնագետներ արտասահմանից վերադառնում էին Հայաստան և մասնակցում նորաստեղծ հանրապետության կերտմանը:

Զգալի չափով ամրապնդվեց Հայաստանի միջազգային դրությունը: Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական և հյուպատոսական հարաբերություններ հաստատեց ԱՄՆ-ի, Անգլիայի, Իրանի, Իտալիայի, Չունաստանի, Վրաստանի, Ալբրեժանի, Ծվերիայի, ճապոնիայի, Ֆինլանդիայի և այլ պետությունների հետ: Իսկ 1920 թ. հունվարի 19-ին դաշնակիցների՝ Անտանտի Գերագույն խորհուրդը, որի մեջ մտնում էին Անգլիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ը, Իտալիան և ճապոնիան, պաշտոնապես ճանաչեց Հայաստանի անկախությունը: Հայաստանի համար կարևոր նշանակություն ունեցավ 1920 թ. օգոստոսի 10-ին Թուրքիայի հետ դաշնակիցների ստորագրած Սկրի հաշտության պայմանագիրը, որի տակ կային նաև Թուրքիայի և Հայաստանի պատվիրակությունների ստորագրությունները:

Սկզի պայմանագրով Թուրքիան Հայաստանը ծանաչում էր որպես ազատ և անկախ պետություն: Նրան էին անցնում երգրումի վիլայաթը, Վանի և Բիթլիսի վիլայաթների մոտ երկու երրորդը և Տրավհանի վիլայաթի մի մասը: Հայաստանը ելք էր ստանում դեպի Սև ծով: Ընդհանուր առմանը Հայաստանին էր անցնում Արևմտյան Հայաստանի տարածքների մոտ 90 հազ. քառ. կմ, որը Հայաստանի առաջին հանրապետության տարածքների հետ կազմում էր մոտ 160 հազ. քառ. կմ:

Սակայն Սկզի պայմանագիրը կյանքում չիրագործվեց: Նրա դեմ դուրս եկան Թուրքիայի նոր կառավարողները Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ: 1920 թ. աշնանը՝ սեպտեմբերի 28-ին, քեմալական գործերոն առանց պատերազմ հայտարարելու արշավեցին Հայաստանի վրա և գրավեցին նրա մի շարք շրջանները՝ Օլթին, Կաղզվանը, Արդահանը, Սարիղամիշը: Յոկտեմբերի 31-ին ընկավ Կարսը, իսկ նոյեմբերի 7-ին՝ Ալեքսանդրապոլը: Պետք է նշել, որ Խորհրդային Ռուսաստանը նախօրոք տեսյակ էր թուրքական ծրագրերին և տվել էր իր համաձայնությունը՝ պայմանով, որ թուրքական գործերը չանցնեն Սարիղամիշ-Շախրախսիթ գծից: Ռուսաստանի ոչ մի արդարացում չունեցող այդ դիրքորոշումը բացատրվում է նրանով, որ նա անհասկանալի պատճառներով Թուրքիան դիտում էր Արևմտյան հեղափոխության հենարան և հույս ուներ նրա օգնությամբ սոցիալիստական հեղափոխությունը տարածել նաև Արևմտյան Երկուներում:

Թուրքիան Հայաստանին պարտադրեց բալանչիական պայմանագիր, որը կնքվեց 1920 թ. դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում, երբ Հայաստանն արդեն հայտարարվել էր խորհրդային: Այդ պայմանագրով Թուրքիային էին անցնում Կարսի մարզը և Սուլմալուի գավառը, իսկ Նախիջևանը և մի շարք այլ տարածքներ հայտարարվեցին Թուրքիայի հսկողության տակ գտնվող տարածները:

Հայաստանի առաջին հանրապետությանը սպառնում էր նաև Խորհրդային Ռուսաստանը, որն ամեն կերպ ծգտում էր այնտեղ հաստատել խորհրդային կարգեր:

Ի վերջո, Հայաստանի առաջին հանրապետությունը, որը գոյություն ունեցավ ընդամենը երկուսուկես տարի՝ 1918 թ. մայիսի 28-ից մինչև 1920 թ. նոյեմբերի 29-ը, չղիմացավ իր երկու հզոր հարկաների ճնշանը և դադարեցրեց իր գոյությունը: 1920 թ. նոյեմբերի 29-ին իշխանությունն անցավ բոլշևիկներին, և Հայաստանը հայտարարվեց խորհրդային: Հայաստան մտավ XI Կարմիր բանակը, իշխանությունն իր ձեռքը վերցրեց Հեղափոխական կոմիտեն՝ Սարգիս Կասյանի գլխավորությամբ:

Այդ պահից սկսվում է Հայաստանի երկրորդ հանրապետության՝ Խորհրդային Հայաստանի պատմությունը, որը գոյություն ունեցավ 70 տարի՝ մինչև 1991 թ., երբ փլուզվեց Խորհրդային Միությունը:

Երկրորդ հանրապետության առջև կանգնած էր հարաբերություններն իր հարևանների՝ Թուրքիայի և Ադրբեյջանի հետ կարգավորելու խնդիրը: Ադրբեյջանը, որը խորհրդային էր դարձել դեռևս 1920 թ. ապրիլի 28-ին, պաշտոնապես հայտարարեց 1920 թ. դեկտեմբերի 2-ին, որ ինքը տարածքային ոչ մի պահանջ չունի Խորհրդային Հայաստանի նկատմամբ և Լեռնային Ղարաբաղը, Նախիջևանը և Զանգեզուրը ճանաչում է Հայաստանի անքաժան նաև:

Խորհրդային Հայաստանի կառավարությունը չեղյալ հայտարարեց 1920 թ. դեկտեմբերի 2-ին Թուրքիայի հետ կնքված Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Բայց նրան չհաջողվեց հետ վերցնել Կարսի մարզը և Սուլըմալուի գավառը: Խորհրդային Ողուսաստանի բոլշևիկյան կառավարությունն այդ հարցում ոչ մի օժանդակություն ցույց չտվեց Հայաստանին: Դեռ ավելին՝ 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում Թուրքիայի հետ ստորագրված բարեկամության և եղբայրության պայմանագրով Ողուսաստանը ճանաչեց, որ Թուրքիային էին անցնում Կարսի մարզը և Սուլըմալուի գավառը, իսկ Խորհրդային Ադրբեյջանին՝ Նախիջևանը և Հայաստանի այլ տարածքները: Իսկ Ողուսաստանի կոմունիստական կուսակցության Կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի որոշումով Լեռնային Ղարաբաղը՝ Արցախը, նույնպես հանձնվեց Ադրբեյջանին՝ հակառակ այն պարագային, որ դա մշտապես եղել է Հայաստանի տարածք, նրա բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 95 տոկոսը, այդ ժամանակ հայեր էին, և նրանք վճռականորեն դեմ էին իրենց երկիրը դնել օտարի՝ Ադրբեյջանի տիրապետության տակ, մի պետության, որը պատմության մեջ երբեք գոյություն չի ունեցել և առաջին անգամ քաղաքական ասպարեզում հայտնվել էր 1918 թ.:

Այսպիսով՝ Հայաստանը դարձավ ռուս-թուրքական գաղութային բնույթի գործարքի զոհ, որի պատմական պատասխանատվությունն ընկնում է հավասարապես Սուլըմաֆա Քենալի և Լենինի, նրանց այսպես կոչված «բարեկամության» վրա:

Հայաստանն ունեցավ տարածքային մեծ կորուստներ: Թուրքիային անցան ոչ միայն Արևմտյան Հայաստանի վեց նահանգները, այլև Արևելյան Հայաստանի Կարսի մարզը, Սուլըմալուի, Օլթի, Իգդիրի, Կաղզկանի և Սարիհամիշի շրջանները, իսկ բուրքական նորաստեղծ երկրորդ պետությանը՝ Ադրբեյջանին, Ողուսաստանը, առանց հաշվի առնելու Հայաստանի կարծիքը, զիջեց Հայաստանի անքաժան նաև կազմող Լեռնային Ղարաբաղը, Նախիջևանը և Երևանի նահանգի որոշ տարածք-

Եթու Այդ բոլորից հետո Հայաստանի տարածքը խիստ կրծատվեց, և նրան մնաց ընդամենը մոտ 30 հազ. քառ. կմ, որը կազմում է պատմական Հայաստանի տարածքների ընդամենը մեկ տասներորդը:

Թուրքիայի, Աղրբեջանի և Վրաստանի հետ 1921 թ. հաստատված Հայաստանի պետական սահմանները պահպանվում են մինչև այժմ:

1920 թ. վերջերից սկսվեց Հայաստանի երկրորդ հանրապետության պետական, այդ թվում նաև տեղական նոր մարմինների կազմավորումը: Տեղական հեղափոխական կոմիտեներին փոխարինելու եկան բանվորական և գյուղացիական խորհուրդները, իսկ 1922 թ. փետրվարին կայացավ Հայաստանի խորհուրդների առաջին համագումարը, որն ընդունեց երկրի առաջին սահմանադրությունը: Հանրապետությունը պաշտոնապես կոչվեց Հայաստանի խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն (ՀԽՍՀ): Դրանից հետո ՀԽՍՀ-ն Վրաստանի և Աղրբեջանի հետ միասին մտավ Անդրկովկասի խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության (ԱԽՖՍՀ) մեջ: Սակայն դրանով չավարտվեց ինտեգրացիոն գործընթացը: 1922 թ. դեկտեմբերի 30-ին Ռուսաստանը, Ուկրաինան, Բելոռուսիան և ԱԽՖՍՀ-ն միավորվեցին և ստեղծեցին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը՝ ԽՍՀՄ-ը: Նրա մեջ միավորված միութենական հանրապետությունները միութենական կառավարության իրավասությանը զիջեցին արտաքին քաղաքականության, պաշտպանության և արտաքին առևտությանը: Զեկանորեն ԽՍՀՄ-ը համարվում էր ֆեդերատիվ պետություն, բայց իրականում նա վերածվեց կենտրոնացված պետության:

Դնարավոր չէ միանշանակ գնահատական տալ Հայաստանի պատմության խորհրդային շրջանին, ինչպես և խորհրդային մյուս հանրապետությունների և ամբողջությամբ վերցրած ԽՍՀՄ-ի պատմությանը: Այստեղ առկա են և խիստ բացասական երևույթներ, և ակնառու դրական գաղգացումներ:

Առաջինը կամ բացասական երևույթները բնորոշ էին պետական, քաղաքական, հասարակական և իրավական ոլորտին: Ինչպես ամբողջ ԽՍՀՄ-ում, այնպես էլ Հայաստանի երկրորդ հանրապետությունում, հաստավեց տոտալիտար՝ ամբողջատիրական վարչակարգ, որի միջուկը կազմում էր կառավարող կոմունիստական կուսակցության մենատիրությունը: Երկրում արգելվեցին այլ կուսակցությունները, իսկ հասարակական, երիտասարդական, արհմիութենական և այլ կազմակերպություններ գտնվում էին կոմունիստական կուսակցության վերահսկողության տակ և գործում էին նրա հրահանգներով: Երկրում տիրապետող էր հանդիսանում մարքս-լենինյան գաղափարախոսությունը, արգելված էր և խստորեն հետապնդվում էր այլախոհությունը: Կոմունիստական

կուսակցությունը և կառավարությունն իրենց գործունեության մեջ ավելի ու ավելի էին հենվում պատժիչ օրգանների՝ ներքին գործերի և անվտանգության նախարարությունների վրա: Ամբողջ երկրում հաստատվել ու ծաղկում էր ի. Ստալինի անձի պաշտամունքը, որը 1922 թ. դարձել էր կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղարը, իսկ 1939 թ. ստանձնել էր նաև կառավարության ղեկավարի պաշտոնը:

Դրությունը հատկապես սրվեց 1930-ական թվականներին, երբ զանգվածային ծերբակալությունները, աքսորը և գնդակահարությունները դարձան Խորհրդային Միության, Հայաստանի ու մյուս բոլոր հանրապետությունների ներքաղաքական կյանքի հիմնական նորմերը: Չերբակալում և գնդակահարում էին առանց դատաիրավական նորմերի պահպանման, կամայականորեն, ոչ միայն ականավոր կուսակցական ու պետական գործիչների, այլև գրողների, արտիստների, երաժիշտների, ինժեներների, հասարակ բանվորների ու գյուղացիների: Սպանվեց Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջին քարտուղար Աղասի Խանջյանը, Հայաստանի կառավարության նախագահ Սահակ Տեր-Գարբինյանը և այլ ականավոր գործիչներ: Այդ տարիներին միայն Հայաստանում ծերբակալվել, բռնածնչնան է ենթարկվել, աքսորվել և գնդակահարվել 42 հազար մարդ, որոնք ոչ մի բանում մեղավոր չէին, և որոնք հետագայում՝ 1950-ական թվականներին, Ստալինի մահից հետո ռեարիլիտացիայի ենթարկվեցին:

Քաղաքական առունով այսպես կոչված սոցիալիստական հասարակարգը խոր ճգնաժամ էր ապրում: Ղենոկրատական ազատությունների բացակայությունը, բռնատիրությունը, հալածանքները և տոտալիտար անվերահսկելի վարչակարգը, այս բոլոր հանդիսացան Խորհրդային Միության փլուզման գլխավոր պատճառներից մեկը:

Իսկ ինչ վերաբերում է ԽՍՀՄ-ի և Հայաստանի սոցիալ-տնտեսական և ծաշակութային զարգացմանը, ապա այստեղ պատկերն այլ էր: Տոտալիտար վարչակարգը կարողացավ կենտրոնացնել իր ծեռքում տնտեսական զարգացման նյութական և ֆինանսական բոլոր լծակները, վերացնել ռեսուրսների փոշիացումը և զարկ տալ տնտեսական զարգացմանը: Ընտրվեց երկրի ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման ուղին: Հայաստանը կարողացավ 1928 թ. ավարտել իր տնտեսության վերականգնումը, որը քայլայվել էր հատկապես թուրքական 1918 և 1920 թթ. երկու ռազմական արշավանքների հետևանքով: Դրան հաջորդեց Հայաստանի վերածումն արդյունաբերական երկրի: Զեավորվեցին և զարգացան արդյունաբերության այնպիսի ճյուղեր, ինչպես մեքենաշինական, լեռնաարդյունաբերական, քիմիայի, թերև արդյունաբերության, իսկ հետագայում նաև ավտոմորիլային, ռադիո-

ֆիզիկայի, էլեկտրոնիկայի, ռազմական և այլն: Զարգացավ և արդիականացվեց նաև գյուղատնտեսությունը: Մեծ վերելք ապրեցին ազգային մշակույթը և գիտությունը: 1943 թ. հիմնվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան: Հայաստանն իր տնտեսական, մշակութային և գիտական զարգացման նակարդակով գրավում էր առաջատար դիրքեր Խորհրդային Միությունում և վերածվել էր կարևոր կենտրոնի:

Սակայն հետագայում, հատկապես 1950-ական թվականներից սկսած, տնտեսական առումով նույնպես խորհրդային Միությունը և նրա կազմի մեջ մտնող հանրապետությունները, այդ թվում նաև Հայաստանը, սկսեցին ճգնաժամ ապրել: Տնտեսության բնագավառում հաստափած վարչատնտեսական համակարգը ոչ միայն իրեն չէր արդարացնում, այլև լրջորեն խոչընդոտում էր երկրի առաջընթացը: Խորհրդային Միությունն ավելի ու ավելի էր հետ մնում եվրոպական զարգացած երկրներից ու ԱՄՆ-ից:

Այսպիսով՝ ճգնաժամը համակել էր երկրի պետական, քաղաքական, հասարակական, տնտեսական, սոցիալական և մշակութային ամբողջ համակարգը:

Ճգնաժամն իր ոլորտի մեջ ներառել էր նաև ազգային հարաբերությունները: Հատկապես զգացնել էր տալիս այն հանգանանքը, որ ազգային սահմանները հաստատվել էին կամայականորեն, ելնելով քաղաքական նկատառումներից և «քաժանի՛ր, որ տիրես» սկզբունքից: Դրա դրսևորումներից մեկն էլ այն էր, որ հայկական պատմական տերիտորիաներ Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը խորհրդային կառավարության ապօրինի որոշումով խլվել էին նրա օրինական տիրոջից՝ Հայաստանից, և հանձնվել Ադրբեյջանին, որի հետ համաձայն չէր և չէր կարող հաշտվել հայ ժողովուրդը:

Ճգնաժամն այնքան խորն էր ու համապարփակ, որ այն այլևս հնարավոր չէր հաղթահարել առանձին որոշումներով կամ միջոցառումներով: Անհրաժեշտ էին արմատական համակարգային փոփոխություններ: Սակայն ուսկրացած կոնունիտական կուսակցական դեկավարությունն ընդունակ չէր նման քայլերի: ճիշտ է, թվում էր, թե նման մի փորձ էր հանդիսանում 1980-ական թվականների վերջերին Ս. Գորբաչովի կողմից նախաձեռնած վերակառուցման կուրսը: Բայց շուտով ակնհայտ դարձավ, որ նա հստակ չէր պատկերացնում, թե ինչ էր ուզում և ինչպես էր ցանկանում իրագործել իր խնդիրները: Նա վճռական ու հետևողական չէր իր քաղաքականության մեջ: Ուստի այդ քաղաքականության ծախողումն անխուսափելի էր, որի քաղաքական արդյունքը եղավ Խորհրդային Միության փլուզումը: ԽՍՀՄ-ը պաշտոնապես իր գոյու-

թյունը որպես պետություն և միջազգային իրավունքի սուբյեկտ դադարեցրեց 1991 թ. դեկտեմբերի 21-ին:

Նախքան ԽՍՀՄ-ի լուծարումը միութենական հանրապետություն-Անդրում, այդ թվում նաև Հայաստանում, սկսվել էին համազգային շարժումներ, որոնց նպատակն էր ի վերջո դուրս գալ Խորհրդային Միության կազմից և դառնալ իշխապես անկախ և սուվերեն պետություն: Այդ գործում սկզբունքային նշանակություն ունեցավ Արցախյան շարժումը: 1988 թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի խորհուրդը որոշում ընդունեց դուրս գալ Աղրբեջանի կազմից և միանալ Հայաստանին: Մարզային խորհուրդը, ցանկանալով հարցը լուծել սահմանադրության շրջանակներում, դիմեց Աղրբեջանի, Հայաստանի և ԽՍՀՄ Գեղագույն խորհուրդներին՝ բավարարելու իր օրինական պահանջները: Սակայն Աղրբեջանի պատասխանը եղավ ոչ միայն ժխտական, այլև Աղրբեջանում բնակվող հայերի գաղանային ջարդերի կազմակերպում Սումգայիթում, Բաքվում, Կիրովարադում և այլ քաղաքներում ու շրջաններում:

Խորհրդային Միության կառավարությունը ոչ միայն նախնական քայլերի չեր դիմել՝ կանխելու այդ արյունահեղությունը, այլև խիստ բացասական դիրք գրավեց արցախահայության, այսինքն՝ Լեռնային Ղարաբաղի հայության օրինական պահանջների նկատմամբ, որն ավելի էր թևավորում աղրբեջանական մոլեռանդ ազգայնականներին նրանց այսունարդու հակահայկական գործունեության մեջ: Տեղի ունեցավ Աղրբեջանում բնակվող հայերի բռնագաղթ: Մահվան սպառնալիքի տակ մոտ 400 հազար հայեր բռնագաղթի ենթարկվեցին և վերածվեցին գաղթականների: Նրանց մեծ մասն ապաստան գտավ Հայաստանում:

Աղրբեջանում հայերի նկատմամբ կիրառվող վայրագությունները բողոքի հումկու ալիք առաջացրեցին Հայաստանում, որը ուժի ելավ և թիկունք կանգնեց արցախահայությանը և նրա օրինական պահանջներին: Ստեղծվեց «Ղարաբաղ» կոմիտեն, որն իր ծեռքը վերցրեց շարժման ղեկավարությունը: Նրա հեղինակությունն օրեցօր աճում էր, իսկ հանրապետության կոմունիստական ղեկավարության, որը չկարողացավ ծիշտ կողմնորոշվել ստեղծված իրադրության մեջ, հեղինակությունն ավելի ու ավելի էր ընկնում: Աստիճանաբար կառավարման ֆունկցիաներն անցնում էին «Ղարաբաղ» կոմիտեին և նոր ձևավորված Հայոց համազգային շարժմանը (ՀՀԾ): 1990 թ. մայիսի 20-ին Հայաստանում տեղի ունեցան օրենսդիր բարձրագույն մարմնի՝ Գերագույն խորհրդի ընտրություններ, որից հետո ՀՀԾ վարչության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն ընտրվեց Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ: Նորընտիր Գերագույն խորհրդին իր առաջին նիստում՝ 1990 թ. օ-

գոստոսի 23-ին, ընդունեց պատմական նշանակություն ունեցող փաստաթուղթ՝ «Հոչակագիր Հայաստանի անկախության մասին»: Դրանով իսկ Հայաստանը կարևոր քայլ կատարեց ամբողջ ծավալով իր անկախությունը վերականգնելու ուղղությամբ: Նենվելով հռչակագրի դրույթների վրա՝ 1991 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանում հանրաքվե տեղի ունեցավ խորհրդային Միության կազմից դուրս գալու և անկախ պետություն հռչակելու հարցի վերաբերյալ: Հանրաքվեն ընթացավ քաղաքական մեծ ոգևորության մթնոլորտում, և Հայաստանի բնակչության քացարձակ մեծամասնությունը դրական պատասխան տվեց խորհրդային Միության կազմից դուրս գալուն: Այդ արդյունքների հիման վրա Հայաստանի Գերագույն խորհությունը 1991 թ. սեպտեմբերի 23-ին Հայաստանը հռչակեց անկախ պետություն:

Այսպես լույս աշխարհ եկավ Հայաստանի երրորդ հանրապետությունը, որով նոր է և սկսվում հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ և պետականության վերահաստատման գործնթացում:

Դա տեղի ունեցավ օրինական ճանապարհով՝ համաձայն գործող խորհրդային սահմանադրության և ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու կարգի մասին ԽՍՀՄ պետգիրենտի 1990 թ. ապրիլի 3-ի օրենքի:

Այդ նույն օրենքի դրույթների հիման վրա 1991 թ. օգոստոսի 30-ին ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու և իր անկախության մասին հռչակեց նաև Աղրեջանը:

Աղրեջանի այդ որոշումը նոր իրադրություն ստեղծեց Լեռնային Ղարաբաղի համար: Նա կարող էր կամ մնալ Աղրեջանի կազմում, կամ էլ անջատվել և հռչակել իր անկախությունը: Հարցը հետևյալում է: Խորհրդային Միության առաջին և Վերջին պետգիրենտ Ս. Գորբաչովի 1990 թ. ապրիլի 3-ին հաստատած օրենքի 3-րդ հոդվածում արձանագրված էր. «Միութենական հանրապետություններուն, որոնք իրենց կազմում ունեն ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր և ինքնավար օկրուլգներ, հանրաքվեն պետք է անցկացվի առանձին՝ յուրաքանչյուր ինքնավարությունում: Ինքնավար հանրապետությունների և ինքնավար միավորումների ժողովուրդներն իրենց են ինքնուրույն կերպով որոշում՝ մնում են միութենական ԽՍՀ-ի կազմում, թե դուրս են գալիս միութենական հանրապետությունից, կամ էլ դնում են իրենց պետական կարգավիճակի հարցը»¹⁵:

Օգտվելով պետգիրենտական այդ օրենքով իրեն տրված իրավունքից՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզի և Շահումյանի շրջանի

15 «Decree of the President of the USSR M. Gorbachev. Article 252. Moscow, Kremlin (3 April, 1990), No 1409-1».

դեպուտատների խորհրդի համատեղ նստաշրջանը 1991 թ. սեպտեմբերի 2-ին որոշեց դուրս գալ Աղրբեջանի կազմից և ինքնավար մարզը հռչակեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (ԼՂՀ):

1991 թ. դեկտեմբերի 2-ին ԼՂՀ-ում անցկացվեց հանրաքվե անկախության հարցի շուրջ: Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը, որը կազմում է հանրապետության ծնչող մեծամասնությունը, քվեարկեց հօգուտ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության: ԼՂՀ-ի առաջին պառլամենտական ընտրությունները կայացան դեկտեմբերի 28-ին, որը 1992 թ. հունվարի 6-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը պաշտոնապես հռչակեց անկախ պետություն¹⁶:

Այդ որոշումները միանգամայն օրինական էին, ինչպես Հայաստանի, Աղրբեջանի և Խորհրդային Միության մյուս բոլոր հանրապետությունների համապատասխան որոշումները ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու և անկախություն հռչակելու մասին, քանի որ դրանք հիմնված էին միևնույն օրենքի՝ ԽՍՀՄ պրեզիդենտի 1990 թ. ապրիլի 3-ի օրենքի դրույթների վրա:

Սակայն Աղրբեջանը իրաժարվում էր ճանաչել Ղարաբաղի ժողովրդի իրավունքները և օրինական որոշումները, և ագրեսիա սանձազերծեց ԼՂՀ-ի դեմ: Ղարաբաղը հայտնվեց ծանր դրության մեջ: Դիմադրություն կազմակերպելու համար ստեղծվեց Ղարաբաղի պաշտպանության պետական կոմիտե՝ Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ: Պատերազմական գործողությունները տևեցին մինչև 1994 թ. մայիսը: ԼՂՀ-ի ռազմական ուժերը, նրա բանակը Հայաստանի և համայն հայության օգնությամբ կարողացան հաղթանակով դուրս գալ այդ պատեռազմից, պահպանել իրենց երկրի անկախությունը և վերացնել արցախահայության գոյությանը սպառնացող վտանգը: Պարտություն կրած Աղրբեջանը հարկադրված էր 1994 թ. մայիսի 12-ին ստորագրել գինադադարի համաձայնագիր:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը գոյություն ունի որպես de facto անկախ պետություն և ապացուցել է իր գոյության իրավունքը և հնարավորությունները: Նրա պրեզիդենտ 1994 թ. դեկտեմբերին դարձավ Ռ. Քոչարյանը:

Անկախության նվաճումից հետո գլխավոր խնդիրներից մեկը դարձավ Հայաստանի երրորդ հանրապետության պետական մարմինների ստեղծումը: Ի տարրերություն առաջին և երկրորդ հանրապետությունների՝ Հայաստանի երրորդ հանրապետությունն ընտրեց պրեզիդենտա-

16 N. Hovhannisyan. The Karabakh Problem. Factors, Criteria, Variants of Solution. Yerevan, 1999, p. 44–45.

կան կառավարումը: Երկրի դեկավարը պրեզիդենտն է, որն օժտված է շատ լայն լիազորություններով: Հայաստանի առաջին պրեզիդենտ 1991 թ. հոկտեմբերի 16-ին ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը: Օրենսդիր մարմին շարունակեց մնալ Գերագույն խորհուրդը, որը վերանվանվեց Ազգային ժողովի: Կառավարությունը պրեզիդենտի հետ միասին իրականացնում է գործադիր իշխանությունը:

Տեղի ունեցավ Հայաստանի վարչատարածքային նոր բաժանում: Հայաստանը բաժանվեց 9 մարզերի, որոնց գլուխ են կանգնած մարզպետները: Գյուղական վայրերում որպես տեղական մարմիններ ստեղծվեցին գյուղական համայնքները:

Հայաստանում հռչակվեցին դեմոկրատական ազատություններ, և հավանություն տրվեց ժողովրդավարության արևմտյան արժեքներին: Երկրում հաստատվեց բազմակուսակցական հանակարգ, վերացվեց գրաքննությունը, հաստատվեց խոսքի և մանուկի ազատություն, որի շնորհիվ սկսեցին լույս տեսնել տարրեր ուղղությունների ու հոսանքների պատկանող պարբերականներ: Մարդսիզմ-լենինիզմի գաղափարախոսությունը դադարեց լինել Երկրի միակ և պաշտոնական գաղափարախոսությունը: Կրթական համակարգը, բանակը և պետական հիմնարկները ապագաղափարայնացվեցին: Այդ և այլ հաստատություններում ու հիմնարկներում այլևս չեն կարող լինել կուսակցական կազմակերպություններ, ինչպես խորհրդային տարիներին, երբ կոմունիստական կազմակերպությունները դեկավարում և ուղղություն էին տալիս այդ հիմնարկների գործունեությանը: «Այլախոհություն» հասկացությունը՝ որպես այդպիսին դադարեց գոյություն ունենալ և հետապնդվել: Ստեղծվեց հայկական ազգային բանակ: Հաստատվեց պետական նոր զինանշան, դրոշ և հիմն: Հայաստանն ունի իր ազգային արժույթը՝ դրամը: Հայաստանի երրորդ հանրապետությունում տեղի ունեցավ Վերևից ներքև սոցիալիստական համակարգի դեմոնտաժ: 1995 թ. ընդունվեց Հայաստանի նոր Սահմանադրությունը:

Հայաստանն ընտրեց զարգացման ազատականության, ազատ շուրջական հարաբերությունների հաստատման և շուրջայական տնտեսության ստեղծման ուղին, որի հիմքում դրված են արդյունաբերական ձեռնարկությունների և հողի ու գյուղատնտեսական ձեռնարկությունների սեփականաշնորհման և ազատ ձեռներեցության ու մրցակցության սկզբունքները: Սեփականության հիմնական ձևը դարձավ մասնավոր սեփականությունը: Այդ բոլոր հարցերի վերաբերյալ Ազգային ժողովն ընդունեց համապատասխան օրենքներ:

Սակայն սոցիալ-տնտեսական արմատական վերափոխումները Հայաստանում ընթանում էին շատ ծանր պայմաններում, որոնք բացա-

սաբար անդրադարձան ժողովորդի բարեկեցության վրա: Դրանում իրենց դերը խաղացին 1988 թ. դեկտեմբերյան ավերիչ երկրաշարժը, որը ծանր հարված հասցրեց երկրի տնտեսությանը, Աղրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանին պարտադրված տնտեսական շրջափակումը, ինչպես նաև տնտեսական կապերի խզումը նախկին խորհրդային հանրապետությունների հետ, նոր տնտեսական կապերի հաստատման և նոր հումքի աղբյուրներ և շուկաներ գտնելու հետ կապված դժվարությունները և այլն: Հայաստանի վրա էր ընկած նաև Ղարաբաղի ազատագրական պայքարին թիկունք կանգնելու հետ կապված ողջ ծանրությունը՝ տնտեսական, ֆինանսական, ռազմական օգնությունը և այլն: Շատ արդյունաբերական ձեռնարկություններ դադարեցին իրենց աշխատանքները, աճեց գործազրկությունը, ինֆյուզիան և այլն: Այդ բոլորի հետևանքով բնակչության եկամուտները 1994 թ. մոտ 4,5 անգամ պակաս էին համեմատած 1988 թ. հետ: Խորացավ հասարակության բներացումը: Դրանում իրենց ոչ երկրորդական դերը խաղացին նաև կառավարության կողմից բոլոյ տրված սխալները և կոպիտ վրիպումները, մանավանդ սեփականաշնորհնան և բնակչության սոցիալական ապահովության կենսական նշանակություն ունեցող բնագավառներում:

Այս բոլորի հետևանքով ընկավ ՀՀ-ի վարկանիշն ու հեղինակությունը, ուժեղացավ դժգոհությունը ՀՀ-ի քաղաքականության նկատմամբ, և այդ հողի վրա ծևավորվեց ընդդիմությունը, որի շարքերը հանալուցին նաև ՀՀ-ի նախկին մի շարք դեկավարներ ու գործիչներ:

Հանրապետության դեկավարության ներսում միասնականություն գոյություն չուներ նաև Ղարաբաղի հիմնահարցի լուծման խնդիրներում: Հասունանում էր ոչ միայն տնտեսական, այլ քաղաքական ճգնաժամը: Մթնոլորտը քանի գնում, այնքան շիկանում էր: Ստեղծված քաղաքական լարված պայմաններում 1998 թ. փետրվարի 3-ին հրաժարական տվեց պրեզիդենտ Լևոն Տեր-Պետրոսյանը:

Նրա այդ քայլը ինչ-որ չափով լիցքաբաֆ արեց մթնոլորտը:

1998 թ. մարտին կայացած պրեզիդենտական նոր ընտրություններում Հայաստանի երրորդ հանրապետության նոր պրեզիդենտ ընտրվեց Ռոբերտ Քոչարյանը, որը մինչ այդ նշանակվել էր Հայաստանի վարչապետ: Նա այդ պաշտոնում երկրորդ անգամ վերընտրվեց 2003 թ. կայացած ընտրություններում:

Հայաստանը բռնել է առաջընթացի ուղին: Աստիճանաբար, թեև դանդաղ, հաղթահարվում են անցման շրջանի դժվարությունները, նկատվում են տեղաշարժեր տնտեսության բնագավառում, արդյունաբերության ու գյուղատնտեսության ոլորտներում, բացվում են նոր աշխատատեղեր, նվազում է գործազրկությունը: Լուրջ քայլեր են ձեռ-

նարկվել աղետի գոտու՝ Երկրաշարժից ավերված Հայաստանի շրջան-ների վերականգնման ուղղությամբ:

Բայց դեռ անելիքներ շատ կան, հատկապես սոցիալ-տնտեսական ոլորտում, մանավանդ կենսամակարդակի բարձրացնան, մշակույթի և գիտության զարգացման բնագավառներում: Դայ ժողովուրդը լավատես է և լի է զարգացած, ժողովրդավարական, ազատ ու հզոր հայրենիք կերտելու վճռականությամբ:

Անկախության նվաճումից հետո Հայաստանի երրորդ հանրապետությունը դարձավ միջազգային համակեցության լիիրավ անդամ և իր ուրույն ու պատվավոր տնտեսության ունի միջազգային հարաբերություններ հաստատեցին Եվրոպայի, Ասիայի, Ամերիկայի և Աֆրիկայի բազմաթիվ երկրներ, այդ թվում ԱՄՆ-ը, Անգլիան, Ռուսաստանը, Չինաստանը, Ֆրանսիան, ճապոնիան, Գերմանիան, Իտալիան, Իրանը, Եգիպտոսը, Սիրիան, Վրաստանը, Խորայելը, Հնդկաստանը, Արգենտինան, Բրազիլիան, Ավստրալիան և այլ պետություններ: 1992 թ. մարտի 2-ին Հայաստանն ընտրվեց Միավորված ազգերի կազմակերպության, իսկ հետագայում նաև նրա առանձին կառույցների անդամ: Նա իր արտաքին քաղաքականության բնագավառում դեկավարվում է ՄԱԿ-ի վեհ սկզբունքներով: 1991 թ. ԽՄՀՄ-ի լուծարումից հետո ստեղծվեց Անկախ պետությունների համագործակցությունը՝ ԱՊՀ-ն, որի անդամ դարձավ նաև Հայաստանը: Իսկ 2001 թ. Հայաստանն ընտրվեց Եվրախորհրդի անդամ: Հայաստանը դարձել է նաև Համաշխարհային առևտրական կազմակերպության և միջազգային այլ կարևոր քաղաքական, պառլամենտական, միջազնության և առևտրատեսական կազմակերպությունների անդամ: Նա Առլանտյան խորհրդի անդամ է և համագործակցում է ՆԱՏՕ-ի անդամ երկրների հետ «Գործընկերություն հանուն խաղաղության» և այլ ծրագրերի շրջանակներում:

Հայաստանը անդրկովկասյան-մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի կարևոր քաղաքական, ռազմական, տնտեսական և կոմունիկացիոն գործոններից է և ունի իր որոշակի դերակատարումը ինչպես տարածաշրջանային, այնպես էլ գլոբալ խնդիրների լուծման մեջ:

Գլուխ երկրորդ

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՅ-ՃԱՊՈՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Այսկին Խորհրդային Միության նորանկախ պետությունների հիմնականում ձևավորվեցին 90-ական թվականների կեսերին՝ «Նոր Եվրասիական դիվանագիտություն» արտաքին քաղաքական հայեցակարգի ընդունմանը: «Մետաքսի ճանապարհի»՝ Միջին Ասիայի և Հարավային Կովկասի պետությունների հետ քաղաքական համագործակցությունը ենթադրում է այս երկրներին տնտեսական բնույթի այնպիսի աջակցության տրամադրում, որը պետք է օգնի նրանց լիարժեքորեն ինտեգրացվելու միջազգային հանրության մեջ՝ ստեղծելով համապատասխան սոցիալ-տնտեսական նախապայմաններ ճապոնական ուղղակի ներդրումների համար:

Դայաստանի Դանրապետությունը, հետամուտ լինելով ասիական տարածաշրջանի երկրների հետ իր հարաբերությունների հետևողական զարգացմանը, մեծ կարևորություն է տալիս և չափազանց շահագրգուստ է տարածաշրջանի առաջատար երկրներից մեկի՝ ճապոնիայի հետ համագործակցության սերտացման գործում:

Դայաստանի արտաքին քաղաքականության համար ճապոնիայի հետ արդյունավետ քաղաքական և տնտեսական համագործակցության ծավալումն արժեսորվում է, առաջին հերթին, քաղաքական հարաբերությունների դիվերսիֆիկացման, ռեգիոնալ ծրագրերում և դրանց ֆինանսավորման մեջ պատշաճ տեղ զբաղեցնելու, տնտեսական բարեփոխումների և ենթակառուցվածքային փոփոխությունների հաջող իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների, տեխնոլոգիանես առաջատար ներդրումների ներգրավման տեսակետից:

Դայաստանի իշխանությունները բարձր են գնահատում ճապոնիայի ներդրումը աշխարհում խաղաղության և կայունության պահպանության, ինչպես նաև առավել անվտանգ միջազգային մթնոլորտի ստեղծ-

ման գործում: ճապոնիան ակտիվորեն աջակցում է նաև միջազգային կազմակերպությունների գործունեությանը՝ ամբողջ աշխարհում ժավալելով իր մարդասիրական առաքելությունը: Այդ կապակցությամբ Հայաստանը անկեղծորեն շահագրգրված է ճապոնիան տեսնել որպես ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի մշտական անդամ՝ հավատացած լինելով, որ այն Հայաստանի համար նույնպես շահավետ կլինի՝ այդ բարձրագույն միջազգային ատյանում հավելյալ բարեկամ երկրի ներկայության իմաստով:

Հայաստանը վճռական է Հարավային Կովկասում կայունության ու խաղաղության ապահովման, ինչպես նաև տարածաշրջանային համագործակցության և ինտեգրացման խորացման գործում: Եվ որպես տարածաշրջանում առավել կազմակերպված և կայուն երկիր՝ Հայաստանը կարող է վստահելի գործընկեր դառնալ ճապոնիայի համար:

* * *

Հայաստանի և ճապոնիայի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին 1992 թ. սեպտեմբերի 7-ին՝ հայտագրերի փոխանկանական եղանակով:

1993 թ. մարտին Հայաստանում հավատարմագրվեց ճապոնիայի առաջին դեսպանը՝ Ս. Էդամուրան, նստավայրը՝ Ռուսաստանի Ֆեդերացիայում: ՀՀ նախագահին հավատարմագրերը հանձնելու նպատակով Հայաստան ժամանած ճապոնիայի դեսպանը հանդիպումներ ունեցավ ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաների՝ ՀՀ վարչապետի, արտգործնախարարի հետ: Ի դեմք դեսպանի՝ ՀՀ վարչապետը շնորհակալություն հայտնեց ճապոնական կառավարությանը աղետի գոտու վերականգնողական աշխատանքներին ճապոնիայի ակտիվ մասնակցության համար: Դեսպանը հայտնեց, որ ի կատարումն Տոկիոյի համաժողովում ընդունված հանձնարարականի՝ ճապոնիայի կառավարությունը որոշում է ընդունել Հայաստանին 2 մլն դրամի չափով օգնություն ցուցաբերել, որից 1 մլն-ը օգտագործվելու էր նավթ գնելու, մնացած գումարը՝ Կարմիր խաչի միջոցով դեղորայք և բժշկական սարքավորումներ ծեռը բերելու համար: Դեսպանը հայտնեց, որ պատվիրակության կազմում ընդգրկված են մի խումբ գործարարներ, որոնք ներկայացնում են ճապոնական ընկերություններն ու բանկերը Մոսկվայում, և նրանց այցը Հայաստան նպատակ է հետապնդում ուսումնասիրել Հայաստանի հետ ճապոնիայի համագործակցության ապագա հնարավորությունները: ՀՀ փոխվարչապետ Վ. Չիթեյանը, անդրադառնալով Հայաստանի ատոռմակայանի վերագործարկման հարցին, ընդգծեց, որ ճապոնիայի մեծ

փորձը սեյսմիկ շրջաններում ատոմակայանների անվտանգ շահագործման համար կարող է օգտագործվել Հայաստանում: Դեսպանը նշեց, որ ճապոնիան շահագործված է նախկին ԽՍՀՄ տարածքում գտնվող բոլոր ատոմակայանների անվտանգ շահագործմանը և խոստացավ անձամբ բոլոր ուժերը ներդնել այդ նպատակին:

1994 թ. սեպտեմբերին Հայաստան ժամանեց ճապոնիայի նորանշանակ դեսպան Կ. Վատանաբեն: Դեսպանը հանդիպումներ ունեցավ ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի, վարչապետի, ԱԺ նախագահի, ԱԳ նախարարի հետ: ՀՀ նախագահի հետ հանդիպման ընթացքում պրն Վատանաբեն նկատեց, որ Հայաստանի և ճապոնիայի միջև համագործակցության ամբողջ ներուժը չի օգտագործվում՝ դրան հիմնական խոչնդուս համարելով Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետևանքով առաջացած շրջափակումը: Անդրկովկասյան տարածաշրջանի առանձնահատկությունները լուսաբանելով՝ նախագահ Տեր-Պետրոսյանը նշեց, որ կովկասյան տարածաշրջանը միջազգային շահերի քախման խաչմերուկ է Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի, ԱՄՆ-ի և Եվրոպական երկրների համար: Անդրադառնալով՝ տարածաշրջանում ՈՒ ունեցած շահերին՝ ՀՀ նախագահն ընդգծեց, որ Ռուսաստանի իշխանությունները Վարում են այնպիսի քաղաքականություն, որը պետք է բացառի այս տարածաշրջանը այլ ուժերի ենթարկելու հնարավորությունից: Նախագահը կարևորեց նաև տարածաշրջանում այլ երկրների տնտեսական շահերի առկայությունը: Ներկայացնելով Ղարաբաղյան հիմնահարցի էռթյունը, ստեղծված իրավիճակը և խաղաղ կարգավորման բանակցությունների ընթացքը՝ ՀՀ նախագահն ընդգծեց, որ ներկա փուլում ամենամեծ բարդությունը կապված է բաժանարար ուժերի հարցի հետ, որ Հայաստանի համար կարևոր ոչ թե այն է, թե ով կիաստատի խաղաղությունը, այլ որքանով արագ կիաստատի այն: Որպես հարցի լուծման հնարավոր տարրերակ նախագահը համարեց ԱՊՀ ուժերի կազմում արևելաեվրոպական կամ սկանդինավյան երկրներից խորհրդարանական ուժերի ընդգրկումը: Ծնորհակալություն հայտնելով նախագահին Ղարաբաղյան հիմնահարցի լուսաբանման համար և անդրադառնալով Ռուսաստանի կայսերապաշտական միտումների արտահայտման հարցին՝ դեսպանն անդրադապավ ռուս-ճապոնական հարաբերությունների զարգացման պատմությանը՝ նասնավորապես նշելով, որ չնայած Բ. Ելցինի 1993 թ. ճապոնիա կատարած այցի ընթացքում ծեղոք բերված համաձայնությանը՝ Կուրիլյան կղզիների խնդրի լուծման շուրջ, բանակցությունները այդ հարցի լուծման համար շարունակվում են արդարության և օրինականության հիմքերի վրա: Նշելով, որ ճապոնիան Ղարաբաղյան հակամարտության հիմքերի վրա: Նշելով, որ ճապոնիան Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում առաջնորդվում է հետևյալ սկզբունքնե-

րով՝ խաղաղ ճանապարհով հիմնախնդրի արագ լուծում, բոլոր շահագրգիռ երկրների համագործակցություն ԵԱՀԿ շրջանակներում խնդրի կարգավորման համար: Դեսպանը տեղեկացրեց, որ ճապոնիայի կառավարությունը, շարունակելով Հայաստանին հատկացվող մարդասիրական օգնությունը, պատրաստվում է ընթացիկ տարում Հայաստանին հատկացնել 2 մլն դոլարի օգնություն:

ՀՅ Գերագույն խորհրդի նախագահ Բ. Արարտյանի հետ հանդիպման ընթացքում վերջինս ներկայացրեց ժողովրդավարական ընտրությունների միջոցով Հայաստանում ծևավորված օրենսդրական աշխատանքների պատմությունը՝ նաևնավորապես թվարկելով քաղաքական համակարգում և տնտեսության բնագավառում ընդունված այն օրենքները, որոնք երաշխավորում են քաղաքացիների միջազգային իրավունքի նորմերով ընդունված ազատությունները և ստեղծում շուկայական տնտեսության ծևավորման օրենսդրական հիմքեր: Այս առունով Հայաստանի համար կարևորելով նապոնիայի օրենսդրական փորձի ուսումնասիրման հարցը՝ Բ. Արարտյանը առաջարկեց տարբեր մակարդակներով գարգացնել միջնորդի արանքական կապերը: Դեսպանը տեղեկացրեց, որ իր հետ Հայաստան են եկել մեծ թվով գործարարներ ճապոնիայի հայտնի ֆիրմաներից, որոնք շահագրգրված են երկկողմ համագործակցություն ծավալմանը: Դեսպանի խնդրանքով Գերագույն խորհրդի նախագահը ծանոթացրեց Հայաստանի տնտեսության ապագա զարգացման հեռանկարները՝ նաևնավորապես նշելով, որ Հայաստանն ունի տնտեսական զարգացման մեծ պոտենցիալ և իր ապագան կապում է տնտեսության վերականգնման, տնտեսական փոխշահավետ կապերի ծևավորման և շուկայական տնտեսաձևերի անցման հետ: Վատանաբեն ընդգծեց, որ ճապոնիայի կառավարությունը պատրաստ է հետագայում էլ Հայաստանին ցուցաբերել բազմակողմանի օգնություն և ֆինանսավորել ծրագրերի իրագործումը:

ՀՅ Վարչապետ Յ. Քագրաւոյանի հետ հանդիպման ընթացքում Կ. Վատանաբեն նշեց, որ, ըստ իր դիտարկումների, չնայած Հայաստանի ներքին կայունությանը, երկիրն ունի էներգակիրների պակասություն և փոքր ներքին շուկա: Վարչապետը հայտնեց, որ Հայաստանն այս բնագավառում հիմնական ուշադրությունը սևեռելու է ատոմային էներգիայի զարգացմանը, իսկ արդյունաբերության բնագավառում՝ պահանջական դարձած ճյուղերի զարգացմանը, հատկապես հաստոցաշխնությանը, միջազգային առաջատար ընկերությունների հետ համագործակցության դեպքում՝ էլեկտրոնիկային, կոշիկի արտադրությանը, գինեգործությանը և այլն: Փոխվարչապետ Վ. Չիտեցյանը պարզաբնումներ տվեց դեսպանին Հայաստանում ատոմային էներգիայի զարգացման հնարա-

Վորությունների և ուղղությունների վերաբերյալ՝ նշելով, որ ճապոնիայի փորձը երկրաշրժակայուն ատոմակայանների շինարարության բնագավառում ցանկալի կլիներ օգտագործել հայկական ատոմակայանի վերագործարկման ոլորտում:

Երկողման հարաբերությունների զարգացման համար ընդգծվեց իրավական դաշտի ձևավորման անհրաժեշտությունը և, ինչպես հիշատակեց դեսպանը, դեռ նախորդ տարում ճապոնական կողմը դիմել էր հայկական կողմին ԽՄՀՄ-ի հետ ստորագրված պայմանագրերի իրավաժառանգման հնարավորությունը դիտարկելու համար: ՀՀ վարչապետը հավաստիացրեց, որ ներկայացված պայմանագրերը կրնարկվեն, և մեկ ամսվա ընթացքում ճապոնական կողմը կստանա հստակ պատասխան: Գործարարների պատվիրակության դեկավար Կուրոսակայան անդրադապ գործարարների խմբի այցելությանը «Հրազդանմաշ» միավորում և Երևանի կոնյակի գործարան և կարծիք հայտնեց, որ Հայաստանն ունի բավականաչափ տեխնոլոգիական հնարավորություններ, սակայն տեղեկատվության պակասության պարագայում Հայաստանի ներուժի և պաշարների ռացիոնալ օգտագործման ուղղությամբ աշխատանքների կազմակերպումն ու համագործակցության կոնկրետ ոլորտների ընտրությունը դժվարանում են: Դեսպանը կարևորեց նաև միջազգային տնտեսական կազմակերպությունների շրջանակներում երկողման համագործակցությունը և տեղեկատվության փոխանակումը:

ՀՀ ԱԳ նախարար Վ. Փափազյանի և դեսպան Վատանաբեկի հանդիպման ընթացքում նախարարը նշեց, որ Հայաստանը նոր է սկսում շփումները ճապոնիայի հետ, սակայն հույս հայտնեց, որ հայ-ճապոնական կապերն արդեն մոտ ժամանակներում կընդարձակվեն: Վ. Փափազյանը, որպես այդ գործընթացը արգելակող հիմնական խոչընդոտ համարելով Լեռնային Ղարաբաղի խնդիրը, մանրամասն լուսաբանեց հակամարտության տվյալ փուլում ստեղծված իրավիճակը և Հայաստանի Ղանրապետության դեկավարության մոտեցումներն այդ խնդրի խաղաղ կարգավորման հարցում, ինչպես նաև շարողորեց Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնական դրույթները՝ կարևորելով աշխարհի բոլոր պետությունների հետ բարեկամական և միջազգային իրավական նորմերով կարգավորվող հարաբերությունների հաստատման Հայաստանի պատրաստակամությունը:

Դեսպանն իր հերթին նշեց, որ ճապոնիան ցանկանում է, որպեսզի Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը լուծվի խաղաղ բանակցությունների միջոցով հնարավորինս սեղմ ժամկետներում՝ ընդգծելով, որ ճապոնիայի կառավարությունը հատկապես բարձր է գնահատում Հայաստանի դեկավարության ցուցաբերած զապածությունը ԼՂ-ի ճանաչ-

ման հարցում, որը պետք է դրական գնահատական ստանա համաշխարհային հանրության կողմից: Անդրադառնալով միջազգային կազմակերպություններում երկվորյան համագործակցության հարցին՝ պրո Փափայանը նշեց, որ Հայաստանը կողմ է ՄԱԿ-ի ԱԽ-ի մշտական անդամների կազմի ընդլայնմանը, և եթե ճապոնիայի թեկնածությունը ներկայացվի ՄԱԿ-ի ԱԽ-ի մշտական անդամների կազմում ընտրվելու համար, ապա Հայաստանն իր ձայնը կտա ճապոնիայի օգտին:

1997 թ. ապրիլին Հայաստանում հավատարմագրվեց ճապոնիայի նոր դեսպան S. Տոգոն: Դեսպանին ուղեկցում էր դիվանագետների և գործարանների մեջ, խումբ: Նախագահի և դեսպանի միջև կայացած հանդիպման ընթացքում ընդգծվեց հայ-ճապոնական հարաբերությունների իրավական հիմքի ստեղծման անհրաժեշտությունը, ինչպես նաև ՄԱԿ-ի շրջանակներում համագործակցության հաստատման կարևորությունը: Այցելության ընթացքում ճապոնիայի կառավարության կողմից Հայաստանին հատկացվելիք 900 մլն ճապոնական ինն (մոտ 7,5 ԱՄՆ դոլար) անհատույց վարկի շրջանակներում կատարվեց փաստաթղթերի փոխանակում: Օգնության ընդհանուր գումարի մի մասը՝ 400 մլն-ը, տրամադրվեց Հայաստանի գյուղատնտեսությանը, մնացած գումարը հատկացվեց որպես ոչ նպատակային անհատույց վարկ՝ Հայաստանում տնտեսական բարեփոխումների խթանման, արտաքին պարտքի մարման և այլ նպատակների համար: Ընդգծելով այն հանգամանքը, որ հայ-ճապոնական հարաբերությունները թևակոխներ են զարգացման նոր փուլ՝ դեսպանը նշեց, որ ճապոնիայի գործարարների շրջանում մեծ հետաքրքրություն կա Հայաստանի նկատմամբ, որն իր հերթին փոխահավետ համագործակցության հիմք կարող է հանդիսանալ:

Երկու երկրների միջև քաղաքական համագործակցության կայացմանը մեծապես նպաստեցին 1998 թ. հուլիսին ՀՀ փոխարտգործնախարար Ա. Բայրուրոյանի և 1999 թ. օգոստոսին ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանի Տոկիո կատարած պաշտոնական այցերը, 1999 թ. հոկտեմբերին նախկին արտգործնախարար Տարո Նակայամայի գլխավորած ճապոնական խորհրդարանական «Բարեկամություն» պատվիրակության երևանյան հանդիպումները, ինչպես նաև 2001 թ. դեկտեմբերին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի գլխավորած պատվիրակության այցը ճապոնիա:

1998 թ. հուլիսին կազմակերպված ՀՀ փոխարտգործնախարար Ա. Բայրուրոյանի այցի ընթացքում հանդիպումներ տեղի ունեցան ճապոնիայի արտաքին գործերի փոխնախարար Ս. Յանայիի, տնտեսական քաղաքականության նշական և ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալությունների փոխտնօրենների, միջազգային

առևտրի և արդյունաբերության, գյուղատնտեսության, ֆինանսների նախարարությունների ներկայացուցիչների հետ:

Այցը պայմանավորված էր հարաբերությունները բազմակողմանիութեն զարգացնելու ձգտումով, որը համահունչ էր ՀՀ վարչապետի կողմից հռչակած «Նոր Եվրոպական դիվանագիտություն» ճապոնական ծրագրին: Կառավարական շրջաններում տեղի ունեցած հանդիպումների ընթացքում Ա. Բայրուրդյանը հանգամանալից ներկայացրեց Հայաստանում տեղի ունեցող բարեփոխումների ընթացքը, Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման ուղղությամբ ծավալված բանակցային գործընթացը, օտարերկրյա ներդրումների համար Հայաստանում ստեղծված բարենպաստ պայմանները:

Հանդիպումներ կազմակերպվեցին ճապոնիայի արտաքին գործության փոխնախարար Ս. Յանայիի, տնտեսական քաղաքականության մշտական և ճոպանիայի միջազգային համագործակցության գործականական և ճոպանիայի միջազգային առևտության արդյունաբերությունների փոխտնօրենների, միջազգային առևտության գյուղատնտեսության, ֆինանսների նախարարությունների ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում ճապոնական կողմը հաստատեց ճապոնիայի կառավարության պատրաստականությունը՝ Հայաստանին տրամադրվող տնտեսական և տեխնիկական աջակցությունը շարունակելու և խորացնելու հաճար, որն ընկած է ճապոնիայի արտաքին քաղաքականության նոր դոկտորինայի և Փարիզում ստորագրված Երկողմանի պայմանագրովածությունների արձանագրության շուշանականությունը:

Ա. Բայրուրդյան այցի ընթացքում ընդգծեց Հայաստանուն ծավալ Ված Ներդրումային և ինֆրաստրուկտուրաների սեփականաշնորհման գործընթացներին ճապոնական բիզնեսի ներգրավման անհրաժեշտությունը՝ որպես իրավահավասար և փոխշահավետ համագործակցության անցնելու կարևորագույն պայման: ճապոնական կողմին ներկայացվեցին մի շարք ծրագրեր, որոնք լուսաբանում են Հայաստանի էներգետիկայի և ջրամատակարարման բնագավառում օտարերկրյա ներդրողների առջև բացվող հնարավիրությունները: Առանձնահատուկ ու շաղրություն դարձվեց տարածաշրջանային համագործակցության տեսակետից խիստ կարևոր Հայաստանի հյուսիսը հարավին կապող մայրուղու կառուցմանը ճապոնական և կորեական կապիտալի, փորձագուցմանը խորհրդականների ներգրավման, ինչպես նաև Իրան-Հայաստան դեպի Թուրքիա և Վրաստան ընդլայնվելու միտումով ստեղծվող գազամուղի նախագծերին ճապոնիայի կառավարական և գործարար շրջանակների մասնակցության նպատակահարմարությանը: Քննարկվեցին Հայաստանում ներդրումային քաղաքականության ընդլայնմա-

Ըը, գյուղատնտեսության, արդյունաբերության, առողջապահության, կրթության բնագավառներում բազմաթիվ նախագծերի իրականացմանը, Հայաստանում զարգացման ճապոնական փորձի օգտագործման նպատակահարմարությանը, երկրում սեփականաշնորհման ընթացքին վերաբերող հարցեր: Փոխնախարար Յանայիին հանձնվեցին երկողմ տնտեսական և գիտամշակութային համագործակցությունը կանոնակարգող 7 միջկառավարական համաձայնագրերի նախագծեր, որոնց կապակցությամբ փոխնախարարը նշեց, որ ճապոնական կողմը հետամուտ կլինի նշված համաձայնագրերի և պայմանագրերի շրջանակներում երկողմ համագործակցության զարգացմանը: ճապոնիայի ԱԳՆ-ում հայկական պատվիրակությունը հանդիպում ունեցավ նաև արտգործնախարարության տնտեսական համագործակցության բյուրոյի գլխավոր տնօրենին առաջին տեղակալ Մ. Տակահաչիի հետ, որին ներկայացվեցին հայկական կողմի պատրաստած տնտեսության բազմաթիվ ոլորտներին առնչվող ներդրումային և դրամաշնորհային մի շարք նախագծեր: Պրն Տակահաչին հավատիացրեց, որ նշված նախագծերը արտգործնախարարությունում ուսումնասիրով կերպությունում կրաշխվեն համապատասխան նախարարությունների և ընկերությունների միջև: ճապոնական կողմը նշեց, որ Հայաստանը կարող է հայտ ներկայացնել հաջորդ ոչ նպատակային վարկի ստացման համար: ճապոնիայի կառավարության պաշտոնական զարգացման օգնության ծրագրերի (ODA) և Հայաստանի միջև միջկառավարական համաձայնագիր կնքելու վերաբերյալ հայկական կողմի առաջարկության կապակցությամբ պրն Տակահաչին նշեց, որ ճապոնական կառավարությունը խուսափում է ODA-ի անունից պարտավորություններ վերցնել: ճապոնիայի գյուղատնտեսության նախարարության միջազգային համագործակցության բաժնի պետ Սյոձի Սուտուկիի հետ գրույցի սկզբում փոխնախարար Քայրուրոյանը նախ շնորհակալություն հայտնեց 1997–98 թթ. 2KR ծրագրի շրջանակներում Հայաստանի ազգարարային սեկտորին 400 մլն ինն արժողությամբ օգնության հատկացման համար, որի արդյունքում Հայաստան էր ներնուժվել 15 խոշոր կոմբայն և 16600 տ ազոտային պարարտանյութ: Քննարկվեցին Հայաստանի գյուղատնտեսությանը տրամադրվելիք նոր դրամաշնորհի ապրանքային և գումարային բաշխման հարցերը, նշվեց, որ գումարային ծավալի պահպանմանը նախկին ապրանքատեսակների հետ մեկտեղ Հայաստան կառարվեն նաև մինի-տրակտորներ: ճապոնիայի ֆինանսների նախարարությունում, Ներարտ բանկում, ինչպես նաև ԱԳՆ տնտեսական համագործակցության բյուրոյում կազմակերպված հանդիպումների ընթացքում կարևորվեց «Հրազդան-5» էներգաբլոկի կառուցման աշխա-

տանքների ֆինանսավորման հարցը: ճապոնիայի Ներարտ (EXIM) բանկի Կենտրոնական Ասիայի, Կովկասի և Թուրքիայի բաժնի պետ Միջուրու Տարուկին նշեց, որ ուժի մեջ է մնում այդ նպատակի համար Հայաստանի 60 մլն դոլարի վարկ տրամադրելու բանկի մտադրությունը: Փոխնախարար Բայբուրդյանը նշեց, որ քննարկվում է այդ օրյեկտի սեփականաշնորհման հարցը: ճապոնական կողմը նշեց, որ ճապոնական առաջատար ընկերություններից մեկը ցանկություն է հայտնել մասնակցելու այդ գործընթացին, և նշված վարկի տրամադրման հարցը կորոշվի Հայաստանի Եներգետիկայի բնագավառում ծավալվող իրադարձություններին համապատասխան: Պրն Բայբուրդյանը ներկայացրեց Հայաստանում Ներդրումային հիմնադրամ ստեղծելու աշխատանքները՝ EXIM բանկին հրավիրելով անդամակցելու այդ հիմնադրամին: ճապոնական կողմը, հետաքրքրությամբ ընդունելով համագործակցության այդ առաջարկը, նշեց, որ ճապոնական կողմը ավելի հակված է ուղղակի վարկեր տրամադրելու ներդրումային կոնկրետ ծրագրերին:

Հայկական պատվիրակությունը այցելության շրջանակներում աշխատանքային հանդիպումներ ունեցավ նաև ճապոնական խոչորագույն ընկերությունների՝ «Մարուբենի», «Միցուրիսի», «Տոմենի», «Էտոչու», «Սումիտոմո» ղեկավարությունների հետ: Քննարկվեցին ճապոնիայի կառավարության պաշտոնական զարգացման օգնության՝ ODA-ի ծրագրերից դուրս գործունեության ծավալման հնարավորությունները և Երևանում ընկերությունների մշտական ներկայացուցությունների մակարդակով ներդրումային նախագծերի իրականացումը:

Հայկական կողմն անդրադարձավ «Մարուբենի» ընկերության և ՀՀ Եներգետիկայի նախարարության համագործակցությանը, որը ներառում է «Հրազդան-5» էներգաբլոկի կառույցի ավարտման, Երևանի ԶԵԿ-ի արդիականացման, Սևան-Հրազդան կասկադի ՀԵԿ-երից մեկի վերակառուցման, էներգետիկայի բնագավառում ծառայությունների արդյունավետության բարձրացման աշխատանքներին այս ընկերության մասնակցությունը: ճապոնական կողմը հայկական պատվիրակությանը տեղեկացրեց, որ այժմ ընկերության քննարկմանն է ներկայացված Հայաստանի կրթության բնագավառին ԱՄՆ 5 մլն դոլար անհատույց օգնություն տրամադրելու հարցը:

«Սումիտոմո» ընկերության կենտրոնակայացման կազմակերպված հանդիպման ընթացքում փոխնախարար Ա. Բայբուրդյանը ողջունեց հայկական արդյունաբերության մեջ ներդրումներ կատարելուն նպատակառությամբ նշված ընկերության գործունեությունը՝ ընդգծելով, որ «Նախրիտի» և Ավտոհողերի գործարանի առնչությամբ ընկերության ներդրումային ծրագրերը կատարեն ՀՀ կառավարության աջակցությունը:

«Միջուրիսի» ընկերության գրասենյակում ծավալված զրույցի ընթացքում գոհունակությամբ նշվեց, որ վերջին երեք տարիների ընթացքում ընկերությունը մեծ ուշադրություն է դարձնում Հայաստանում համատեղ ծրագրերի իրականացմանը: Ընդգծվեց, որ արդեն նախապատրաստվել են մի քանի նոր նախագծեր, որոնք կարող են լինել երևանի և այլ բնակավայրերի ջրամատակարարման բարելավման, աղբամշակման գործարան կառուցելու ուղղությամբ, ինչպես նաև առողջապահության, եներգետիկայի, կապի և տրանսպորտի, կրթության և գիտության բնագավառում համագործակցություն ծավալելու վերաբերյալ: Նշվեց, որ ընկերությունը մեծ փորձ ունի առոմային կայանների շինարարության և շահագործման գործում և կցանկանար մասնակցել հայկական նոր ԱԵԿ-ի ֆինանսավորման և կառուցման աշխատանքներին:

ճապոնական միջազգային համագործակցության գործակալության (JICA) փոխնախագահ Ա. Իծուինի հետ զրույցի ընթացքում կարևորվեց անհատույց օգնության քաղաքականությունից լիարժեք համագործակցության անցնելու անհրաժեշտությունը: Պայմանավորվածություն ծեռք բերվեց Հայաստանին հատկացվող օգնության ծավալների ոչ միայն պահպանման, այլև ավելացման վերաբերյալ:

Երկկողմանի հարաբերությունների բնականոն զարգացման գործում կարևոր նշանակություն տրվեց Երկողմ բարձրաստիճան այցելություններին: Պայմանավորվածություն ծեռք բերվեց Երկու երկրների ֆինանսների նախարարների փոխայցելություններ կազմակերպելու վերաբերյալ: ՀՀ փոխարտգործնախարարը իր գործընկերոջը հանձնեց 1999 թ. առաջին կեսին Հայաստան այցելելու պաշտոնական հրավեր:

1999 թ. հուլիսին ճապոնական հարցերով ՀՀ արտգործնախարարի խորհրդական նշանակվեց ճապոնացի գործարար, «Նիպպոն-Արարատ» ընկերության նախագահ Կածուլո Ինային:

1999 թ. օգոստոսի վերջին ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանի նապոնիա կատարած այցը կարելի է որակել որպես բեկումնային՝ Երկու երկրների միջև հարաբերությունների հետագա զարգացման առումով: ՀՀ արտգործնախարարի գլխավորությամբ հայկական պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ ճապոնիայի արտգործնախարարությունում, ճապոնիայի արտաքին առևտուրի կազմակերպությունում (JETRO), ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալությունում (JICA), ճապոնիայի առևտուրի և արդյունաբերության նախարարությունում, ճապոնիայի օտարերկոյա տնտեսական համագործակցության հիմնադրամում (OECD) և այլ կառավարական կազմակերպություններում:

ճապոնիայի արտգործնախարար Մասահիկո Կոմուրայի հետ ունեցած հանդիպման ընթացքում արտգործնախարարները ստորագրեցին

համատեղ կոմյունիկե, որտեղ արձանագրվեց մշտական խորհրդատվությունների միջոցով հաստատված քաղաքական երկխոսությունը խորացնելու երկուստեք ցանկությունը։ ճապոնիայի արտգործնախարարն ընդգծեց կովկասյան տարածաշրջանի կայունության ռազմավարական նշանակությունը ամբողջ աշխարհի համար, որը հանդիսանում է Եվրոպան և Ասիան կապող միջանցք։ Նշվեց, որ ճապոնիան շահագրգոված է ներգրավվելու «Մետաքսե ճանապարհի» դիվանագիտության մեջ։ Անդրադառնալով Հայաստանին տրամադրվող օգնության ծրագրերի հարցին՝ նախարարը հայտնեց, որ ճապոնիայի կառավարությունը Համաշխարհային բանկի հետ մեկտեղ ճապոնիայի պաշտոնական օգնության ծրագրերի (ODA) շրջանակներում իրականացնում է արտոնյալ վարկային ծրագիր էլեկտրատեղօդիայի մատակարարման բարելավման ուղղությամբ և պատրաստվում է ընդլայնել Հայաստանին տրամադրվող դրամաշնորհները, հատկապես բժշկության ոլորտում։ Պրն Օսկանյանն ընդգծեց հանդիպման կարևորությունը, որը կարևոր հիմք կարող է հանդիսանալ Հայաստանի և ճապոնիայի միջև հարաբերությունների խորացման համար։ Պրն Օսկանյանն անդրադարձավ կովկասյան տարածաշրջանում առկա ապակայունացնող հիմնական գործոններին, էթնիկական հակամարտություններին՝ նշելով, որ հայկական կողմը վճռական է տրամադրված դրանց շուտափույթ վերացման և խաղաղ բանակցությունների միջոցով կայունության հաստատման հարցում, և չնայած այն հանգամանքին, որ Հայաստանն աղքատ է բնական պաշարներից, այնուհանդերձ ունի բարձրորակ աշխատուժ և տրամադրված է զարգացնել ժողովրդավարական հաստատությունները։ ՀՀ ԱԳ նախարարն ընդգծեց, որ Հայաստանը պաշտպանում է բազմաթե՛ր աշխարհի գաղափարը՝ համարելով, որ ճապոնիան կարևոր դերակատարում ունի, և այդ տեսանկյունից ողջունում է նրա ակտիվ գործունեությունը տարածաշրջանում։ Հայտնեց հայկական կողմի պատրաստակամությունը՝ աջակցելու ճապոնիային ԱՄԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամ դառնալու հարցում։ Մեծ նշանակություն տրվեց համատեղ տնտեսական հանձնաժողովի ստեղծման նախաձեռնությանը՝ կարևորելով ճապոնական պաշտոնյաների կողմից դրա իրականացնանն աջակցելու մտադրությունները։ Հայաստանի համար առաջնայնություն հանդիսացող ծրագրերի շարքում Օսկանյանն առանձնացրեց «Զվարթնոց» օդանավակայանի շահագործումը, «Միջուրիսի» ընկերության հետ նախատեսվող հանքարդյունաբերության ոլորտի նախագիծը, ԵԲՍԻՄ բանկի կողմից ակնկալվող փոխառությունները։ Քննարկեց նաև Ասիական զարգացման բանկին Հայաստանի թեկնածությանն աջակցելու ճապոնիայի պատրաստակամությունը։

ճապոնիայի արտգործնախարարին հանձնվեց Հայաստան այցելու հրավեր:

ճապոնիայի արտաքին առևտրի կազմակերպության (JETRO) նախագահ Ն. Յատակեյանայի հետ Վ. Օսկանյանի հանդիպման ընթացքում քննարկվեցին հրականացվող համատեղ ծրագրերի ընթացքը, ինչպես նաև համագործակցության նոր խնդիրներ, որոնց առաջխաղացման ուղղությամբ ծեռք բերվեցին որոշակի պայմանավորվածություններ: Այսպես՝ արձագանքելով արտահանման ու օտարերկրյա ներդրումներին աջակցելու Հայաստանի կառավարության խնդրանքին՝ ճապոնիայի արտաքին առևտրի կազմակերպության նախագահ Ն. Յատակեյանան նշեց, որ կազմակերպությունը կարող է մոտ մեկ տարի ժամկետով անվճար գրասենյակ տրամադրել հայկական այն ընկերություններին, որոնք ցանկություն ունեն գործունեություն ծավալելու ճապոնիայում: Հայտնվեց նաև, որ կազմակերպությունը մտադիր է ճապոնիայում կազմակերպել անդրկովկասյան երեք հանրապետությունների արտադրանքի համատեղ ցուցահանդես: Հայկական կողմը հրավիրվեց նաև մասնակցելու ճապոնիայում անցկացվող անդրկովկասյան պետություններում ներդրումային հնարավորությունների լուսաբանմանը նվիրված ամենամյա սեմինարներին: Միևնույն ժամանակ պայմանավորվածություն ծեռք բերվեց Հայաստանում ներդրումային առևտ պայմաններին նվիրված հատուկ սեմինար կազմակերպելու վերաբերյալ: Կողմերը քննարկեցին նաև կազմակերպության մոսկովյան գրասենյակի միջոցով արտահանման հնարավորությունների բացահայտման նպատակով փորձագետների փոխայցելությունների կազմակերպման հնարավորությունները՝ հայտնելով իր մտադրությունը անդրկովկասյան երեք հանրապետությունների արտադրանքի համատեղ ցուցահանդես կազմակերպելու վերաբերյալ ճապոնական շուկային դրանք ներկայացնելու նպատակով:

ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) նախագահ Կիմիո Ֆուօջիտայի հետ ունեցած հանդիպման ընթացքում գործակալության նախագահը տեղեկացրեց ընթացիկ տարում փոքր և միջին ծեռնարկություններին տեխնիկական օժադակության տրամադրման ծրագրի վերաբերյալ, որի շրջանակներում մի շարք փորձագետներ այցելելու էին Հայաստան: Նշեց, որ գործակալությունը շարունակելու է իր գործունեությունը նաև առողջապահության ոլորտում:

ճապոնիայի օտարերկրյա տնտեսական համագործակցության հիմնադրամի (OECF) փոխնախագահ պր Նազասեի հետ հանդիպման ընթացքում ՀՀ արտգործնախարարը նշեց, որ զարգացման հետագ ուղղի հրականացման հարցում հայկական կողմն ակնկալում է կազմա-

Կերպության աջակցությունը անհրաժեշտ վարկային միջոցներ տրամադրելու համար: Ըստ OSRR փոխախագահ Նազարետի՝ հիմնադրամը առաջնային է դիտելու «Զվարբնոց» օդանավակայանի վերակառուցման և գյուղատնտեսության ոլորտի ծրագրերը: Դետագա ծրագրերի իրականացման ենթատեքստում հատկապես կարևորվեց ներկայում իրականացման փուլում գտնվող էլեկտրաէներգիայի փոխանցման և բաշխման նախագծի իրականացման արդյունավետության պահպանումը:

ճապոնիայի միջազգային առևտրի և արդյունաբերության փոխախարար պրո Արայի հետ ունեցած հանդիպման ընթացքում արծարձվեցին ճապոնա-հայկական համատեղ տնտեսական հանձնաժողովի ստեղծման և դրա գործունեությունն ապահովող համապատասխան մեխանիզմների հաստատման վերաբերյալ հարցեր: ճապոնական կողմն ընդգծեց Յայաստանի հետ էլեկտրաէներգիայի փոխանցման և բաշխման նախագծի կարևորությունը: Պատրաստակամություն հայտնվեց նաև ճապոնիայի արտաքին առևտրի կազմակերպության հետ ծրագրավորվող արտահանման նախագծերի խթանման ուղղությամբ: ՀՀ արտգործնախարարը ներկայացրեց ՀՀ արտահանման ներուժը և փոխախարարին տեղեկություններ հաղորդեց ճապոնիայի արտաքին առևտրի կազմակերպությունում նախապես կնքված պայմանավորվածությունների վերաբերյալ:

Երկուստեք պատրաստակամություն հայտնվեց հայ-ճապոնական և ճապոնա-հայկական տնտեսական համագործակցության կոմիտեների և նրանց արդյունավետ գործունեությունն ապահովող համապատասխան մեխանիզմների ստեղծման վերաբերյալ:

1999 թ. հայ-ճապոնական հարաբերությունների մյուս կարևոր իրադարձությունը հոկտեմբերի 11-ին տեղի ունեցած ճապոնիայի «Բարեկամություն» պատվիրակության այցն էր Յայաստան: Պատվիրակությունը, որը համալրված էր ճապոնիայի կառավարության, արտաքին գործերի նախարարության, ճապոնական խոչորագույն ֆինանսական կազմակերպությունների բարձրաստիճան պաշտոնյաներով և մասնավոր առաջատար ընկերությունների ներկայացուցիչներով, գլխավորում էր ճապոնական խորհրդարանի ներկայացուցիչների պալատի անդամ, իշխող Լիբերալ-դեմոկրատական կուսակցության արտաքին հարաբերությունների հետազոտական հանձնաժողովի նախագահ, նախկին արտգործնախարար Տարո Նակայաման: Փաստորեն, դա հայ-ճապոնական յոթնամյա հարաբերությունների ընթացքում քաղաքական խնդիրներ հետապնդող առաջին ճապոնական պատվիրակության այցն էր Երևան, որն իրականացվեց «Նոր մետաքսի ճանապարհի» քաղաքական հայեցակարգի շրջանակներում: Մինչ Յայաստան այցելելը պատ-

Վիրակությունը գտնվել էր Աղրբեջանում և Վրաստանում: Անդրկովկասյան շրջագայության նպատակն էր հանդիպել երեք հանրապետությունների բարձրագույն ռեկավարության հետ՝ երկվորմ հարաբերությունների հեռանկարները, ինչպես նաև տարածաշրջանային տնտեսական ենթակառուցվածքի ստեղծման հնարավորությունները քննարկելու նպատակով:

Այսի ընթացքում պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ ՀՀ նախագահի, արտադրական ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարարի, Աժ արտաքին կապերի մշտական հանձնաժողովի նախագահի, արտաքին գործերի նախարարի տեղակալի հետ:

ՀՀ նախագահին փոխանցվեց ճապոնիայի վարչապետի ուղերձը:

Ճապոնական կողմը շնչառեց, որ այցն իրականանում է «Մետաքսի ճանապարհի» գոտում գտնվող երկրների հետ հարաբերությունների ամրապնդմանն ուղղված ճապոնական կառավարության ծրագրի շրջանակներում և ներկայացրեց Աղրբեջանի և Վրաստանի ռեկավարության հետ տեղի ունեցած հանդիպումների արդյունքները՝ ընդգելնով ճապոնական կողմի պատրաստակամությունը Հայաստանում ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) և միջազգային համագործակցության ճապոնական բանկի միջոցով օգնության ծրագրերի շարունակման ուղղությամբ:

Քննարկումների արդյունքում կողմերը հանդես եկան մի շարք առաջարկություններով, որոնցից մի քանիսի շուրջ ձեռք բերվեցին կողմերում պայմանագրվածություններ: Այսպես՝ ճապոնական կողմը առաջարկեց ստեղծել հայ-ճապոնական միջխորհրդարանական բարեկամության խումբ: Պայմանագրվածություն ձեռք բերվեց, որ հայկական կողմը ամենամոտ ապագայում ճապոնական կողմին կներկայացնի խնդիրի հայկական մասի կազմը (ներկայացվել է 1999 թ. վերջին, վերանայվել և կրկին ներկայացվել է 2000 թ. հոկտեմբերին):

Առաջարկությունների փաթեթի մեջ մտնում էին 2000 թ. ընթացքում երեք անդրկովկասյան հանրապետությունների առևտության տեսական ցուցահանդեսի և այդ հանրապետություններում ներդրումային ծրագրերին նվիրված սեմինարի կազմակերպումը ճապոնիայում, որոնք որական արձագանք ստացան հայկական կողմից, և պայմանագրվածություն ձեռք բերվեց, որ ճապոնական կողմը մասնագետներ կգործուղի Հայաստան նախապատրաստական աշխատանքներ սկսելու համար: Հայկական կողմն իր հերթին հանդես եկավ Հայաստանում հայ-ճապոնական տնտեսական կոմիտեի ստեղծման ուղղությամբ աշխատանքներն ակտիվացնելու համար Հայաստանում ճապոնական մշակութային կենտրոն հիմնադրելու առաջարկությամբ, որի կապակ-

ցությամբ ճապոնական կողմը նշեց, որ աշխատանքներ են ընթանում կոմիտեի ճապոնական կողմի կազմի ծևավորման աշխատանքներն ավարտելու ուղղությամբ, իսկ մշակութային կենտրոնի ստեղծման առնչությամբ ներկայացրեց այլ երկրներում արևելագիտության ինստիտուտներին կից նման կենտրոնների ստեղծման գործառությունը և խորհուրդ տվեց համատեղ աշխատանքներ սկսել Մոսկվայում ճապոնիայի դեսպանության հետ:

Պետք է ընդգծել, որ ճապոնիան մեծ նշանակություն է տալիս «Մետաքսի ճանապարհի» գոտում գտնվող երկրների ոչ միայն քաղաքական գործիչների ու գործարարների, այլև նաև ազգային գիտնականների տեսակետներին: Նենց այդ նպատակով ճապոնիայի արտաքին գործերի նախարարությունը 1999 թ. մարտի 9-ին Տոկիոյում գումարեց միջազգային գիտաժողով՝ նվիրված «Մետաքսի ճանապարհի տարածաշրջանի ընդհանուր ստրատեգիան» հիմնախնդրի քննարկմանը: Գիտաժողովին մասնակցում էին 17 երկրների, այդ թվում ԱՄՆ-ի, Գերմանիայի, Իրանի, Մեծ Բրիտանիայի, Ազրբեջանի, Չայաստանի, Ղազախստանի, Չինաստանի, Թուրքիայի, Ֆրանսիայի, Վրաստանի, ճապոնիայի և այլ երկրների արևելագետներն ու միջազգայնագետները: Գիտաժողովում Չայաստանը ներկայացնում էր ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն. Շովհաննիսյանը: Նա իր գեկուցման մեջ, կարևորելով «Մետաքսի ճանապարհի» նշանակությունը, ընդգծեց, որ այդ ճանապարհը պետք է բաց լինի բոլոր երկրների համար, և միայն այդ կերպ նա կկարողանա կատարել իր առաքելությունը, և նրա առանձին հատվածները չպետք է դառնան որոշ երկրների մենաշնորհը և օգտագործվեն տարածաշրջանի այլ երկրների տնտեսական շրջափակման համար, ինչպես փորձում է անել Ազրբեջանը: Չայ մասնագետը ներկաների հավանության ներք հայտարարեց, որ «Մետաքսի ճանապարհը իրոք պետք է բոլորի համար լինի մետաքսյա, այլ ոչ թե փշոտ»:

2000 թ. մայիսին Չայաստանում հավատարմագրվեց ճապոնիայի նորանշանակ դեսպան Մ. Տամբան: Դեսպանի և ՀՀ արտգործնախարարի գրույցի առանցքն անցնում էր երկողմ համագործակցության զարգացման ուղղությունների քննարկմանը: Դեսպանը, ողջունելով Չայաստանում իրականացված ժողովրդավարական և տնտեսական բարեփոխումները, ընդգծեց, որ իր կառավարությունը Կովկասը դիտում է որպես կամուրջ Եվրոպայի և Ասիայի միջև և ձգտում է տարածաշրջանի բոլոր երկրների հետ զարգացնել բազմաբնույթ հարաբերություններ: Կողմերն անդրադարձան համագործակցության կոնկրետ ծրագրերի քննարկմանը, մասնավորապես տնտեսական, ինչպես

նաև տրանսպորտի, առողջապահության և կրթության բնագավառում կապերի աշխուժացմանը:

2001 թ. հոկտեմբեր–նոյեմբեր ամիսներին ստեղծվեցին Հայ–ճապոնական և ճապոնա–հայկական միջխորհրդարանական բարեկամության խմբերը:

2001 թ. դեկտեմբերի 19–22–ը կայացավ ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի պաշտոնական այցը ճապոնիա, որը քաղաքական բարձր մակարդակով արագին էր երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր:

Ռ. Քոչարյանը հանդիպում ունեցավ ճապոնիայի վարչապետ Զունիշիրո Կոհծումիի հետ: Կողմերը քննարկեցին Հայաստանի և ճապոնիայի միջև բարեկանական հարաբերությունների զարգացման հեռանկարները: Զ. Կոհծումին, կարևորելով Հարավային Կովկասի դերը, ընդգծեց ճապոնիայի պատրաստակամությունը՝ զարգացնել Հայաստանի հետ հարաբերությունները, օժանդակել Հայաստանի տնտեսական զարգացմանն ու տարածաշրջանում կայունության պահպանմանը: Ռ. Քոչարյանն իր հերթին ընդգծեց, որ Հայաստանը շահագրգուված է ակտիվ քաղաքական երկխոսություն ծավալել ճապոնիայի հետ և կողմնակից է ճապոնիայի առավել ակտիվ գործերում:

Հանդիպումից հետո Ռ. Քոչարյանն ու Զ. Կոհծումին ստորագրեցին համատեղ հայտարարություն «Հայաստանի և ճապոնիայի միջև բարեկամության և գործընկերության մասին» (տե՛ս Հավելված):

Դեկտեմբերի 20–ին ՀՀ նախագահը հանդիպեց ճապոնիայի կայսր Ակիհիտոյի հետ: Հանդիպմանը, որը կրում էր արարողակարգային բնույթ, հետևեց պաշտոնական ճաշ կայսերական պալատում:

Այցի շրջանակներում նախագահ Ռ. Քոչարյանը հանդիպում ունեցավ նաև Հայ–ճապոնական բարեկամության նորաստեղծ խորհրդարանական խմբի անդամների հետ, որը կայացավ ճապոնիայի կառավարող Լիբերալ դեմոկրատական կուսակցության կենտրոնական գրասենյակում:

Այցի ընթացքում ՀՀ նախագահը երկու հարցազրույց տվեց ճապոնիայի ազգային հեռուստատեսությանն ու լրատվական այլ միջոցներին:

Դեկտեմբերի 20–ին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի՝ ճապոնիա այցի շրջանակներում տեղի ունեցավ ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանի հանդիպումը ճապոնիայի արտգործնախարար Մ. Տանակայի հետ: Հանդիպման սկզբում ստորագրվեցին երկու հայտագրեր ճապոնիայի կառավարության Զարգացման աջակցության պաշտոնական (ԶՊԱ) ծրագրի ներք Հայաստանում թշկական և մշակութային դրամաշնոր-

հային նախագծերի իրականացման վերաբերյալ: Դայտագրերի ստորագրման արարողությանը հետևած գրույցի ընթացքում Վ. Օսկանյանը և Մ. Տանական քննարկեցին երկու երկրների միջև քաղաքական երկխոսության հետագա ծավալմանը, երկողմ տնտեսական հարաբերությունների զարգացմանը վերաբերող մի շարք հարցեր: Դանդիպման ընթացքում քննարկվեցին նաև տարածաշրջանային խնդիրներ, որոնց շարքում նախարար Օսկանյանը ներկայացրեց ՀՀ հիմնահարցի կարգավորման ներկա իրավիճակը: Կողմերն ընդգծեցին միջազգային կազմակերպություններում համագործակցության սերտացման անհրաժեշտությունը: Այդ կապակցությամբ Վ. Օսկանյանը վերահստատեց ՀՀ աջակցությունը ճապոնիային՝ ՄԱԿ-ի ԱԽ-ի մշտական անդամ դառնալու հարցում: Դանդիպման ընթացքում Վ. Օսկանյանը հայտնեց 2002 թ. Տոկիոյում ՀՀ դեսպանություն բացելու մտադրության մասին:

Ո. Քոչարյանի պաշտոնական այցի շրջանակներում դեկտեմբերի 20-ին տեղի ունեցավ նաև ՀՀ ֆինանսների նախարար Վ. Խաչատրյանի հանդիպումը ճապոնիայի ֆինանսների նախարարի առաջին տեղակալ, ներկայացուցիչների պալատի անդամ, ֆինանսական հարցերով խորհրդարանական քարտուղար Կիյոշի Նականոյի հետ, ուր քննարկվեցին երկողմ համագործակցությանը, մասնավորապես ՀՀ-ին տրամադրվող վարկային ծրագրերին վերաբերող հարցեր:

ՀՀ ճախագահի այցելությունը ճապոնիա նոր լիցք հաղորդեց երկողմ հարաբերությունների զարգացմանը, ինչպես նաև հնարավորություն ստեղծեց ճապոնիայի կողմից դեռևս 90-ական թվականների կեսերին որդեգրած «Նոր Եվրասիական դիվանագիտության» շրջանակներում որակական նոր մակարդակի բարձրացնել հայ-ճապոնական քաղաքական առնչությունները՝ բարենպաստ ճախապայմաններ ստեղծելով ՀՀ-ում ճապոնական ուղղակի ներդրումների և տնտեսական այլ ծրագրերի իրականացման համար:

Դատկանշական էր 2002 թ. հոկտեմբերի 17–18-ը Մոսկվայում ճապոնիայի դեսպանության պատվիրակության այցը Դայաստան՝ ռազմական կցողոր, գնդապետ Կոկի Արասեի գլխավորությամբ, որն առաջինն էր այս ոլորտում:

Այցի հիմնական նպատակն էր ծանոթանալ ՀՀ պաշտպանության, ներքին և արտաքին գործերի և ազգային անվտանգության նախարարությունների գործունեությանը, ինչպես նաև քննարկել ռազմական բնագավառում հետագա համագործակցության հնարավոր ուղիները:

ՀՀ պաշտպանության, արտաքին գործերի, ներքին գործերի, ազգային անվտանգության նախարարությունների դեկավարության հետ

համդիպումների ընթացքում երկկողմ կարևորվեց պաշտպանական բնագավառում համագործակցության զարգացման, երկու երկրների համապատասխան գերատեսչությունների միջև անմիջական շփումների հաստատման, ինչպես նաև տեղեկատվության փոխանակման անհրաժեշտությունը:

2002 թ. նոյեմբերի 15–19-ը Հայաստանի և ճապոնիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 10–ամյա հորեւյանին նվիրված «ճապոնիայի գեղատեսիլ վայրերը» խորագրով լուսանկարչական ցուցահանդեսի պաշտոնական բացմանը մասնակցելու նպատակով Հայաստան ժամանեց Մոսկվայում ճապոնիայի դեսպանության նախարար–դեսպանորդ Տ. Խոյոյի գլխավորած պատվիրակությունը:

2003 թ. մարտի 27-ին ՀՀ նախագահին իր հավատարմագրերը հանձնեց ՀՀ–ում ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան ի. Նոմուրան: Դեսպանը հանդիպումներ ունեցավ արտգործնախարար Վ. Օսկանյանի, վարչապետ Ա. Մարգարյանի, ԱԺ նախագահ Ա. Խաչարյանի հետ: Ենթվեց Հայաստանին մարդասիրական օգնության, դրամաշնորհների և վարկերի տրամադրման քաղաքականությունից ուղղակի ներդրումների միջոցով լիարժեք և փոխահավետ համագործակցության աստիճանաբար անցնելու անհրաժեշտությունը, իրավապայմանագրային դաշտի ձևավորումը:

2003 թ. դեկտեմբերի 1–3–ը աշխատանքային այցով Հայաստանում էր գտնվում Հայաստանում ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան ի. Նոմուրան (նստավայրը՝ ք. Մոսկվա):

Այցի ընթացքում դեսպանը հանդիպումներ ունեցավ ՀՀ նախագահի, վարչապետի, ԱԳՍ Ասիայի, Օվկիանիայի և Աֆրիկայի վարչության պետ Ռ. Կարապետյանի հետ: Դեկտեմբերի 2–ին ճապոնիայի ազգային տոնի՝ Կայսեր ծննդյան առիթով Երևանում կազմակերպվեց նեծ ընդունելություն:

2004 թ. փետրվարին ՀՀ ԱԳ նախարարի խորհրդական (արտահաստիքային) նշանակվեց Տոկիոյի քրիստոնեական համալսարանի դասախոս, պրֆեսոր Յունտ Պողորյանը:

Հայ–ճապոնական քաղաքական համագործակցությունը զարգացման մեջ ներուժ ունի: Երկու երկրները այս տարիների ընթացքում հաստատել են ոչ միայն բարեկանական երկկողմ հարաբերություններ, որոնք զերծ են որևէ քաղաքական խնդիրներից, այլև սերտորեն համագործակցել և միջյանց աջակցել են միջազգային ասպարեզում, մասնավորապես ՄԱԿ–ի շրջանակներում:

Պետք է մեկ անգամ և ընդգծենք, որ Հարավային Կովկասում ռազմավարական կարևոր դիրք գրաղեցնող Հայաստանը՝ որպես տարա-

ծաշրջանում առավել կազմակերպված և կայուն երկիր, կարող է վստահելի գործընկեր դառնալ ճապոնիայի համար:

* * *

1993 թ. ճապոնիան դիմել էր Հայաստանին՝ ԽՍՀՄ և ճապոնիայի միջև կնքված համաձայնագրերի և պայմանագրերի իրավաժառանգությունը ճանաչելու առաջարկով: ՀՅ արտգործնախարարությունը ճապոնական կողմին հայտնեց մինչև Հայաստանի անկախացումը ԽՍՀՄ-ի հետ կնքված և իրենց ուժը չկորցրած պայմանագրերի և միջազգային համաձայնագրերի նկատմամբ իրավաժառանգորդ հանդիսանալու ՀՅ համաձայնության մասին:

Նախկին ԽՍՀՄ-ի և ճապոնիայի միջև կնքված պայմանագրերի հիման վրա լրամշակված համաձայնագրերի փաթեթը 1998 թ. հուլիսին ՀՅ ԱԳՆ-ի կողմից ներկայացվել է ճապոնական կողմից քննարկմանը:

Սակայն մինչ օրս Հայաստանի Հանրապետության և ճապոնիայի միջև չկան ստորագրված համաձայնագրեր ու միջպետական պայմանագրեր: Ընդհանուր առնամբ ճապոնական կողմը փորձում է ձեռնպահ մնալ այնպիսի համաձայնագրերի ստորագրումից, որոնք չունեն համապատասխան գործնական հիմք և ի սկզբանե դատապարտված են «անգործության»:

Գլուխ երրորդ

ՀԱՅ-ՃԱՊՈՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Յայ-ճապոնական առևտրատնտեսական առնչությունները բազմադարյա պատմություն ունեն: Յայաստանը, հանդիսանալով պատմական «Մետաքսի ճանապարհի» ակտիվ մասնակիցներից, դեռևս հնագույն ժամանակներից սերտ առևտրական կապեր էր հաստատել ասիական մայրցամաքի երկրների, այդ թվում նաև ճապոնիայի հետ: Երբ XX դարի սկզբում վերականգնվեց հայոց պետականությունը, ճապոնիայի կառավարությունն ու գործարար շրջանակները շտապեցին համատեղ ծրագրեր իրականացնել: Այսպես՝ 1920 թ. ամռանը մի խումբ ճապոնացի և հայ խոշոր ձեռներեցներ դիմեցին Յայաստանի կառավարությանը էլեկտրական երկարուղու կառուցման կոնցեսիա ձեռք բերելու նպատակով: Այդ երկարուղին, կապելով երկրի մայրաքաղաքը հյուսիսային (Երևան-Ելենովկա-Դիլիջան-Աղսթավաֆա) և հարավային (Երևան-Նոր Բայազետ-Գորիս) սահմանամերձ շրջանների հետ, ռազմավարական նշանակություն պետք է ունենար Յայաստանի զարգացման գործում: Սակայն Յայաստանի խորհրդայնացումը ի չիք դարձրեց նշված կարևոր ծրագրի իրականացումը:

ԹԱՊՈՆԻԱՅԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ 1988 թ. ԵՐԿՐՈՍՉԱՐԺԻՑ ՐԵՏՈ

1988 թ. երկրաշարժից հետո ճապոնիան նյութական և դրամական զգալի օգնություն է ցուցաբերել Յայաստանին: ճապոնիան առաջինների թվում օգնության ձեռք մեկնեց երկրաշարժից տուժած Յայաստանին:

«Մենք փոքր եղբորս և քրոջ հետ որոշեցինք մեր ողջ գումարը նվիրաբերել Յայաստանի երեխաների օգնությանը: Գումարը մեծ չէ, բայց

գուցե և այս միջոցները օգնեն փրկել որևէ մեկին: Մենք ուզում ենք, որ հնարավորին չափ շատ նարդիկ կենդանի մնան»:

Այս տողերը հասցեագրված էին ԽՄԿԿ գլխավոր քարտուղար Գորբաչովին Նաոլի Հագեսավայի՝ ճապոնացի 11-ամյա աղջնակի նամակում:

1989 թ. փետրվարին ճապոնիայի կառավարող Լիբերալ-դեմոկրատական կուսակցության գլխավոր քարտուղար Սինտարո Արեն այցելեց ճապոնիայում Խորհրդային Սիության դեսպանություն՝ ցավակցություն հայտնելու Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժի հետևանքով մարդկային մեծ զոհերի համար: Սինտարո Արեն ճապոնիայում ԽՄԴ դեսպան Ն. Սոլովյովին հանձնեց 39467483 իեն, որը նախատեսված էր տարերային աղետից տուժածներին օգնություն ցույց տալու և Վերականգնողական աշխատանքներ իրականացնելու համար: Այդ միջոցները հանգանակվել էին ամրող երկրում կուսակցության ծավալած արշավի շրջանակներում, որին անձնական մասնակցություն էր ցուցաբերել Լիբերալ-դեմոկրատական կուսակցության գլխավոր քարտուղարը: Օգնությունը չսահմանափակվեց միայն գումարների տրամադրմամբ: Ճապոնիայի մայրաքաղաքի կենտրոնում «Ծյուո կայկան» համերգասրահում տեղի ունեցավ բարեգործական համերգ Հայաստանի երկրաշարժից տուժածներին օգնելու համար՝ «Քեզ Հայաստան» նշանաբանով: Հնչեցին Ռավելի, Շոպենի, Չայկովսկու, Մուսորգսկու, Ռախմանինովի ստեղծագործությունները ճապոնացի հայտնի երաժշտներ՝ դաշնակահարներ Յասուսի Քիրոսեի, Ռիոկո Ֆուկասավայի, Իծումի Սիմուրայի, ջութակահարներ Ասակո Յոսիկավայի, Յոկո Կուբոի, թավջութակահարներ Կեն Իժիրո Յասուդայի, Երգիչներ Տաեմի Կոհամայի, Ֆուտորու Կացուրեի, Տադա Յոսիեի, Միեկո Տակիձավայի կատարմամբ:

1989 թ. հոկտեմբերից մեկ շաբաթ շարունակ Տոկիոյում, Օսակայում, Նագոյայում, Սապորոյում և այլ քաղաքների քատերական հարթակներում անցկացվեցին Լեճինականի Ալյանսի անվան ժողովրդական անսամբլի համերգները: Ներկայացվեցին նաև ժողովրդական ստեղծագործության այլ նմուշներ, որոնցից առանձնակի սիրով ընդունվեց «ճապոնիան հայ մանուկների աչքերով» ցուցադրությունը, որը կազմվել էր երեխաների գեղագիտական դաստիարակության կենտրոնի ֆոնդերից: Համերգների ծրագրերը կազմվել էին այդ քաղաքներում բնակվող ճապոնացի երաժշտների օգնությամբ, որոնցից ստացված ամրող դրամամուտը ցուցանցվեց Հայաստանում տարերային աղետից տուժածների օգնության ֆոնդին: ճապոնա-խորհրդային բարեկամության ընկերության Սապորո քաղաքի բաժանմունքի ներկայացուցիչները այնտեղ գտնվող խորհրդային գլխավոր հյուպատոսությանը հանձնեցին գրության շարժման ակտիվիստների հանգանակած 670 հազար իեն գումարը:

Աղետի գոտում շինարարական աշխատանքներն իրականացնելու նպատակով ճապոնիայի կառավարությունը Հայաստանին տրամադրեց «Կոմացու», «Շիտաչի», «Կատո» ճապոնական ֆիրմաների 253 շինարարական մեքենա: Հայաստան ուղարկվեց նաև ճապոնացի սեյսմոլոգների խումբ (17 հոգի)՝ Ս. Սուեհիրոյի գլխավորությամբ, որոնց հետ պայմանագրով վերականգնվեց սեյսմոլոգիայի և սեյսմակայուն շինարարության բնագավառում հետագա համագործակցության համար:

ճապոնիայի կառավարությունը օգնություն էր ցույց տալիս Հայաստանին նաև միջազգային կազմակերպությունների շրջանակներում: Այսպես՝ աղետի գոտու վերականգնման ծրագրի իրականացնան նպատակով ճապոնիայի կառավարությունը մեկ միլիոն ամերիկյան դոլարի չափով նվիրատվություն տրամադրեց Հայաստանին նաև Համաշխարհյին բանկի (WB) միջոցով՝ բանկի անմիջական վերահսկողությամբ:

ԵՐԿԿՈՂՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ, ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽԱՑՈՒՄԻՑԻՑ Ի ՎԵՐ

Դիվանագիտական հարաբերությունների հաստատումից անմիջապես հետո Հայաստանը միացել է ԱՊՀ երկրներին օգնության կազմակերպման նպատակով ճապոնիայի հետ ստորագրված «Օժանդակության հանձնաժողովի ստեղծման մասին» համաձայնագրին, որի շրջանակներում 1992 թ. հոկտեմբերին Հայաստանի Հանրապետության պաշտոնական պատվիրակությունը նաևնակցել է ճապոնիայուն կազմակերպված նորանկախ պետություններին մարդասիրական և տեխնիկական օգնությամբ նվիրված միջազգային համաժողովի աշխատանքներին:

1992 թ. հուլիսին ՌԴ-ում ճապոնիայի դեսպանությունում հանդիպում կայացավ դեսպանության պաշտոնյաների և Հայաստանից Մոսկվա ժամանած ՀՀ պատվիրակության անդամների միջև: Քննարկվող հարցերը առնչվում էին հայկական ատոմակայանի գործարկման նպատակով ճապոնական կողմից տրամադրված տեխնիկական օգնությանը, ճապոնական ֆիրմաների մասնակցությամբ քաղաքացիական կարիքների բավարարման համար պաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների վերապրոֆիլավորմանը (կոնվերսիա), Ասիհական գարգացման բանկին Հայաստանի անդամակցությանը: ճապոնական կողմը նախնական համաձայնություն տվեց ԱԷԿ-ի անվտանգությունն ապահովող հետազոտական աշխատանքներն իրականացնելու համար՝ քիչ հավանական համարելով ճապոնիայի մասնակցությունը Հա-

Նը: Արտգործնախարար Վատանաբեի հետ հանդիպման ընթացքում համառոտ ներկայացվեց ՀՀ դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հարցում: Արտգործնախարարին հանձնվեցին Երկողութ տնտեսական համագործակցության համաձայնագրերի նախագծերը: ճապոնիայի խորհրդարանի անդամ, արտաքին առևտուի և արդյունաբերության փոխնախարար Կոզայի հետ հանդիպման ընթացքում ներկայացվեց Հայաստանում անցկացվող տնտեսական բարեփոխումների նկարագիրը, տնտեսական համագործակցության առաջնային ուղղությունները: Կոզան տեղեկացրեց, որ նորանկախ պետություններին ցույց տրվող տեխնիկական օգնության սահմաններում ճապոնիայում վերապատրաստվելու է 200 մասնագետ, այդ թվում նաև Հայաստանից: Հայաստանում ներդրումներ իրականացնելու կապակցությամբ փոխնախարարը կարևոր էր համարում օրենսդրական հիմքերի ստեղծումը և Հայաստանի տնտեսությունը բնութագրող ցուցանիշների առկայությունը:

1994 թ. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD, Organisation for Economic Cooperation and Development) առջներ Զարգացման օժանդակող կոմիտեի (DAC, Developmet Assistance Committee) ցանկում Հայաստանի ընդգրկվելու կապակցությամբ ճապոնիայի կառավարությունը համակողմանի տեխնիկական օգնություն սկսեց ցուցաբերել Հայաստանի զարգացմանն ուղղված ճապոնիայի կառավարության պաշտոնական օգնության (ODA, Official Development Assistance) ծրագրերի շրջանակներում: ճապոնիայի տեխնիկական օգնության համակարգին և նրա իրագործման մեխանիզմին ծանոթանալու նպատակով ճապոնական կողմի իրավերով ճապոնիա մեկնեցին ՀՀ Էկոնոմիկայի փոխնախարար Ա. Ղարբենյանը և ՀՀ ԱԳՆ Երկողութ առևտուական հարաբերությունների վարչության պետ Ա. Աղոնցը:

1996 թ. Ակզերին Հայաստան ժամանեց ճապոնական կառավարական պատվիրակությունը, որը ուսումնասիրություններ կատարեց Հայաստանում ODA-ին առջներ ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության՝ JICA-ի շրջանակներում օգնության ծրագրերի իրականացման համար: Մեկ ամիս անց ճապոնական «Սումիտոմո» ընկերության իրավերով ճապոնիա այցելեց Հայաստանի արդյունաբերության նախարարության պատվիրակությունը, որը մանրամասն ներկայացրեց Հայաստանի տնտեսական իրավիճակը, արդյունաբերության ոլորտում փոխչափավետ համագործակցության հեռանկարները, ինչպես նաև «Նախրիտ» ՓԲԸ-ի և Երևանի ավտոդողերի գործարանի մոդեռնիզացման նախագծերը: 1996 թ. հուլիսին Հայաստանում էր գտնվում ճապոնիայի ԱԳՆ պատվիրակությունը՝ նախարարության համա-

գործակցության զարգացման բաժնի վարիչի առաջին տեղակալ Ռ. Սակացիի գլխավորությամբ: Ծանոթանալով Յայաստանի տնտեսական զարգացման ծրագրին և դրա իրականացման համար անհրաժեշտ պայմաններին՝ պատվիրակությունը ներկայացրեց ODA ծրագրերի աշխատանքների կազմակերպման և օգնության ծրագրավորման սկզբունքներին, ինչպես նաև ուսումնասիրեց այլ դոնոր երկրների կողմից իրականացվող տնտեսական համագործակցության ծրագրերը:

1997 թ. դեկտեմբերին Փարիզում կայացած դոնոր երկրների հերթական խորհրդաժողովի ընթացքում ՀՀ և ճապոնիայի պատվիրակությունների միջև փաստաթղթեր փոխանակվեցին Յայաստանի Յանրապետությանը նոր փոքրածավալ օգնության և երկարաժամկետ վարկեր տրամադրելու վերաբերյալ: ՀՀ վարչապետի և ճապոնիայի պատվիրակության միջև կայացած հանդիպման ընթացքում շոշափվեցին հայ-ճապոնական տնտեսական կապերի զարգացման հեռանկարները, ստորագրվեց փաստաթուղթ Յայաստանի Յանրապետությանը երկարատև արտոնյալ վարկ տրամադրելու վերաբերյալ: Ի կատարումն այդ որոշման 1998 թ-ի մայիսին «Ելեկտրաէներգիայի մատակարարման և բաշխման՝ ցանցերի վերականգնման ծրագրի» շուրջ բանակցություններ սկսելու նպատակով Յայաստան ժամանեց ճապոնիայի Անդրծովյան տնտեսական համագործակցության հիմնադրամի (OECD) ներկայացուցիչը: Բանակցությունների արդյունքում ստորագրվեց արձանագրություն, որով կողմերը սկզբունքային հավանություն տվեցին նախագծին:

Յայ-ճապոնական հարաբերությունների հետագա զարգացման, գործնական համագործակցության համար բարենպաստ պայմաններ ստեղծելու, կառավարական և մասնավոր ներդրումների իրականացումը համակարգելու, այդ թվում նաև Զարգացմանն ուղղված ճապոնիայի պաշտոնական օգնության (ODA) ծրագրերը իրականացնելու նպատակով 2000 թ. հուլիսին Երևանում ստեղծվեց Յայ-ճապոնական տնտեսական համագործակցության կոմիտեն: Կոմիտեում ընդգրկված են ՀՀ կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչպես նաև ՀՀ մասնավոր սեկտորը ներկայացնող արդյունաբերողներ և գործարարներ: 2000 թ. օգոստոսի 10-ին Տոկիոյում հիմնադրվեց ճապոնա-հայկական տնտեսական համագործակցության կոմիտեն, որի կազմում, ի տարբերություն Յայ-ճապոնական կոմիտեի, ընդգրկված են միայն մասնավոր հատվածի ներկայացուցիչներ: Այնուհետև երկու կոմիտեների միջև բանակցություններ ծավալվեցին համատեղ բազմակողմանի գործունեությունը համակարգելու ուղղությամբ: 2000 թ. հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 4-ը պաշտոնական այցով Յայաստանում էր գտնվում ճապոնա-հայկական տնտեսական համագործակցության կո-

միտեհի պատվիրակությունը նրա նախագահ Յ. Միածակիի գլխավորությամբ: Հանդիպումներ տեղի ունեցան ՀՀ նախագահի, վարչապետի, այլ բարձրաստիճան անձանց հետ, որոնց ընթացքում քննարկվեցին կոմիտեների գործունեության խնդիրներին և հիմնական ուղղություններին վերաբերող մի շարք հարցեր:

2000 թ. հոկտեմբերին Երևանում տեղի ունեցավ Հայ–ճապոնական տնտեսական համագործակցության կոմիտեի նիստը, իսկ երկու կոմիտեների առաջին համատեղ նիստը տեղի ունեցավ Տոկիոյում 2001 թ. հունիսի 27-ին:

2001 թ. հունիսի 25–29-ը Տոկիոյում «Երեք հարավկովկասյան համրապետություններ» խորագիրը կրող ցուցահանդեսի բացման արարողությանը նաև նախագահությանը՝ ԱԳ նախարար Վ. Օսկանյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին նաև ՀՀ առևտուրի և արդյունաբերության նախարար Կ. ճշնարիտյանը և Զարգացման հայկական գործակալության նախագահ Վ. Մովսիսյանը:

Այցելության ընթացքում կայացավ Հայ–ճապոնական և ճապոնա–հայկական տնտեսական համագործակցության կոմիտեների անդրանիկ նիստը: Նիստի համանախագահողներն էին Վ. Օսկանյանը և Յ. Միածակին: Իր ելույթում պրն Օսկանյանը մեծ նշանակություն տվեց համատեղ նիստի անցկացմանը, որը խթան է հանդիսանալու օգնության ծրագրերից փոխչափավետ համագործակցության անցնելու համար՝ նշելով, որ զարգացման փուլում գտնվող Հայաստանը բոլոր հնարավորություններն ունի ճապոնիայի գործարաբներին և արդյունաբերողներին Հայաստանի շուկայում ներգրավելու համար: Կոմիտեների համատեղ նիստի աշխատանքներին մեծ կարևորություն տվեց ճապոնիայի ԱԳն Եվրոպայի վարչության պետի տեղակալ Մորին, որն իր ելույթում նշեց որ կոմիտեների գործունեությունը պետք է նպատակառության լինի երկու երկրների տնտեսությունների մերձեցման «կամուրջի» կառուցմանը: Մորին Կովկասը գնահատեց որպես կարևոր ռազմավարական տարածաշրջան՝ նշելով, որ ճապոնիայի քաղաքականությունը ուղղված է տարածաշրջան՝ նշելով, որ ճապոնիայի քաղաքականությունը ուղղված է տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատմանը: Երկողմ հարաբերությունների հետագա զարգացման տեսանկյունից կարևորվեց ՀՀ նախագահի ճապոնիա կայանալիք այցի նշանակությունը: Նիստի աշխատանքների ընթացքում քննարկվեցին երկկողմ տնտեսական համագործակցությանը, մասնավորապես, ՀՀ–ում ճապոնական ներդրումների խրախուսմանը, առավել հեռանկարային բնագավառներում համատեղ ծեռնարկությունների ստեղծմանը, շփումների ակտիվացմանը ու կապերի ընդլայնմանը վերաբերող հարցեր: Ուրվագծվեցին երկկողմ և բազմակողմ համագործակցության ոլորտները: Հայկական

կողմն անդրադավ հայ-ճապոնական համագործակցության ուղղությունների և դրանց զարգացման հնարավորությունների, ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների, գյուղատնտեսության ոլորտի զարգացման, ինչպես նաև ՀՀ ներդրումային հնարավորությունների և այդ գործում Հայկական զարգացման գործակալության դերի նախարար:

Հայկական պատվիրակությունը նախանձեց Տոկիոյում կազմակերպված ներդրումային սեմինարին, որի ընթացքում պրն Օսկանյանը, ներկայացնելով Հայաստանի քաղաքական և տնտեսական իրավիճակը, այն որակեց որպես կայուն և նպաստավոր՝ Հայաստանում ներդրումներ իրականացնելու համար: Անդրադառնալով տարածաշրջանային կայունությանը՝ արտգործնախարարը կարևորեց հարավկովկասյան երեք հանրապետությունների տնտեսական զարգացումը և կոչ արեց ճապոնացի գործարարներին հավասարակշռված մոտեցում ցուցաբերել տարածաշրջանում ներդրումներ իրականացնելիս: Նախարարը հանդիպում ունեցավ նաև ճապոնիայի միջազգային համագործակցության կառավարական գործակալության (JICA) նախագահ Սահտոյի հետ, որի ընթացքում քննարկվեցին ՀՀ-ի և ճապոնիայի միջև համագործակցության հեռանկարները, ինչպես նաև ճապոնիայի կառավարության կողմից իրականացվող աջակցությունը Հայաստանին Զարգացմանն ուղղված պաշտոնական (ODA) ծրագրերի շրջանակներում: Ճապոնիայի փոխարտգործնախարար Սուլգիուրայի հետ հանդիպման ընթացքում երկուստեք կարևորվեց հարաբերությունների ընդլայնման և խորացման, միջազգային կազմակերպություններում համագործակցության և իրավական բազայի ստեղծման անհրաժեշտությունը: ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանը և առևտորի ու արդյունաբերության նախարար Կ. ճշմարիտյանը համուխառն ունեցան նաև ճապոնիայի էկոնոմիկայի, առևտորի և արդյունաբերության (METI) նախարարի տեղակալ Ֆուրույայի հետ: Կողմերն ընդգծեցին երկողմ իրավական բազայի ստեղծման անհրաժեշտությունը առևտորատնտեսական հարաբերությունների ակտիվացման նպատակով, ինչպես նաև համագործակցությունը փոքր և միջին ձեռնարկությունների խրախուսման և զարգացման գործում:

2001 թ. դեկտեմբերի 19–22-ը, ինչպես նշվեց նախորդ գլխում, կայացավ ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի պաշտոնական այցը ճապոնիա, որը քաղաքական բարձր մակարդակով առաջինն էր երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր:

Այցելության առաջին օրը նախագահ Ռ. Քոչարյանը հանդիպում ունեցավ ճապոնիայի էկոնոմիկայի, արդյունաբերության և առևտորի նախարար Տակեն Քիրանումայի հետ: Յանդիպման ընթացքում քննարկվեց Հայաստանի և ճապոնիայի միջև առևտորատնտեսական հարաբերու-

թյունների զարգացմանը վերաբերող հարցերի լայն շրջանակ: S. Հիրանուման նախավորապես նշեց, որ նապոնիան մտադիր է սերտացնել և խորացնել համագործակցությունը Հարավային Կովկասի երկրների և հատկապես Հայաստանի հետ: Նա հավաստեց նապոնիայի օժանդակությունը Առևտի համաշխարհային կազմակերպությանը Հայաստանի անդամակցության գործում: Իր հերթին ՀՀ նախագահը նշեց երկողմտնտեսական հարաբերություններում օգնության ծրագրերից համագործակցության և զարգացման ծրագրերին անցնելու անհրաժեշտությունը: Ո. Քոչարյանը ընդգծեց Հայաստանի շահագործվածությունը ճապոնական մասնավոր ներդրումների ներգրավման հարցում՝ ավելացնելով, որ ներկա փուլում կարևոր և միանգամայն իրական է նկատվում ներդրումային կոնկրետ նախագծերի մշակումն ու իրականացումը, մասնավորապես բարձր տեխնոլոգիաների, եներգետիկայի, գյուղատնտեսության, սննդի վերամշակման և այլ բնագավառներում: Ըստ նախագահի՝ լինելով ամենակազմակերպված և կայուն երկիրը Հարավային Կովկասում՝ Հայաստանը կարող է հուսալի գործընկեր դառնալ ճապոնիայի համար: Հանդիպման ընթացքում նախագահ Ո. Քոչարյանը անդրադարձավ երկու երկրների միջև իրավական բազայի ստեղծման անհրաժեշտությանը և այդ կապակցությամբ Հիրանումային փոխանցեց երկու երկրների միջև ներդրումների փոխադարձ պաշտպանության և խրախուսման համաձայնագրի նախագիծը: ՀՀ նախագահը նաև նշեց, որ մենք կողմնակից ենք տնտեսության առավելագույն ազատականացմանը և փոքր ու միջին բիզնեսի զարգացմանը: Հանդիպման վերջում ճապոնական կողմին հանձնվեց Հայաստանում փոքր և միջին ծեռնարկատիրության վարկավորման իիմնադրամի ստեղծման և նրա գործունեության ծավալման համար դրամաշնորհային ծրագրի նախագիծը:

Այնուհետև ՀՀ նախագահը ընդունեց ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) նախագահ Տակաո Կավակամիին: Հանդիպման սկզբում ՀՀ նախագահը իր երախտագիտությունը հայտնեց ճապոնիայի կառավարությանը Զարգացմանը պաշտոնական աջակցություն ծրագրի շրջանակներում Հայաստանին ցուցաբերվող բազմակողմանի օգնության համար: Իր հերթին Տ. Կավակամին տեղեկացրեց, որ գործակալությունը մտադիր է շարունակել Հայաստանի հետ բոլոր ծրագրերի իրականացումը: Սակայն, ըստ գործակալության նախագահի, անհրաժեշտ է հստակեցնել երկու երկրների համար առաջնային նախագծերը: ՀՀ նախագահը նշեց, որ Հայաստանը և ճապոնիան շատ ընդհանրություններ ունեն, և այդ ուղղությամբ ճապոնիայի կուտակած հարուստ փորձը չափազանց կարևոր է Հայաստանի համար: Տ. Կավակամին ընդգծեց մասնագետների վերապատրաստման,

ինչպես նաև երկրում հզոր մտավոր ներուժի առկայության կարևորությունը Հայաստանի զարգացումն ապահովելու համար: Հանդիպման ընթացքում ՀՀ նախագահը իր պատրաստակամությունը հայտնեց հյուրներների և Ս. Կավակամիին Երևանում:

Հանդիպումից հետո Հայաստանի արդյունաբերության և առևտունախարար Կ. ճշմարիտյանը և Ս. Կավակամին ստորագրեցին «Հայաստանի հանքային արդյունաբերության զարգացում» հետազոտական դրամաշնորհային ծրագրի իրականացմանն ուղղված փաստաթուղթը (Scope of Works):

Հաջորդ օրը նախագահ Ռ. Քոչարյանը հանդիպեց նապոնիայի արտաքին առևտունական կազմակերպության (JETRO) նախագահ Նորորու Հատակեյամայի հետ: Հանդիպման սկզբում ՀՀ նախագահը շնորհակալություն հայտնեց իր գրուցակցին 2001 թ. հունիսին Տոկիոյում կայացած անդրկովկասյան տարածաշրջանի երկրների տնտեսական նվազումներին նվիրված ցուցահանդեսի կազմակերպման համար: Ռ. Քոչարյանը ընդգծեց հայկական կողմից հետաքրքրությունը զարգացնելու համագործակցությունը JETRO-ի հետ: Այդ կապակցությամբ պայմանավորվածություն ձեռք բերվեց 2002 թ. նապոնիայում կայանալիք ուսկերչական ապրանքատեսակների ցուցահանդեսին հայ արտադրողների մասնակցության վերաբերյալ: Այնուհետև Ն. Հատակեյաման ներկայացրեց իր դեկապարած կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունները և Հայաստանի հետ փոխգործակցության սերտացման հեռանկարները: Մասնավորապես նշվեց հայ գործարարներին անվճար 4 ամիս ժամկետով կազմակերպության կողմից Տոկիոյում գրասենյակ տրամադրելու, համակարգչային տեղեկատվական ցանցով գործընկերներ փնտորելու և գործարար կապերի հաստատման համար առկա հնարավորությունները: Ն. Հատակեյաման նշեց, որ կազմակերպության տեղեկատվական ցանցում գրանցված են ծխախոտի և կաթի փոշու արտադրությամբ զբաղվող միայն երկու հայկական ընկերություններ:

Նույն օրը նախագահ Քոչարյանը ընդունեց նապոնիայի միջազգային զարգացման բանկի նախագահ Կիոսուկե Սինաձավային: Հանդիպման ընթացքում քննարկվեց Հայաստանի էներգետիկայի և օդային տրանսպորտի բնագավառներում իրականացվող երկու արտոնյալ վարկային ծրագրերի կատարման ընթացքը: Նախագահը տեղեկացրեց ճապոնական կողմին, որ առաջինի իրականացման ծգձգման հիմնական պատճառը կապված էր Հայաստանում սեփականաշնորհման գործնթացի հետ: Ռ. Քոչարյանը նշեց, որ հայկական կողմը շահագրգուված է նշված ծրագիրը կատարելու, և համոզմունք հայտնեց, որ շահագրգիռ գերատեսչությունները բոլոր ջանքերը կգործադրեն այն արագ ավար-

տին հասցնելու համար: Երևանի «Զվարթնոց» օդանավակայանի վերականգնման նախագծի վերաբերյալ ՀՀ նախագահը նշեց, որ վերջերս օդանավակայանի կառավարումը տրվել է հայտնի արգենտինյան ընկերությանը: Այդ կապակցությամբ Ո. Քոչարյանը ընդգծեց, որ անհրաժեշտ է նախագծի իրականացման այնպիսի ուղիներ գտնել, որոնք կրավարաբեն նրանում ընդգրկված բոլոր երեք կողմերի պահանջները: Նախագահը առաջարկեց հանդիպումներ կազմակերպել տարրեր մակարդակներով, երեք կողմերի մասնակցությամբ՝ հետագա ծրագրերն ու գործողությունները համակարգելու նպատակով:

Ո. Քոչարյանի պաշտոնական այցի շրջանակներում դեկտեմբերի 20-ին տեղի ունեցավ նաև ՀՀ ֆինանսների նախարար Վ. Խաչատրյանի հանդիպումը ճապոնիայի ֆինանսների նախարարի առաջին տեղակալ, ներկայացուցիչների պալատի անդամ, ֆինանսական հարցերով խորհրդարանական քարտուղար Կիյոշի Նականոյի հետ: Վ. Խաչատրյանը, շնորհակալություն հայտնելով ճապոնիայի կառավարությանը Հայաստանին տրամադրվող օգնության համար, այնուհետև մանրամասներ հայտնեց Հայաստանի էներգետիկայի ոլորտում ճապոնիայի կողմից արտոնյալ վարկային ծրագրի իրականացման ընթացքի և արդի զարգացումների վերաբերյալ: Վ. Խաչատրյանը մասնավորապես նշեց, որ ՀՀ դեկավարությունը որոշել է ցանցերի արդիականացման նպատակով ստեղծել դոնորների խորհուրդ (IMF, World Bank) նախնական որոշակի կապիտալով, ուր կարող է իր մասնակցությունն ունենալ նաև ճապոնիան: Նականոն խոստացավ, որ ջանքեր կգործադրի Հայաստանի հետ համագործակցությունը խորացնելու ուղղությամբ, չնայած 2002 թ. ճապոնիայի բյուջեում ընդհանուր օգնության ծրագրերի համար նախատեսված գումարների նվազմանը շուրջ 10%-ով:

1997 թ. դեկտեմբերին Ֆրանսիայի մայրաքաղաքում կայացավ դուռը երկրների հերթական խորհրդաժողովը:

Այստեղ 1997 թ. դեկտեմբերի 10-ին ՀՀ և ճապոնիայի պատվիրակությունների միջև ստորագրվեց հենային արտոնյալ վարկերի գծով առաջին փաստաթուղթը: Ի կատարումն այդ համաձայնությամ 1998 թ. դեկտեմբերի 8-ին Երևանում տեղի ունեցավ «Էլեկտրաէներգիայի մատակարարման և բաշխման ցանցերի վերականգնման ծրագրի» վերթյալ նուտաների փոխանակումը, որի համաձայն՝ ճապոնական կառավարությունը պետք է 5 մլրդ 399 նվազագույն իեն գումարի արտոնյալ վարկով հանաֆինանսավորեր Համաշխարհային բանկի համապատասխան ծրագիրը: Այս կապակցությամբ 1999 թ. փետրվարի 18-ին Տոկիոյում ստորագրվեց վարկային համաձայնագիր: Հայկական և ճապոնական համապատասխան կազմակերպությունների միջև 2000 թ.

ապրիլին Միջազգային համագործակցության ճապոնական բանկի (JBIC) պատվիրակության՝ Հայաստան կատարած այցի արդյունքում պայմանավորվածություն ծեռք բերվեց 2004/2005 ֆինանսական տարում ավարտել նշված ծրագիրը:

Միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համատեղ ճապոնիան մասնակցում է նաև Հայաստանում իրականացվող խոշոր կարկային ծրագրերի նախագծերի կատարման գործընթացին:

Ինային արտոնյալ վարկի մյուս ծրագիրն առնչվում էր «Զվարենոց» օդանավակայամի արդիականացմանը, որը, ի տարբերություն առաջին վարկային ծրագրի, նախատեսված էր ամբողջովին իրականացնել ճապոնական կողմի, մասնավորապես, Միջազգային համագործակցության ճապոնական բանկի ֆինանսավորմամբ: ճապոնիայի կառավարության կողմից լիազորված խորհրդատվական կազմակերպությունները Հայաստանում բազմակողմանի ուսունասիրություններ անցկացնելուց հետո նախնական պատրաստականություն հայտնեցին ծրագրի իրականացումը սկսել 2001 թվականին: Դաշվի առնելով «Զվարենոց» օդանավակայամի արտոնյալ վարկային ծրագրի իրականացման անհնարինությունը՝ պայմանավորված «Զվարենոց» օդանավակայամի առկա կարգավիճակով, ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց կասեցնել վերոնշյալ ծրագրի իրականացումը և առաջնային ճանաչել «Երևանի ջերմաէլեկտրակայան» ՓԲԸ տեխնիկական վերակառուցման ուղղված վարկային ծրագիրը: Նշված ծրագրի շրջանակներում Երևան այցելեց Միջազգային համագործակցության ճապոնական բանկի (JBIC) պատվիրակությունը:

ODA-ի շրջանակներում իրականացվող դրամաշնորհային ծրագրերի տարեկան ընդհանուր գումարը կազմում է մոտ 7–8 մլն ԱՄՆ դոլար, իրականացվում է հիմնականում սարքավորումների տրամադրման ձևով, ընդգրկում են մեծածավալ ընդհանուր, մշակութային, ոչ նախաձեռնության արտադրության աճ» (KR 2), հետազոտական, ինչպես նաև փոքրածավալ նախագծեր:

1997–2002 թթ. ընթացքում ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ համատեղ իրականացվել են «Պարենային արտադրության աճ» (2KR) ծրագրի շուրջ 2 մլրդ ինը ընդհանուր արժողությամբ տարբեր նախագծեր, որոնց արդյունքում Հայաստան են ներկրվել ազուտային պարարտանյութ, հացահատիկային կոմբայններ և մինի տրակտորներ: 2002/2003 ֆինանսական տարում ծրագիրը չի իրականացվել նախատեսված գործընկերային հիմնադրամի 100%-ը համալրված չլինելու պատճառով: Սակայն ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՈՂ-ում ճապոնիայի դեսպանության և ճապոնիայի միջազգային համագործակ-

ցության համակարգի (JICS) միջև սկսված համատեղ համագործակցության և աշխատանքների արդյունքում ակնկալվում է նշված ծրագրի Վերսկսումը 2003/2004 ֆինանսական ոլորտում, որի նպատակով 2004 թ. մարտին Հայաստան կայցելի ճապոնական պատվիրակությունը:

Ոչ նպատակային դրամաշնորհային ծրագրը, կազմելով 500 մլն իւն, Հայաստանում իրականացվել է մեկ անգամ՝ 1997/1998 թթ.: Արդյունքում Հայաստան է ներկրովել նավթամթերք, տպագրական բուլղ, մինչ տպարան, փշալար, մարդատար միկրոավտորուսներ և փոքր տարրողությամբ բեռնատարներ: Ապրանքների վաճառքից գոյացած միջոցները մուտքագրվել են ՀՀ Կենտրոնական բանկում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության անունով բացված հատուկ հաշվին՝ հետագայում համալրելով պետքյուժեն:

ճապոնիայի կառավարությունը պատրաստակամություն էր հայտնել 1999/2000 թթ. համար Հայաստանի Հանրապետությանը հատկացնել ևս 500 մլն իւն նշված ծրագրի շրջանակներում: Նախապատրաստական աշխատանքները կատարվել են ՀՀ արտաքին գործերի և ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունների կողմից, սակայն համաձայն Մոսկվայում ճապոնիայի դեսպանությունից ստացված տեղեկատվության՝ ճապոնիայի կառավարությունը ժամանակավորապես ընդհատել է ծրագրի իրականացումը նրանում ընդգրկված բոլոր երկրների համար:

Մինչև 2001 թ. ճապոնիայի կառավարության քննարկմանը ներկայացվել են 3 նախագծեր մշակույթի բնագավառում: Առաջինը՝ Հայաստանի ֆիլիարմոնիկ նվագախմբին երաժշտական գործիքների տրամադրման ծրագրը, որն իրականացվել է 1999 թվականին: Երկրորդ՝ Մատենադարանի ծեռագրերի վերականգնման և պատճենահանման բաժինների տեխնիկական օգնության ծրագիր, որի իրականացումը պարտվել է 2002 թվականի դեկտեմբերին: Երրորդ մշակութային նախագծի՝ Հայաստանի օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի տեխնիկական սարքավորումների արդիականացման աշխատանքները ավարտվեցին 2003 թ. աշնանը:

ՀՀ արտգործնախարարությունը 2001 թ. դիմել է ՀՀ կառավարությանը մինչ այդ ներկայացված երկու՝ Կ. Ղենիրջյանի անվան Երևանի մարզամշակութային կենտրոնի տեխնիկական սարքավորումների արդիականացման և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի համար երաժշտական սարքավորումների ծեռքբերման մշակութային նախագծերից մեկը ճանաչել որպես առաջնային՝ 2003/2004 ֆինանսական տարում իրականացնելու նպատակով: ՀՀ կառավարությունը որոշել է առաջնայնությունը տալ Կ. Ղենիրջյանի անվան Երևանի մարզա-

շակութային համալիրի տեխնիկական սարքավորումների արդիականացման ծրագրին, որի շրջանակներում 2003 թ. սեպտեմբերին Հայաստան այցելեց ճապոնական կառավարության պատվիրակությունը:

1998 թ. սկսած ճապոնիայի կառավարությունը ՀՀ ոչ կառավարական կազմակերպությունների միջոցով իրականացնում է փոքրածավալ, այսպես կոչված «grass-roots» դրամաշնորհային ծրագրեր: Մինչ այժմ իրականացվել են մի քանի նման ծրագրեր, որոնք վերաբերում են Մարտունի քաղաքի ջրամատակարարման ներքին ցանցի վերականգնմանը (67 հազար ԱՄՆ դոլար), հաշմանդամ երեխաներին պրեզիդարուման օգնությանը (50,5 հազար ԱՄՆ դոլար), մանկական բժշկական սարքավորումների տրամադրմանը (46 հազար ԱՄՆ դոլար), Գեղարքունիքի մարզի դպրոցների կահավորմանը (79 հազար ԱՄՆ դոլար) և այլն: Նման ևս երկու նախագծեր նախատեսվում է իրականացվել 2003 թ.:

ODA-ի դրամաշնորհային ծրագրերի շարքում առանձնահատուկ տեղ են զրադեցնում մեծածավալ ընդհանուր նախագծերը, որոնք իրականացվում են ըստ առաջնայնության սկզբունքի՝ առողջապահության, կրթության, սոցիալական, արտադրական և տարածքային ենթակառույցների բնագավառներում: Ընդ որում մեծածավալ ընդհանուր նախագծերը կազմում են ODA-ի շրջանակներում Հայաստանի համար տարեկան նախատեսված գումարի մոտ 60–65%-ը: Այդ իսկ պատճենով ճապոնիայի կառավարությունը Հայաստանի հանրապետության համար սովորաբար նախատեսում է տարեկան մեկ նման ծրագիր:

Մինչդեռ սկսած 1997 թվականից ճապոնիայի կառավարության քննարկմանն են ուղարկվել արդեն իսկ 13 նախագծեր, որոնցից մի քանից ՀՀ կառավարության կողմից ճանաչվել են որպես առաջնային:

Սակայն մի շարք օբյեկտիվ հանգամանքների պատճառով նախագծերի իրականացման ծրագրավորված ժամանակացույցը զգացվեց: Այսպես՝ 1998/1999 ֆինանսական տարվա համար նախատեսված «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոնի բուժսարքավորումների արդիականացման ծրագիրն (5395000 ԱՄՆ դոլար) ավարտվեց միայն 2001 թ. մարտին հիվանդանոցում համապատասխան սարքավորումների տեղադրմամբ: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության կողմից առաջնային ճանաչված նախագծերը վերաբերում են ենթակառույցների զարգացման բնագավառին և պահանջում առավել քան մեկ տարի ժամանակ, մեծ բյուջեն և նախնական լուրջ ուսումնասիրություններ, մինչդեռ ODA-ի համակարգում առաջնայնությունը հիմնականում տրվում է առողջապահական և կրթական բնագավառներին:

«Երևան քաղաքի ճանապարհների վերականգնման» նախագծի իրականացման շրջանակներում ճապոնացի փորձագետների առաջին պատվիրակությունը Հայաստան է ժամանել 2001 թ. սեպտեմբերին: 2003 թ. աշնանը ավարտվեց «Երևան քաղաքի ճանապարհների վերականգնման» ծրագիրը: Առողջապահության բնագավառում ճապոնիայի կառավարությունը իրականացրել է արդեն Հակատութերկուլյոզային հանրապետական, «Սորք» մանկական ինֆեկցիոն, Երևանի թիվ 3 շտագօգնության մանկական իիվանդանոցների բուժսարքավորումների արդիականացման հերթական ծրագրերը (շուրջ 5 մլն ԱՄՆ դոլար): Իրականացման սկզբնական փուլում է գտնվում երրորդ առողջապահական ծրագիրը՝ ուղղված Հայաստանում ծննդօգնության բարելավմանը, որի ավարտից հետո 2005/2006 ֆինանսական տարվա համար ՀՀ կառավարության կողմից առաջնայնություն է ստացել կրթական՝ ՀՀ հանրակրթական դպրոցների վրարավունագ և անքավարար տեխնիկական վիճակում գտնվող շենքերի առաջնահերթ վերականգնման–ուժեղացման, բարելավման և նոր շինարարության ծրագիրը:

2001 թ. դրությամբ ճապոնական կողմից ըննարկմանն են ներկայացվել 6 այսպես կոչված հետազոտական (Master Plan, Feasible Study, Technical Cooperation և այլն) ծրագրեր, որոնք ըստ էության չեն պահանջում ՀՀ կառավարության համապատասխան որոշումը առաջնայնության վերաբերյալ:

2003 թ. ավարտվեց «Հայաստանի հանքարդյունաբերության զարգացում» նախագիծը:

2002 թ. հոկտեմբերին ճապոնական կողմին է ներկայացվել ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից պատրաստված «Հայաստանի Հանրապետության երկրաշարժավտանգ տարածքում սողանքային աղետների կառավարում» ուսումնասիրության ծրագիրը, որի շրջանակներում 2003 թ. սեպտեմբերին Հայաստանում էր գտնվում առաջին պատվիրակությունը:

ODA ծրագրերի մյուս հատվածը վերաբերում է տեխնիկական օգնությանը, որն իրականացվում է ճապոնիայում՝ JICA-ի շրջանակներում, և ընդգրկում է հայ մասնագետների վերապատրաստումը, ինչպես նաև նույն գործակալության կողմից Հայաստանում ճապոնացի փորձագետների խմբերի հետազոտական գործունեությունը:

1995–2003 թթ. Հայաստանի կառավարական տարրեր գերատեսչություններից հայուրից ավել փորձագետներ մասնագիտական դասընթացների և սեմինարների են մասնակցել ճապոնիայում: JICA-ի շրջանակներում վերապատրաստման մեկ այլ ծրագրի և երիտասարդության համար կազմակերպվող ուսուցողական ծրագրերի արդեն

մասնակցել են 25 մասնագետներ Հայաստանից: Չորրորդ անգամ ծրագիրը կիրականացվի 2004 թ. հունվար–փետրվար ամիսներին, որին կմասնակցի նաև 10 մասնագետ Հայաստանից:

JICA գործակալության փորձագիտական գործունեությունը Հայաստանում ընթանում է ինչպես հետազոտական խմբերի, այնպես էլ առանձին մասնագետների աշխատանքների ձևով: Մինչև այժմ ճապոնական մի շարք հետազոտական խմբեր են աշխատել Հայաստանում, որոնցից մեկը գրաղվել է մասնավոր հատվածի խրախուսման (1998 թ. հունիս), մյուսը՝ ջրամատակարարման (1999 թ. մարտ) ծրագրերով: Մեկ այլ խումբ ներգրավված էր Հայաստանի բնապահպանության ոլորտում:

Հետազոտական առաջին խումբն իր գործունեության ընթացքում այցելել է 28 ձեռնարկություններ Երևանում, Վանաձորում, Ջրազդանում, Չարենցավանում, Արովյանում, որի արդյունքում ՀՀ առևտի և տնտեսական զարգացման նախարարության ու JICA գործակալության միջև ստորագրվել է արձանագրություն Հայաստանում մասնավոր հատվածի զարգացման վերաբերյալ: Այդ ուղղությամբ 1998 թ. դեկտեմբերին կազմվեց Հիմնական նախագիծ, որը հիմք հանդիսացավ ծրագրի հետագա իրականացման համար: Այն ներկայումս ընթացքի մեջ է:

Զրամատակարարման գծով աշխատող փորձագիտական խումբը, համագործակցելով ՀՀ քաղաքաշինության նախարարության հետ, կազմել է բնագավառի զարգացման ծրագիր:

ՆՈՐ ՀԵՇԱՆԿԱՐՆԵՐ. ԱՆՑՈՒՄ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՄԱՀԱՆՈՐԴՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՓՈԽՆԵՐԱՎԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ

Հայ ժողովուրդը խորին երախտագիտությամբ է ընդունում ճապոնիայի կառավարության և ժողովրդի կողմից տրամադրվող օժանդակությունը: Այնուամենայնիվ կարելի է վստահաբար ասել, որ ժամանակն է եկել ճապոնիայի կողմից Հայաստանին մարդասիրական օգնության, դրամաշնորհների և վարկերի տրամադրման քաղաքականությանը գուգահեռ ջանքեր գործադրելու երկու երկրների գործարար շրջանակների միջև ուղղակի փոխշահավետ համագործակցություն հաստատելու ուղղությամբ:

Այդ ուղղությամբ ճապոնական կողմի համար հեռանկարային կարող են հանդիսանալ Հայաստանի հանքարդյունաբերության և քիմիական ոլորտները:

Հայ–ճապոնական տնտեսական հարաբերությունների հետագա զարգացման, գործնական համագործակցության նոր արդյունավետ

ձևերի մշակման ուղղությամբ խթան կարող է հանդիսանալ հայ-ճապոնական և ճապոնա-հայկական տնտեսական կոմիտեների գործունեությունը:

Ներկա փուլում կարևոր և միանգամայն իրական են նկատվում տնտեսական կոնկրետ նախագծերի մշակումն ու իրականացումը, մասնավորապես բարձր տեխնոլոգիաների, եներգետիկայի, գյուղատնտեսության, սննդի վերամշակման, գրուսաշրջիկության և այլ բնագավառներում:

Հաշվի առնելով ՀՀ-ում նտավոր և մասնագիտական համապատասխան ներուժի առկայությունը՝ Հայաստանի համար առաջնային ուղղություն է համարվում տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառը: Դեռ ԽՍՀՄ-ի կազմում Հայաստանը համարվում էր տեխնոլոգիապես ամենազարգացած համապետություններից մեկը, ուր ստեղծվել էր խորհրդային առաջին համակարգիչը: Այդ կապակցությամբ հարկ է ընդգծել նշված բնագավառում համատեղ ծրագրերի իրականացման առկա հնարավորությունները:

Հայաստանը հավակնում է դառնալ տեղեկատվական տեխնոլոգիաների տարածաշրջանային կենտրոն: Այդ ուղղությամբ 2002 թ. գարնանը Եվրամիության կողմից Երևանում կազմակերպվեց համաժողով Տեղեկատվական տեխնոլոգիաների կովկասյան նախաձեռնության ծրագրի շրջանակներում (Caucasus IT Initiative):

Քաջ հայտնի է, որ Հայաստանը նապնիայի նման գտնվում է ակտիվ սեյսմիկ գոտում: Բապոնիայում ստեղծված է պատկառելի գիտական և գործնական բազա այդ բնագավառում: Հայաստանում նույնպես առկա են մեծ թվով բարձրորակ արտակարգ իրավիճակների մասնագետ-փրկարարներ: Համագործակցության հաստատումը այդ բնագավառներում կարող է նույնպես շահեկան լինել երկու երկրների համար:

Պետք է նշել նաև Հայաստանի և նապնիայի միջև արտաքին առևտության ծավալների ցածր լինելու հանգամանքը¹⁷: Այն նույնպես չի համապատասխանում երկու երկրների միջև առևտության գարգացման իրական հնարավորություններին:

Վերջին տարիների ընթացքում ՀՀ տնտեսությունը զարգանում է դիմամիկ կերպով, բարձր են տնտեսական տարեկան աճի տեմպերը (2003 թ. գրանցվել է 12,3% համախառն ներքին արդյունքի աճ): Վերջինս երկ-

¹⁷ Վիճակարական տվյալների համաձայն՝ ներմուծումը 2003 թ. կազմել է շուրջ 3 մլն ԱՄՆ դոլար, իսկ արտահանումը՝ ընդամենը 61,6 հազ. ԱՄՆ դոլար: ՀՀ-ից արտահանվել են իմնականում ոգելից խմիչքներ, մասնավորապես կոնյակ, ինչպես նաև տրիկոտած և հագուստեղեն, իսկ ներմուծվել մեխանիկական մասեր և սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ և մասեր, օպտիկական, լուսանկարչական, բժշկական և այլ սարքեր:

Ռում հաստատված կայուն քաղաքական իրավիճակի հետ միասին բարենպաստ պայմաններ է ապահովում օտարերկրյա, այդ թվում ճապոնական ներդրողների համար:

Հայաստանի և ճապոնիայի միջև առևտրատնտեսական սերտ համագործակցության հաստատումը ոչ միայն հնարավոր է, այլև խոստանում է լինել արդյունավետ ու փոխշահավետ:

Գլուխ չորրորդ

ՀԱՅ-ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՇՓՈՒՄՆԵՐ

ՀԱՅ-ճապոնական ՇՓՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Արծիվ Բախչիմյան
Բանասիրական գիլրուրյունների քեկմածու*

Օ ազող արևի երկրի հետ հայ ժողովրդի ամենավաղ առնչությունները, մեզ հասած տեղեկություններով, սկիզբ են առել հավանաբար XVII դարում: Աշխարհով մեկ առևտրական գործունեություն ծավալած նորջուղայեցի առևտրականները լայնածավալ գործառնություններ են կատարել ասիական շուկաներում՝ հաճախակի լինելով Տիբեթում, Սիհանում, ճավայում, Ֆիլիպիններում, Չինաստանում, ինչպես նաև ճապոնիայում: Քանի որ XVII դարի կեսից մինչև XIX դարի կեսերը ճապոնիան կնքել էր փակ երկրի վիճակ և խիստ կրծատել էր առևտրական կապերը, այդ ժամանակի շփումների մասին տեղեկություններ չունենք:

Դայ տպագիր աղբյուրներում ճապոնիան առաջին անգամ հիշվել է 1805-ից ճեարօն կամ Յարօն ծևով Ստեփանոս Ագոնցի աշխարհագրական աշխատության մեջ, որտեղ մանրամասն ներկայացվել են այդ երկրի բնությունը, պատմությունը, լեզուն և ժողովուրդը (տե՛ս Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի... Աշխատասիրութեամբ S. S. Ստեփանոսի Գիւլե Ագոնց, 1805, Վենետիկ, էջ 289–351):

XIX դարում ճապոնիայում առևտրական ծովագնացության գործունեություն են ծավալել հնդկահայերը: 1870-ին Կալկաթայի հարուստ ֆիրմաներից մեկը՝ «Արգար և ընկերությունը», նավագնացության ծառայություններ է իրականացրել դեպի ճապոնիա: 1880-ականների կեսին այդ ֆիրման ճապոնական Կորե, Յոկոհամա և Նագասակի քաղաք-

ները կապել է Սինգապուրի, Պենանգ կղզու, Հոնկոնգի և Կալկաթայի հետ: Դայ վաճառականները իմբնականում ապրել են Յոկոհամա, Կորե և Օսակա քաղաքներում, վերջինում գործել է «Էդգար եղբայրներ» գրասենյակը: 1890-ական թվականներից Կորեում գործել է «Աղարթն և ընկերություն» առևտրական հաստատությունը, Յոկոհամայում՝ «Արգար և ընկերություն» ֆիրման: Նույն 1890-ականներից Յոկոհամայում է բնակվել առևտրական Փ. Մ. Փափազյանը, որը ճապոնիայում է մնացել մինչև 1917-ը: 1900-ականների սկզբին Կորեում գործել է «Մարթին եղբայրներ» ընկերությունը, որտեղ աշխատել են մի շարք հայեր: Նրա տերերից Փոլ (Պողոս) Մարթինը Արիմա քաղաքում ծեռք է բերել «Քինգ Չորջ» հյուրանոցը: Նա մահացել է Արիմայում 1931 թվականին: 1920-ականներին Կորեում գործել է «Փոլ Արարուն և ընկերություն» ֆիրման: Սինգապուրի «Փոլ Արեֆանս» առևտրի տան մասնաճյուղը:

XIX դարից հայտնի են հայ-ճապոնական այլ հատուկենու աղերսներ ևս, ինչպես, օրինակ՝ պոլսահայ գյուղատնտես Նշան Գալֆայանը (1865-1932) աշխատակցել է ճապոնիայի շերամապահական մամուլին, արարերենի քարգմանիչ, Ֆրանսարբակ ժողեթ Շառլ Վիկտոր Մարդորյուն (Մարտիրոսյան, 1868-1949) որպես նավի բժիշկ ճանապարհորդել է Չինաստանում, Ջնդկաստանում և ճապոնիայում: ճապոնիա է այցելել նաև 1887-1889 թթ. Եվդոկիայի հայոց հոգևոր առաջնորդ Սահակ Վարդապետ Այվատյանը (1853-1924): XX դարի առաջին կեսին ճապոնիայում դիվանագիտական աշխատանքի են նշանակվել հայեր տարբեր երկրներից, ինչպես ականավոր դիվանագետ-քարգմանիչ Հովհաննես Խան-Մասեհյանը (1864-1931), որը 1930-1931 թթ. եղել է Իրանի դեսպանը ճապոնիայում, հետագայում Իվան Թևոսյանը (1902-1958) եղել է ԽՍՀՄ դեսպանը ճապոնիայում (1956-1958):

XX դարի սկզբին ճապոնիայում էր բնակվում հայագիտ անգլիացիր գրող, հրապարակախոս Դայանա Արգարը (1854, Ռանգուն - 1937, Յոկոհամա): Նրա ծննդյան անունն էր Անահիտ, օրիորդական ազգանունը՝ Աղարեկյան: Կալկաթայում անգլիական կրթություն ստացած Անահիտը, Հոնկոնգում անուսնանալով նորջությանցի վաճառական Միքայել Արգար Արգարյանի հետ, ապրել է Չինաստանում, ապա հաստատվել են Կորեում: Այստեղ նրանք գրադպել են ներածման և արտածման գործով: Անուսնու անակնկալ մահից հետո Դայանա Արգարը տեղափոխվեց Յոկոհամա, շարունակեց ընտանեկան գործը և մեծացրեց այնտեղ երեք զավակներին:

Դայանա Արգարը հանդես է եկել հայ ժողովրդի մասին դասախոսություններով, հոդվածներով, աշխատակցել ճապոնիայի «Զափան գագեթ» անգլերեն պարբերականին: Յոկոհամայում հրատարակած

Նրա անգլերեն գրքերից են՝ «Հայկական կոտորածները», «Դավաճանված Հայաստան» (1910), «Իր անունով» (1911), «Խաղաղության հիմնահարցը», «Խաղաղություն և ոչ խաղաղություն» (1912), «Մեծ չարթք» (1914), «Եվրոպայի կայսերապաշտության խաչի վրա խաչված Հայաստանը» (1918): Դրատարակել է նաև «Հազար ու մի պատմությունների գրքից» պատմվածքների ժողովածուն (վերահրատարակվել է 2004-ին), «Մենավոր խաչակիոր» վեպը, «Ինձերի հազմը և օրենքը» աշխատությունը, մի շարք բանաստեղծություններ: 1919–1920 թթ. նշանակվել է Հայաստանի առաջին հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Ծայրագույն Արևելքում: Այսպիսով՝ նա է աշխարհում դիվանագիտական պաշտոն զբաղեցրած առաջին կինը (փաստորեն, խորհրդային դիվանագիտական գործիչ Ալեքսանդրա Կոլոնտայից առաջ): Ժամանակակիցները վկայել են, որ տիկին Արգարը շատ գեղեցիկ կին է եղել, երբ մտել է դահլիճ, բոլոր դեսպանները ոտքի են կանգնել: Հայրենի ժողովրդի հանդեպ ունեցած պարտքի զգացումից ելնելով՝ Դայանա Արգարն ամեն կերպ օգնել է բազմաթիվ հայ գաղթականների, որոնք Սիրիի և ճապոնիայի վրայով տեղափոխվում էին ԱՄՆ: Տեղին է նշել, որ այս ժամանակ ճապոնիայի հայերը ուսական Յեռավոր Արևելքի, Չինաստանի և Ճնդկաստանի հայերի հետ համատեղ 1920 թ. հավաքել են հինգ միլիոն սիրիյյան ռուրի Հայաստանի համար, իսկ Սիրիում 15–20 հազար դոլար դրամագլխով հաստատվել է մի առևտրական ընկերություն՝ Հայաստանի հետ կապի մեջ լինելու, ճապոնիայից Հայաստան էժան ապրանքներ առաքելու համար (տե՛ս Պոլսի «ճակատամարտ» թերթը, 27.08.1920):

Ավելացնենք, որ Դայանա Արգարի սերունդներն ապրում էին ԱՄՆ-ում, իսկ նրա շիրմը գտնվում է Տոկիոյում գործող ճապոնա-հայկական բարեկամության ընկերության հոգածության ներքո:

Գրական առնչություններ

Ճապոնիային վերաբերող առաջին հայերեն հոդվածները և գրքերը սկսել են լույս տեսնել XIX դարի վերջից: Թոփչյան ազգանունով մի հեղինակ Ե. Թ. ծածկանունով հրատարակել է «Ժամանակակից Յապոնիան» հոդվածը Թիֆլիսի «Լույս օրացույց հանդեսում» (1905, էջ 622–632), որտեղ տրված են ամենամնիանուր տեղեկություններ՝ աշխարհագրականից մինչև գրական-երաժշտականը: Այսօր էլ հետաքրքրությամբ է ընթերցվում Յեղինե Մելիք-Հայկազյանի «Մի պտույտ ճապոնում. իմ հուշերից և տպագրություններից» գրքովկը (Թիֆլիս, 1905): Յեղինակը նկարագրում է իր այցելած քաղաքները (Նագասակի,

Կիոտո, Տոկիո, Յոկոհամա), ճապոնացիների կենցաղը, բարքերը, ավանդույթները, կրոնը, պատմությունը, ճապոնութու՝ «արևելյան ֆրանսութու» տեղը հասարակության մեջ, այցելությունը տաճարներ, թեյատուն՝ գեյշաների համերգին, նկարագրել իր տեսած թատերական ներկայացումը: Յեղինակն ուշագրավ ընդհանրացումներ է կատարել. «ճապոնացու տանը՝ թե՛ ներսում, թե՛ բակում, ամեն բանի վրա մի մասնավոր դրոշմ կա գրինակության, չափավորության և գեղարվեստական պարզության», «ճապոնացի ու կոպտություն – իրար չքոնոր բառեր են», «ճապոնացու պարզությունն ու սրտաբացությունը մի մասնավոր հրապույր է տալիս նորան», «Ինչ վերաբերում է կարգապահությամբ ու վայելչությանը, ճապոն ամբոխը իր նամանը չունի աշխարհիս երեսին»: Յիշելով, որ ճապոնիայում հյուրին ճանապարհում են հետո ուտելիք դնելով՝ Մելիք–Շայկազյանը ժպիտով նկատել է. «Ինչպես տեսնում եք, ճապոնում հյուր գնալը բավական ծեռնոտու բան է»: Նա նշել է նաև, որ եվրոպացիների ազդեցությանը ճապոնական բնավորությունը սկսել է փոխվել, դժբախտաբար ոչ դեպի լավը: Յեղինե Մելիք–Շայկազյանը մի զվարճալի դեպք է իիշել, թե ինչպես Տոկիոյի կայարանում մի ճապոնացի ծառա իրեն և իր ընկերներին տարել է իր տիրոջ տուն՝ շփոթելով րոր՝ իրեն ծանոթ եվրոպացի հյուրերի հետ, քանի որ նրա աչքին բոլոր եվրոպացիները մի դեմքի են, այն դեպքում, երբ եվրոպացիների համար էլ բոլոր ճապոնացիներն են մի դեմքի...».

XIX դարի վերջից միջնորդ լեզուներից կատարվել են ճապոնական գրականության առաջին հայերեն թարգմանությունները: Միսաք գրականության առաջին հայերեն թարգմանությունները:

Շայ գրականության դասական Ավետիք Խսահակյանի թարգմանությամբ 1907-ին տպագրվել է XII դարի ճապոնացի բանաստեղծ Ավիհիրո Տոսինարիի «Ճամաշխարհային վիշտը» բանաստեղծությունը.

Գյուղ ու քաղաք լի է դավով,
 Տառապանքով, խորութ ցավով:
 Եվ ես փախա կյանքի վշտից,
 Բայց ա իս, իզուր, իզուր փախա...

– Անդատի մեջ մենակ, լորիմ
 Տեսա լալիս մարափմ...

Հետազայում Խսահակյանի այդ թարգմանության հիման վրա կոմպոզիտոր Հարո Ստեփանյանը գրել է ռոմանս:

1911–ին Թիֆլիսում հայ մեծանուն բանաստեղծ Շովկիաննես Թումանյանի թարգմանությամբ լուս են տեսել «Փօքրիկ ձկնորսը» և «Լեզուն կտրած ծիտիկը» ճապոնական հերիաքների փոխադրությունները:

1913 թ. մայիսին Թիֆլիսիի և Երևանի հայ հանդիսատեսի առաջ ելույթ ունեցան ճապոնացի հանրածանաչ դերասանութիւն և երգչութիւն Հանակո Օտական և Սիրատորի անունով դերասանը: Այդ իրադարձությանը անդրադարձավ հայ մամուլը, հատկապես «Աղբյուր», «Տարագ», «Նոր մամուլ» հանդեսները: Հայերը կազմակերպեցին հանդիպում ճապոնացի դերասանների հետ, որի ժամանակ հայ գրականագետ Շովկաննես Ակունյանը դասախոսություն կարդաց ճապոնական գրականության մասին: Ճապոնացի հյուրերին ողջունեց Թիֆլիսիի հայկական թատրոնի դերասանութիւն Օլգա Մայսուրովան: Երևանում՝ Զանփուլադյան թատրոնի բեմում, ճապոնացի դերասանները կատարեցին դրվագներ «Հարակիրի», «Սպասուի Օտական» և «Թեյյատուն» պիեսներից:

Ավելի ուշ՝ 1930–ականներին, Փարիզի «Յառաջ» օրաթերթում (19.08.1934 և 15.08.1937) լուս են տեսել ֆրանսերենից հայերեն թարգմանված ճապոնական հոկկուներ՝ «Դայքայ» վերնագրով: 1937–ին հայ պոեզիայի խոշորագույն դեմք Եղիշե Չարենցը գրել է «ճապոնական թանկաներ»՝ չորս ստեղծագործություն ընդգրկող շարքը՝ այդպիսով թանկայի ժանրը ներմուծելով հայ գրականություն: Ի դեպ, Չարենցի Երևանյան տուն–թանգարանում ցուցադրվում են ճապոնական փորագրանկարներ, որ բանաստեղծը գնել է 1925–ին Վենետիկում:

ճապոնութիւն գրող Տոչիկո Ակամացուն 1954 թ. այցելել է խորհրդային Հայաստան: Հայաստանին նվիրած իր հոդվածում նա գրել է հետևյալը. «Գեղեցիկ է հայ ժողովուրդը, տղամարդիկ սև հոնքերով են, բրոնզե դիմագծով և մի փոքր կամարած քրով: Կանայք իրենց հերթին ունեն առատ հոնքեր, նուրբ գծերով բրոնզե դիմագիծ և հազիկ նշանագործող աղվամազ վերին շրթունքին: Հայաստանը ոչ միայն արևի, այլև երգու պարի երկիր է: Հայերի ծայնը հիշեցնում է տակետեկոյի»¹⁸:

ճապոնացի գրող Յիրոսի Կիմուրան 1960–ականներին այցելել է մի շարք խորհրդային հանրապետություններ, նաև Հայաստան: 1963–ին նա իրատարակել է իր ուղեգրությունը՝ «Անկեղծ տպագորություններ խորհրդային Միությունից» վերնագրով, որտեղ մի ամբողջ գլուխ նվիրել է Հայաստանին, շարադրանքին կցել մի շարք լուսանկարներ (եզ

18 Բամբուկից պատրաստված խողովակ ջրի համար, որը դատարկվելիս նուրբ ծայն է արձակում:

208–231): Հիրոսի Կիմուրան իր գրքում ջերմությամբ նկարագրել է, որ պատերազմից հետո հայազգի ընկեր է ունեցել, որից առաջին անգամ լսել է Հայաստանի մասին: Հայաստան այցի ժամանակ հյուրընկալվել է հայտնի քանաստեղծ Նաիրի Զարյանի տանը, այցելել մեծն վարպետ ութունամյա Մարտիրոս Սարյանի արվեստանոց, հանդիպել ճապոնական հեղինակի գրքի քարզանիչ, գրող Արամյանի, ուրիշ հետաքրքիր խոսակիցների հետ: Եջմիածին, Զվարթնոց, Էրեբունի այցելելուց հետո նա գրում է հուզված: «Խոհրդային Միության տասնինգ հանրապետություններից Հայաստանը երկի թե ամենահին պատմությունն ունի: Հայտնի փաստ է, որ չնայած գործադրվող ճնշմանը՝ հայերը հիմա էլ, ինչպես նաև հրեաները, լինելով Խոհրդային Միության ամենասակավաթիվ ժողովուրդներից մեկը, աշխատում են ամենաշատ գիտելիքների պահանջող ասպարեզներում: Նշենք, օրինակ, փոխվարչապետ Միկոյանին կամ աշխարհահռչակ կոմպոզիտոր Խաչատրյանին: Խոհրդային Միության գիտությունների ակադեմիայում հայազգի գիտնականների թիվը չափազանց շատ է: Իմ այժմյան ԽՍՀՄ այցի ընթացքում այցելած հանրապետություններից Հայաստան այցը ամենահետաքրքիրն էր: Դրա պատճառներից մեկն էր, ինչպես արդեն ասել էի, ինձ ուղեկցող բանաստեղծ Կարենցի և ուրիշների անկեղծ պատմությունները և այս բարձր սարերում գտնվող աղքատիկ թվացող փոքր երկրի անսպասելի հարուստ մշակույթը»:

1970–ականների սկզբին Երևանում հյուրընկալվել է Սահցու Օրինատան, որը բանասերներ Քենրիկ և Յեղինե Բախչինյանների հարկի ներքո, ներշնչված Հայաստանով, գրել է հետևյալ բանաստեղծությունը.

*Ծաղկում է ժամանակուշը
Ծաղկում է ժամանակուշը
Նա միակ ծաղիկն է
Անապարում ծաղկող
Նրա բույրն ինձ հիշեցնում է
Իմ պարանության հուշերը:
(Թարգմ. Ակիլո Հիկիի)*

Որքանով մեզ հաջողվեց պարզել, Հայաստանի մասին լույս տեսած ճապոններն առաջին գիրքը Ֆրիտյոֆ Նանսենի «Կովկասի միջով»—ն է, որ հրատարակվել է Տոկիոյում 1942–ին: Ինչ վերաբերում է հայ գեղարվեստական գրականությանը, ապա այն ճապոններն քարզմանվել է հիմնականում ռուսներնից: Առաջին հայ հեղինակը Նաիրի Զարյանն է, որը Յոկայոյ կղզու Սապպորո քաղաքի «Յոկայոյ սիմբուն» թերթի ա-

ռաջարկով գրել է «Ժպտում է ծյունն սպիտակ Սապարոյի լեռներում» վերնագրով բանաստեղծությունը, որի ճապոներեն թարգմանությունը լույս է տեսել նույն պարբերականում: Մեկ աղբյուրի վկայությամբ՝ ճապոներեն թարգմանվել է նաև Հովհաննես Թումանյանի «Մի կարիլ մեղրը», որի հիման վրա նկարահանվել է ճապոնական մուլտֆիլմ (տե՛ս «Քուլիս» ամսագիր, Ստամբուլ, թ. 828, 15.05.1981, էջ 23): Վերոհիշյալ Հյորոշի Կիմուրան ճապոներեն է թարգմանել Հովհաննես Թումանյանի «Ախրամար» լեգենդը, իսկ Մագամի Իրոստարոն ռուսերենից ճապոներեն է թարգմանել Վախրանգ Անանյանի «Լեռնային կածաններով» պատմվածքների ժողովածուն (1957, Տոկիո): 1984-ին Մոսկվայում «Ռադուգա» հրատարակչությունը լույս է ընծայել «Խորհրդային գրողների պատմվածքներ» ճապոներեն ժողովածուն՝ Վաղիմ Պանինի կազմած, որտեղ ընդգրկվել է նաև Երևանցի գրող Էլդա Գրինի (Արքահամբան) «Ի՞ն այգին» պատմվածքը՝ դարձյալ թարգմանված ռուսերենից:

Պատկերը նույնն է նաև հակառակ պարագայում. ճապոնական գրականությունը հայերեն թարգմանվել է ռուսերենից: Ժամանակագրական առումով հայերենով լույս տեսած առաջին ճապոնական գրականության նմուշներն են Կիյոսուկե Ֆուկունագայի «Դիտողություններ ճապոնա-ամերիկյան պապա պատերազմի մասին» (Երևան-Մոսկվա, 1934) և Սունա Տոկունագայի «Անարև թաղամասը» (1937): Հետագա հրատարակությունները եղել են ճապոնական հեքիաթներ: 1938-ին առանձին գրքույկներով վերահրատարակվել են Հովհաննես Թումանյանի՝ վերոհիշյալ երկու ճապոնական հեքիաթների թարգմանությունները, ինչպես նաև «ճապոնական երկու հեքիաթը» Սիր. Զորյանի թարգմանությամբ: 1959-ին Սերգեյ Ումառյանի թարգմանությամբ լույս է տեսել «ճապոնական հեքիաթներ» ժողովածուն: 1960-ականներին լույս են տեսել հետևյալ գրքերը՝ Տերու Տակակուրայի «Խակոնեի ջուրը» պատմավեպը (թարգմանիչ՝ Յ. Թուրշյան, 1960), Ֆումիկո Խայասիի «Վեց պատմվածք» (թարգմանիչ՝ Ռաֆայել Արամյան, 1963), Ռյունուկե Ակուտագավայի «Թավուտում» պատմվածքների ժողովածուն (թարգմանիչ՝ Նորայր Աղայան, 1964), Սյուսակու Էնդոյի «Ծով և թույն» (թարգմանիչ՝ Վ. Ղանիելյան, 1967), Սեհիտյո Մացումոտոյի «Ստորջրյա հոսանք» (թարգմանիչ՝ Շողիկ Սաֆյան, 1968) և Կորո Աբեի «Չորրորդ սաղադաշտային ժամանակաշրջանը» վիպակները (թարգմանիչ՝ Մ. Մարգարյան, 1969):

Հետագա տասնամյակներին հայերեն թարգմանությամբ լույս են տեսել ճապոնացի գրողներ Սյուսակու Էնդոյի «Ամուսնական կյանք» (թարգմանիչ՝ Ելենա Դավթյան, 1972, վերահրատարակվել է 1997-ին), Սեհիծյո Մացումոտոյի «Կետեր և գծեր» (1973), Եյսուկե Նակոծոնոյի «Արծիճը բոցերի մեջ» (վերջին երկուսի թարգմանիչ՝ Մ. Սաֆարյան, 1976)

վիպակները, Յասունարի Կավաբատայի «Դազարաթև կռունկը: Ջունոտ երկիրը» (թարգմանիչ՝ Ս. Զարեյան, 1978) և «Լեռան հառաջանքը» (1981), Կորո Արեի «Ամրոցը» պիեսը («XX դարի արտասահմանյան դրամատուրգիա», հատոր 1, 1983) և երեք վեպ («Ավազուտների կինը», «Ուրիշի դենքը», «Այրված քարտեզ», 1985), «Տենգուի հովհարը» (ճապոնական ժողովրդական հեքիարներ, 1990), «ճապոնական պոեզիա (հովհարներ, թանկաներ)» (Այդին Մորիկյանի թարգմանությամբ, 1993): 1982-ին «Ուսանողի գրադարան» մատենաշարով լույս տեսած «Դին Արևելի պոեզիա» գրքում ընդգրկվել են նաև VII-XII դարերի 25 ճապոնացի բանաստեղծների ստեղծագործություններ՝ Դենրիկ Էդոյանի թարգմանությամբ, իսկ 2003-ին «Նոր դար» ամսագրում (թ. 2-3) լույս են տեսել «Արդի ճապոնական թանկաներ»՝ Տիգրան Խրայեսյանի թարգմանությամբ: Այստեղ նշենք նաև, որ Կորո Արեի «Ավազուտների կինը» նշանավոր վեպի ներշնչանքով նկարաշար է ստեղծել ԱՍՍ-ում բնակվող հայ նկարիչ Մարտիրոս Ադամյանը: 1989-ին Երևանում հայերն օրինական թարգմանությամբ լույս է տեսել ոռւս հեղինակներ Վ. Պրոնինիկովի և Ի. Լադանովի «ճապոնացիները (ազգահոգերանական ակնարկներ)» ճանաչողական բնույթի գիրքը:

Դայ-ճապոնական գրական առնչությունների մեջ զգալի է Նահրի Զարյանի (1900-1969) ավանդը, որը 1961-ին ճանապարհորդել է ճապոնիայում, գրել է «Այնտեղ ծաղկում էր բալենին. ճապոնական տպագրություններ» ընդարձակ ուղեգրությունը, որտեղ բազմաթիվ հետաքրքիր մանրամասներ կան ճապոնական իրականության ամենատաքրեր կողմերի (պատմություն, գրականություն, նշակույթ) վերաբերյալ¹⁹: Նահրի Զարյանը ռուսերենից թարգմանել և հրատարակել է «Դոկումենտ և թանկաներ. ճապոնական կլասիկ պոեզիա» (1965) և «Ճոկուներ և թանկաներ. ճապոնական կլասիկ պոեզիա» (1966) բանաստեղծական ժողովածուները՝ առաջին անգամ հայ ընթերցողին լայն պատկերացում տալով ճապոնական դասական քերթության վերաբերյալ: Այս թարգմանություններով ներշնչված՝ մի շարք հայ բանաստեղծներ ստեղծագործություններ են գրել ճապոնական դասական պոեզիայի նմուշների՝ հովհարների և թանկաների ծևապատկերային օրինակով:

Երվանդ Պարսումյանի «Արևորդիները (վերադարձ արմատներուն)» վեպը (Բեյրութ, 1994) հայ-ճապոնական առնչությունների մի հետաքրքիր դրվագ է: Վեպի հերոսը հայ հոր և այնու մոր զավակ ճապոնացի Նինիկի Թորոն է (Թորոյան), որը դիպվածով դառնում է մի հայ

¹⁹ Նահրի Զարյան, Երկերի ժողովածու վեց հատորով, հատոր 6, Երևան, 1964, էջ 381-614:

բժշկի խնամյալը, որի հետ գրուցներից նրա և իր որդու՝ Սուրենի մեջ արթնանում է հայկական արյունը: Հատկանշական է, որ գրքում հիշված բոլոր դեպքերը տեղի են ունեցել իրականում:

Հայաստանում առաջինը ճապոներենից գեղարվեստական թարգմանություններ կատարել է Յեղինե Հայրապետյանը²⁰:

ճապոնուիի Ակիկո Յիկին 1998–2002 թթ. ուսանել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում: Դիպլոմային աշխատանքը է պաշտպանել «Պատմականությունը Կոստան Զարյանի «Նավը լեռան վրա» վեպում» թեմայով²¹: Ակիկո Յիկին որոշ թարգմանություններ է կատարել ճապոներենից հայերեն և հակառակը: Մասնավորապես նա հայ ընթերցողին է ներկայացրել Սահսեի Մուրոյի, Կոտարտ Տակամուրայի, Սյունտարտ Տամիկավայի, Ակիկո Յոսանոյի և Մաժի Տավարայի բանաստեղծությունները (տե՛ս «Գարուն», 2003, թ. 6): Ակիկո Յիկին 2001–ին հայերեն գեկուցմաբ հանդես է եկել Երևանում կայացած «Թարգմանությունները որպես մշակույթների երկխոսության բանալի» միջազգային գիտաժողովում և արժանացել Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700–ամյակի միջոցառումների հանձնախնդիր պարզեցին:

2000 թ. Երևանի հումանիտար ինստիտուտում 1996–1999 թթ. դասավանդած ճապոնուիի դասախոս Ֆուօդիտա Մասակոն Տոկիոյում հրատարակել է հայ բանաստեղծների երկերն ընդգրկող 15–էջանոց մի գրքով՝ ճապոներենով: Այնտեղ ընդգրկված են Նահապետ Քուչակի, Ավետիք Իսահակյանի, Վահան Տերյանի, Եղիշե Չարենցի, Յովհաննես Շիոազի, Պարույր Սևակի և Համո Սահյանի բանաստեղծությունները (ընդհանուր թվով՝ 15 ստեղծագործություն): Թարգմանությունները կատարել են Ակիկո Յիկին և Ֆուօդիտա Մասակոյի ուսանողները (Լիգիա Հակոբյան, Կարինե Հարությունյան, Արմինե Պետրոսյան, Իրինա Մինասյան, Նարինե Ղազարյան, Նաիրա Գրիգորյան, Ելինա Մկրտչյան, Քրիստինա Մինասյան, Գայանե Սարգսյան և Վարդիթեր Հարությունյան): Վերջին տարիներին մի շաբթ ճապոնագետ հայերի և հայագետ ճապոնացիների ի հայտ գալը հույս է ներշնչում, որ մոտ ապագայում հայ գրականությունն ըստ արժանվույն կարող է ներկայանալ ճապոնացի գրասեր հասարակությանը: Առաջին քայլերն արդեն անում են երիտասարդները: Այդպես, 2001 թ. Մոսկվայում կայացած Երեխաների ճապոներենի մր-

20 ճապոնական հեթաքրներ և մանրապատումներ, «Աստղիկ» թարգմանական հանդես, 1991, թ. 4, էջ 176–180:

21 Տե՛ս նրա «Պատմական դմբերը Կոստան Զարեանի Նաւը Լեռան Վրայ վեպում» հոդվածը, «Հայկագեան հայագիտական հանդես», ԽՄ. ԻԲ, Պեյրութ, էջ 233–246:

ցույքի հաղթող Լևոն Մալխասյանը պարզեատրվել էր 2 շաբաթվա ճապոնիա ճանապարհորդությամբ և վերադառնալուն պես թարգմանել էր նվեր ատացած Կանեկո Միսուձուի բանաստեղծությունների շարք, որը տպագրվել էր «Գրական թերթում» (14.02.2003): Բացի դրանից հումանիտար ինստիտուտի ուսանողները ճապոններից թարգմանել և հրատարակման են պատրաստել 20 ճապոնական հեքիաթ:

Գիտական-մշակութային առնչություններ: **ճապոնացի հայագետներ**

Ժամանակի ընթացքում երկու ժողովուրդների մեջ եղած սահմանափակ գործարար կապերը լրացվել են նաև հոգևոր առնչություններով, որոնք մեծ նշանակություն են ունեցել ստեղծագործական շփումների համար և արիթ են տվել երկու ժողովուրդների կյանքի և գործունեության ուսումնասիրության. հնարավորություն է ստեղծվել գեղարվեստական գործերի, թարգմանությունների և ուսումնասիրությունների ստեղծման, մշակույթների փոխադարձ հարստացման համար:

Դեռևս 1902 թ. սեպտեմբերին Էջմիածնի Մայր Աթոռ է ժամանել և մի քանի օր հյուր է մնացել ճապոնացի երիտասարդ պարոն Ինույեն, որ հետաքրքրվել է հայ եկեղեցու պատմությամբ («Արարատ», Էջմիածնի, 1902, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 861): ճապոնացի խոշոր գիտնական (բնագետ, միկրոկենսաբան, անտրոպոլոգ) և լեզվաբան Կումագուտու Մինակատան (1867–1941) ուր տարի բնակվել է Լոնդոնում և առաջին ճապոնացին է, որ տիրապետել է հայոց լեզվին: Սեր օրերում բանասեր Սերիչ Կիտագավան անդրադարձել է Կիրակոս Գանձակեցու և Վարդան Վարդապետի պատմագրություններում բուդդայականության վերաբերյալ հիշատակություններին²²: Յամանասի Գակուին համալսարանի դասախոս, սանսկրիտի և հնդեվրոպական լեզուների մասնագետ ուսուցչապետ Նորու Սատոն հիմնել է հայագիտական կենտրոն, Տոկիոյում իրատարակել «Հայոց լեզվի քերականություն» (1986), «Հայաստան. Երկիր մարդկային ծնունդների ու աղետների» (1989), «Լեռնային Ղարաբաղ» (1989), «Գրաբար» (1995) գրքերը և թարգմանել է «ՀՀ Սահմանադրությունը» (1999):

Տոկիոյում գործող ճապոնա-հայկական բարեկամության ընկերության (JAFA) հիմնադիր տնօրին Հիդեհարու Նակածիման 1980–ից պարբերաբար այցելում է Հայաստան և հայ ժողովրդի մասին հրապա-

22 Տե՛ս Սերիչ Կիտագավա, Հայ միջնադարյան գրականությունը բուդդայականության մասին, «Հայ միջնադարյան գրականության միջազգային գիտաժողով», Երևան, 15–19 սեպտեմբերի, 1986, գեկուցումների դրույթներ, Երևան, 1986, էջ 92:

րակումների և գրքերի հեղինակ է: Նրա «Հայաստան. հուսո կայծեր պատմության մեջ» (1999) գիրքն ընդգրկում է հայոց համառոտ պատմությունը՝ սկզբից մինչև Մեծ Եղեռն: Պարոն Նակածիման 1990 թվականից հրատարակում է «Արարատ բանքեր» (ընդամենը մինչև 2004 թ. վերջը դուրս է եկել 37 համար), 1991 թվականից՝ «Արաք» (ընդամենը 47 համար) պարբերականները, կազմակերպել և անցկացրել է 31 դասախոսություն Հայաստանի մասին: 1997 թ. հրատարակել է «Հայաստան» գիտական հանդեսը և հայասեր այլ գործունեություն ծավալել: 1993 թ. միության համաժողովին մեծ շուրջով կայացել է միության անդամ Յուկի Ֆուկուտայի կողմից գերմաներենից թարգմանված ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի շնորհանդեսը:

1991-ին լույս է տեսել Յուկի Ֆուձինոյի «Ողբերգական Հայաստան» գիրքը, որտեղ տրված է հայոց պատմության ընդհանուր ակնարկ, իսկ վերջին մասում՝ «Հայերի ինքնությունը», տրված են գրողներ Կոստան Չարյանի, Վիլյամ Սարոյանի և Մայք Առլենի կենսագրությունները:

1998 թ. սեպտեմբերին Հայաստան են այցելել մի խումբ ճապոնացի հետազոտողներ (պատմաբաններ, ճարտարապետներ, ֆիզիկոսներ, սեյսմոլոգներ)` Տոկիոյի տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսոր Սիրո Սասանոյի գլխավորությամբ: Հատուկ հաշվետվություններից բացի պրոֆեսոր Սասանոն իր ուսումնասիրության արդյունքներն են երկայացրել Հայ-ճապոնական միության ժողովում, ինչպես նաև հանդես եկել հոդվածով «Ասահի գրաֆ» ամսագրում: Այդ թվականից պրոֆեսոր Սասանոն գրեթե ամեն տարի այցելում է Հայաստան: Նա մասնավորապես հետաքրքրված է հայ ճարտարապետությամբ և իին հուշարձանների սեյսմակայունությամբ:

ճապոնացի պատմաբան Տակայուկի Յոշիմուրան մի քանի տարի ուսանել է Երևանում, տիրապետում է հայոց լեզվին և ուսումնասիրության առարկա է դարձել Խորհրդային Հայաստանի պատմության վաղ շրջանը: 2003-ի սեպտեմբերին Երևանում կայացած «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները» համաժողովում ներկայացրել է «Հայ հեղափոխական դաշնակցությունը Խորհրդային Հայաստանում 1920–1923 թթ.» գեկուցումը: 2003-ին լույս է տեսել Կացումորի Իծիկավայի «Գնչուների եկած ճանապարհը» աշխատությունը, որը բաղկացած է Երկու մասից՝ «Այցելություն Հայաստանի գնչուներին» և «Հնդկաստան. գնչուների հայրենիքը»: Առաջին գլխում ճապոնացի հեղինակը մանրամասն տեղեկություններ է տալիս հայ բոշաների ազգագրական խմբի մասին:

2004-ին է լույս տեսել նաև Աիծի Սանգյո համալսարանի իրավունքի պրոֆեսոր Յիրոյոյի Սեգավայի «Հայերի մոռացված ցեղասպանությունը»

գիրքը, որի համար հեղինակն ընտրվել է Յումանիտար գիտությունների միջազգային ակադեմիայի հայկական մասնաճյուղի իսկական անդամ:

Միևնույն ժամանակ ճապոնիան դարձել է որոշ հայագի գիտնականների հետազոտությունների թեման: Որպես օրինակ կարելի է նշել Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, պատմության, ազգագրության, աշխարհի ժողովուրդների հնագիտության մասնագետ, խոշոր գիտնական Սերգեյ Ալեքսանդրի Չարությունովին (1932), որը՝ որպես ճապոնիայի վերաբերյալ բազմազան հետազոտությունների հեղինակ, ծանաչված է ինչպես Ռուսաստանում, այնպես էլ ճապոնիայում: Չարությունովը ծնվել է Թրիլիսիում, աշխատում է Մոսկվայում, բայց չնոռանալով Հայաստան իր հայրենիքը՝ հաճախ գալիս է Երևան և պետհամալսարանի պատմության ամբիոնում դասախոսություններ է կարողում, ղեկավարում գիտական աշխատանքները, համագործակցում գիտնականների հետ:

Մոսկվայի ճարտարապետական համալսարանում դասավանդում է դոցենտ, նկարիչ Ռոզա Անխոսյանը, որը մասնագիտացել է ճապոնական արվեստի, մասնավորապես իկեբանայի և այգիների ճարտարապետության գծով: Նա, հայրենի Երևանի քաղաքացիներին 1991 թ. հունվարին ճապոնական արվեստը ներկայացնելով, կարդացել է «ճապոնական այգիներ» և «Ներքին այգիներ» թեմաներով դասախոսություններ, ներկայացրել է իկեբանայի իր ցուցահանդեսը:

Բացի դրանից, Երևանի թատրոնի և կինոյի ինստիտուտի «Հանդեսում» (2004, թ. 3) լույս է տեսել նույն ինստիտուտի դոցենտ Ալլա Դանիլովայի «ճապոնական քնարական դրամայի կոնցեպտուալ շեշտադրումները» ուսումնասիրությունը:

Ավելացնենք նաև, որ Երևանի Մատենադարանի ցուցարանում այլակցու ձեռագրերի մեջ ցուցադրվում է նաև մի ճապոններեն ձեռագիր գիրք (Յոկուսայ, «Մանգա», գրված 1812 թ.):

Կան նաև փաստեր հայ-ճապոնական տարաբնույթ շփումների վերաբերյալ:

Ճապոնական կանացի օպերային երգի հիմնադիրներից է նախկին ռուսաստանցի երգչուիի Օլգա Կարասուլյան (Կարասուլյան, 1886–1977 թթ.), որին աշակերտել են մի շարք ճապոնացի օպերային երգչուիներ, և որը նպաստել է ռուս-ճապոնական մշակութային կապերի հաստատմանը²³:

1933 թ. տվյալներով ճապոնիայի Տոկիո, Կորե և Յոկոհամա քաղաքներում ապրել է 35 հայ (տե՛ս Հայաստանի Հանրապետության Ազ-

գային արխիվ, ֆոնդ 409, ցուցակ 1, գործ 4732, էջ 4): 1951 թ. տվյալներով ճապոնիայում ապրել է 5–6 հայ ընտանիք, 1962 թ. տվյալներով՝ 10 հայ ընտանիք, իմնականում՝ առևտրականներ:

Այսօր էլ փոքրաթիվ հայ համայնք գոյություն ունի ճապոնիայում, 50–60 հոգուց բաղկացած, որի մեջ մասը բնակվում է Տոկիոյում: Նրանց մեջ կան նաև Հայաստանից արտագաղթածներ: Երևանցի Արամ, Արմեն և Լևոն Սարգսյան եղբայրները 10 տարեկանից ինքնուրույն սովորել են ճապոներեն և չինարեն, 1988-ի երկրաշարժից հետո որպես թարգմանչ աշխատել Հայաստան օգնության եկած ճապոնացիների և չինացիների հետ, կատարել թարգմանություններ և կազմել հայերեն–ճապոներեն ու ճապոներեն–հայերեն փոքրիկ բառարան: Սարգսյան եղբայրներն այժմ բնակվում են ճապոնիայում և Չինաստանում: 1995 թ. գեղասահիք միջազգային մրցումներում Հայաստանը ներկայացնում էր Կահո Կուինումա–Տիգրան Առաքելյան գույքը. Երևանցի այս գեղասահորդն այժմ ապրում է իր ճապոնուիկի կող հայենիքում:

Ճապոնա–հայկական բարեկամության ընկերության նախագահ Յիդեհարու Նակաձիմայի կինը՝ ծնունդով երևանցի Մելանյա Բաղդասարյան–Նակաձիման, Երևանի պետհամալսարանի շրջանավարտ է, դասեր է տալիս հայերեն սովորել ցանկացող ճապոնացիներին...

Այումի Տակահաչին, որ մի քանի անգամ այցելել է Հայաստան և ամուսնացած է Երևանցու հետ, ստեղծել է «Հետաքրքիր երկիր Հայաստան» ճապոներեն համացանցային էջը:

Ճապոնահայերի մասին խոսելիս հարկ է հիշատակել նաև ամերիկահայ մի մարգիկի: Ամերիկյան իրականության մեջ արևելյան ճարտարվեստի հիմնավորումը ու նաև այդ թեմայով առաջին վավերագրական ֆիլմերի նկարահանումը կապված է նրա՝ Ենթընի Միրաքյանի անվան հետ: Նա, զորակոչվելով ամերիկյան բանակ, հայտնվել է ճապոնիայում: Երբ ԱՄՆ-ի ռազմաօդային ուժերը տեղակայվել են ճապոնական Օկինավա կղզում, զինվորական ծառայության մեջ գտնվող Միրաքյանը աշակերտել է գոյցու–րյու կարատեի հայտնի վարպետ Մեյտոկու Յագիին, դարձել Արևմուտքում Մեյտոկու Յագիի մոտ սովորած առաջին ուսանողը և առաջին սկ գոտին ստացողը: Նրա ուսուցիչ Մեյտոկու Յագին Միրաքյանին նշանակել է Մեյրական ֆեղերացիայի դեկավար՝ ճապոնիայից դուրս: Ֆեղայի հոր զավակին, այսպիսով, վիճակվել էր դառնալ կարատե–րյոյի ռահվիրան ամերիկյան իրականության մեջ...

Ճապոնացիների հետաքրքրությանն է արժանացել ոչ միայն իին, այլև ժամանակակից հայ նշակույթը՝ գրականությունը, երաժշտությունը, կինոարվեստը: Այսպես՝ 1996 թ. Տոկիոյում մեծ հաջողություն ունեցավ աշխարհահռչակ կինոռեժիսոր Փարաջանովի նկարների և կոլաժ-

Ների ցուցահանդեսը: 1995-ին Յամագատա քաղաքում կայացած փաստագրական կինոյի փառատոնին մասնակցել է հայ կինոյի նշանավոր ռեժիսոր Արտավազդ Փելեջյանը, որի ստեղծագործությունները բարձր գնահատական ստացան, ինչի մասին վկայում են «Կինեմա ջումպու», «Յուրիինա» ճապոնական ամսագրերում տպագրված ծավալուն հոդվածները:

ԱՄՓՈՆԵՐԵՆԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Միքայել Ամիրխանյան
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Յայաստանում օտար լեզուների հանդեպ հետաքրքրությունը գալիս է դարերի խորքից: Դեռևս V դարում, երբ ստեղծվեց հայկական այրութենք, Յայաստանում սկսեցին ուսումնասիրել և օտար լեզուներից հայերեն թարգմանել հնագույն նտածողների ստեղծագործությունները: Այդ մասին են վկայում հնագույն ծեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում՝ Մատենադարանում պահպանվող թարգմանված ստեղծագործությունները, որոնց մի մասի բնագործը չեն պահպանվել: Այդ ժամանակից էլ սկսեցին անցկացվել «Թարգմանչաց տոներ», որոնք կազմակերպվում են նաև մեր օրերում: Իմիջիայլոց պետք է ասել, որ Յայաստանում այլ ժողովուրդների լեզուների ուսումնասիրնան կուլտուրան միշտ էլ եղել է ակտուալ: Դա ամենից առաջ բացարձում է հայ ժողովրդի՝ ուրիշ ժողովուրդների մշակույթի և գիտության հանդեպ հետաքրքրությամբ, ինչպես նաև հայոց լեզվի հնչյունարանական հարուստ համակարգով, որը հնարավորություն է ընծեռում համեմատաբար հեշտ յուրացնել օտար լեզուներ: Ելնելով Յայաստանի աշխարհագրական դիրքից՝ բնականաբար, առաջին հերթին ուսումնասիրնան առարկա էին դառնում հարևան ժողովուրդների լեզուները: Այդ էին պահանջում մի կողմից ազգամիջյան առնչությունները և մյուս կողմից հունական, ասորական, արաբական և ուրիշ ժողովուրդների մտածողների աշխատությունների հայերեն թարգմանության, ազգային հոգևոր գիտելիքների հարստացման անհրաժեշտությունը:

Այն հեռավոր անցյալում ճապոններնի հետ ծանոթությունը, բնականաբար, հնարավոր չէր՝ առաջին հերթին հեռավոր տարածության և շփումների բացակայության պատճառով: Պահպանվել են տեղեկություններ այն մասին, որ միայն XX դարի սկզբին՝ ուսւ-ճապոնական պատերազմից հետո (1904–1905 թթ.), երբ պատերազմից վերադար-

նում էին հայ զինվորները, որոնք կռվել էին ռուսական բանակի կազմում, իրենց հետ բերում էին ճապոնացիների կենցաղի, մշակույթի մասին հետաքրքիր բանավոր պատճություններ, տարբեր հուշանվերներ, նույնիսկ առանձին արտահայտություններ:

Խորհրդային իշխանության տարիներին ինչպես լեզուների, այնպես էլ այլ գիտությունների ուսումնասիրումը ծրագրավորվում էր Կենտրոնից: Դա Հայաստանին հնարավորություն չէր տալիս նման ծրագրերի պայմաններում ինչ—որ հարց լուծել, չնայած Հայաստանի բուհերը ԽՄՀՄ—ում եղել են առաջատարներից և մասնագիտությունների քանակով, և ուսման որակով: Եվ միայն ԽՄՀՄ—ի փլուզումից հետո, երբ Հայաստանը ծեռք բերեց անկախություն, սկսեցին ստեղծվել տարբեր պրոֆիլի ոչ պետական բուհեր:

Այդպես՝ 1991 թ. ստեղծվեց Երևանի հումանիտար ինստիտուտը, որտեղ Հայաստանում առաջինը սկսվեց ոչ ավանդական օտար լեզուների՝ իտալերենի, իսպաներենի, հունարենի, 1992 թվականից ճապոներենի, իսկ վերջերս նաև չինարենի և հնդկերենի ուսումնասիրությունը: Սակայն չպետք է մոռանալ, որ 1990 թ. Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերությունում կազմակերպվել էր կիրակնօրյա էլիտար դպրոց, որտեղ բացվեցին նաև ճապոներենի երկու դասարաններ 8–10 և 12–14 տարեկան երեխաների համար: Այդ դասարաններում սովորում էր մոտ 30 երեխա, պարապմունքները անցնում էին հետաքրքիր: Չնայած փորձի բացակայությանը, ծրագրերի, դասագրքերի, պայմանների պակաս լինելու և Հայաստանում տնտեսական ու քաղաքական անկայուն վիճակին, որը հնարավորություն չէր տալիս արդյունավետ աշխատելուն՝ դպրոցը ֆորմալ գոյատևեց մոտ երեք տարի: Իսկ երբ հումանիտար ինստիտուտում սկսվեց ճապոներենի ուսուցումը, ինստիտուտն արդեն ուներ որոշ չափով ծրագրեր, դասագրքեր, բառարաններ և ճապոներենի դասավանդման մի փոքր փորձ: Օգտագործվում էին Մոսկվայի բուհերում հրատարակված դասագրքեր, բառարաններ և ձեռնարկներ:

Ճապոներենի ուսումնասիրումը կազմակերպելու գլխավոր պատճառներից էին Հայաստանում ճապոնացի ժողովրդի հնագույն և ժամանակակից ինքնատիպ, հարուստ հոգեր մշակույթի մասին տեղեկությունների սահմանափակ լինելը, ոչ բավարար տեղեկություններ ճապոնիայի առանձնահատուկ տեխնիկական առաջընթացի մասին, ինչպես նաև ճապոնացիների դեպի ուրիշ ժողովրդները դժբախտության պահին ունեցած մարդասիրական վերաբերմունքը, որը բացահայտ դրսևորվեց Հայաստանում 1988 թ. Սպիտակի երկրաշարժի ժամանակ: Ինստիտուտը նպատակադրվեց բարգմանիչներ պատրաստել, որպես-

զի մինչև այժմ ճապոնական ինչպես գեղարվեստական, այնպես էլ գիտատեխնիկական գործառնությունը միջնորդ լեզուներից (ռուսերենից, անգլերենից) հայերեն թարգմանելու փոխարեն դրանք կատարվեն ճապոներեն բնագրից:

Անցած տարիների ընթացքում հումանիտար ինստիտուտի ճապոներենի բաժինը ավարտել է շուրջ 40 հոգի: Նրանցից շատերը աշխատել և աշխատում են ճապոնացիների հետ, որոնք կատարել և կատարում են Հայաստանում ճապոնիայի կառավարության զանազան ծրագրերը (Մատենադարանում իին ծեռագրերի վերականգնման և պահպանման սարքավորումների մոնտաժում, Երևանի ասֆալտի գործարանի մեխանիզմների մոնտաժում, սողոքերի ուսումնասիրում Հայաստանում, Հայաստանում լեռնային արդյունաբերության գլխավոր ծրագրերի նախապատրաստման ուսումնասիրություն, առողջարանային հիմնարկների սարքավորումներով օգնություն, Երևանի ՁԵԿ-ի սարքավորումների նորոգում, ալմաստի մշակում): Աշխատում են նաև մասնավոր բիզնեսում, տուրիստական ֆիրմաներում, դասավանդում ճապոներեն՝ անհատական և տարբեր դասընթացներում:

Մինչև Վերջին ժամանակները ճապոնական կողմը Հայաստանում տարբեր ծրագրեր իրագործելիս թարգմանիչներ էր հրավիրում Մոսկվայից, ինչը կապված էր լրացուցիչ դժվարությունների հետ, ի թիվս նաև ֆինանսական ծախսերի: Մեր օրերում Մոսկվայից թարգմանիչներ հրավելու անհրաժեշտությունը վերացել է:

Ներկայումս ինստիտուտի ճապոներենի բաժնում սովորում է 26 ուսանող: Սկսած 1994 թ.՝ հումանիտար ինստիտուտի ուսանողները մասնակցում են ԱՊՀ երկրներում ճապոներենի ուսանողների մրցույթներին, որոնք ամեն տարի անց են կացվում Մոսկվայում ճապոնական հիմնադրամի հովանավորությամբ:

Դումանիտար ինստիտուտը Հայաստանում միակ բուհն է, որտեղ ուսումնասիրվում է ճապոներենը: ճապոնական «Ակահատա» թերթի համար կապված գոտիները ճապոներենի դասին: 1997 թ. թղթակից Շորիե Նորիհոն ներկա գտնվեց ճապոներենի դասին: ճապոնիա վերադառնալիս «Հայ ուսանողները սովորում են ճապոներեն» հոդվածում նա մայիսի 8-ին գրել է. «Հայաստանի մասին նյութեր հավաքելիս ես հանդիպեցի մի աղջկա, որն ազատ խոսում էր ճապոներեն, և զարմացած էի: Դա Զարուհի Բաբայանն էր: Անցած տարի նա ավարտել էր Երևանի հումանիտար ինստիտուտի ճապոներենի բաժինը և դասախոսների պակասի պատճառով ճապոներեն էր դասավանդում նոյն ինստիտուտի առաջին կուրսեցիներին:

Այն բանից հետո, երբ Հայաստանը 1988 թ. դեկտեմբերի երկրաշրջի պատճառով ճապոնիայից օգնություն ստացավ, Հայաստանում

անհրաժեշտություն առաջացավ ճապոներենի մասնագետների: Այդ ինստիտուտում ճապոներենի բաժինը բացվեց 1992 թ., և առաջին շրջանավարտները եղան միայն չորս հոգի:

Ինստիտուտը ժամանակավորապես վարձակալել է Մշակույթի պալատը: Դասախոսները և ուսանողները նույնիսկ այն ժամանակ, երբ չկային սարքավորումներ, ճապոներենի դասագրքեր և բառարաններ, ներդնում էին բոլոր ուժերը ճապոներենի ուսումնասիրմանը: Քանի որ չկային ճապոներեն-հայերեն բառարաններ, օգտվում էին ճապոներեն-ռուսերեն բառարաններից: Մի դասի ժամանակ, որին ես ներկա եղա, առաջին կուրսեցիները գրատախտակին հիերոգլիֆներով գրեցին. «Ճապոնիայում հիմա գարուն է, և ծաղկում է սակուրան»:

Երբ անցած տարի ճապոնիայից եկավ ճապոնացի դասախոս Ֆուծիտա Սասակոն, դասերը դարձան ավելի բովանդակալից: ճապոնացի լրագրողի հետ հանդիպման ժամանակ ուսանողները գեղեցիկ ճապոներնով երգում էին հայտնի երգեր՝ «Ուե-օ մույտե» և «Սետո-նո հանայոմե»: Եվ քանի որ ուսանողների մեծ մասը աղջիկներ էին, հարցերը հիմնականում հետևյալ բնույթի էին. ճապոնացիների վերաբերմունքը դեպի ամուսնությունը, ճապոնիայում կանանց հանդեպ կիրառվող խորականությունները, երիտասարդական նորածնությունը և այլն:

Ինստիտուտը ավարտելով՝ ուսանողները ստանում են թարգմանչի որակավորում:

«Երկրաշարժ, Արարատ և Ֆուծիյամա, բնական ռեսուրսների բացակայություն. սրանք ճապոնիայի և Հայաստանի համար ընդհանուր են, և մենք ցանկանում ենք լինել միջնորդներ երկու երկրների միջև», – ասում էին ուսանողները, որոնք շարունակում են ջանասեր պարապել այնպիսի պայմաններում, երբ հաճախակի անջատում են էլեկտրականությունը և գազը»:

Ճապոներենի ուսուցման գործում նշանակալից և բազմակողմանի օգնություն է ցուցաբերում ճապոնական կողմը: Գրեթե ամեն տարի ճապոնական հիմնադրամը նվիրում է դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, ձայներիզմներ և տեսագրություններ, նվիրել է նաև տեսամագնիտոֆոն և համակարգչային ծրագրեր: Ներկայում ինստիտուտի գրադարանը ունի ավելի քան 700 կտոր ուսումնական գրականություն, այդ թվում ճապոներենի քերականություն (18 հատոր), մեծ արժեք ներկայացնող ճապոնական արվեստի և ճարտարապետության հանրագիտարան (25 հատոր), ճապոնական գրականության անթոլոգիա (45 հատոր) և այլն: Ուսանողները ճապոներեն սկսել են ուսումնասիրել «ճապոներենը՝ ոչ ճապոնացիների համար» դասագրքերով, որոնք հրատարակ-

Ված են ճապոնիայում: ճապոներնի ծրագրերը կազմված են Տոկիոյի համալսարանի ծրագրերի հիման վրա:

Ինստիտուտի գոյության ընթացքում մի քանի ուսանողներ և շրջանավարտներ հնարավորություն են ստացել կարծատ այցելել ճապոնիա՝ ծանոթանալու նպատակով:

Այսպես՝ Զարուհի Բաբայանը 1998 թ. եղել է կանսայի ճապոներնի միջազգային կենտրոնում: Կարեն Յամբարձումյանը 2000 թ. մասնակցել և ելույթ է ունեցել Օսակայում կայացած «XXI դարի երիտասարդության պրոբլեմները» միջազգային ֆորումում:

Անգլերնի դասատու Թերեզա Շովիաննիսյանը 2000 թ. մասնակցել է միջնակարգ դպրոցների ուսուցիչների միջազգային կոնֆերանսին: Կոնֆերանսի նպատակն էր մասնակիցներին ծանոթացնել ճապոնական կրթական համակարգին, տարրեր երկրների ուսուցիչների աշխատանքային փորձի փոխանակումը, մշակութային կապերի հիմնումը և անմիջական ծանոթությունը ճապոնացիների ազգային ավանդություններին և կենցաղին: ճապոնիայից վերադարձած հետո Թ. Շովիաննիսյանը հանդես եկավ մանուլում ընդարձակ հոդվածով՝ «Ես եղա այլ մոլորակում», որտեղ շարադրել էր իր ստացած վառ տպավորությունները այդ երկրից:

Ինստիտուտի դասախոսները հնարավորություն են ստացել այցելել ճապոնիա՝ մասնագիտական որակավորումը բարձրացնելու նպատակով: Այսպես՝ դասախոս Կարինե Քարամյանը երկու անգամ վերապատրաստվել է ճապոնական հիմնադրամի ճապոներնի միջազգային կենտրոնում (ք. Ուրավա)՝ 1996 թ. (2 ամիս) և 1999 թ. (7 ամիս): Երկրորդ այցելության արդյունքը եղավ «Ուսկյա ճապոներն» համակարգչային դասընթացի ստեղծումը: Այդ ժամանակ էլ՝ 1999 թ. հոկտեմբերին, Կ. Քարամյանը ք. Ուրավայի «Քաղաքապետարանի տեղեկագրում» հանդես եկավ ոչ մեծ հոդվածով, որտեղ համառոտակի ներկայացրեց մի քանի տեղեկություններ Հայաստանի, նրա պատմական անցյալի և ազգային մասին: Իր հոդվածը նա եզրափակեց այսպես. «Ես՝ սովորությների մասին: Իր հոդվածը նա եզրափակեց այսպես. «Ես՝ երևանի հումանիտար ինստիտուտի դասախոսս, այժմ գտնվում եմ ճապոնիայում՝ ճապոնիայի արտաքին գործերի նախարարության ծրագրով, դասագիրք գրելու նպատակով: Հայաստանում ես ունեմ երեսունից ավելի ուսանող, որոնք, հաղթահարելով ճապոներնի դժվարությունների ուսանող, որոնք, տիրապետում են այդ լեզվին: Ես ուզում եմ որ, քրտնաջան սովորում են, տիրապետում են այդ լեզվին: Ես ուզում եմ կամուրջ դառնալ ճապոնիայի և Հայաստանի միջև և հուսով եմ, որ այս սուհետն մեր երկրների հարաբերություններն ավելի կընդլայնվեն»:

Այնուհետև՝ 2000 թ., Զարուհի Բաբայանը նույն ճապոներնի դասախոսազգային կենտրոնում (ք. Ուրավա) անցել է ճապոներնի դասախոս-

ների վերապատրաստման երկարատև դասընթաց (9 ամիս), այդ թվում ուսումնասիրել է լեզվի դասավանդման մերողիկան:

Այնուհետև Արմինե Պետրոսյանը 2003 թ. նոյն ճապոներենի միջազգային կենտրոնում (ք. Ուրավա) խորացրել է ճապոներենի իր գիտելիքերը (2 ամիս):

Ինստիտուտի ճապոներենի բաժնի 4-րդ կուրսի ուսանողութիւն Մկրտչյանը 2001 թ. Կանսայի ճապոներենի միջազգային կենտրոնում վերապատրաստվել է երիտասարդ դիվանագետների դասընթացներում (9 ամիս) և վերադառնալուց հետո աշխատանքի է ընդունվել Հայաստանի ԱԳՆ-ում:

Ինստիտուտի երկու շրջանավարտ շարունակել են ուսումը ճապոնիայում: Ասյա Յարությունյանը 1998–2002 թթ. ավարտել է Կիոտոյի համալսարանի մագիստրատուրան, իսկ Օսակայի համալսարանում՝ ասպիրանտուրան՝ գըաղվելով նախադպրոցական տարիքի կրթության հետազոտությամբ: Ներկայումս ինստիտուտում նա դասավանդում է ճապոներեն: Դրա հետ մեկտեղ նա ստեղծել է տուրիստական գործակալություն, որի ուղղությունն է ճապոնիայի հետ աշխատելը: 2004 թ. գործակալությունը առաջին անգամ Յայաստանից հայ գրոսաշրջիկների խումբ ճանապարհեց ճապոնիա: Մեկնելուց առաջ հայ գրոսաշրջիկները կարծ դասախոսություն լսեցին ճապոնիայի մասին: Տոկիոյում նրանք եղան Կայսերական պալատում, դիտեցին քաղաքի տեսարժան վայրերը: Կիոտոյում տեսան հանրահայտ ոսկյա տաղավարը, Ռյոնանձի տաճարի 15 քարերի այգին, ծանոթացան ազգային կենցաղին, խոհանոցին, օգտվեցին ճապոնացիների հյուրասիրությունից:

Ուղան Խոջիկյանը 2000–2003 թթ. ստորել և ավարտել է ք. Մորիոկայի համալսարանի մագիստրատուրան և ասպիրանտուրան, պաշտպանել թեկնածուական թեզը «Համեմատական ազգագրական հետազոտություն ծիու կերպարի վերաբերյալ ժողովրդական բանահյուսության մեջ» թեմայով: Ներկայումս գտնվում է ք. Սենդայի «Յոկոկու» համալսարանի դոկտորանտուրայում:

Զարուիի Բարբայանը, հաջողությամբ հանձնելով ընտրովի ըննությունները Սոսկվայում ճապոնիայի դեսպանությունում, 1,5 տարով 2004 թ. հոկտեմբերին մեկնել է ճապոնիա: Տոկիոյի օտար լեզուների համալսարանում նա գրադվում է «Փոխառյալ բառերը ճապոներենում» թեմայի ուսումնասիրությամբ:

Ինստիտուտի շրջանավարտ Մարինե Պետրոսյանը 2004 թ. սեպտեմբերին 5 ամսով մեկնել է ճապոնիա՝ այդ երկրի ԱԳՆ գծով: Մեկնելու նպատակն է խորացնել ճապոներենի իր գիտելիքները և ուսումնասիրել ճապոներենի դասավանդման մերողիկան:

Թվարկված բոլոր այցելությունները և ճապոնիայում կեցությունը հրականացվել են ճապոնիայի կրթության և գիտության նախարարության, ճապոնական հիմնադրամի և ճապոնիայի ԱԳՆ ֆինանսական աջակցությամբ:

2004 թ. հունանիտար ինստիտուտը, առաջինը պատմության մեջ, հրատարակեց Հայերեն-ճապոներեն բառարան (հեղինակներ՝ Ս. Ամիր-խանյան և Կ. Քարամյան՝ ավելի քան 5000 ամենագործածական բառացանկով: Ուսանողների ջանքերով առաջին անգամ ճապոներենից հայերեն թարգմանվել և տպագրվել է առանձին գրքով կոչ պատկերազարդ 20 ճապոնական հեքիաթ:

Մինչև այժմ գոյություն ունեցող ճապոնական գրականության հայերեն թարգմանությունները, ինչպես ասվեց, կատարվել են որևէ բերենից: Մեր օրերում արդեն հնարավորություն ունենք թարգմանություններ կատարել ճապոներեն բնագրից:

Ճապոներենի դասախոս Կարինե Քարամյանը ճապոներենի բաժնի ուսանողների համար հրատարակել է ձեռնարկ՝ «Երկխոսություն» (1999 թ.), ճապոներենի ուսուցման համակարգչային ռասընթաց՝ «Ուկյա ճապոներեն» (2002 թ.), «Ծանոթություն Հայաստանի հետ» տեղեկագիրը (ճապոներեն, 2003 թ.), ինչպես նաև «Իկեբանա» (ծաղկարվեստ) ձեռնարկը:

1996 թ. սկսած՝ ինստիտուտում ճապոներենը դասավանդել է մեր կողմից հրավիրված Մասակո Ֆուդիտան (1996–1999 թթ.) International Internship Program կազմակերպության միջոցով: 2000–2003 թթ. բարեգործական սկզբունքներով ինստիտուտում ճապոներենի դասավանդմանը ներգրավվել է Հայաստանի ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի դոկտորանտ Տակայուկի Յոսիմուրան (2000–2003 թթ.), ինչպես նաև հայ գրականության ուսումնասիրող Ակիլոն Յիկին (1999–2000 թթ.): 2003 թ. մեր խնդրանքով Ճարան Silver Volunteers կազմակերպությունը մեր ինստիտուտ գործուելի է դասախոս Իկուե Օքային, իսկ 2004 թ. սեպտեմբերին նույն կազմակերպությունը հունանիտար ինստիտուտում մեկ տարով դասավանդելու է ուղարկել Կումիկո Կորայասիին:

Ճապոնիայում հրատարակվել է «ճանապարհորդություն հետաքրքիր ճանապարհորդություն» գիրքը, որտեղ տեղադրված է Երևանի քարտեզը: Քիր ճանապարհով» գիրքը, որտեղ տեղադրված է Երևանի քարտեզը: Այդ քարտեզում կա փոքրիկ կետ՝ N12, որի տակ նշված է Երևանի հունանիտար ինստիտուտը: Անցյալ տարիների ընթացքում տասնյակ ճանանիտար ինստիտուտը: Երևան, քարտեզի օգնությամբ գտել են հունանիտար ինստիտուտը, հանդիպել ուսանողներին, որոնք իրենց հերթին նրանց ծանոթացրել են Երևանին, հնարավորություն են ունեցել անմիջական շփման և գործնական խոսակցությունների:

1998 թ. ճապոնական հիմնադրամը տպագրել է կատալոգ, որտեղ նշված են աշխարհի տարբեր երկրներում գործող այն կրթօջախները, ուր ուսումնասիրում են ճապոներեն: 602-րդ էջում «Արմենիա» գրիֆի տակ ճապոներեն և անգլերեն տպագրված է. «Երևանի հումանիտար ինստիտուտ: ճապոներենի բաժին»: Նշված է ճապոներենը ուսումնասիրել սկսած տարին՝ 1992 թ., և ինստիտուտի հասցեն:

Կրկնակի՝ 1998 և 2000 թթ. մայիսին, ճապոնիայում հրատարակված ճապոնիայի աշխարհագրական ընկերության տեղեկագիրը նվիրված է Հայաստանին, որտեղ Հայաստանի մասին, ի թիվս այլ նյութերի, զետեղված են Կառորու Տոյոդայի «ճապոներենի նրգույթը հայ ուսանողների միջև» և Մասակո Ֆուձիտայի «ճապոներեն ուսումնասիրող ուսանողները» հոդվածները: Միաժամանակ տեղադրված է ուսանողների հետ վերջինիս լուսանկարը:

2002 թ. ճապոնիայում հրատարակված տեղեկատու-կատալոգում նշված են ԱՊՀ պետությունների բոլոր բուհերը, որտեղ սովորում են ճապոներեն: Այդ տեղեկատուում Հայաստանին և Երևանի հումանիտար ինստիտուտին հատկացված է երեք էջ, տպագրված է պատմական կարծ ակնարկ:

Կրթության համակարգի առիրով հայտնվում է. «2001 թ. Հայաստանը որոշում ընդունեց դպրոցների 11-ամյա կրթության անցնելու մասին: Դպրոցների շրջանավարտները կարող են ընդունվել բուհ, որտեղ ուսուցումը տևելու է 4-5 տարի: Դպրոցի 8-րդ դասարանը ավարտելուց հետո երեխաները կարող են ստանալ միջնակարգ մասնագիտական կրթություն: Երկրորդ դասարանից որպես օտար լեզու ուսուցանվում է ռուսերենը, իսկ 4-5-րդ դասարաններից որպես երկրորդ օտար լեզու ուսուցանվում են անգլերենը, գերմաներենը կամ ֆրանսերենը, բայց ամենից հաճախ՝ անգլերենը: Մի քանի դպրոցներում ուսուցանվում է պարսկերենը կամ արաբերենը: Ինչ վերաբերում է ճապոներենին, ապա միակ տեղը, որտեղ կարելի է սովորել այդ լեզուն, Երևանի հումանիտար ինստիտուտն է»:

Այսպիսով՝ ճապոներենը և ճապոնական մշակույթը տարեցտարի ավելի են մտնում Հայաստանի կյանք: Դա պայմանավորված է ճապոնիայի և Հայաստանի միջև բազմակողմանի կապերի ընդլայնմամբ: Եվ հատկապես Մոսկվայում և Հայաստանում ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պրն Խսեյ Նոնուրայի մշտական ուշադրությամբ, որի շերմ վերաբերմունքը հումանիտար ինստիտուտի նկատմամբ և բազմակողմանի աջակցությունը ճապոներենի ուսումնասիրման և ճապոնական մշակույթի տարածմանը Հայաստանում ակնհայտ է: Ավելորդ չենք հանարում նշել, որ 2003 թ. հոկտեմբերի վերջին մեր հանդիպման ժա-

մանակ պրն դեսպանը գոհունակությամբ ընդունեց «Դայաստան-ճապոնիա. քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերություններ» գիրքը ստեղծելու իմ առաջարկը և ցուցաբերեց իր աջակցությունը, որի համար մենք հայտնում ենք պրն Խասեյ Նոմուրային մեր խորին շնորհակալությունը:

ՀԱՅ-ճԱՊՈՒԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՇՓՈՒՄՆԵՐ

*Սվեփլամա Սարգսյան
Արվեստաբանության դոկտոր, պրոֆեսոր*

Դայաստան ու ճապոնիան, ընդգրկվելով մշակութային հաղորդակցման գործընթացի մեջ, չանտեսեցին նաև երաժշտական ոլորտը: Վերջին տասնամյակներին արագ զարգացող երաժշտական տարրեր փոխհարաբերությունները բացահայտեցին երկու երկրների փոխհետաքրքրության արդյունավետությունը:

Սույն թեմայում լուսաբանվում են հայ և ճապոնական երաժիշտների կատարողական կապերը, որոնք ընդլայնվում, զարգանում են, ինչպես նաև հայ և ճապոնացի երաժշտ կատարողների ու կոմպոզիտորների հյուրախաների բնականոն լայնացումը, որն իր հետ բերում է ստեղծագործական հետաքրքրության խորացում, նոր գաղափարների և մտահետացումների հարստացում:

Այս առումով շատ հետաքրքրի է կոմպոզիտոր Ալան Շովիաննեսը: Հարդի 50-ական թվականներին նա գրում է Սոնատ՝ Օպ. 121՝ ոյլուտե-կիի և սյոիի (կամ ֆլեյտայի և երգեհոնի) համար (1953 թ.), և Սոնատ Օպ. 171՝ հիտիրիկիի և սյոիի (կամ հոբոյի և երգեհոնի, 1959 թ.), և Օպ. 181՝ անգլիական եղջյուրիկի (կամ կլարնետի), հարվածային գործիքների ու տապիղի համար, որտեղ նա նմանակում էր կոտորի հնչողությունը: Այդ տապիղի համար, որտեղ նա նմանակում էր կոտորի հնչողությունը: Այդ բոլոր ձևավորում է կոմպոզիտորի հետաքրքրությունը Հին Արևելքի երբույրը ծևավորում է կոմպոզիտորի հետաքրքրությունը Հին Արևելքի երբների մշակույթի, այդ թվում նաև ճապոնիայի նկատմամբ: 1950 թ. կրների մշակույթի, այդ թվում նաև ճապոնիայի նկատմամբ: 1950 թ. ճապոնիայի ֆիլհարմոնիկ նվագախումբը ձայնագրում է նրա «Meditation on Orpheus»-ը: Նոյն տարին նա գրում է կամերային օպերա՝ «Այրվող տունը», իսկ հետագայում պարային դրամա՝ ներդաշնարակի հին երգչախմբի և փոքր նվագախմբի համար, «Շողմային թմբուկ», ու որ «Նո» թատրոնի հետքերն ունի:

1962 թ. հուլիսին Ա. Շովիաննեսը նեկում է ճապոնիա՝ ուսումնասիրելու նրա ավանդական մշակույթը: Նա անցնում է ճապոնիայի և Կորիայի հին երաժշտության դասընթացներ, վարժվում Գագակու ան-

սամբլի գործիքների վրա, արևամտաեվրոպական նոտագրության վերածում ճապոնական պարերի բարդ կոնտրապունկտային ռիթմի պիեսները: Բացի երեք սոնատներից՝ կոտորյի և սյամիսնի համար, նա 1964 թ. գրում է «Երեք հայկու»՝ դաշնամուրի համար և Օպ. 211՝ քսիլոֆոնի և նվագախմբի համար, որտեղ ընդօրինակում է ճապոնական ժողովրդական գործիքի խան-գա գենսե հնչողությունը:

Եթե ծագումով հայ ամերիկյան կոմպոզիտորի ստեղծագործությունը տեղափոխվում է XX դարին բնորոշող կրոս-մշակույթի մեջ, ապա խորհրդային կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի փոխհարաբերությունները ճապոնիայի հետ ձևավորվել են էրեստիկական և մանկավարժական մակարդակով: Ա. Խաչատրյանի ստեղծագործություններում ճապոնացին տեսնում էր հակառակ մշակույթների սիմբռդի օրինակ: Դես այդ լուսի տակ էլ հայ գործչին բացահայտեցին և խորհրդային Արևելքի, և Հատինական Ամերիկայի երկրները, ուր Ա. Խաչատրյանի երաժշտությունը ցուցադրում էր ազգային նյութի հարմարվելու հնարավորությունը այլ լեզվի ու նոտանողության պայմաններում: Կոմպոզիտորը ապացուցեց, որ սիստեմը կարելի է «ստրկացնել» տաղանդով: Ընդունելով իր համար նոր, ազգային տարրեր՝ համակարգը դառնում է ուրիշ, որովհետև փոխվում են հաստատված պատկերացումները երաժշտական մտքի շարադրումից ու զարգացումից, ծկի, կառուցվածքների և շարժման տեսակետից: Ա. Խաչատրյանի գեղարվեստական փորձը, որ ունի մարգարեական նշանակություն XX դարի համար, արդեն 60-ականներին ճապոնիայում մեծ արձագանք ունեցավ:

1962 թ. փետրվար-մարտ ամիսներին՝ իր հաղթական հյուրախաղերի ժամանակ, ճապոնիայի քաղաքներով (Տոկիո, Օսակա, Կիոտո, Նագասակի) հիանալի մենակատարներ Յ. Օրորինի և Յ. Կոզմանի հետ Ա. Խաչատրյանը ականատես եղավ մեծ ուշադրության: Նշանակալից էր և նրա ստեղծագործական շփումը ճապոնացի գործընկերների հետ՝ կոմպոզիտոր և դիրիժոր Կոսակու Յամադայի և ականավոր գորող Ոյունոսկե Ակուտագավայի որդու՝ կոմպոզիտոր Յասուսի Ակուտագավայի հետ: Այդ հանդիպումներից հետո Ա. Խաչատրյանի դասարանը Մոսկվայի Չայկովսկու անվան կոնսերվատորիայում համալրվեց ճապոնացի ուսանողներով: Նրանցից մեկը՝ Նորու Տերահարան, հետագայում ճապոնիայում շատ ջանքեր բահեց իր ուսուցչի ստեղծագործությունները տարածելու գործում: Նրա մասնակցությամբ Տոկիոյում լուս տեսավ Վիկտոր Չուլգովիչի «Արամ Խաչատրյան» մենագրությունը, որը առաջին անգամ հրատարակվեց 1985 թ. Նյու Յորքում, իսկ 1993-ին հրատարակվեցին «Գայանե» բալետի նվագախմբային սյուիտները: Դետա-

գայում Տերահարան սյուլտների պարտիտուրան հանձնեց Երևանի Ա. Խաչատրյանի տուն-թանգարանին:

Եր 70-ամյա հոբելյանից հետո Ա. Խաչատրյանը մտադիր էր այցելել ճապոնիա, բայց կիվանդության պատճառով կոմպոզիտորի այցը չկայացավ: ճապոնիայում շատ էին սպասում «Գայանե» և «Սպարտակ» բալետների հեղինակին:

Ա. Խաչատրյանի նվազախմբային ծեռագիրը, որը արտահայտված է ոչ միայն բալետներում, այլև վեց գործիքային կոնցերտներում, հարգանք էր ներշնչում ճապոնացի կոնցողիտորներին իր արվեստով՝ կերպարանափոխման, երկարատև մելոդիկ ու ռիթմիկ թեմայի ձևավորմամբ:

Հայ Վարպետի ոճի հետքերը գտնում ենք ճապոնական XX դարի դասական կոնվոգիտորների մի շարք ստեղծագործություններում, օրինակ՝ Ակիրա Իֆուկուբեի և Կիեշիզե Կոյամայի ստեղծագործություններում։ Սրանց նվազախմբային գործերը կատարվել են Հայաստանում 2000 թ.՝ ճապոնական երաժշտության փառատոնի ժամանակ։ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվազախմբի վահանակի մոտ կանգնած էր Յիսայեշի հնոույն, որը 1993 թ. համագործակցում էր մեր ֆիլհարմոնիկ նվազախմբի հետ։

Ա. Խաչատրյանի ազդեցությունը նկատելի է Ա. Իֆուզուբեճ սրբության բաղկացած Rhapsodia Concertante ջութակի և նվագախմբի համար գործում: Ստեղծագործության առաջին մասը բաժանվում է երկու մասի՝ Adagio ջութակի մեջնավագի կադենցիա և Allegro²⁴ մեղեղային որինիկ վարիացիաներ, որինց մեջ գերիշխում է ռիթմիկ հնարավորությունը: Երկրորդ մասը՝ Vivace Spirituose, իր ձևով որոնց է՝ կադենցիան տեղավորված է ստեղծագործության սկզբում, և ամբողջ իմպրովիզացիոն բնույթը ամփոփակես նմանություն ունի Ա. Խաչատրյանի կոնցերտ-օպավությանը (ջութակի և նվագախմբի համար): Գրված է 1961 թ., այսինքն՝ եթելուուրեն ռասապոհայի երկրորդ խմբագրությունից առաջ²⁵:

Հայ Վարպետի ստեղծագործության մեջ կա ուրիշ կողմ ներբանականությունը, պարագաների տարերքի սուր փոփոխությունը, գլխավորապես

24. Արեականաց Տակումին Կուլտուրա (առաջին մրցանակ Մյունիսթենում 1984 թ.)

24 Անսակտար Տաղմուն Կոմիտաս (1869-1935)՝
25 Ա. Իփոկուրեան 1935-ին դարձավ օռու կոնպոզիտոր Ս. Եթեռամինի սրացանակի դափ-
նելուհու և առաջարկած ի համեմոր Երևանում 1978-ին կատարեց Մեգումի Օգատան:

ոիթմի միջոցով, հարվածային գործիքներով, նմանեցումը ժողովրդական գործիքների հնչերանգներին. այդ բոլոր տեղ գտան ճապոնական երաժշտության մեջ: Կոյամայի «Այսո ո ստա» նվագախմբային այեսում ոիթմային սկիզբը լիտավրերով, որոնք չափ են տալիս հին ծիսական պարին (դա գուգորդվում է հայկական քոչարի պարին), հինք է դառնում Օստինատոյի համար:

Օստինատ կառուցվածքների գուգակցումը նվագախմբային ազատ ձևակիրանա երգապարային թեմային նորից հիշեցնում է Ա. Խաչատրյանի նվագախմբային գյուտերը: Աշխարհընկալման ընդհանուր սահմանագծերի հետ պետք է նշենք մոնոկենտրոնային կոնցեպցիան, այսինքն՝ կոմպոզիցիան, որը ձգտում է կենտրոնին՝ ուշադրությունը սկեռելով մի կերպարի վրա, և զարգանում է կարծես գալարագծով: Յայեցողականության, ինքնախորասուլվածության գերակշռությունը գործողության վրա արտաքին կոնտրաստներով ազդում է երաժշտության ժամանակային հատվածի վրա: Ժամանակի գործոնը՝ ոիթմը, մետրը, հաղթահարելով ավանդական եվրոպական ոիթմիկան և պարբերականությունը, այստեղ ստանում է ազատ չափում: Ստեղծվում է ուրիշ ժամանակային երաժշտության կոնտինում, ուր անձև, սահմաններ չունեցող ժամանակն իր մեջ է առնում տարածքի կոնստրուկտիվ գործունեությունը:

Արևոտքի ժողովուրդների պատկերացումը միասնական ժամանակի-տարածության մասին տարբերվում է ճապոնական գեղարվեստական մտածողությունից: «ճապոնացին այսպես ապրում է ժամանակավոր աշխարհայացքով,— գրում է ճապոնացի մեծագույն կոմպոզիտոր Տորու Տակեմիցուն, — ճապոնացու համար բնությունը, հնչպես մարդը, մի էակ է, որը ապրում է ժամանակի աշխարհում: Իսկ ներկայիս արևմտյան ժամանակի կոնցեպցիան իր եռթյամբ գծային է, այսինքն՝ երկարատև, պահում է միշտ նույն վիճակը: ճապոնիայում ժամանակը գիտակցվում է որպես շրջապտուտային ու կրկնվող եռթյուն»²⁶:

«Իմ միջից հոսում է այն, ինչը դուք անվանում եք ժամանակ», — բնորոշ է, որ կոմպոզիցիայի հեղինակ Տակեմիցուն այսպես է դատում ավանդական երաժշտության մասին, և նրա արդյունքները հեշտությամբ հասցեագրվում են ժամանակակից ճապոնական երաժշտությանը: Կոմպոզիտորի ուշադրությունից չի վիհպում ճապոնական արվեստի խիստ կարևոր պորությունը՝ «դատարկ տարածությունը», և այսպես կոչված ՍԱ-Ն, որոնք մարմնավորված են դադարի կամ պարզայի մեջ: «Յնչյու-

26 Takemitsu Togi. My Perception of Time in Traditional Japanese Music. New Music World Magazine. Koln, October, 2001, p. 18. Առաջին անգամ լույս է տեսել՝ Contemporary Music Review, London, 1987.

նը ավանդական ճապոնական երաժշտության մեջ,— գորում է նա,— տարածական գիտակցումն է նկար-փաթեթի բովանդակության»:

Զայնի ու տարածության ճապոնական ընկալման տեսանկյուները, անշուշտ, որ էն հայ ունկնդիրների համար և տեղ են գտնել Ացուիիկո Տակենակայի «Երկու մաս՝ նվազախմբի համար» գործում, որը առաջին անգամ կատարվել է Երևանում 2000 թ.՝ ճապոնական երաժշտության փառատոնի ժամանակ: Այդ ստեղծագործությունը նվիրված է հայ կոմպոզիտոր ու դիրիժոր Լորիս ճգնավորյանին՝ այդ տարիներին նվազախմբի գեղարվեստական դեկավարին, փառատոնի կազմակերպիչներից մեկին: Տակենական, որը կրությունը ստացել էր Ավստրիայում է Կրոշենիկի և Գերմանիայում Յ. Վ. Շենցեի մոտ, այստեղ ներկայացնում է որպես էպիկական ազգային ավանդության ժառանգորդ: Առաջին միստիկ-հնագրեսիոնիստական մասը փոխվում է երկրորդ մասի, ուր ճապոնական բնավորության ներկայացնումը հատուկ ընդգծում է զգացմունքների պոռքումները, էքսպրեսիան և կոտորի ննանակումը տավիղով: Սահուն զգելով ժամանակը՝ կոմպոզիտորը ստեղծում է ստատիկ, իր մեջ ամփոփված կերպար, վերադարձով, կրկնություններով, բայց առանց եվրոպական ստերեոտիպի, այդ թվում՝ կրկնությանը և ստնատությամբ:

Եվրոպական ունկնդիրների համար մեծ հայտնություն էր Օլիվյե Մեսիանի աշակերտ Ավիրո Յաշիրոյի՝ չորս մասից բաղկացած լայնածավալ սիմֆոնիան: Դիրիժորը Յիսայոշի Ինուեն էր, որը դեկավարում էր փառատոնի բոլոր սիմֆոնիկ ծրագրերը: Նա վարպետորեն վեր հանեց սիմֆոնիայի առաջին և երկրորդ մասերի մեջիատիկ-հայեցողական հատկությունները: Բոլորից տպավորիչը երկրորդ մասի Lento-ն էր, անսահման ողբերգական զգացումներն ընդգծվում էին տեսիլական լուսնոտության պատկերներով և նման էին ե. Սվեներուրգի երազներին:

Ժամանակների անբաժանելիությունը՝ իրական և միստիկ, կյանքի ու մահվան ճապոնական առաջնությունը իրենց օրգանական տեղն են գտնել Ավիրո Յաշիրոյի երաժշտության մեջ: Փառատոնում հնչում էր ոչ միայն ճապոնական երաժշտությունը, այլև հայկական: Կատարվեցին Ա. Խաչատրյանի երկրորդ սիմֆոնիան և Լ. ճգնավորյանի դաշնամուրային համերգը (մենակատար՝ Մասսանորի Կորիկի):

Դայաստանի ֆիլհարմոնիկ նվազահումքը Յիսայոշի Ինուեի դեկավարությանը հնչում էր նորանկատ ու գունեղ: Մենակատարն էր Չիեկո Դայաշին՝ ժամանակակից վոկալ ոճարանության վարպետը. նա իր կատարման մեջ ներմուծեց ազգային զգացմունք, էքսպրեսիա, անձնականից բարձր ինչ—որ բան, և այդ բոլորը նրա երգը անմոռանալի դարձրեցին: Դայաշին մասնակցությունը այս փառատոնին դարձավ բնական շարունակությունը նրա հաղորդակցությանը հայ մշակութի հետ: Ակիզը

1994 թ. նոյեմբերին էր, երբ երգչուհին եկավ Երևան, Հայաստան–ճապոնիա մշակութային փոխանակության շրջաններում Ելույթ ունեցավ փոքր համերգներով՝ ճապոնական և ֆրանսիական կոմպոզիտորների ստեղծագործություններով։ Հետագայում՝ 1998–ին, նա առաջին անգամ կատարեց Մ. Ռավելի «Շենքազադեն»։ Փառատոնի սահմաններում մենահամերգներով Ելույթ ունեցավ դաշնակահար Մասսանորի Կորիկիի հետ։

Հայաշին մի քանի վոկալ մրցույթների դափնեկիր է, այդ թվում՝ I.U.F.A.M. և Գարրիել Ֆորեի անվան։ Նա 1963 թ. ապրում է Փարիզում, որտեղ ստացել է լրացուցիչ երաժշտական որակավորում Տոկիոյի Տոհո Գակուեն երաժշտական համալսարանն ավարտելուց հետո։ Կատարելագործվելով հիմնականում XX դարի երաժշտության կատարումներով՝ Հայաշին իր երկացանկի մեջ ունի փարիզեցի հայ կոմպոզիտոր Ժերար Գասպարյանի վոկալ շարքը։ Լուչանո Բերիոյի III Սեկվենսիան՝ ձայնի համար, որը գրված էր իր կոնց Բերի Բերբերյանի համար, և հենց իր՝ Բերի Բերբերյանի գրած «Սրբիկսողին»։

Ծանոթությունը հայոց պատմությանը և մշակույթին 1994, 1998 թթ. Երևան գալու ժամանակ Հայաշին համար դարձավ նշանակալից իրադարձություն։ 1999 թ. նա մենակատար էր Փարիզի Notre Dame եկեղեցում 1915 թ. Եղեռնի զոհերին նվիրված պատարագին։ Բացի դրանից, նա պատարագ երգեց Փարիզի Սուրբ Խաչ հայկական եկեղեցում (երգչախմբի ղեկավարը Անտուան Քեշիշյանն էր, որը և հրավիրել էր Հայաշին)։

«Հայաստանում ես հասկացած երաժշտության նշանակությունը», – այդպես էր Վերնագրված նրա փարիզյան հարցազրույցը։ Նա նկատի ունի այն փաստը, որ դժվարին օրերին երաժշտությունը օգնում է պահպանել ժողովրդի ոգին։ Չիեկոն լավ է հիշում այն դժվարությունները, որոնք տեսավ Երևանում, և այն, որ հայ ժողովրդի արվեստագետները մնացին անհողողող։ 1994 թ. նա ծանոթացավ հայ կոմպոզիտոր Իզաբելա Արագովայի հետ, եղավ նրա տանը, հետաքրքրվեց նրա ստեղծած վոկալ շարքով՝ ճապոնացի բանաստեղծների տերստերով։ Չիեկոն զարմացած էր, թե ինչպես երկրաշարժից ավերված Հայաստանում երաժշտները շարունակում են ստեղծագործել։

Զ. Հայաշին և Ի. Արագովայի հանդիպումը դարձավ բախտորոշ։

Հայ կոմպոզիտորը, որը 2000 թ. գլխավորում է «Woman in Music» ասոցիացիան, այդ ժամանակ արդեն երկու վոկալ շարքի հեղինակ էր։ Հայաշինի խնդրանքով Ի. Արագովան «Աշխարհը միայն երազ է» ինը մասսանց շարքը հարմարեցրեց երգչուհու ձայնին։ Հայաշին առաջին կատարումները կայացան 1989 թ. սեպտեմբերի 13–ին և 18–ին՝ ճապոնիայի Յամամացու և Կումագայա քաղաքներում նրա և դաշնակահար Մ. Կորիկիի հյուրախաղերի ժամանակ, որոնք կազմակերպել էր Ֆրան-

սիայի դեսպանությունը Տոկիոյում: Խակ երկու տարի անց՝ 2000 թ. սեպտեմբերի 12-ին, Յայաշի-Կոբիկիի դուետը երևանի Ա. Խաչատրյանի տուն-թանգարանում կատարեց չորս համար՝ Արագովյահ 1, 3, 6, 8 «The World is just a Dream» շարքից: Ծրագրում հնչեցին նաև Կլոդ Ռյուսիի, Ժորժ Ալեքրդիսի, Ակիրա Յույամայի և Ժերար Գասպարյանի ստեղծագործությունները:

հ. Արագովայի երգերի մեկնաբանության մեջ ընդգծվում է աշխարհի ողբերգական ըմբռնումը, որն ազդում է կերպարների արտահայտիչ մանրամասների վրա: Այսպես՝ թիվ 1 շարքում՝ «Ինչպես մշուշի միջով» (բանաստեղծությունները՝ Կի-նո Ցուրայուկիի), շատ դանդաղեցված է տեճապը, որը ընդգծում է յուրաքանչյուր ֆրազի անհատապաշտությունը: Թիվ 3՝ «Ամեն ինչ տխուր է» (բանաստեղծությունը՝ Օնո-նո Կոմածիի), երկարացված է տարածության մեջ, դեպի երկինք ձգվող ձայնը: Թիվ 6՝ «Սի՞թե Վերջ» (բանաստեղծությունը՝ Յանանյե Օկուրայի), ոեգիստրային հակադրության, դանդաղ եքսպրեսիայի, դատարկության մեջ տանող ավարտը: Թիվ 8՝ «Աշխարհի միայն երազ է» (բանաստեղծությունը՝ Կի-նո Ցուրայուկիի), օրաներկերի ցնորականություն է:

կիրճերը», «Ինչպես մշուշի միջով», «Սարերի գագաթների մեջ ամպեր»: «Աշխարհ միայն երազ է» շարքի գրական հիմքը X–XVII դդ. ճապոնական բանաստեղծների գործերն են, սկսած հայտնի բանաստեղծ և գիտնական Կի–նո Ցուրայուկիից (882–946), որը կազմել է առաջին կայսերական պոեզիայի անթոլոգիան՝ «Կոկինսյուն», որտեղ արմատավորված էր թանկան՝ հինգ բանաստեղծական տող՝ 5, 7, 5, 7, 7 վանկերով²⁷, մինչև հոկկուի հայտնի բանաստեղծ Մացուր Բայյոն (1644–1694): Հենց նրան են պատկանում հոկկուի երեք եսթետիկական սկզբունքները՝ ՍԱՐԻ (նուրք գեղեցկություն), ՍԻՕՐԻ (գեղեցիկի ասոցիատիվ հարմոնիայի գիտակցություն) և ՅՈՍՈՍԻ (թափանցիկության խորությունը)»²⁸:

Միջնադարյան ճապոնական լիրիկան (թացի վերը նշվածից օգտագործված է նաև Օնո–նո Կոմածիի, Յամանոյե Օկուրայի, Օնո–նո Տակամուրայի և Տայգիի բանաստեղծությունները) ընդունվում է հայ կոմպոզիտորի կողմից որպես ամբողջական երևույթ: Դրա համար խոսքի ասկետիզմին պետք է համապատասխանի երաժշտության ասկետիզմը և առաջին հերթին՝ Վոկալ միջոցները, իսկ «թափանցիկության խորությունը» իմաստի մեջ պետք է ապահովի միջոցների ընտրությունը: Դարերի ընթացքում բանաստեղծներին միացնող ժառանգությունը օրինականացնում էր ճապոնիայի գրական ավանդույթը: Ժառանգության կապող թևերից մեկը դարձավ պոեզիայի աղբյուրը՝ «Մարդկային սիրտը», ինչպես բնութագրում է Ցուրույակին «Կոկինսյու» ներածության մեջ: Երեք դար հետո Ֆուձիվարա Սադայյեն՝ VIII դարի կայսերական «Սին–Կոկինսյուի» («Սոր կոկինսյուի», 1205 թ.) հեղինակն ու կազմողը, նորից կարծում էր, որ պոեզիայի իմաստը ամեն ինչում ՅՈՒԳԵՆ բացահայտելու է: Ինչպես նշում է Ն. Կոնրադը, «յուգեն» բառը սովորական լեքսիկական իմաստով բացատրվում է այսպես՝ «խորքային, անհմանալի, խորը, անսպառ» (օկուրակակուտե խակարիսիրենայ օմոնուկի ֆուկակու ածիվայ գա ցուկինայ): Կարելի է ասել, որ «յուգեն» սրբազն, թաքուն հասկացությունը կամուրջ է դառնում հասկանալու ճապոնական միջնադարյան պոեզիայի բարդ աշխարհը նրա յուրաքանչյուր մեկնարանի համար: Ի. Արազովան, ինչպես մյուս հայ կոմպոզիտորները, որոնք անդրադարձել են ճապոնական գրականությանը, ձգտում է գտնել նրա համար նոր երաժշտական ոճաբանություն: Նրա մեջ կուտակած են միջոցներ, որոնք գուգորդաբար արտահայտում են ճապոնական մշակույթի հոգեկան եղանակը, զգացումների որոնումը և անցողիկ տրամադրությունների թաքուն խորհրդանշները: Նրբաճաշ-

27 Տե՛ս «Մեծ խորհրդային հանրագիտարան», Մոսկվա, հ. 30, էջ 539 (ռուսերեն):

28 Կոնրադ Ե., Միջնադարյան ճապոնիայի մշակույթի պատմության ակնարկ:

կությունից ու նրբությունից բացի ճապոնական պոեզիան ռացիոնալ մտածողության հոմանիշն է:

Ռացիոնալ մտածողությունը բնորոշ է և հայ կոմպոզիտորների վոկալ արվեստին: Եվ եթե Ի. Արագովան, ինչպես նաև նրա կրտսեր գործընկերը՝ Կահրամ Բարայանը, որը հեղինակ է միջնադարյան ճապոնական բանաստեղծների տեքստերով գրած վոկալ շարքերի՝ «Աշնանային երգեր», «Գիշերը կիսու սարերում», որտեղ նա ձգտել է օգտագործել համաշխափ հանգիստ և ռիթմիկա: Ուրիշ բան ենք տեսնում Ստեփան Ռոստումյանի ստեղծագործյան մեջ: Երիտասարդ կոմպոզիտորը իր շարքը՝ «Թանկա սոպրանոյի և դաշնամուրի համար», իմաստավորել է Վերենի պուանտալիզմին մոտ ոճաբանությամբ: Դա բոլոր է տալիս երաժշտության հեղինակին ավելի պայծառ արտահայտել իմաստը և, ի վերջո, բուն խոսքի երթյունը (առաջին երկու համարներում օգտագործված է ֆուծիվարա Կիոսկեի թանկան, երկրորդում՝ անանուն մի բանաստեղծի տեքստը): Դաշնամուրային կատարման համար ռիթմական բարդությունը բույլատրում է լայն ռեզիստրային ընդգրկում, որի ֆոնի վրա վոկալի զսպվածությունը նույնիսկ ստատիկ է թվում: Ո. Տերտերյանը, վոկալի մեջ հաստատելով դրամատիկական վերելքներ ու նվազումներ, նշում է. «Նվազումի համար բնորոշ է կենտրոնացումը մի ձայնի շուրջ»²⁹: Անվեռապահորեն, թանկայի նման գնահատանքը նախապայմանավորված էր կոմպոզիտորի կրոնական հետաքրքրություններով. այդ տարիներին նա ակտիվորեն ուսանում էր հայ եկեղեցու մեծերի աստվածաբանական և երաժշտական ժառանգությունը:

ճապոնիայի հետ կոմպոզիտորական կապերը զարգանում են նաև հրատարակչական ոլորտում: Այդ առումով նշանակալից է Ալեքսանդր Չարությունյանի գործունեությունը: Չամաշխարհային համբավ ունեցող կոմպոզիտորը, 1992 թ. գտնվելով Լոնդոնում, ծանոթացել էր միջազգային երաժշտական «Zen on Music Company» հրատարակչության տնօրեն Ակիրա Տանակայի հետ: Շատ շուտով Ակիրա Տանական դարձավ Ա. Չարությունյանի ստեղծագործությունների եռանդուն ջատագովը ճապոնիայում: Այդ հրատարակչությունում լույս տեսած հայ կոմպոզիտորի գործերը շատ են: 1994 թ. լույս տեսան նրա «Երսարումտը դաշնամուրի և թաշութակի համար», «Չայկական ռապսոդիան» երկու դաշնամուրի համար (համահեղինակ՝ Անն Բարաջանյան), «Սյուիտ կլաննետի, ջութակի և դաշնամուրի համար» (1998 թ.), «Երեք երաժշտական պատկեր դաշնամուրի համար», «Սոնատ-պոեմ ջութակի և դաշնամուրի համար»

29 Ո. Տերտերյան, Ստեփան Ռոստումյանի «Թանկա» վոկալ շարք, Երևան, 1986 թ., էջ 3, (ռուսերեն):

և վերջապես 2004 թ.՝ Սոնատ «Retro» ալտի ու դաշնամուրի համար և «Պոեմ թագութեակի և դաշնամուրի համար»:

Երաժշտական կապերը կատարողական մակարդակով մշտապես զարգացող գործընթաց են. հյուրախաղեր, մրցույթներ, համերգներ, «մաստեր-կլասներ», որոնց արդեն մի քանի տասնամյակ մասնակցում են տարբեր սերունդների պատկանող հայ երգիչներ, կատարողներ, դիրիժորներ: Իհարկե, կապերի ընդհանուր պատկերը կարիք ունի ճշգրտման և լրացման:

Դիրիժոր ու կոմպոզիտոր Լորիս Նամակորյանը Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը ղեկավարելու տարիներին (1989–2000 թթ.) հաճախակի ելույթներ էր ունենում ճապոնական սիմֆոնիկ նվագախմբերի հետ:

Երգիչներից 60–ական թվականներին ճապոնիայում ելույթներ է ունեցել աշխարհահռչակ Գոհար Գասպարյանը, հետագայում՝ սոպրանո Արարս Դավթյանը (1980 թ. «Սոսկվայի վիրտուոզներ» նվագախմբի հետ, Վ. Սպիվակովի ղեկավարությամբ), իսկ 1994 և 1996 թթ. Ռուսաստանի պետական կամերային նվագախմբի հետ (ղեկավար՝ Կ. Օրբելյան), ծրագրում՝ «Թագաղրական մեսսան», «Գերեզմանային երաժշտությունը» և Սոցարտի այլ ստեղծագործություններ:

Առաջատար հայ ջութակահար Ռուբեն Ահարոնյանը (այսօր նա առաջին ջութակն է Ա. Բորոդինի անվան լարային քառյակի) մասնակցել է Տոկիոյում կայացած միջազգային փառատոնին: Նրա կրտսեր գործընկեր ջութակահար Նիկոլայ Մադոյանը 1992 թ. դարձավ ջութակահարների միջազգային մրցույթի դափնեկիր և հատուկ մրցանակ ստացավ լավագույն կատարման համար, մրցույթում նշանակվող պարտադիր ստեղծագործության համար:

1996 և 1998 թթ. ճապոնիայի 27 քաղաքներում մեծ հյուրախաղերով հանդես եկավ դաշնամուրային արվեստի վարպետ Սվետլանա Նավասարդյանը: Նա ելույթներ ունեցավ Տոկիոյում («Ասահի–հոլլ»), Նագոյա, Յոկոհամա, Ֆուչիսավա, Կավագուտի, Ֆուկուտեկա, Խատինոյին, Միաձակի (մեծ համերգային դահլիճ) քաղաքներում: Նշենք նաև Ս. Նավասարդյանի մասնակցությունը միջազգային փառատոներում՝ Սապորոյում, Տոկորոծավայում, «Մաստեր-կլասը» Տոկիոյի, Կիոտոյի, Ֆուջիսավայի, Յատինոյիեի կոնսերվատորիաներում: Նա մասնակցել է բառեգործական հանդիպումներին՝ 1998 թ. Նորու Տերահարայի հուշ–երեկոյին՝ կատարելով նրա «Ռոմանսը» դաշնամուրի համար: Բացի դրանից, կատարվեցին Բախի, Վիեննական դասականների, Շումանի, Շոպենի, Բրամսի, Չայկովսկու, Պրոկոֆևի, հայ կոմպոզիտորների և ճապոնիայում շատ սիրված Ա. Խաչատրյանի ստեղծագործությունները:

1994–2002 թթ. շատ բեղմնավոր էին Երևանի պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Անահիտ Ներսիսյանի գործունեության համար: Նապոնիայում նա հայտնի դարձավ, եթե այնտեղ իրատարակվեց Սոսկայի կոնսերվատորիայի մասին գիրքը, որտեղ գրված էին միջազգային մրցույթների դափնեկիրների անունները: Ա. Ներսիսյանը Բախի մրցույթի դափնեկիր է (1980 թ., Լայպցիգ): 1994 թ. նա առաջին անգամ այցելեց ճապոնիա: Տոկիոյում, Կոչիում, Տակամացուում նա կատարեց կլավիրարենդ՝ Բախի երաժշտությամբ: 1995 թ., համերգներից բացի, նա Տոկիոյի ազգային կոնսերվատորիայում դասախոսություն կարդաց, որը նվիրված էր Բախի երաժշտության մեկնարանություն կարդաց, որը նվիրված էր Բախի երաժշտության մեկնարանությանը: 1996 թ. նա մենահամերգով հանդես եկավ Տոկիոյի «Կազակս-հոլլում», «Մաստեր կլասներ» ունեցավ ֆուկուոկե և Սագե երաժշտական ուսումնարաններում: 2001 թ. ծայնագրեց Տոկիոյի Mitace Art Centre–ում Ականդինավիայի ժամանակակից կոմպոզիտորների երաժշտությունը, տվեց համերգներ ճապոնացի ջութակահար Մեգումի Օգատայի հետ Կումամատոյում: Միումիում հնչեցին Կոմիտասի պիեսները, ե. Բաղդասարյանի «Նոկտուրնը», S. Տակեմիցուի «Ելեգիան», և Վերջապես, 2002 թ. Տոկիոյում նորից ելույթ ունեցավ «Յայաստան»-Օգատա դուետը: Ստեղծագործական կապը այս ջութակահարուի հետ սկսվեց դեռ 2000 թ. Երևանում Յայաստանում ճականական երաժշտության փառատոնի ժամանակ:

Նեպտեմբերի 13-ին երաժշտները համերգ տվեցին Կամերային երաժշտության տանը: Բացի Շուբերտից և Քո Հինդեից, կատարվեցին Առությունների կատարությունները:

Յայ և ճապոնացի երաժշտների համագործակցությունը դեռ նոր իմաստ առնում: Երկու ինքնատիպ մշակույթները գտնվում են խոր իմացության նախամուտքին:

ՆՐԱՆ ԾԱՓԱՐԱՐԵԼ ԵՆ ՀԻՍՈՒՆԵՐԿՈՒ ԵՐԿՐՈՒՄ

Ավելիանա Ավագյան
Հայաստանի գրողների միուրյան անդամ

Գոհար Գասպարյան
ՍՍՀՄ ժողովրդական դերասանուհի,
Սոցիալխարական աշխատանքի հերոս,
Պետական մրցանակների դափնիկիր,
պրոֆեսոր

Գոհար Գասպարյանը ոչ միայն հայկական, այլև համաշխարհային օպերային արվեստի հպարտությունն է, աստղ՝ բառիս ամենավեհ իմաստով: Մի քանի տարի առաջ նրա անունով աստղ կոչվեց: Նա ԽՍՀՄ ժողովրդական դերասանուհի է, Սոցիալխարական աշխատանքի հերոս, Պետական մրցանակների դափնիկիր, անկախ Հայաստանի մեծագույն պարգևի՝ Մեսրոպ Մաշտոցի անվան շքանշանակիր:

Երեսուն տարուց ավելի նա դասավանդում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, պրոֆեսոր է, երգի ամբիոնի վարիչ: Հայ գրականության դասական Ավետիք Իսահակյանը նրան ստեղծագործական կյանքի շեմին «Հայաստանի սոխակ» է անվանել: Նրա երկրագուների թիվը միլիոնների է հասնում: Նա ելույթներ է ունեցել աշխարհի 52 երկրներում, իսկ ճապոնիայում եղել է երկու անգամ՝ 1957 և 1964 թթ.:

Նա սիրում է հիշել իր մանկությունը, ստեղծագործական առաջին քայլերը, եգիպտոսը, ուր ծնվել է, օպերան Երևանում և... ճապոնիան, որը տարիներ առաջ զարմացրեց, պայծառացրեց նրա երևակայությունը՝ հավերժ մնալով երգչուհու սրտում:

Նա պատմում է. «1957 թ. աշուն: ՏՌՒ-104-ը օդ բարձրացավ մոսկվյան օդանավակայանից: Թռչում ենք ամպերից վեր: ճանապարհ երկար է: Իջնում ենք Ղելիում, նորից թռիչք, նոր քաղաքներ. Կալկաթա, Բանգլակ, Շնորհանգ, Վերջապես՝ Տոկիո: Յուրահատուկ գեղեցկության քաղաք: Ակսվում է իմ հյուրախաղային ուղևորությունը ճապոնիայում: Ծանր առաքելություն վիճակվեց ինձ և ինձ նվազակցող դաշնակահրուին՝ Էլենորոա Ռուկանյանին: Մենք առաջին անգամ կինք Ծագող արևի երկրում: Արվեստի ուժով պիտի գրավեինք հազարավոր անծանոթ հանդիսատեսներին, անծանոթ երկիրը: Արտի թթիով ուտք ենք դնում ճապոնիայի հողին. ինչպես կընդունեն:

Մեզ դիմավորում են «Երաժշտների բանվորական համայնք» միության ներկայացուցիչները, բազմաթիվ լրագրողներ. շատ ծաղիկներ,

Ճերմ ժպիտներ: Երեկոյան մամուլի ասուլիս, քառասուն թղթակիցներ, հարյուրավոր հարցեր: ճապոնիայում շատ լավ գիտեին Արամ Խաչառյանին. նա այստեղ ելույթներ էր ունեցել մեր գալուց առաջ: Ես պատմում եմ զարմացած ճապոնացիներին մեր փոքրիկ Հայաստանի մասին, որտեղ օպերային թատրոն, կոնսերվատորիա, երեք սիմֆոնիկ նվագախումբ, լուսաբան եռավագական դարրոցներ կան:

Դեսպանական գործությունների մասին պատճենական գործությունները կազմում են համապատասխան դաշտավայրը՝ ուղարկելու ժամանակը:

Առանց փորձի ելույթ են ունենում ճապոնական սիմֆոնիկ սպա-գախմբի և երգչախմբի հետ (1000 մարդ՝ կատարելով Բեթհովենի 9-րդ սիմֆոնիան (ղիրիժմոր Ուեղա): Դայտնի և խատապահանջ ճապոնացի քննադատ պողոֆեսոր Յամանեն հիացած էր և չըր թաքցնում իր հուզմունքը:

Իւկական վարպետի համար ելույթը ունենալ ծավոսազարդություն պահանջելու, երաժշտությանը քաջ գիտակ հանդիսատեսի առաջ շատ է ցանկալի: Ենց այդպիսի հանդիսատես եր զալիս իմ հաներգներին Տուկո, Յուկոհամա, Կիոտո, բոլոր մյուս 18 քաղաքներում, ուր տեղի էին ունենում հյուրախաղերը:

ճապոնիայում ես ունեցաւ 23 համերգ: Այդ օրներս ուղարկած գլուխազարդ բացիկներ Երևանի տեսարժան վայրերի պատկերներով, Մարտիրոս Սարյանի և Հովհաննես Զարդարյանի նկարների վերաշխատություններով: Տոկիոյում ին տրամադրության տակ էր «Պինուտ» ավտոմեքենան, և մի անգամ շնորհակալ հանդիսատեսը ձեռքբանական պարձրապետ մերենան, տարավ փողոցներով:

«Գոհար Գոսպարյանը ցուցադրում է երգային արվեստի բացառիկ կարողությունները: Նրա արվեստը ամերիկական է, իսկ ծայրական ու բարիանցիկ» («Ասահի սիմբոլներ» թերթ):

«Մեր կարծիքով երաժշտական աշխարհում շատ քիչ են երգիչներ Գոհար Գասպարյանի կարողությամբ: Նա գերում է համելիսարևելի պրտերը իր ձոխ, ինքնուրույն ոճով և թերթ երգելու ուժակությամբ» («Տոլյին սիմբում» թերթ):

Դիրոսիման ծանր տպավորություն թողեց ինձ վրա: Ատոնային պայքարունի ողբերգությունից հետո մնացել էին ծոված շենքի կմախքը, կիսաքանդ կանուրջներ, հալված սեղաններ, աթոռներ՝ որպես հիշողություն ոմբակոծության սարսափելի օրվա մասին: Մեր իմարեսարիոն շատ էր անհանգստանում. դեռ չեր անցել վարակվելու վտանգը:

Մենք ապրում էինք նոր հյուրանոցում, որը կառուցված էր եվրոպական ոճով: Դենց մտանք հյուրանոց, նաժիշտը մեզ լողասենյակ ուղեկցեց, որ ջոռվ հանենք փողոցի փոշին: Դետագայում փողոցներում ամենուր հանդիպում էինք թժշկների:

Նազասակիում նախատեսված էր երկու համերգ, որոնք չկայացան: Մեզ ուղղակի չքողեցին քաղաք մտնել, քանի որ դեռ վտանգավոր էր:

Ես ճապոնիայում այցելեցի շատ բանգարաններ, բայց բոլորից տպավորիչը Դիրոսիման էր, որտեղ ամեն ինչ ճշում էր այդ քաղաքի ողբերգության մասին: Խոստովանում եմ, որ Դիրոսիմայում ես ֆիզիկապես զգացի այդ հողի վրա կատարվածը:

Նագատոյում շատ հետաքրքիր էր Բուլղայի արձանը: Մտնում ես ներս, բարձրանում ամենավերին հարկը, և այդտեղից Բուլղայի աչքերի միջից, որոնք լուսամուտներ են, բացվում են քաղաքի հիասքանչ համայնապատճերը և ծովային տեսարան:

Կիոտոն ճապոնիայի հին մայրաքաղաքն է եղել, հիմա էլ մեծ և գեղեցիկ տաճարներ շատ են մնացել: Այցելեցինք «Ոսկյա տաճարը» և «Արծաթյա տաճարը»: Կիոտոյի տեսարժան վայրերից է նշանավոր գեյշաների դպրոցը, որտեղ սովորում են 18–20 տարեկան աղջիկները՝ ճապոնական ազգային տարազներով: Այդ հագուստը թանկ է, մետաքսից է և ոսկեկար: Գեյշաներին սովորեցնում են գեղեցիկ խոսել, գրադեցնել հյուրերին: Նրանք կարդացած, կրթված, գեղեցիկ ու նուրբ կանայք են: Պուչինիի «Չիո-չիո-սան» օպերայի հերոսուիկ մաղամ Բատերֆյայը գեյշա է:

Կորեի հյուրանոցում ինձ ասացին, թե քաղաքում ապրում է մի հայ ընտանիք: Ես որոշեցի գտնել իմ հայրենակիցներին և լսեցի մի հետաքրքիր պատմություն: Առաջին համաշխարհայինի ժամանակ մի հայ զինվոր, գերի ընկնելով, ամուսնացել է ճապոնուիկ բուժքրոջ հետ, մնացել է ճապոնիայում: Նա չորս որդի ուներ՝ արտաքինից իսկական ճապոնացիներ, բայց շատ լավ հայերն են խոսում:

Նագոյա քաղաքը ծովային մեծ նավահանգիստ է: Մեր գալու օրը գգուշացրին, որ ուժեղ թայֆուն է սպասվում: Սարսափելի տեսարան:

Դեռվից մոտենցող փոշու այուները և ծովից եկող ջրի սյուները վերած-
վում են ուժեղ անձրևի: Այդ ընթացքում ոչ ոք տանից դուրս չի գալիս՝
սպասելով թայֆունի ավարտին:

Մացույանան զուտ ճապոնական քաղաք է՝ ազգային ոճով կառուց-
ված: Այստեղ գեղեցիկ պազողաներ են, չկան բարձր տներ: Տների առաջ
գեղեցիկ այգիներ են՝ կարծիկ ծառերով: Յուրանոց մտնելիս դռան մոտ
անպայման հանում ես կոշիկներդ, հագնում փափուկ մաշիկներ, որոն-
ցով թերեւ քայլում ես փայլուն և սահուն հատակի վրայով: Բայց ես ըն-
կա աստիճանների վրա: Ինձ վատ զգացի, մեջքս ցավում եր: Ստիպված
եղա պառկել իիվանդանոցում, որի երեք պատերը շրջապատված են
օվկիանոսով: Ին պալատի պատերը ապակուց էին, նրանց հետևում
բնական ակվարիում եր: Ինձ բուժում էին լոգանքով և մերսումով, և երեք
օրից ես լավ զգացի, ելույթ ունեցա համերգում:

Յոկայդո կղզին ճապոնիայի հյուսիսն է: Այստեղ Սիրիի նաման
ցուրտ է: Յոնսյու կղզուց Յոկայդո մեկնում էինք նավով: ճապոնացինե-
րը հետաքրքիր սովորություն ունեն. Երբ նավը մոտենում է նավա-
հանգստին, դիմավորում են փոքրիկ նավակներով և ուղեկցում են մինչև
քաղաք: Սրտարաց հանդիպում: Երկու համերգի փոխարեն՝ երեքը:
Դժբախտաբար, եղանակը չի ուրախացնում, ուժեղ ծյուն է զալիս, և
մենք զրկվում ենք զբոսնելու հնարավորությունից: Այդ կղզում շատ
ռուսներ կան, նրանք այստեղ վաղուց են բնակություն հաստատել, և
պահպանվել են ռուսական բարքերը:

ճապոնիայում չես հանդիպի աղքատ հագնված երեխայի: Յոկայ-
դոն զարմացնում է բազմաթիվ կապիկներով, որոնք ազատ շրջում են
փողոցներում:

«Տոկիոյի պարմության մեջ ոչ ոք չի լսել նման երգչուիու: Հենց սկզբից
մենք հասկացանք, որ լսում ենք մի երգչուիու, որը անսահման գեղարվես-
տական բարձր կուլտուրայի լուր է: Պարկերացներով լայն երաժշտական
պատարան՝ հասկանում էն ինչքան քիչ էն այն երգչուիները, որոնց կարե-
լի է դնել գոհար Գասպարյանի կողքին...» (Ճապոնական մամուլից):

Ին կարծիքով, որտեղ էլ որ լինես, որ երկրում էլ ապրես, երգը ամե-
նալավ թարգմանիչն է: Այդպես պատահեց մեր «Ծիծեռնակի» հետ: Մեծ
դահլիճում 13 հազար հանդիսատեսի առաջ ես զգացի հազարավոր
աչքերի շերմ փայլը, որոնք ինձ էին ուղղված: Երբ վերջացրեցի երգը,
դահլիճում լրություն տիրեց, և հանկարծ կատարվեց անսպասելին:
Դահլիճը ծափահարություններից դղողաց: Երեք համերգ Տոկիոյում, և
Դահլիճը ծափահարություններից դղողաց: Երեք համերգ Տոկիոյում, և
ամեն անգամ՝ նոր ծրագիր: Ես զգում էի՝ ինչպես համերգից համերգ մե-
ծանում է շերմությունը ին և հանդիսատեսի միջև: Ասում են, որ ճապո-
նացները զուսպ են ծափահարությունների մեջ: Իսկ ես տեսա հակա-
նացիները զուսպ են ծափահարությունների մեջ:

ռակը: Երաժիշտ սիրողները ճապոնիայում շատ պահանջկոտ են և բարձր ճաշակի տեր: Այդ օրերին ինձ խնդրեցին երգչախմբին նվիրել երկու հայկական երգ: Ես տվեցի Կոմիտասի երգերի և «Ծիծեռնակի» նոտաները, իսկ նրանք խոստացան մեր հաջորդ հանդիպմանը անպայման կատարել դրանք:

ճապոնիան իին ու զարգացած մշակույթի երկիր է: Ամեն քայլափոխին մենք հանդիպում էինք ինքնատիպ ճարտարապետական հուշարձանների, արվեստի գործերի: ճապոնացիները շատ աշխատասեր են: Օտարերկրացիների վրա խոր տպավորություն են թողնում մեծ քաղաքները, ինամված բերքատու դաշտերը: Եվ ամենուրեք մենք համոզվում էինք, որ այս աշխատասեր ժողովուրդը մերժում է պատերազմը: Դիրոսիմայում մենք կանգ առանք այն միակ շենքի մոտ, որը կանգուն էր մնացել: Այդ շինությունը նման էր գանգի, որի դատարկ խոռոչները գգուշացնում են նրանց, ովքեր մտածում են ատոռային պատերազմի մասին:

ճապոնիայի մայրաքաղաքը՝ Տոկիոն, առաջին հայացքից թողնում է անծանոթի տպավորություն, որին շատ ոժվար է ճանաչել: Եվ ես ակամա պատկերացրեցի մի աշակերտուիհու, որը աշխարհագրության դաս է սովորում, ցուցափայտը ծեռքին կանգնած է քարտեզի մոտ և ասում է. «Տոկիոյում ապրում է 9,5 մլն մարդ»: Եվ իհմա այս անծանոթ քաղաքում այդ 9,5 մլն-ց հառնեց իմ առաջ հսկա ամբոխի մեջ, փողոցներում, մեթենաներում, բազմաթիվ տներում...

Դանգստի հազվադեպ ժամերին մենք ճանաչում էինք ճապոնիան: Տոկիոյում մեզ հաջողվեց լինել «Կարուկի» թատրոնում: Իր բնույթով դա ավելի ժողովրդական թատրոն է, քան «Նո» թատրոնը, որը ծնվել է ավելի շուտ XIV դարում կրոնական ներկայացումներից: Սկզբում գործողությունը կատարվում էր բաց երկնքի տակ: Կանանչ անունով դերասան և թատերագիրը այդ թատրոնին ավելի գեղարվեստական ու դրամատիկ բնույթ տվեց: Ավելի ուշ ներկայացումները փոխադրվեցին դահլիճ և տեղի էին ունենում տոնական և սովորական օրերին: Դերասանները խաղում էին դիմակներով: «Կարուկի» թատրոնում դերասանները խաղում էին առանց դիմակների, բայց, ինչպես «Նո» թատրոնում, դերասանները միայն տղամարդիկ էին: Ներկայացումը տևում էր վեց ժամ, գուցորդվում էր ճապոնական դասական երաժշտությամբ: Դերասանների շարժումները խիստ ոիթմիկ, պարային էին, տեքստը արտասանվում էր նույնպես ոիթմիկ, ընդգծված շեշտադրումներով:

Օսակայից ոչ հեռու է գտնվում Տակարաձուկա փոքրիկ քաղաքը, որը կոչում են «Թատերական քաղաք»: Եվ թատրոնն է կոչվում «Տակարաձուկա», ուր խաղում են միայն աղջիկները: Դա սովորական երաժշտական թատրոն է, որի խաղացանկի մեջ կան օպերաներ, օրինակ՝

«Կարմեն»: Բայց բասի դերերը կատարում են կոնտրալտոն, իսկ բարիտոնինը՝ ալտերը: Շատ հետաքրքրի է Օսակայի տիկնիկային թատրոնը, որը ստեղծվել է XVII դարում: Գործող անձինք՝ տիկնիկները, մարդու հասակի կեսի չափ են: Դրանց դեկավարում են 2-3 մարդ սև հագուստով, որոնք չեն փորձում նույնիսկ թաքնվել հանդիսատեսից: Տիգատաքաղաքը մետաղագործության կենտրոն է: Մեծ մասը բանվորներ և ինժեներ-տեխնիկներ են: Բայց իհանալի հանդիսատես էր, երաժշտությունը լավ հասկացող: Զարնանալի էր, երբ համեզգից հետո նրանք շրջապատեցին ինձ և խնդրում էին մակագործություն, ինձ էին մեկնում ոչ թե լուսանկարություն կամ ծրագրեր, այլ իրենց թաշկինակները, անգամ վերնաշապիկները, և մենք էլեռորայի հետ շուտով մակագործում էինք «Դաշկորդ ընկերություն» բառերը:

Մացույամայից մենք հեռացանք փոքր, հյուրընկալ նավով և ճապոնական սովորությամբ բռնել էինք գունավոր թղթե ժապավենի ծայրը, ողջ ծագվում էր մեզ ճանապարհ դնող բարեկամներից: Այդ ժամանակ ծգված ժապավենը պոկվեց, բայց իմ հիշողության մեջ հավերժ մնացին ջերմ կապը հյուրասեր ճապոնացիների հետ և նրանց նվիրած մի քանի տիկնիկներ՝ ճապոնական կիմոնո հագցրած: Մեկը այսօր գտնվում է Ս. Եջմիածնում, որը ես նվիրել եմ Ամենայն Հայոց կարողիկոս Վազգեն Ա-ին, իսկ երկրորդը մշտապես իմ դաշնամուրի վրա է:

1964 թ. նորից ճապոնիա: Իմ առաջին այցելության ժամանակ, ելույթ ունենալով 1000-ինգանոնց երգչախմբի հետ (ես երգում էի Բեթհովենի 9-րդ սիմֆոնիան), հասկացած, թե ինչ հետաքրքրությամբ են ճապոնացիները վերաբերվում հայկական երաժշտությանը, նրանց նվիրեցի «Ծիծեռնակի» և Կոմիտասի երկու երգի՝ «Գնա-գնա» և «Կոււճն առա, ելա սարը» նոտաները: Այդ ժամանակ իմ ճապոնացի բարեկամները խոստացան նոր հանդիպման ժամանակ ներկայացնել իմ դատին հայ մեղեդիների իրենց կատարումը: Եվ ահա նոր հանդիպում, համեզգ, որի ժամանակ հազարավոր ճապոնացիներ երգեցին «Ծիծեռնակը»: Դժվար է արտահայտել իմ հուզումը և ուրախությունը, երբ նայեցի բազմաթիվ երջանիկ դեմքերին, որոնք երգում էին «Ծիծեռնակը» և Կոմիտասի երգերը հայերեն: Ես, չքարցնելով իմ հուզմունքը, լաց եղա: Որքա՞ն գեղեցիկ, որքա՞ն ճիշտ էին երգում նրանք հայկական ժողովրդական երգերը՝ խորն ու նրբորեն թափանցելով մեր ազգային մեղեդու մեջ...

Ինձ նորից ավտոմեքենա տրամադրեցին, որ կարողանայի շոշել, ամբողջ երկրով մեկ: Եղանակը իհանալի էր, մեղմ: ճապոնացիները, ինչպես միշտ, այս անգամ էլ ինձ զարմացրին իրենց հանգստությամբ, ուշադրությամբ, նրբանկատությամբ: Եվ ամենից շատ՝ կանայք: Միշտ

համբերատար, պարտաճանաչ, միշտ պատրաստ օգնության: Սպասարկումը հիմնալի էր:

ճապոնական տները շատ հետաքրքիր են. փոքրիկ այգիներ, գաճաճ ծառեր՝ 10–20 սմ բարձրությամբ, կամուրջներ փոքրիկ գետերի վրա: ճապոնիայում ծաղիկների պաշտամունք կա: Ծաղիկները այստեղ շատ-շատ են, տարբեր երանգներով: Իսկ ի՞նչ հիմնալի ծաղիկներ են աճեցնում նրանք ծաղկամանների մեջ: Գետերում շատ են փոքրիկ, կարմիր ծկնիկները: Ինձ շատ է դուր զալիս ճապոնացիների վերաբերմունքը երեխաների նկատմամբ. նրանք շատ սիրուն են հագնված, անգամ փոքրիկ աղջիկները կրում են կիմոնո, որը շատ թանկ արժե: Նայելով ճապոնացի երեխային՝ դժվար է հասկանալ՝ նրա ծնողները հարուստ են, թե աղքատ: Բոլորը լավ են հագնված:

Երբ մտնում ես ճապոնական հյուրանոց, քեզ անմիջապես կիմոն են տալիս: Ինձ ու Նորային կիմոն նվիրեց մեր իմպրեսարիոն, շատ ծոխուու սիրուն կիմոնո: Մենք անմիջապես հագանք, և Նորան նմանվեց ճապոնուհու: Բացի դրանից նվիրեցին նաև տարի: Դա հատուկ գուլպա է՝ մեկ մատով, ճապոնական կոչիկների համար (բարձր և ցածրակրունկ): Փողոցում բոլորը այդ կոչիկներով են շրջում:

ճապոնիայում գոյություն ունի շատ սիրուն մի սովորություն. հարազատ մարդու մահվան տարելիցին հատուկ պատվանդանի վրա վառում են մոնք և բաց են թողնում գետի վրա՝ մահացածի հոգու փրկության համար:

Մացույամայում մենք նավ նստեցինք և գնացինք Յոկայդո կղզի: ճապոնական ծովը շատ հանդարտ է, և միայն այն ժամանակ, երբ նավը մտնում է օվկիանոս, սկսվում է ուժեղ ալեկոնությունը: Ես զգիտեի այդ մասին և ֆոտոյիշիկով գնացի դեպի նավացրուկ: Անսպասելի իմ թևը բռնեցին ու տարան նավասենյակ՝ գործացնելով վտանգի մասին: Այդ օրերի հիշողությունից է ծովային հիվանդությունը նավի վրա:

Յամերգներ Յոկայդո կղզում: Երկրորդ համերգի ժամանակ դահլիճում 4 հազար հանդիսատեսի համար կատարվեց անսպասելին: Երգում եմ և զգում ինչ—որ տիհած հոտ, նման է զազի: Գլուխս սկսում է ցավել: Յանկարծ նկատում եմ գորգի մեջ, ոտքերիս տակ մի փոքր անցք և նեղ խողովակ: Ես ու Նորան շատ վատ էինք զգում: Բեմի տակ զազի բալոն էր դրված: Սեզ ուզում են հիվանդանոց տանել, բայց մենք հրաժարվում ենք և շարունակում համերգը: Պարզվեց, որ այս դահլիճում պիտի ելույթ ունենար ամերիկյան ջազ նվազախումբը: Բայց տոմսերը չին վաճառվել, բոլորը ընտրել էին դասական երաժշտությունը: Եվ նեգրերը որոշել էին այսպիսի միջոցի դիմել:

ՄԵՆՔ շարունակեցինք համերգը և մեջ հաջողություն ունեցանք:
Իսկ այդ նեզրերին մենք այդպես էլ չտեսանք: Չնայած տիած դեպքին՝
ճապոնական հրուոսահորւթյունը այդ բոլորից չտուժեց:

Մի համերգի ժամանակ, եթե ես հայկական երգեր էի կատարում, ինձ մոտեցավ մի ճապոնացի և անզերեն հարցրեց. «Այդ ե՞րբ դուք որոշեցիք մեր ճապոնական երգերը հայերեն երգել»: Ես զարմացած պատասխանեցի, որ հայկական մեղեղի եմ երգել, որը իմ ժողովուրդը դարեր շարունակ երգում է, իսկ մեծն Կոմիտասը դրանք պարզապես նույտագրել է: «Ոչ, ոչ, դա ճապոնական երաժշտություն է», – իրենն է պնդում ծերունին և սկսում է մի փոքր աղավաղելով երգել: Ես բացատրում եմ, որ հայերը հնդեվրոպացիներ են, պատմում եմ մեր Յայկի մասին և այլն: «Դուք ասում եք, որ ծեր մշակույթը Յնդկաստանից է: Գուցե այս մեղեղին նույն արմատները ունի», – ասում է նա և ավելացնում, որ շոտլանդացիները նույն հնդեվրոպական արմատները ունեն, շատ նման սովորություններ, երգեր, մանավանդ՝ եկեղեցական: Այստեղ մենք ծերունու հետ համաձայնության եկանք, փոխանակեցինք մեր հասցեները և երկար ժամանակաւ բայմականագրական կապ ունեինք:

Եաւասազ մասավագութեան համար կատարեած է բարեկարգ պահանջման համար աշխատավոր աշում են.

«Գոհար Գասպարյանը կողոքադրության տիեզներկան հասցել է ասու-
նաբարձր ասլիճանի: Երկրորդ այսպիսի կողոքադրության համաշխարհային
վոկալ առվեճապում չկա»:

Վերադասում էնթ Տոկիո: Յուրաքանչյուրից մեկում սովորական են Կոշիկներս... Տասնինգ օր հետո ինձ են հանձնում մի փաթեթ, որի մեջ կոշիկներս կին, որա վրա՝ այն քաղաքների փոստատների կնիքները, որտեղ ես համերգներ էի ունեցել իմ հյուրախառների ընթացքում: Այդ ամենը ճապոնական ճշտապահության և ուշադրության իսկական ապացույցն էր»:

Գոհար Գասպարյանի հյուրախաղերի մասին օպերավագան առաջ-
լում շատ մեծ արձագանք է եղել, այդ թվում 1958 թ. հոկտեմբերին Աշ-
խատավլորների համաճապնական երաժշտական ընկերության հա-
տուկ թողարկումը, որն ամբողջովին նվիրված է Գ. Գասպարյանին և
հայկական երաժշտությանը, գրված է երգչուիլու համառոտ կենսագրու-
թյունը և հյուրախաղերի ծրագիրը: Նմանատիպ հրատարակություններ-
նեն թողարկվել Հիլոսիմայի պրեֆեկտուրայի Բանքեր աշխատավորնե-
րի երաժշտական ընկերության և այլ երաժշտական կազմակերպու-
թյունների կողմից:

ԱՐՊՈՆԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

**Հասմիկ Հարուրյունյան
Արվեստաբան**

Րայաստանի ազգային պատկերասրահը՝ հանրապետության ամենախոշոր գեղարվեստական թանգարանը, իր գործունեությունը սկսել է որպես 1921 թ. հիմնադրված Հայաստանի պետական թանգարանի գեղարվեստական բաժին, որի առաջին խումբ ցուցանուշները՝ մի քանի տասնյակ գեղանկարչական ստեղծագործություններ, ծեռօթ են բերվել կառավարության կողմից նույն տարի Երևանում բացված հայ նկարիչների առաջին ցուցահանդեսից:

Այս դժվարին խնդիրների իրականացմանը մեծապես նպաստեցին կառավարության կողմից կատարվող գնումները՝ 1921 թ. Մոսկվայից՝ Խորհրդային Հայաստանի կուլտուրայի տնից փոխանցված հավաքածուն, որի կազմում բացի հայ հեղինակների գործերից ընդգրկված էին ուսև և եվրոպացի վարպետների ստեղծագործություններ, պետական թանգարանային ֆոնդներից (Մոսկվա, Լենինգրադ) տարրեր տարիներին արվող հատկացումները, ինչպես նաև հայագի նկարիչ-քանդակագործների և կոլեկցիոներների շռայլ նվիրաբերումները: 1935 թ. բաժինը, զգալիորեն ընդլայնված ֆոնդներով, վերածվում է Հայաստանի կերպարվեստի ինքնուրույն թանգարանի: 1941 թ. այն վերանվանվում է Հայաստանի պետական պատկերասրահի, իսկ 1991 թվականից կրում է իր ներկայիս՝ Հայաստանի ազգային պատկերասրահ անվանումը:

Այսօր Հայաստանի ազգային պատկերասրահը իր մշտական ցուցադրության քառասուն դահլիճներում ներկայացնում է Հին Եգիպտոսի և Հին Հունաստանի հավաքածուները, հտալիայի, Յուլանդիայի և Ֆլանդրիայի, Ֆրանսիայի XIV–XX դդ. արվեստը, Անգլիայի, Իսպանիայի, Ավստրիայի, Գերմանիայի և այլ երկրների առանձին հեղինակների գեղանկարները, քանդակը, գրաֆիկան, դեկորատիվ-կիրառական արվեստը: Ուշագրավ է ուսւական արվեստի հարուստ հավաքածուն: Մերձավոր և Հեռավոր Արևելքի երկրները՝ Իրան, Չինաստան, ճապոնիա, ներկայացված են հիմնականում կիրառական արվեստի ցուցաննուշներով: Իսկ թանգարանի ամենամեծ բաժինը՝ հայկականը, ներառում է միջնադարյան որմնանկարչության և մանրանկարչության, XVII–XIX դդ. եկեղեցական գեղանկարչության, նոր և նորագույն շրջանների կերպարվեստը և կիրառական արվեստի գրեթե բոլոր ճյուղերը: Թանգարանի ընդհանուր ֆոնդը ընդգրկում է 25000-ից ավելի թանգարանային առարկաներ, որոնք ուսումնասիրվում են գիտական բաժինների կողմից,

Ներկայացվում թեմատիկ և մոնոգրաֆիկ ցուցահանդեսների տեսքով, հրապարակվում կատալոգներում ու ալբոմներում և մասնակցում միջազգային ցուցահանդեսների:

Պատկերասրահի հավաքածուում իր ուրույն տեղն է գրադեցնում ճապոնական արվեստը: Այս ներկայացվում է մի խումբ ճենապակյա և հախճապակյա առարկաներով, փղոսկրյա մանրաքանդակներով, փայտափորագրություններով:

ճապոնական արվեստի առաջին նմուշը՝ հախճապակյա խոր թամ՝ ֆեստոնավոր եզրերով և երկու քառանկյուն դաշտերի մեջ առնված, բնության ֆոնին պատկերված բազմաֆիգուր կենցաղային հորինվածքներով, պատկերասրահի գույքամատյանում նուտքագրվել է 1922 թ.: որպես նվեր քաղաքացի Լիսիցյանից: Նորին կատարումով այս իրը ճապոնիայում և ավելի ուշ Եվրոպայում լայն ճանաչում վայելող Սացունա նահանգի XIX դ. վերջի–XX դ. սկզբի բնորոշ արտադրանք է: 1925–30 թթ. Խորհրդային Միության պետական թանգարանային ֆոնդից (Լենինգրադի բաժանմունք) և Էրմիտաժից ստացվել են տասը ճենապակյա և մեկ հախճապակյա առարկաներ: ճենապակյա իրերը՝ սկսութեղ, սափրովելու թասեր, սկահակներ, պատրաստված են XVIII–XIX դդ. Դիմեն նահանգի Արիտայի արվեստանոցներում: ճենապակու արտադրությունն այստեղ 1617 թ. իհմնադրել է կորեացի վարպետ Հի Սան թեյը՝ Արիտայի շրջանում հայտնաբերելով սպիտակ կավի հանքեր: Պատկերասրահի այս խմբի բոլոր առարկաներին, բացառությամբ մեկի, հատուկ է ողջ մակերեսը ծածկող դեկորատիվ մկարագարդում՝ ենթաջնառակյա կորալտի, վերջնարակյա արձնաներկերի և ուկեզօծության գուգորդմամբ: Փարթամ ծաղիկները, բռչունները, ծաղկած ծյուղերը, տնականները, սկահակների մեջ տեղադրված ծաղկեփնջերը՝ մեկ ընդհանուր դաշտում և ծևավոր մեծ ու փոքր կարտուշներում, հնչեղ, հագեցած կապույտ, կարմիր, կանաչ գույները, ուկու փայլն առանձնահատուկ կապույտ, կարմիր, կանաչ գույները, ուկու փայլն առանձնահատուկ կապույտ, կարմիր, կանաչ գույները, ուկու փայլն առանձնահատուկ տոնականություն են հաղորդում առօրյա օգտագործման այս իրերին: Մունականություն են հաղորդում առօրյա օգտագործման այս իրերին: Մունականություն են հաղորդում առօրյա օգտագործման այս իրերին: Կարմրով մկարված են ծաղկած ծյուղեր, մանր ծաղիկներ, տերևներ ու թփեր: Նկարագրություն ազատորեն տարածվում է իրանի ողջ մակերեսով և շատ ներդաշնակ է առարկայի պարզ, շրջահոսուն ուրվագծին:

1950 թ. ազգային պատկերասրահին մեծ նվիրատվություն արեց ուղմինահայ կոլեկցիոներ Վ. Բարաքյանը: Յավաքածուն ներառում է Ռումինահայ հայտնի գեղանկարիչների ստեղծագործություններ և տարբեր ժողովուրդների դեկորատիվ–կիրառական արվեստի բազմաքանակ

նաուչըներ, այդ թվում նաև ճապոնական: Նվիրած գործերից են XIX դարի վերջի Սացումայի արվեստանոցներից մեկում արտադրված հախճապակյա առագաստանավակալը և ճենապակյա ինը իրեր: Դրանցից երեքը՝ նյութի տեքստուրայով, կատարման եղանակով և նկարազարդման թեմատիկայով՝ հեծյալ և հետիոտն զինվորների մարտի տեսարաններ, միավորվում են արտադրման մեկ խմբում: Պատկերներից բացի դրանց ձևավորման մեջ օգտագործված է ծեփակերտվածքը. փոքրիկ վիշապները խաղաղ տեղավորվել են սկահակների վզիկներին: Ուշագրավ են երկակի դդմածն, կորալտե ֆոնին ուկեօծ նախշերով անորը (XVIII դ. վերջ), ենթաջնարակյա երկնագորչով նկարված թոշող կարապներով մեծ սկուտեղը (XVIII դ.) և այլն: Դավաքածուի երկու ֆիգուրներից մեկը պատկերում է Բուդյա Ամիդային՝ ծալապատիկ նստած, ծեռքերի ափերը առջևում իրար մոտեցրած, մտասույզ հայեցության մեջ անշարժացած, լիակատար անդորրի հոգեվիճակում: Դագուստը նկարազարդված է երկրաչափական և ոճավորված խոշոր ծաղիկներից կազմված զարդանախշերով՝ արծնաներկերի բազմագույն գամմայով:

Երկրորդ ֆիգուրը նույնպես ներկայացնում է ծալապատիկ նստած տղամարդու՝ խոժոված դեմքով, հոնքերը կիստած, աչքերը լայն բացած, աջ ծեռքին՝ փոքրիկ մտրակ (?): Կուրծքը մերկ է, գլխից հջոնող և ողջ ֆիգուրը պարուրող գգեստը Բուդյայի հանդերձի նման ձևավորված է զարդանախշերով: Դեմքը և մարմինը գունավորված են: Այս աշխատանքը մուտք է գործել թանգարան որպես «Տղամարդու ֆիգուր», սակայն կերպարի ընդգծված առանձնահատկությունները, հոգեվիճակի սուր, նույնիսկ գրուտեսկային բնույթը ենթադրում են կոնկրետ պերսոնաժի բացահայտում: Նման մեկնարանությամբ են օժտված Արևելքի ժողովուրդների արվեստի պետական թանգարանի (Մոսկվա) բուդյայական վանական Դարումային պատկերող բրոնզե և երկու փայտե (նեցկե) ստեղծագործությունները: Դամաձայն նրա մասին ստեղծված բազմաթիվ լեգենդներից մեկի՝ իմաստուն Բուդյա Դարուման, ցանկանալով լիովին մեռցնել իր մարմինը, զրկում է իրեն քնից, բայց և այնպես քնում է: Արբանանալով, ցասման մեջ նա պեկում է և դեն նետում թարթիչները: Բուդյան հավաքում է և ցանում դրանք, որոնցից առօրւ են քունը փախցնող թեյի թիեր: Այս երկու արձանները ձևավորման մեջ ունեն ոճական նմանություն և ամենայն հավանականությամբ արտադրվել են XIX դարում մեզ դեռևս անհայտ (թերևս Սացումա) ճենապակու արվեստանոցում:

Եվս տասներկու ճենապակյա և հախճապակյա առարկաներ 1977թ. մուտք են գործել թանգարան որպես կոլեկցիոներ Գ. Սողոմոնյանի դեկորատիվ-կիրառական արվեստի մեծ հավաքածուի մաս կազմող իրեր: Դրանք XIX դարի երկրորդ կեսի Արիտայի և Սացումայի արտադրություններից են և պահպանվում են ՀՀ պատմական ժառանգության համար առաջարկված պահպանավայրությունում:

ռանքներ են՝ կենցաղային թեմաներով, ծաղկներով և թռչուններով նկարագրադպած գործեր՝ ափսե, թեյի բաժակներ իրենց պնակներով, փոքր սկահակներ, սկուտեղ և զույգ սափորիկներ, որոնք պատրաստված են Կազա նահանգի Կուտանի կենտրոնում XIX դարի երկրորդ կետին: Դինգ հախճապակյա իրեր (XIX դ. Սացումա) գնվել են պատկերասրահի կողմից 1983–1985 թթ. մասնավոր անձանցից, և մեկ զույգ դեկորատիվ սկահակներ փոխանցվել են Յայգլիհամերգի 1987 թ. Յայսատանի մշակույթի նախարարության հրամանով: Զվածե իրաններով այդ սկահակների սպիտակ ֆոնին պատկերված են «խոռ» փյունիկներ, որոնք ազատորեն ճախրում են ծաղկած ճյուղերի և առանձին խոշոր ծաղիկների միջև: Գունային լուծումը՝ կապույտ, կարմիր, ոսկի, նկարագարդնան եղանակը, ինչպես նաև բրոնզե շրջանակումը (բռնակներ, հենարան) բնորոշ են XIX դարի Եվրոպա արտահանվող Արիտայի արտադրանքին: Թեև պատկերասրահի հավաքածուում ընդգրկված են ուշ շրջանի և սահմանափակ արտադրակենտրոնների ծենապակյա և հախճապակյա առարկաներ, դրանք որոշակի պատկերացում են տալիս այս երկու ոլորտների ճապոնական վարպետների մտածողության, հնարքների և ճաշակի մասին:

Անհի և ճաշակի մասին:

ճապոնական կիրառական արվեստը թանգարանում ներկայացված է նաև XIX դարի մի շարք փոլոսկրյա ստեղծագործություններով, որոնք գտնվում են Վերջ հիշատակված ռումինահայ Կոլեկցիոներ Վ. Բառաքյանի ֆոնդում (1950 թ.):

Խաքյանի ֆոնդում (1950 թ.):
Առանձնահատուկ ուշադրության է արժանի ծեռնափայտի գլխազարդը: Դա հանդարտ, հոսուն գծերով կերտված ծերքի դաստակ է, կիսաբաց ափով, որի մեջ ծկուն մատների միջև տեղափորված է ծովախոեցետին՝ ամենայն մանրամասների վարպետ մշակումով: Յորվածուանու չանչերը լայնակի հպված են դաստակին՝ փոքր-ինչ իշնելով ծեռքի վրա, որի միջին հատվածը պարուրված է գործվածքի նրբին ծալքերով: Անշուշտ, ոսկրի գեղարվեստական փորագրման փայլուն նմուշ է այս առարկան, իսկ նկատի ունենալով, որ խեցգետինը կենդանակերպի չորորդ նշանն է, կարելի է ենթադրել, որ այն կրում է խորիրդանշական ինմաստ: Ենթադրվում է նաև, որ ստեղծագործության մտահղացման աղբյուր է հանդիսացել «Գիրք հազար ծեռքերի» ծեռնարկը:

րոնց ազգային զգեստը գուրկ էր գրպաններից և անպայման ունեցել է գոտի (Հեռավոր Հյուսիս, Հունգարիա, Եթովպիա): Սակայն նեցկեի նախատիպը թե՛ կիրառական և թե՛ ծևավորման առումով, հավանաբար, միջնադարյան Չինաստանի Մին դարաշրջանի (1368–1644 թթ.) «չժույցգի» անվանվող առարկաներն են:

Իրենց լակոնիկ և նրբին կատարմամբ՝ նեցկեները դարձան ճապոնիայում արվեստի կատարելապես նոր ձև, որի ակունքները սերվում են ազգային հաստոցային քանդակից: Նեցկեի զարգացման պատմությունն ընդգրկում է մոտ 3 դար՝ համարյա ողջ Տոկուգավա ժամանակաշրջանը (1603–1863 թթ.), իսկ նրա գեղարվեստական ծաղկումը ներառնում է XVIII դարի կեսերից մինչև XIX դարի կեսերն ընկած ժամանակաշրջանը:

Նեցկեները պատրաստում էին փայտից, ոսկրից, լաքից, ճենապակուց, մետաղից, զանազան քարերից, ընկույզի կեղևից և այլն: Սակայն տարածված և սիրված նյութը փայտն ու ոսկորն էին, քանզի նրանց բնական հատկություններն ու ֆակտուրալ գեղեցկությունը առավել էին համապատասխանում նեցկեների ստեղծման օրենքներին: Բացի այդ, փայտի որոշ տեսակները՝ սամշիտը, բաց վարդագույն բալենին (սակուրա), կեչին, ինչպես նաև ոսկորը, որպես նյութ, ունեին երկարակեցության և առողջության բարենադրնան խորհրդանիշի իմաստ: Նեցկեները պետք է թեքև և ամուր լինեին, փոքրաչափ և ողորկ: Անհրաժեշտ էր նաև իրը ստեղծելիս այնպես տեղադրել քուղակապի անցքերը, որ չխախտվեր հորինվածքի անբողջականությունը: Նեցկեների հիմնական տեսակների մեջ առավել բազմաքանակ են ծևավորները (կատարորի), որոնց և նախապատվություն էին տալիս ճապոնացի վարպետները:

Կատարորի տեսակն ընդգրկում է մարդկանց, կենդանիների, թռչունների, ծաղիկների, պտուղների պատկերումներ: Զևավոր նեցկեներ ստեղծելիս վարպետ-փորագրիչները պլաստիկայի (պլաստիկա-քանդակագործության մեջ մարմնի, իրի և նրանց մասերի ռիթմիկ շարժումները հաղորդելու արվեստ) լեզվով արտահայտել են իրենց զգացմունքները, վերաբերմունքը մարդու, բնության հանդեպ: Յայտնի է, որ վարպետները մասնագիտանում էին ըստ որոշակի սյուժեների, հաճախ աշխատում ընտանիքներով և սերմնեսերունդ փոխանցում սովորույթներն ու կատարողական հմտությունները: Եվ միայն մեծ վարպետներն էին, որ անդրադարձալով առասպելական հերոսներին, պատմական ու իրենց կողքին ապրող անձնավորություններին, կենցաղային առօրյա պատկերներին՝ ստեղծում էին տարբեր սյուժեներով նեցկեներ:

Նեցկեների ստեղծման առաջատար դպրոցներից էին ճապոնիայի առավել զարգացած տնտեսական և մշակութային կենտրոնները՝ եղու

(այժմ Տոկիո), Օսական, Կիոտոն, որոնք մինյանց վրա փոխներգրծելով հանդերձ առանձնացել են իրենց ավանդությունների հնքնատիպությամբ, յուրօրինակ առանձնահատկություններով, ոճերի բազմազանությամբ: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև իրենց որակով և գեղարվեստական արժանիքներով մի շարք գավառական դպրոցներ՝ Նագոյան, Ցուն, Յամադան, Իվամին:

Փղոսկրյա փորագիր նեցկեներո հավաքածուի մեջ ութն են և պատկանում են կատարորի տեսակին: Անմիջական դիտարկումներն արդեն բացահայտում են դրանցից հինգի ոճաբանական նմանությունը: Բոլորն էլ փոքրաչափ են՝ 3,5 սմ բարձրությամբ: Դրանց հատուկ են դեմքի մինչկայի մեկանբանան ընդհանրությունը, կերպարների հուզականությունը, դեկորատիվ միջոցների օգտագործման զավածությունը, իսկ հորինվածքների մշակման մեջ որոշիչ պլաստիկական սկզբունքն է: Բոլորն էլ բնույթով կենցաղային են, սակայն յուրաքանչյուր կերպար իր մեջ կրում է բարոյական, փիլխոփայական, բարենադրական իճաստ, որն, անտարակույս, XVII-XIX դդ. ճապոնիայում տարածված տարրեր կրոնների (բուդդայականություն, կոնֆուցիականություն, դառսիզմ, սինտոիզմ), ինչպես նաև ժողովրդական հավատալիքներից բխող գաղափարների և պատկերացումների արդյունք է:

Նեցկեներից մեկը պատկերում է ծնկաչոր ծերունու՝ աղոթքի պահին: Մեղմ, սահուն շարժումով ընդգծված են նրա իրանը, գգեստի լայն թափող թեքերի մեջ թաքնված ծերերը: Պլաստիկ մշակումը լրացված է զգեստի փորագիր, սևացրած եռատերև զարդանախշով, նրբակերտ են սանրվածքը, մորուքը:

Այս մանրաքանողակը զարմանալի նմանություն ունի XVII դարի թափառաշրջիկ բուդդայական քահանա-քանդակագործ Ենկուի «Միանձնուիի» փայտե արձանի հետ՝ աղոթքի դիրքում գտնվող, թեքերի ծալքերի մեջ թաքցված ծեռքերով հորինվածքի՝ խոնարհության, հնազանդության ընդհանրացված մեկնարանությամբ: Եվ կարևոր է ոչ միայն արթյան ընդհանրացված մեկնարանությամբ: Եվ կարևոր է ոչ միայն արթյան նմանությունը, այլև այն հոգևոր կապը, որը ստեղծվել է ամուր տաքին նմանությունը, այլև այն հոգևոր կապը, որը ստեղծվել է գեղագիտական ավանդույթների և դրանց ժառանգության շնորհիվ:

Հաջորդ նեցկերի հորինվածքի նտահղացումը ներկայացնում է պատկառելի, տարեց թավանորուք մարդու: Ազ ծեռքում ունի քառամաստկառելի, տարեց թավանորուք մարդու: Ազ ծեռքում ունի քառամաստկառելի, տարեց թավանորուք մարդու: Կյուն փաթեթ, իսկ ծախս խաղաղ որել է ծնկին: Ղեմքի երանելի ժայտը կերպարին հաղորդում է անվորով հոգեվիճակի արտահայտություն:

Մտորումների մեջ կանգ է առել պատանին: Նրա աջ ծեռքում բացված թղթագլան է, ծախով դեմքի մոտ պահում է տերեկած հովիար: Նեցկառած թղթագլան է, ծախով դեմքի մոտ պահում է տերեկած հովիար: Նեցկերի դեկորատիվ արտահայտչականությունը շեշտված է հագուստի օծիկելի դեկորատիվ արտահայտչականությունը:

քի ուղղահայաց, թղթագլանի հորիզոնական և հովհարի շեղ փորագրված գրաֆիկական լեզվի շնորհիվ:

Աջ ձեռքին հենված, ձախով թղթագլանը կրծքին սեղմած, գլուխը թեքած՝ նստած է մեկ այլ պատաճի՝ սրածայր գլխարկով: Թվում է, թե նա հարցական հայացքով ունկնդրում է իր գրուցակցին: Քանդակային մշակման է Ենթարկված ֆիգուրի ողջ մակերեսը, հատկապես զգեստի խոր ծալքերը: Դեկորատիվ միջամտությունը աննշան է: Դագուստի վրա փորագրված են սև ներկով գունավորված, միմյանցից հեռու ցրված փնչավոր գծանախշեր:

Նման զարդանախ ունի և հաջորդ նեցկեն, որը պատկերում է տոքեռը լայն դրած, ծանր պարկը ձեռքերի մեջ առած տղամարդու: Դորինվածքը ամբողջական է, կառուցվածքը՝ առավելագույնս ընդհանրացված:

Դինգ նեցկեներից յուրաքանչյուրն ավարտուն մի կերպար է՝ իր ներքին աշխարհով և արտաքին առանձնահատկություններով, իսկ օգտագործված գեղարվեստական միջոցները գուստ են և արտահայտիչ: Կարելի է համոզվածությամբ ասել, որ դրանք ստեղծվել են մեկ վարպետի ձեռքով: Ի դեպ, նեցկեների հիմնամասերում կան հիերոգլիֆներից կազմված համակցություններ, որոնք, հավանաբար, վարպետի կամ ստեղծման վայրի նշանն են:

Մարդկային ֆիգուրներ են պատկերում նաև հաջորդ երկու նեցկեները, որոնց ոճական միասնությունը և գեղարվեստական լուծումը թույլ են տալիս դիտել դրանք որպես մի հեղինակի ստեղծագործություն: Դրանցից մեկը ծալապատիկ նստած տղամարդ է: Ձեռքերով պահում է հարթ մակերեսին դրված պատառոտված պարկ: Ինչպիսին է նեցկեի խորիդաբանությունը, պարզ չէ: Գուցե պատկերվածը կենցաղային տեսարան է, գուցե գրական կամ առասպելական մոտիվ: Դայտնի է սակայն, որ մի քանի այլ առարկաների հետ մեկտեղ պարկը որոշակի ատրիբուտ է ծառայել ծապոնական դիցաբանության երջանկության յոթ աստվածներից երկուսի՝ Դայկոկուի ու Յոտեհի և քանու աստված Ֆուտենի կերպարների պատկերագրության մեջ:

Կարծատև հանգստի պահին է պատկերված երկրորդ նեցկեն մարմնավորող անձը՝ ծանր պարկը ուսին գցած կիմոնոյով տղամարդը: Դեմքի արտահայտությունը, դիրքը արտակարգ խոսուն են: Այս գործերում ակնհայտ են փորագրիչի փայլուն վարպետությունը, նյութի տիրապետման ազատությունը: Ֆիգուրների հիմնական ծավալները, ամենաանկատ անցումներն անգամ անթերի են կատարված՝ նեղմ, կլոր այտեր, բարձր, ուղուցիկ ծակատներ, սահուն շրջագծված կավակներ: Փղոսկրի բնական գույնը և տեղ–տեղ թեթևակի գուներանգումը ստեղծում են գունաստվերային խաղ, որն ակտիվացնում է ծավալների մոդելավորումը:

Վերջին նեցկեն պատկերում է դևի դիմակով նստած տղամարդու: Սարսափազդու դիմակի գրոտեսկային բնույթը շեշտակի հակադրվում է ծնոքեղո ծնկներին դրած, հանգիստ նստած ֆիգուրին: Դեռ, որի ծագունը կապված է հանդերձյալ աշխարհի մասին եղած կրոնական պատկերացումների հետ, հաճախ է պատկերվել նեցկեներում: Այն ընկալվել է որպես մահացողի ոգի, որպես չար ուժ կամ չար աստվածություն: Տոկուգավա ժամանակաշրջանում այդ կերպարի պատկերագրությունը եղել է բավականաչափ կայուն: Կոտոշներով մարդանման էակ՝ սրածայր ժանիքներով, մեծ, ականջներին հասնող բերանով: Մասամբ սևացրած ստվերագծերով մշակված է երկար, ուսերին թափվող սանրվածքը, կարմրով ներկված է բերանը: Կիմոնոյի վրա փորագրված են սոճու ջուղեր՝ զարդանախշ, որ հատուկ էր ճապոնիայում թափառական դերասանների հագուստին:

Ճափաքածուի երկու կապիկներ պատկերող մանրաքանդակն ունի նեցկեներին բնորոշ անցք, քայլ հորինվածքային լուծումով այն դասկում է օկիմոնո կոչվող փոքրիկ արձանիկների շարքը, որ ծառայում են բնակարանների ինտերյերը զարդարելուն:

Բոլորաձև պատվանդանից վեր են բարձրանում հնդկեղեգի չորս ճյուղեր: Ենկամ ճյուղին նստած է մի կապիկ և երկու թաթով պահում է գլխիկայր դիրքով մեկ ուրիշ կապիկ: Միտեմատիկ լուծված ֆիգուրները դիտվում են հիմնականում դիմահայաց: Առաջին հայացքից այս խումբն ընկալվում է որպես մայր կապիկն և իր ծագուկին պատկերող միանգայնան պարզ, բնական տեսարան: Ավելի մանրամասն դիտարկումները ի հայտ են բերում առանձնահատկություններ, որոնք թույլ են տալիս բացահայտել տեսարանի սյուժետային հիմքը: ճապոնական մի առասպել պատմում է կախարդական ուժով օժտված Սահյուկի կապիկ մասին, որն ուներ հնդկեղեգի փայտ և կարող էր ցանկացած չափով երկարացնել այն, իսկ վտանգի պահին իր բրդի մազերի փնջիկից այնքան կապիկ գոյացնել, որքան մազ կար: Մանրաքանդակի երկու ֆիգուրներն ել պայմանականորեն են մեկնարանված, սակայն նստած կապիկ անատոմիան մոտ է բնականին, նրա մարմինը, պոչը մշակված են նրբին գժախսադեմուտ և բնականին, նրա մարմինը, պոչը մշակված են նրբին գժախսադեմուտ է բնականին: Գուցե մեր արձանիկի սյուժեն այս առասպելից է սերվում, և նստած կապիկ թաթերում հենց նոր գոյացած կապիկ է:

Փղոսկրյա աշխատանքների խմբի վերջին գործը նույնպես օկիմոնո տիպի արձանիկ է: Կլոր պատվանդանին կանգնած ծկնորսը «ցուցադրում է» կրծքի մոտ և գլխից վեր պահած ծկները: Նրա դիրքը, դեմքի անկեղծ ժայիտը բացահայտում են բարեհաջող ծկնորսության վաքի անկեղծ ժայիտը բացահայտում են բարեհաջող ծկնորսության վաքի ապրող մարդու տրամադրությունը: Ռեալիստորեն մեկնարանված

արձանիկը գուներանգված է կարմրով, կապույտով, տեղ-տեղ՝ ոսկով, ինչի շնորհիկ այն ծեռք է բերել կենսալիություն և անմիջականություն:

1994 թ. ամօնը պատկերասրահում տեղի ունեցավ հիշարժան մի իրադարձություն: Հայաստանում ճապոնական մշակույթի փառատոնի շրջանակներում այստեղ բացվեց «Ուտագավա դպրոցը. Ուկիյո-է» ցուցահանդեսը: Հայքարվեստասերներն ինարավորություն ստացան ծանոթանալու ճապոնական փայտափորագրության ականավոր վարպետների արվեստին: Ավելին՝ ցուցահանդեսի տնօրեն Տոչիրո Յաձիրին «Ուտագավա» ընկերության կողմից Հայաստանի ազգային պատկերասրահին նվիրեց XIX դ. գունավոր փորագրությունների 127 թերթ, ինչպես նաև ընկերության առաջնորդ Տադասի Գոհնոյի արվեստանոցի Երիտասարդ նկարիչների յոթ աշխատանք:

1603–1868 թթ. ժամանակաշրջանում, որը նապոնիայի նոր մայրաքաղաքի անունով կոչվեց Էդո, նշանավորվեց արվեստի և գրականության սրբնաբար վերելքով: Գյուղերի կազմալուծումը և քաղաքների բուռն աճը պայմանավորեցին խոշոր սոցիալ-տնտեսական փոփոխություններ, սկսեց ծևավորվել նոր, առևտրական բուրժուազիայի դասը: Գյուղացիների հետ մեկտեղ դեպի քաղաքներ էր ուղղվում սամուրայությունը և այստեղ հաստատվում որպես արիեստավոր, ուսուցիչ, նկարիչ, գիտնական: Արտաքին աշխարհից գրեթե լիակատար մեկուսացման պայմաններում ֆեոդալական արիստոկրատիան վերջին ծիգերն է գործադրում պահպանելու համար իր ավանդական արտոնությունները: Խսկ նոր, տարադաս հասարակությունը նոր փիլիսոփայական և սոցիալական ուսմունքներ է առաջ քաշում, նոր գաղափարախոսություն առաջադրում գրականությանը, նկարչությանը, թատրոնին: Արվեստն առավելագույն դեմոկրատանում է, գեղագիտական հայացքները արտահայտություն են գտնում ուկիյո-է ուղղության մեջ, հայտնվում են զանազան դպրոցներ-խմբավորումներ, որոնցից մեկն էր Ուտագավա դպրոցը: Ուկիյո-է՝ «առօրյա կյանքի պատկերներ», անվանման մեջ արտացոլված է նրա խորքային եռթյունը: Այս բառը փոխառված է բուդյայական տերմինաբանությունից, որտեղ օգտագործվել է մարդու անցողիկ կյանքը բնորոշելու համար: Էդո շրջանի պոեզիայի, նկարչության, թատրոնի և հատկապես փայտափորագրության մեջ նարմնավորվեցին այդ ուղղության հատկանշական գծերը: Փողոցի տեսարանները, ժողովրդական տոնակատարությունները, «Կարուկի» ժողովորդական թատրոնի բազմագեղ աշխարհը, դերասանների դիմանկարները, գեղեցկուիկների պատկերները, բնությունը՝ իր բոլոր դրսնորումներով, սահմանեցին փորագրությունների թեմաների շրջանակները:

Փորագրության ստեղծման ընթացքին, բացի նկարչից՝ գծանկարի հեղինակից, նաևնակցում էին փորագրիչ և տպագրիչ Վարպետները։ Փորագրիչը արտաքին կողմով փակցված գծանկարի վրայով կտրում էր սակուրայի տախտակը, յուրաքանչյուր գույնի համար՝ առանձին։ Տպագրիչը բոնձե մածուկով խառնված հանքային կամ բուսական ներկով ծածկում էր մակերեսը և ծեռօղով տպագրում թերթը։ Յուրաքանչյուր գծանկար կարող էր ունենալ «հեղինակային» համարվող մինչև 200 տպվածք։ Նախկինում փորագրությունը միատոն էր, երբեմն գունավորվում էր ծեռօղով։ 1740-ականներին տպագրության մեջ ներմուծվեցին Վարդագույն և կանաչ ներկերը, իսկ 60-ական թթ. արդեն տեխնիկապես կատարելագործվում էր բազմագույնը։

Գունավոր փայտափորագրության զարգացման պատմության մեջ անգնահատելի է մեծ նկարիչներ Յարունոբուի, Ուտամարոյի, Յոկուսայի, Սյարակուի դերը։ Նրանց ստեղծագործությունը կազմում է համաշխարհային արվեստի ոսկե ֆոնդը։ Այս նկարիչները, ինչպես և նրանց աշակերտների ու հետնորդների գգալի մասը, ստեղծագործաբար վերահնատավորելով անցյալի հարուստ ժառանգությունը, արտահայտում էին գեղեցիկի իրենց ըմբռնողությունը և արտացոլում ճապոնական հասարակության դեմոկրատական շերտերի աշխարհայացքը։ Այս նկարիչների անունների հետ է կապված Եվրոպայի՝ ճապոնական համարյա անձանոթ արվեստի հայտնագործումը XIX դ. վերջում։ Հետաքրքրությունը և խանդավառությունը նրանով չափազանց մեծ էր։ Իմպերիոնիստ նկարիչներ Մանեն, Դեգան, Ունուարը, Մոնեն և շատ ուրիշներ հավաքում էին ճապոնական ծենապակի, հովհարներ, զգեստներ և, իհարկե, փորագրություններ և ուսումնասիրում դրանց դեկորատիվ հատկությունները, հորինվածքային լուծումները, հիանում վարպետների նրբին ճաշակով։ ճապոնիայի և ճապոնական արվեստի ամենաջերմ երկրպագուն էր Վինսենթ Վան Գոգը։ Փարիզի մասնագիտացված պատկերասրահներում իր եղբոր՝ Թեոնի օժանդակությամբ նա ծեռք էր բերում փայտափորագրություններ, պատճենում դրանք, առանձին բերերի պատկերները օգտագործում սեփական կտավներում որպես ֆոն։ Նրա փորագրանկարների հավաքածուն կազմում է շուրջ 400 թերթ, որոնց գերակշռող մասը ստեղծված է Ուտագավա դպրոցի վարպետների կողմից։ Այս ներկայումս պահպանվում է Ամստերդամում՝ Ակարչի թանգարանում։

Կան Գոգի՝ Յոհհոյի (այսպես էին կոչում նրան ճապոնացիները) հոգևոր կապը ճապոնիայի հետ առանձնապես ընդգծված էր երևանյան ցուցահանդեսում՝ ընտրությամբ և ամբողջական ներկայացմանք հենց այն փորագրությունների, որոնք կազմում են նրա հավաքածուն։ Գիտական մարդագննությամբ ուսումնասիրելով հավաքածուն՝ ցուցահանդե-

սի կազմակերպիչները լրացրել էին նրանում բացակայող եռանկարների թերթերը, այդ կազմով ներկայացրել հայ արվեստասերներին: Բացի այդ, ցուցահանութիւնի առանձնահատկությունն այն էր, որ XIX դարի փորագրանկարները ուղեկցված էին մեր ժամանակակից Տաղասի Գոհնոյի յուղաներկ կտավներով, որոնցից առաջին խումբը ընդգրկում էր Վան Գոգի ինքնադիմանկարների մոտիվներով արված, ինչպես նաև Թեովին և նրա կնոջը՝ երեխայի հետ պատկերող դիմանկարները: Դրանց ձևը նկարիչը փոխառնել է ուկիյո-է փորագրություններում տարածված, ձվածն հայելու մեջ արտացոլվող դերասանի դիմանկարի՝ կյոճու (դիմանկարներ հայելու մեջ) տիպից, մասնավորապես Ուտագավա Տոյուկունի III-ի «Այժմեռության հայելի» շարքի թերթերից:

Տաղասի Գոհնոյի կտավների երկրորդ խումբը վերարտադրում է Տոյուկունի III-ի գենձիտ մի շարք եռանկարների հորինվածքներ, որոնցում գործող պերսոնաժներին ընկերակցում են Յոհանն և նրա մտերիմները: Ֆուրուսատո թագավորության ֆանտաստիկ աշխարհում եվրոպացի բարեկամներին հյուրընկալել է Վեհաշուք Գենձի արքայազնը: Նրանք նավակներով գրունում են պարտեզի լճակում, բաց ծով դուրս գալիս, ավարի խեցիներ հավաքող կին սուլակներին հետևում, նվագում, ճապոնական պարեր յուրացնում, գեղեցկատես կանանց հետ զվարճանում...

Այսպես է Գոհնոն փորձում իրականացնել Վան Գոգի՝ ճապոնիան տեսնելու բաղձալի երազանքը և վառ երևակայությամբ ստեղծված պատկերների միջոցով իրական կամուրջ գցել ճապոնիայի և Արևմուտքի մշակույթների միջև:

Դայաստանի ազգային պատկերասրահին նվիրաբերած գունավոր փայտափորագրությունների թվում տեղ են գտել XIX դ. ուկիյո-է ամենահայտնի վարպետներից մեկի՝ Ուտագավա Կունիսադայի (1786–1864) 91 աշխատանքներ: Դառնալով Ուտագավա դպրոցի պաշտոնական առաջնորդը՝ նկարիչը ընդունել է Ուտագավա Տոյուկունի III անունը: Նրա շնորհիվ դպրոցը մեծ հեղինակություն է վայելել: Պատկերասրահում պահպանվող նրա ստեղծագործությունները պատկանում են 1830–1862 թթ. կատարված «Տոկայդոյի 53 կայարաններ», «36 հայտնի գեյշաների հավաքածու», «Ղերասաններ» շարքերին, որոնք բացահայտում են նրա բացառիկ վարպետությունը, գեղարվեստական հնարքների հարստությունը: «Վեհաշուք Գենձի արքայազնի զվարծությունները տաք աղբյուրներում», «Էդոյի Գենձի ժամանցը վաղ աշնանը», «Էդոյի Գենձին զմայլվում է ասագառ ծաղիկներով» և նման այլ անվանումներով նրա եռանկարները պատկերազարդում են Ոյուտեյա Տանեխիկոյի (1783–1842)՝ 1829–1842 թթ. տպագրված հանրահայտ «Կեղծ

Մուրասակին և գյուղական Գենծին» վեպը, որտեղ օգտագործված են «Պատում վեհաշուր արքայազն Գենծի արքայազնի մասին» IX դարակաբի՝ պալատական տիկին Մուրասակի Սիկիբուի դասական վեպի մոտիվները և կերպարները: Այս նկարազարդումների հիմնան վրա նկարիչը փորագրության նոր ժամբ է հիմնել. այն կոչվում է գենծի (կայսերական արքունական տեսարանների պատկերներ), և այս ժամրում նա ստեղծել է հազարից ամելի փորագրություններ:

Գենծիէ, մասյաէ (զինվորների և ճակատամարտերի պատզմութիւ), բիծինգա (բարձրածաշակ գեղեցկուիհների պատկերներ), յակուսյաէ (քատերական պատկերներ), գիզա (ծաղրանկարներ) ժանրերում են աշխատել Տոյոկունի III-ի ժամանակակիցները և նրա աշակերտները, որոնց փայտափորագրությունները ընդգրկված են պատկերասրահի հավաքածուում: Դրանք են՝ Գոտոուտեի Կունիսադան (կյանքի տարեթվերն անհայտ են), Ուտագավա Կունիջոսին (1797–1861), Ուտագավա Կունիսադա II-ը (1832–1880), Ուտագավա Կունիսակին, Ուտագավա Սադաֆուսուն, Ուտագավա Յոսիիկան (բոլորի կյանքի տարեթվերն անհայտ են). Ուտագավա Կունիջիկուն (1835–1900):

Ուկիյո-է փորագրության այս վարպետները, յուրաքանչյուր յուրաքանչյուր ստեղծագործության մեջ վերարտադրել են մարդու առօրյան, սովորյան ու ծիսակատարությունները, բացահայտել գրական և ժողովրդական բանահյուսության կերպարները, նորովի մեկնաբանել բնությունը՝ ներթափակած գործությունները, աշխատանքուն ապահովագրել աշխարհը:

«ՆՈ» ԹԱՏՐՈՆԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԴՐԱՄԱՆ
ՀԱՅ ԹԱՏԵՐԱԳԵՏԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՐ

Ալլա Դամիրովա
Արվեստագիրուրյան թեկանածու

Դասական քնարական դրաման՝ յոկյոկուն, որ թարգմանաբար «Երգեցողություն և մեղեղի» է նշանակուն, ճապոնական ավանդական թատրոնի ամենահնքնատիպ երևույթներից մեկն է: «Նո» թատրոնի ներսում XIV-XVI դարերում կազմավորվելով իրև գեղարվեստական ֆեռոնմեն՝ ճապոնական դրամատիկական այս առաջին ժամրը չեղարող խուսափել որոշակի ազդեցություններից ու շերտարադադրվածությունից: Ցոկյոկուն բավականին բարդ սիմվոլետիկ (չտարերակված) մի համալիր է, որն իր մեջ պաշտամունքային ու աշխարհիկ գրականության բազմաթիվ ուղղություններ է ներառել: Քնարական դրամայի հեղինակները, դրամատիկական որևէ ավանդույթ չունենալով, դասական գրականությանը սահմանակից ոլորտներ ներթափանցելով էին ընդլայնում իրենց ստեղծագործությունների սահմանները: Այսպես՝ մեկ անգամ չեղարկան դասական առանձնահատկությունները նշել են, որ ճապոնական ավանդական քնարերգությունը, մասնավորապես բանկայի ժամրով ստեղծված հայտնի բանաստեղծությունները, կարևոր դեր են խաղացել յոկյոկուի հիմնական ոճական առանձնահատկությունների ձևավորման մեջ: Ինչպես նշատել է ուսուարկան արևելագետն Ն. Կոնրադը, «Ճապոնական գիտության մեջ վաղուց դիտված է, որ յոկյոկուի ողջ գեղագիտությունը, այսինքն՝ այդ ժամրի ոճական հիմնական սկզբունքների տեսության ակունքը, անենից առաջ քաջածանոթ աղբյուրը պոեզիան է: Պոեզիայի գեղագիտությունն էլ հենց ընդհանուր առմանք կանխորոշել է ճապոնական առաջին այս դրամայի ողջ գեղագիտությունը»³⁰:

Աշխարհի հանդեպ անձնական վերաբերունքով ներթափանցված գեղարվեստական կերպար ստեղծելիս յոկյոկուի համար պարտադիր պայման է դառնում զգացմունքային նախասկզբի գերակշռությունը: Դասական պոեզիայի ու դրամայի փոխներթափանցվածությունն այնքան է ակնհայտ, որ XX դարի ողջ ընթացքում Արևմուտքում չին դադարում վեճերն այն մասին, թե որ ժամրին ավելի ծիշտ կլիներ դասել «յոկյոկուն»՝ դրամայի³¹, թե՝³² պոեզիայի: Արժե՞ արդյոք անտեսել այն փաստը, որ ճապոնական քնարական դրաման ոչ թե ընթերցանության համար է

նախատեսված եղել, այլ «Նո» թատրոնի բեմում ներկայացվելու համար: Շատ բան է այս դրամայում «Նո» թատրոնի հիմնական կանոնական սկզբունքներով պայմանավորված, որոնց համաձայն՝ դրամատիկական արվեստն անբաժան է երգարվեստից ու պարարվեստից, բեմանկարը երեք գործողության որոշակի վայր չի վերստեղծում, իսկ զգեստը, դիմաներկը կամ դիմակը ամենից առաջ հերոսի ներքին վիճակն արտահայտելու են կոչված: Գրական ու թատերական ոճատարրերն այս դեպքում իբրև անքակտելի մի ամրողություն են ներկայանում: Պատահական չէ, որ «Նո» թատրոնում որպես թատերագիր մշտապես հանդես են եկել դերասանները, որոնց պարտականությունների մեջ մտնում էր ոչ միայն տեքստի ստեղծումը, այլև երաժշտության հորինումն ու բեմական շարժումների մշակումը: Յուրաքանչյուր թատերագործ ի համար կերպարի հիմնական ուրվագիծն անքակտելիորեն կապված էր այդ թատրոնի գեղագիտական երկու հասկացությունների հետ՝ «մոնունանե» (նմանակում իրերին) և «յուգեն» (թաքնված գեղեցկություն), որոնք իբրև հոգևորի ու տեխնիկայի կատարելության դիալեկտիկական մի միասնություն էին ընկալվում:

«Նո» թատրոնի բեմում հավերժականի ու վերժամանակայինի իդեալ-ներ ներկայացնող թատերագիրներին երբեք չին հետաքրքրում մարդկային կյանքի առանձին կողմները: Սյուժեներում ու գործող անձերի բնավորություններում կերպավորվում էր ողջ տիեզերքը: Անհաղթահարելի մի ծզողությամբ իրականության առավել խորունկ իմաստավորման ծգտելով և սյուժեն իբրև կյանքի իմաստի բանաձև դիտարկելով՝ նրանցից յուրաքանչյուրը սեղմ ծկի մեջ ներկայացնում էր տառապանքի անխուսափելիության ու դրանից ազատվելու ուղիների վերաբերյալ բուդդայականության հիմնական դրույթները պարունակող աշխարհնեկալումը:

Այսպես՝ «Նո» թատրոնի հիմնադիր Կանյամին «Էգուծի» թատերգության մեջ ուրախ, անհոգ թերևաբար կնոջ օրինակով հաստատում է, որ ցանկացած մարդ, իր հոգին ունայն մտքերից ու ցանկություններից ազատագրելով, բացարձակ հանգստության, տրանսցենդենտալ բարձրակետին՝ «նիրվանայի» կարող է հասնել և Բոդհիստավայի՝ իր արժանիքներով ու ծգտումներով հենց իրեն՝ Բուդդային մոտեցող հեելական եակի վերածվել: Իսկ Զենտիկուի «Բայո» դրամայում հեղինակը ցույց է տալիս, որ ոչ միայն մարդը, այլև սովորական ծառը կարող է հոգևոր պայծառացման հասնել: Բուդդայական ուսմունքի որոշ դրույթների վրա պայծառացման հասնել: Բուդդայական ուսմունքի որոշ դրույթների վրա հիմնվելով՝ ըստ որոնց՝ կենդանի եակները վերանարմնավորվում են վեհիմնվելով՝ ըստ որոնց՝ կենդանի եակները վերանարմնավորվում են վեհիմնվելով՝ ըստ որոնց՝ կենդանի եակները հետևյալ կերպարանածնունդների անվերջանալի շղթայում, հեղինակը հետևյալ կերպարանափոխությունն է ներկայացնում: Բանանի ծառի ոգին, ճգնակյաց նափոխությունն է ներկայացնում: Բանանի ծառի ոգին, ճգնակյաց հոգևորականի ներշնչված աղոթքների ակամա վկան ու ունկնդիրը

դառնալով, Բուդդայի սրբազն խոսքերով է տոգորվում և կնոջ փոխարկվելով՝ փորձում բոլորին պատմել իր հոգին համակած զգացումների մասին:

Սոսկ ժամանակավոր հանգրվան է երկրային կյանքը ճապոնական քնարական դրամայի հերոսների համար, և անեն ինչ անցողիկ է այս անցավոր աշխարհում: Զարմանալի մեղեղային չափածո մենախոսություններում նրանք մեղմ թախծով ողջ գոյի անցողիկության ու պատրանքայնության մասին են խոսում.

«Կյանքի հոսանքն է մեզ սովորաբար լրանում,
չենք նկարում անգամ, որ երազ է միայն աշխարհը այս,
և, հիրավի, դիտուր է ճակարտագիրը մեզ վիճակված»³¹:

(Կանամի «Էզուծի», քարզմ՝ Ն. Հարուրյունյանի)

«Իրոք, այս աշխարհում պարրանք է ամեն բան:
Որպես մի կարճ երազ անցնում է կյանքը»³²:

(Զեամի «Կիոցունե», քարզմ՝ Ն. Հարուրյունյանի)

«Օ, ես վաղուց գիրիմ, որ խախուր է այնպես
մեզ վիճակվածը»³³:

(«Ուտո», քարզմ՝ Ն. Հարուրյունյանի)

«Նո» թատրոնի թատերագիրների համար ոչ այնքան արտաքին աշխարհը ներկայացնելու էր կարևոր, որքան այն բացատրել փորձելը: Ակնհայտ է, որ նման աշխարհը նկալումը, երբ ողջ տիեզերքին էր դիմում հեղինակը և բանաստեղծական արտահայտչամիջոցներով աշխարհաստեղծման եռթյունն էր փորձում բացատրել, համապատասխանաբար պիտի բեկվեր դրամայի բոլոր էատարորներում:

Եթե, օրինակ, կոնֆլիկտը դիտարկենք իբրև բնավորությունների, հակադիր հայացքների ու շահերի բախում, ապա վստահորեն կարելի է ասել, որ կոնֆլիկտ՝ որպես այդպիսին, ճապոնական քնարական դրամայում գոյություն չունի: Բայց ավելի ճիշտ կլիներ ասել, որ տվյալ դեպքում միանգամայն այլ կարգի կոնֆլիկտի հետ գործ ունենք: «Դասական նո դրաման չունի կոնֆլիկտ՝ որպես երկու կողմերի բացահայտ հակամարտություն: Նրանում չկա այնպիսի ուժգնության կոնֆլիկտ, ո-

31 Екеку — классическая японская драма, М., 1979, с. 165.

32 Նույն տեղում, էջ 126:

33 Նույն տեղում, էջ 233:

րը... թե՛ իր անձնական ճակատագրի, թե՛ բազմաթիվ մարդկանց կամ հայրենիքի ճակատագրի հանդեպ անդառնալի որոշումներ կայացնելու անհրաժեշտության առջև դներ հերոսին: Բայց նրանում անպայմանորեն կա դրամատիկական լարվածության այն նվազագույնը, որ թույլ է տալիս խաղարկել այն բեմում: Կոնֆլիկտը՝ իրու ներքին դրամատիզմի առկայություն, իրու տրված կյանքային իրադրության ապրումը հերոսի կողմից, այս ամենը, այնուամենայնիվ, առկա են նրանում»³⁴:

ճապոնական քնարական դրամայի պոետիկայի մյուս առանձնահատկությունն այն է, որ նրանում բացակայում է թեմական գործողությունը՝ այս հասկացության դասական իմաստով: Բեմում ներկայացվում է միայն երկու գլխավոր կերպարների՝ սիտեի և վակիի հանդիպումը: Իսկ իմանական իրադրությունները, որոնք, որպես կանոն, գլխավոր հերոսի անցյալին են վերաբերում, ոչ թե խաղարկվում են բեմում, այլ ներկայացվում են խորունկ բանաստեղծականությամբ տոգորված երկ-խոսություններում ու մենախոսություններում:

Այսպիսով՝ խոսքը գերակա է գործողության նկատմամբ: Գործողության ստատիկությունը կանխորոշվում էր «Նո» թատրոնի ողջ գեղագիտությամբ, որով մարմնավորվում էին հավերժականի ու վերժամանակայինի իրեալները, «քանզի ստատիկությունը նույնպես Վեհի կանխագացումն է ու կանխանշանը: Գործողությունը միշտ կոնկրետ և այդպահացումն է ու կանխանշանը: Այդ գործողությունը միշտ կոնկրետ և այդպահացումն է ու կանխանշանը: Այն մշտապես լրիվ է ու ավարտուն: Սահային: Այն կտրված չէ հոդից: Այն մշտապես լրիվ է ու ավարտուն: Սահային: Այն կտրված չէ հոդից: Այն մշտապես լրիվ է ու ավարտունություն է: Ուստիև՝ ճգոտում դեպի անդրաշխարհ»³⁵.

Նախապես մշակված սխեմայի համաձայն՝ յուրաքանչյուրն ունի վարքի իր տրվածքը, որ մի ուղղությամբ է միայն զարգանում: Յուրաքանչյուրը իր որոշակի գործառնությունն է կատարում: Վակին, օրինակ, որ թարգմանվում է որպես «կողքի», միշտ կողքից դիտողի դերում է: Բեմում իր առաջին մուտքի ժամանակ նա պարտավոր է ներկայացնել իմանական իրադրությունների նախապատճերությունը, իսկ գլխավոր հերոսի հետ գործի է են համագործակցում: Նրանցից ոչ մեկը չի փորձում որևէ բան գործի են համագործակցում: Նրանցից ոչ մեկը չի փորձում որևէ բան գործի են համագործակցում: Ավելի հաճախ հարերել մյուսի համար կամ պաշտպանել որևէ մեկին: Ավելի հաճախ բոլոր հերոսները օտարպած են իրարից:

Թատերագիրը թեմ է հանում բոլորի վրա գերակայող միայն մեկ հերոսի (սիտե), որին էլ հենց ենթարկված է թատերգության ողջ գործողությունի (սիտե),

34 Н. Анарина. Японский театр №. М., 1984, с. 80.

35 Т. Юркова. На подмостках Японии. "Современная драматургия", 1990, № 3, с. 179.

թյունը: Ահա ինչու նրա անունը թարգմանվում է իրեկ «գործող»: Գլխավոր հերոսը մշտապես առասպելական անձ է՝ գրավոր ու բանավոր հնագույն ավանդություններից, յուրաքանչյուր ճապոնացու քաջածանոք: Միթոսային ֆարութան այն կազմակերպող ու ամրապնդող կառուցվածքը հանդիսացավ, որը մեծապես որոշեց գլխավոր հերոսի ինքնատիպ մտածողությունը: Գլխավոր հերոսը կոչված էր հանդիսատեսին հասցելու հեղինակի հիմնական փիլիսոփայական աշխարհայացքը: Իր՝ հեղինակի համար առաջնայինը ոչ թե իրական կերպարը, այլ ներկայացվող օրյեկտի ներքին էությունը ցուցանելն էր: Բեմից քարոզվող հիմնական գաղափարն այնպիսի ինքնարակ բնույթ էր կրում, որ կերպարն ինքը հաճախ իրեկ յուրահատուկ նշան, խորհրդանշ էր ընկալվում: Այսպիսով՝ հերոսի նշանային բնույթը շատ ավելի մեծ նշանակություն ուներ, քան ինքնին հերոսը: Ահա ինչու շատ թատերգություններում գլխավոր հերոսը երկու բնությամբ է հանդես գալիս՝ սկզբում՝ իրեկ սովորական մահկանացու, իսկ թատերգության երկրորդ մասում ազատվում է մարմնական թաղանքից և հայտնվում իրեկ անմարմին ոգի:

Գլխավոր հերոսի բնավորության կարևորագույն որակներից մեկը ինքնահայեցողության հակումն է: Բոլոր կողմերից իրեն պարփակող արարչության անսահման տարածություններում մոլորված հերոսն ամբողջովին ներփակված է իր մեջ, իր ներաշխարհում: Գլխավոր հերոսի ներանձնային աշխարհը բացարձականացվում է, և նրա համար չկա ոչինչ ավելի կարևոր, քան սեփական զգացողություններն ու ապրումները. «Զգացմունքների երփներանգումներով է ապրում հերոսը... նա չի ջանում կամքի միջամտությամբ կարգավորել դրանք: Նա տպավորապաշտ է... բացառապես տրամադրությամբ է ապրում, տրամադրությունների այդ հորդումն էլ հենց միայն գնահատում է նա, իրձվում է դրանցով և բանաստեղծական ընտիր ծեզ կերպավորում դրանք: Միմիայն իրենով է նա զբաղված, և իր մեջ ավելի կարևոր որևէ բան չկա նրա համար, քան այդ հպանցիկ տրամադրությունները»³⁶:

Հերոսի համար, որի գոյությունն անբաժանելի է տիեզերական ցիկլերի անվերջ շրջապտույտից, անձնական ընտրության խնդիր գոյություն չունի: Յուսահատության պոռթկումները, խելահեղ արարքները, հոգեկան բեկումները, տիեզերական բնույթ ընդունելով, երբեք իրեն շրջապատող աշխարհի հետ հակադրության զգացողություն չեն ծնում: Սեփական դատապարտվածությունը գիտակցելով՝ նա չի փորձում փոխել իրերի բնականոն ընթացքը, այլ ընդունում է աշխարհն այնպիսին, ինչպիսին այն կա: Տառապանքն ու կորուստները նրան ներկայանում

են որպես մեկ օղակը այն անվերջանալի շղթայի, որն իր ամբողջության մեջ տիեզերական գոյի էռությունն է կազմում:

ճապոնական քնարական դրամայի հերոսին հատուկ է դեպի իր անցյալը անընդհատ վերադարձը: Անցյալը նրա համար միայն հուշերը չեն, այն բանի կարոտը, ինչն արդեն անցել է ու էլ երբեք չի վերադառնա: Նրա համար գոյություն չունի այնպիսի մի բան, ինչպիսին «Եղել է» հասկացությունն է, քանզի անցյալը նրա ներկայի անքակտելի մասն է: Ներքին հայացքով ընդգրկելով անցյալը՝ նա փորձում է բացատրել իր ներկան, գուշակել ապագան, իսկ ժամանակների այդ անընդհատ կապի միջով՝ ծանաչել ինքն իրեն. ով է ինքը, ինչպիսին է այս աշխարհի եկել և ինչպիսին է նրանից գնալու:

Դերոսներից յուրաքանչյուրը յուրահատուկ ծամփորդության է ելնում ժամանակի գետով, բայց այս ծամփորդությունը ոչ թե հոսանքն ի վար է կատարվում, այլ հոսանքն ի վեր՝ դեպի ակունքները: Ժամանակի գետով ընթանալիս նա նորից ու նորից համոզվում է, որ ժամանակի անկանգնելի հոսանքն իր հետ տանում է ամեն բան՝ թե՛ ցանկությունները, թե՛ հույսները, թե՛ կապվածությունները: Մարդու գոյության պատրանքայնության մասին իր խորհրդածությունը համոզում է նրան, որ մարդուն տրված չէ, այդ կապանքներից ազատվելով, փոխել իրերի բնականոն ընթացքը.

«Տիտր այս աշխարհում

Լոկ հավերժական պլույլի է ամեն բան:

Կյամքի պլույլը՝ ինչպես պլույլը ամիվի...

Եկ դրված չէ, անշուշտ,

շրջանն այդ մեզ զանցել»³⁷:

(«Սոյ-Յո ուն», քարգմ. Ն. Հարուրյունյանի)

ճապոնական քնարական դրամայում հերոսը երկար ժանապարհ պիտի անցներ, մինչև որ մարդկային գոյության իսկական իմաստն ըմբռներ: Պատահական չէ, որ թատերգություններից շատերում կերպարներից մեկը որպես աստանդական է հանդես գալիս.

«Թող անձրև ու քամի գիշերն իմ դեմ համի,

դիդագրարակիր աղմկի սաղարի շուրջն աշման,

բռդ որ ջամ ձերմակն է ձանապարի հագել գնում եմ ես»³⁸:

(Կանանի «Սովորք Կոմածի», քարգմ. Ն. Հարուրյունյանի)

37 Եռեկո..., ս. 244.

38 Նույն տեղում, էջ 200:

«Ես քահանա եմ, հավերժական թափառումներն են
ձակադրագիրը իմ»³⁹:

(«Ուզո», բարգմ՝ Ն. Հարուրյունյանի)

Դավերժական թափառականի այս կերպարը, որի համար կյանքի ճանապարհը մի ճանապարի է, որ դեպի հուսահատություն է տանում, առանձնահատուկ փիլիսոփայական հնչողություն է ծեռք բերում: Այդ ճանապարհին հերոսին վիճակված էին լոկ կորուստներ ու բաժանումներ: Այդ ճանապարհին է հենց նրա առջև փուլում անափ օվկիանոս տառապանքի: Այդ ճանապարհին միայն, խարեական պատրանքներից ազատվելով, նա հասու է հարոնում ծշմարտության վեհությանը:

Ծապոնական քնարական դրամայի հերոսի ինքնագիտակցության առանձնահատկությունն այն է, որ նա չի փորձում տարանջատել իրեն շրջապատող աշխարհից, որը յուրաքանչյուր հեղինակ ներկայացնում էր որպես խստագույն մի համակարգ, ուր ամեն ինչ տեղի է ունենում որոշակի օրենքների համաձայն: Աշխարհի կարգը միշտ նույն է մնացել, և նրանում տեղի ունեցող բոլոր երևույթները փոխկապակցված են եղել միմյանց հետ, փոխադարձաբար պայմանավորել են իրար և կրկնվել են անփոփոխ հերթագայությամբ: Այստեղից էլ բխում էր յուրաքանչյուր տարրի առնչակցությունը մյուս բոլոր տարրերի և ողջ աշխարհի հետ: Մարդն արարության անքակտելի մասն էր կազմում, և նրա ներքին ապրումներն անքաժանելի էին աշխարհից՝ ամբողջության մեջ առնված:

Իբրև իիմք ընդունելով ծաղկելու ու թառամելու՝ բնության հավերժ կրկնվող ցիկլերը, որ ոչ սկիզբ ունեն, ոչ վերջ, հեղինակներն ընդգծում էին, որ աշխարհում ամեն ինչ՝ թե՛ մարդը, թե՛ բնությունը, միևնույն օրենքներին են ենթակա:

Բոլոր թատերգությունների գործողությունները ծավալվում են քաց երկնքի տակ՝ երանգներով, հնչյուններով ու բույրերով հագեցած որոշակի բնապատկերի ֆոնի վրա:

Բնության տիրույթը հերոսի հարազատ տարերըն է, այն սնում է նրա գիտակցությունն ու երևակայությունը: Այն նրա կյանքի ուղու անբաժան մասն է, քանզի հենց բնության պատկերներն են իրենց մեջ պահպանում գոյի գաղտնիքները.

39 Նույն տեղում, էջ 234:

«Զգացումները չունեմ ո՞չ խոպը, ո՞չ ծառերը,
բայց բարձրված է նրանց միջ էությունն այն խկական,
որ աչքով չես լրէսնի»⁴⁰:

(«Բայո», բարգմ՝ Ն. Հարուրյունյանի)

Դերոսն անհաղթահարելի պահանջ է զգում բնության տարեթքների հետ շփվելու: Անորոշ ու անբացատրելի զգացումներ են առաջանում նրա հոգում, երբ անշտապ հայեցողությամբ նրան հաջողվում է ակնառու կերպով գիտակցել ու զգալ բնության ու նրա անփոփոխ ու հավերժական օրենքների ներդաշնակությունը: Բնության ամեն մի երևոյք նրա կողմից իբրև մի հայելի է ընկալվում, որում արտացոլվում է ողջ տիեզերքը:

Բնության ու մարդու գլխավոր հատկանիշը փոփոխականությունն է: Ամեն գոյություն անցողիկ է և ենթակա է փոփոխման: Բնությունը հեռուսին հիշեցնում է երկրային գոյության անցողիկության ու հարաբերականության մասին: Աշխարհում ամեն ինչ՝ թե՛ բափվող ծյունը, թե՛ ծովի ալիքը՝ ափի մոտ ճերմակող, թե՛ աշնանային ցուրտ անձրևը, թե՛ հավերժի պես անհուն աստղակից երկինքը, այս ամենն ահա ներկայանում է անհուսալի փխրուն ու անցողիկ: Դերոսը սրա մեջ փորձում է գտնել գոյի ամբողջական իմաստը, այս ամենը նրան Վստահություն է ներշնչում, որ նա ինքը ողջ տիեզերքի անբաժան մի մասնիկն է: Սարդու և բնության զարմանալի փոխներթափանցվածության վկայությունն են հետևյալ տողերը.

«Փոփոխական է բախը միեզ վիճակված և այլ չէ,

բաև փրկուրիմն ու լրերիմը բանանի:

Եվ խելամիդ չէ առ, ով չի դիմում,

որ երազ են այսօք այն ծաղիկները երեկվա...»⁴¹:

(«Առի-առ ուն», բարգմ՝ Ն. Հարուրյունյանի)

ճապոնական քնարական դրամայում նկարագրվող բնության բոլոր երևոյթները հերոսի հոգեկան ապրումներին համապատասխանող ի-նենց կայուն բնութագրումներն ունեն: Իր կյանքի ամենահաճելի պահը հերոսն ապրում է գարնանային փթթումի շրջանում: Կորուստներն ու հիասթափությունները աշնան մռայլ բնապատկերի ֆոնին են ներկա-

40 Նույն տեղում, էջ 183:

41 Նույն տեղում, էջ 244:

յացկում: Անհայտ հեղինակի «Նոնոմիա» թատերգության մեջ չընալ գարնանը արքայազն Գենծին հանդիպում ու սիրում է հերոսուհուն: Կորցնելով արքայազնի սերը՝ մահացած հերոսուհու հոգին ամեն տարի մոայլ ու թախծոտ աշնանային այդ երեկո լքված տաճար է վերադառնում: Յուրաքանչյուր այցելությունը հերոսուհուն ստիպում է վերիիշել սիրո այն հեռավոր տարիները, վերապել իր երիտասարդությունը, որ լեցուն է եղել բուռն զգացումներով: Կիսաքանդ ու լքված տաճարը խորհել է տալիս ողջ գոյություն ունեցողի անցողիկության մասին.

«Հիմա արդեն ցնդել է ամեն ինչ, երազ է այս աշխարհը:
Սիս մեռնում է և լուսարը աշնան լրումի մեջ,
Ծպուռներ ան երգում դեռ ճյուղին սոճու...
Ո՞ւ սպասեն սակայն,
Տիուր է Նոնոմիայի կերպարանը սիրելի,
Գիշերվա ցուրդը քամին դարձյալ կրարձրանա,
ու սիրուդ կլցվի քախիծով անել»⁴².

(«Նոնոմիա», թարգմ՝ Ն. Հարուրյունյանի)

ճապոնական քնարական դրամայի համար, որ միթոսային մտածողության հենքի վրա է ծևավորվել, հատկանշական է հակումը դեպի պատկերավոր խորհրդանշանայնությունը, որը դիալեկտիկական կապ է ստեղծում տարբեր իրերի ու երևույթների միջև: Բոլոր այլարանությունները, որ ներկայացված են բուդդայական ուսմունքի հիմնական պահանջներին համապատասխան, հաստատուն մեծություններ էին, որոնց իմաստները չեն փոփոխվում տարբեր հեղինակների թատերգություններում:

«Նո» թատրոնի թատերագիրների կողմից պատկեր–փոխարերությունների մի ամբողջ համակարգ է ստեղծվել, որում յուրաքանչյուր պատկեր–փոխարերություն իր մեջ հստակ իմաստ է պարունակում և գոյի հսկական էություն է թաքցնում: Կյանքի ունայնության ու վաղանցիկության ամենատարածված խորհրդանշներն են բանանի տերևի, փրփուրի, ակնթարթային կայծի կամ կայծակի փայլատակման պատկերները: Աշխարհի ճանաչողությունը ննանեցվում է պատուհանի, որի միջով քափանցում է աստվածային ճառագող լույսը: Ժամանակավոր օքնանը կամ այրվող կացարանը տառապանքով, բաժանումներով ու կորուստներով լի երկրային կյանքի այլարանություններն են:

ճապոնացի թատերագիրների կողմից մշակված աշխարհայացքն է նախորշել նաև բնմական տարածության առանձնահատկությունները.

գործողության վայրը գրկվում էր աշխարհագրական, պատմական, կենցաղային որոշակիության հատկանիշներից և միշտ պայմանական բնույթ էր կրում: Տարածության պայմանականությունը նրանով էր պայմանավորվում, որ հիմնական գործողությունները հերոսի գիտակցության մեջ էին կատարվում: Իրականությունից վեր գտնվող տիեզերակենտրոն այս տարածությունը հավերժական շարժման ու նորոգման մթնոլորտ պիտի ստեղծեր:

Փիլիսոփայական յուրահատուկ իմաստ էր ծեռք բերում նաև թատերգության ռիթմական կառուցվածքը: Թատերագիր, «Նո» թատրոնի տեսաբան Զեամին պնդում էր, որ հեղինակը պարտավոր է ամբողջությամբ հետևել տիեզերքի ռիթմերին՝ դադարից դեպի աճող արագացում և ուժգնացում՝ դրանց հատուկ անցումներով: Տեսական տրակտատներից մեկում նա շարադրում է թատերգության կառուցման հիմնական սկզբունքը: Այդ տեսության հաճածայն՝ յուրաքանչյուր թատերգություն հինգ դաների էր բաժանվում (ռիթմական հիմնական միավորը «յոկյուլու»—ի) և կառուցվում էր հետևյալ կերպ: Սկզբում ներկայացվում էին ամենահանդարտ ու հավասարակշռված տեսարանները, իսկ վերջին մասը միշտ ծայրահեղ գգացմունքայնությամբ ու արագընթացությամբ էր աչքի ընկնում: Յուրաքանչյուր թատերգություն, ըստ Զեամիի մտահղացման, պետք է ավարտվեր գլխավոր հերոսի պարով, որը նոր հոգեկան ապրումների առավելագույն աստիճանն էր խորհրդանշում:

ճապոնական քնարական դրամայի կառուցվածքում ևս իրենց արտահայտությունն են գտել տիեզերքում կատարվող անվերջ շրջապտույտի և պարուրած շարժման ամբողջականության ու անընդհատության մասին պատկերացումները: Յիմնական իրադարձությունները թատերգություններում ներկայացվում էին եռակի մոտեցմամբ. սկզբում՝ որպես հեռավոր հիշողություն, այնուհետև՝ որպես միանգամայն իրական պատմություն, և դրանից հետո է միայն, որ ներկայացվող իրադարձությունը փիլիսոփայական հնչողություն էր ստանում:

Ավարտելով ճապոնական քնարական դրամայի առանձնահատկությունների ու գեղարվեստական հիմնական արտահայտչամիջոցների համարոտ բնութագրումը՝ հարկ է նշել, որ այն հեղինակների համար, որոնց թատերգությունները կրոնական ու գեղագիտական որոշակի կանոնների շրջանակներում էին ստեղծվում, իսկական արվեստի բարձունքներին հասնելու միակ միջոցը գոյի ամբողջական հոսքին առնչած էր: Այս պատկերացումներն են ահա իրենց արտահայտուկից լինելու էր: Այս պատկերացումներն են ահա իրենց արտահայտությունը գտել ճապոնացի թատերագիրների մի ողջ փաղանգի ստեղծագործության մեջ, արվեստագետներ, որ առանձին իրերի ու կերպարների աշխարհը տիեզերական միասնականության սկզբունքին ենթարկե-

ցին: Վերջում անհրաժեշտ է ավելացնել, որ տվյալ հոդվածում ի մի են բերվել այն առանձին կոնցեպտուալ մոտեցումները, որոնք հեղինակի կողմից ներկայացվում են Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ուսանողներին՝ «Արևելյան թատրոնի պատմություն» առարկայի շրջանակներում:

ԿԻՆՈՓԱՌԱՏՈՒԵՐ

***Միքայել Ամիրխանյան**
Բանասիրական գիլությունների դոկտոր, պրոֆեսոր*

Բապոներենի ուսուցումը Հայաստանում՝ որպես մասնագիտություն, բարձրագույն կրթությամբ թարգմանչների պատրաստումը, նկատելիորեն ակտիվացրեցին Հայաստանում ճապոնիայի նկատմամբ ուշադրությունը և, հակառակը, ճապոնիայում՝ Հայաստանի նկատմամբ: Հայաստանի անկախության ճեռքբերումից հետո առաջացավ դեսպանատների և հյուպատոսությունների մակարդակով միջպետական կապեր հաստատելու պատմական անհրաժեշտությունը: Ճապոնիայի դեսպանատումը (նստավայրը՝ Մոսկվա) դիվանագիտական գործունեության հետ մեկտեղ հանդիսացավ նաև Հայաստանում մշակութային միջոցառումների հովանավորն ու կազմակերպիչը:

Այդպիսի միջոցառումներից մեկն էր կինոփառատոնների կազմակերպումը: Առաջին ճապոնական կինոփառատոնը տեղի ունեցավ Երևանում 1999 թ. հունիսի 18–22-ին: Հայ հանդիսատեսը ինչ–որ չափով ծանոթ էր ճապոնական կինոարվեստին Խորհրդային Միության օրոք ցուցադրված կինոնկարներից, հատկապես ճապոնացի հանրաճանաչ ռեժիսոր Ակիրա Կուրոսավայի ֆիլմերի հետ: Սակայն ուսւերեն մակագրերով ճապոնական անգրաքննական ֆիլմերի ցուցադրումը մեզ մոտ նորություն էր: Այդ պատճառով փառատոնը ընդունվեց շատ մեծ հետաքրքրությամբ:

Փառատոնի կազմակերպիչներն էին Ռուսաստանի Դաշնությունում և Հայաստանում ճապոնիայի դեսպանությունը, ճապոնական հիմնադրամը, Հայաստանի մշակույթի նախարարությունը, Երևանի հումանիտար ինստիտուտը և «Մոսկվա» կինոթատրոնը:

Առաջին կինոփառատոնի ժամանակ ցուցադրվեց 5 ֆիլմ՝ «Ամենակարծ նամակը՝ նորը» (Սիմիտիրո Սավահ), «Ուրվականը բարում» (Տադյոսի Վատանաբե), ռեժիսոր Յոսիմիցու Մորիտայի 2 ֆիլմ՝ «Հարու» և

«Ընտանեկան խաղ», և Տոսիո Չիրատայի «Յունիկո»-ն: Փառատոնը հաջող անցավ լեփ-լեցուն դահլիճի առկայությամբ:

ճապոնական երկրորդ կինոփառատոնը տեղի ունեցավ 2000 թ. մայիսի 30-ից հունիսի 4-ը Երևանում: Փառատոնի կազմակերպիչներն էին, ինչպես նաև նախորդ անգամ, ճապոնիայի դեսպանությունը, ճապոնական իիմնադրամը, Շայաստանի մշակույթի նախարարությունը, Երևանի հումանիտար ինստիտուտը: Բացելով փառատոնը՝ ճապոնիայի դեսպան պարոն Մինորու Տամբան իր ողջույնի խոսքում ասաց, որ Շայաստանը իր մոտ գուգորդվում է Ա. Խաչատրյանի և Ա. Դարությունյանի երաժշտության հետ, որ նա երկրորդ անգամ է Շայաստանում և որ 34 տարի առաջ կատարած այցից հետո նրա մոտ մնացել են միայն շատ ջերմ իիշողություններ: «Շայաստանը և ճապոնիան երկու շատ տարրեր պետություններ են տարրեր մշակույթով, բայց նրանց ընդհանությունը է միմյանց նկատմամբ մերձեցման ձգությունը»: Այս երկու պետությունները զբաղեցնում են օգտակար հանածոներից գրեթե գրկված տարածություններ: Սակայն ճապոնիան իր գոյությամբ ապացուցում է, որ դա խնդիր չէ երկրի ծաղկման համար: Ես ցանկանում եմ, որ Շայաստանն էլ բարգավաճի», – ասաց պարոն Մինորու Տամբան:

Փառատոնը բացվեց Մինորու Յագուձիի «Իմ գաղտնի գանձերը» ֆիլմի ցուցադրմամբ: Ցուցադրվեցին նաև հետևյալ ֆիլմերը. «Գամերան՝ տիեզերքի պահապանը» (ռեժիսոր Կանեկո Սյուսուկի), «Վախկուտները» (ռեժիսոր Մակատո Վադա) կատակերգությունը, մանկական երկարամետուած մուլտֆիլմ «Կախարդուիու շտապ փոստը» (Խայատ Միյածակի) և «Դպրոցի ուրվականներ և առաջին սերը» գեղարվեստական կինոնկարը:

Փառատոնը առաջացրեց մեծ հետաքրքրություն դեպի ճապոնական մշակույթը, անցավ լեցուն դահլիճում:

2001 թ. հուլիսին Շայաստանի կինոթրակիցների և կինոգետների ընկերության հրավերքով Երևան ժամանեց ճապոնացի կինոթրակից Ակիկո Կոբարին, որն իր հետ բերեց տարրեր տարիների նկարահանված 5 ֆիլմերի տեսաժապավեններ:

Հուլիսի 22-ից 25-ը ընկերության փոխնախագահ Արծվի Բախչինյանի նախաձեռնությամբ կազմակերպվեց ճապոնական ֆիլմերի ոչ առևտրական ցուցադրում: Այդ ֆիլմերն էին «Օնիրի» մարտաֆիլմը (1996), «Նաերովա» կլասիկ մելոդրաման սումոյի ըմբիշի ճակատագրի մասին (1956), «Ուրախ երյակի արկածները» մանկական ֆիլմը (1997), «Սավադա» վավերագրական ֆիլմ ֆոտոթրակցի մասին (1998) և «Երեխսանի երազանքի կերպարը» ֆիլմ երկու նկարիչների և նրանց ընդհանուր մոդելի մասին (2000):

Ֆիլմերի ցուցադրումից առաջ Ակիկո Կոբարին հանդիսատեսին ներկայացրեց ծրագրի ընդհանուր տեսությունը: Ահա թե ինչ էր գրել «Դայաստանի Հանրապետություն» (3–10. 08) թերթը այդ առիթով. «Քանի որ ճառապնական կինոն հազվադեպ հյուր է մեր էկրաններին, ուստի ներկայացված ծրագիրը մեծ հետաքրքրություն առաջացրեց կինոյի սիրահարների մոտ»:

Երրորդ ճառապնական կինոփառատոնը տեղի ունեցավ 2003 թ. մարտի 27–31-ը: Փառատոնը նվիրված էր ճառապնիայի և Դայաստանի միջև դիվանագիտական կապերի հաստատման տասնամյակին և Դայաստանում ճառապնիայի նոր արտակարգ և լիազոր դեսպան պարոն Իսսեյ Նոմուրայի հավատարմագրերի հանձնմանը: Ինչպես և նախորդ անգամ, փառատոնի կազմակերպիչներն էին Ռուսաստանում և Դայաստանում ճառապնիայի դեսպանատունը, ճառապնական իիմնադրամը, Երևանի հումանիտար ինստիտուտը:

Փառատոնը բացեց Ռուսաստանում և Դայաստանում ճառապնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Իսսեյ Նոմուրան: Նա ասաց.

«Միրելի՛ բարեկամներ: Ամբողջ հոգով ողջունում եմ ձեզ Երևանում ճառապնական երրորդ կինոփառատոնի բացման կապակցությամբ: Ես գիտեմ, որ հարուստ և հին մշակույթ ունեցուղ Դայաստանում սիրում են ճառապնիայի մշակույթը, և հաճույքով նշում եմ, որ հետաքրքրությունը դեպի ին երկիր տարեցտարի աճում է:»

Անցյալ տարի մենք նշեցինք մեր երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման տասնամյակը: Մեր հաջող համագործակցության արդյունքն է տնտեսական, քաղաքական և մշակութային կապերի զարգացումը:

Անեն անգամ մեր կինոփառատոններում մենք փորձում ենք ցուցադրել նոր ֆիլմեր, որտեղ կարող եք տեսնել ճառապնացիների կյանքը և ժամանակակից ճառապնիան: Ես վստահ եմ, որ այսպիսի փառատոնները հսկայական դեր են խաղում մեր ազգերի միջև փոխհամաձայնության խորացման գործում: Ես հուսով եմ, որ այս ֆիլմերը դիտելուց հետո ճառապնիան ձեզ համար ավելի հարազատ կղանա, և փառատոնը խթան կիանդիսանա մեր երկրների միջև կապերի հետագա զարգացման համար»:

Ի պատասխան պարոն դեսպանին՝ հումանիտար ինստիտուտի ռեկտոր, պյուֆեսոր Մ. Ամիրիսանյանը իր շնորհակալությունը հայտնեց դեսպանին՝ ջերմ խոսքերի համար Դայաստանի հասցեին, և ասաց.

«Դայաստանում հետաքրքրությունը ճառապնիայի նկատմամբ միշտ մեծ է եղել: Դրա ապացույցներից մեկն էլ առաջին անգամ Դայաստանում Երևանի հումանիտար ինստիտուտում ճառապներենի և ճառապնա-

կան մշակույթի ուսուցումն է: Այսօր մենք արդեն որոշ հաջողությունների ենք հասել:

Մեր շրջանավարտները որպես թարգմանիչ աշխատում են տարբեր ձեռնարկություններում, իսկ ուսանողները, սկսած 1994 թ., մասնակցում են Սովորակացում անցկացվող ուսանողների մրցույթներին, վերջերս եղան նաև Թբիլիսիում: Մի շրջանավարտ ավարտել է Կիոտոյի համալսարանի մագիստրատուրան, մյուսն իր ուսուցումը շարունակում է Մորիոկա քաղաքի համալսարանի մագիստրատուրայում: Երկու դասախոսներ ճապոնիայում անցել են երկարաժամկետ վերապատրաստում: Չորս ուսանող եղել է ճապոնիայում ճանաչողական այցով: Ինստիտուտը համարվում է ճապոնական մշակույթի պրոպագանիզման կենտրոնը Ճայաստանում: Մյուս կազմակերպությունների հետ մեկտեղ նա հանդիսանում է ճապոնական կինոփառատունների կազմակերպիչ: Առաջին փառատոնը տեղի ունեցավ 1999 թ., երկրորդ՝ 2000 թ.: Այսօր բացվում է երրորդը: 2002 թ. ինստիտուտը հանդիսացավ «Նկարահանելով ճապոնիայի գեղատեսիլ վայրերը» ճապոնական լուսանկարների ուշագրավ ցուցահանդեսի կազմակերպիչը: Մեր ինստիտուտ այցելել են ճապոնիայի դեսպանները՝ պարոն Տակեհիրո Տոգոն 1997 թ. և պարոն Մինորու Տամարան՝ 1999 թ.: Այսօր մենք ողջունում ենք դեսպան պարոն Խասեյ Նոմուրային: Ինստիտուտում ճապոններները դասավանդել և դասավանդում են ճապոնիայից իրավիրված մասնագետները: Վերջին տարիների ընթացքում բազմաթիվ հանդիպումներ են եղել մեր ուսանողների և ճապոնական մշակույթի ենթակայացուցիչների, ճապոնացի երիտասարդների, Բարձրադիր պաշտոնյաների հետ»:

Փառատոնում ցուցադրվեց երեք խոր փիլիսոփայական, արդիական ֆիլմ: Ի դեպ, ֆիլմերում արտացոլված ճապոնական իրականության խնդիրները համամարդկային են: Այդ խնդիրների մեջնարանությունները հայտնի ճապոնացի ռեժիսորների կողմից գրավում են հանդիսատեսին:

Փառատոնը բացվեց «Ղեմք» (ռեժ.՝ Զյունձի Սակամոտո) հոգեբանական դրամայով: Ֆիլմում բացահայտվում է խիզախ կնոջ պատմությունը, որը ազատության է ծգում: Գլխավոր հերոսուհի Մասակոն, Բազմամյա նվաստացումներից կատաղած, սպանում է իր քրոջը և թաքնվում ուսիկանությունից: Մերժի գգացումը չի լրում Մասակոյին, նա առաջին անգամ է գգում պատասխանատվություն իր արարքների համար: Բանտում հայտնվելու վախճ դրդում է Մասակոյին մեկ անգամ էլ փորձել նոր կյանք սկսել: Նա գցում է իրեն ընկերական և սիրային հարաբերությունների մեջ և հայտնվում, իր կարծիքով, իրական ազատության մեջ:

«Նագիսա»—ն (ռեժ.՝ Մասարու Կոնումա) հին նոստալգիական երաժշտություններով, բարությանը և հումորով լի մի մելոդրամա է: 12-ամյա Նագիսան, որի անունը բարզմանաբար նշանակում է «ծովափ», նագնիտոֆոն գնելու նպատակով սկսում է աշխատել իր հորաքրոջ ծովափինյա տանը: Նա ծանոթանում է Տոկիոյից եկած մի տղայի և տեղական հյուրանոցի սեփականատիրոց գեղեցիկ դստեր հետ: Երբ գալիս է Նագիսայի քոյքը՝ Ռեյկոն, Նագիսան ոռքեր է դառնում: Քոյքը Նագիսային խորհուրդ է տալիս ամենից առաջ հետևել իր սրտի ցանկությանը: Նագիսան փորձում է այդպես էլ անել, բայց դա միայն բարդացնում է իր՝ առանց այն էլ նոր սկսված կյանքը:

«Դորա Շեյտա» («Թափառող կատու») (ռեժ.՝ Կոն Իտիկավա) ֆիլմում, որը մի սամուրայական ֆիլմ է, մի փոքր քաղաք է ուղարկվում դատավոր էղոյից: Նրա անունն է Կոհեյտա Մոտիծուկի, բայց անառակ բնավորության համար նրան կոչում են «Դորա Շեյտա»: Քաղաքը, ուր նրան ուղարկել էին, դեկավարվում էր յակուձայի խմբի կողմից, որը բաղկացած էր ֆեղալական առաջատարներից: Երբ հայտնվում է դատավորը, յակուձաները սկսում են ծիծաղել նրա վրա, բայց հետո հասկանում են, որ նա իրենից ավելի շատ բան է ներկայացնում, քան թվում էր առաջին հայացքից: Իրականում նա լուրջ և պատասխանատու մարդ է, որը եկել է կենտրոնից, որպեսզի օգնի ազատել քաղաքը կրիմինալ տերերից:

Այսպիսով՝ հայ հանդիսատեսի հետաքրքրությունը ճապոնական կինոարվեստի նկատմամբ մեծ է այն պարզ պատճառով, որ ճապոնական կինոյում արձածված պրոբլեմները արդի են, համահունչ և ուսանելի հայ իրականությանը:

ՑՈՒՑԱՅԱՆԵՍՆԵՐ

Միքայել Ամիրիսամյան
Բանասիրական գիրությունների դոկտոր, պրոֆեսոր

Անկախություն ծեռք բերելով՝ Հայաստանը, ինչպես ինքնուրույն պետություն, սկսեց մասնակցել միջազգային ցուցահանդեսներին, այդ թվում միջազգային տուրիստական ցուցահանդեսներին, որոնք անց են կացվում ճապոնիայում երկու տարին մեկ անգամ: Նրանցից մեկը տեղի ունեցավ 2000 թ. սեպտեմբերին Տոկիոյում: Մյուս պետությունների հետ մեկտեղ Հայաստանը ներկայացնում էին տուրիզմով զբաղվող կազմակերպություններ, առևտուրի և արդյունաբերության նախարարությունը, «Եվրոստան ույուտ» ֆիրման և ուրիշները:

Հայկական կողմի նպատակն էր ներկայացնել ցուցահանդեսի ճապոնացի մասնակիցներին և հասարակությանը իր երկրի տեսարժան վայրերը, ինչը հետագայում կարող է նպաստել տուրիզմի զարգացմանը Հայաստանում:

2001 թ. հունիսին Տոկիոյում տեղի ունեցավ երեք անդրկովկասյան պետությունների ծառայությունների և ապրանքների միջազգային ցուցահանդեսը JETRO-ի հովանու տակ: Գեղեցիկ ձևավորված գրքույկում հաղորդվում էր, որ «Անդրկովկասյան երեք պետություններից ամենաքիչը բնակչություն ունեցող Հայաստանը բարձրորակ կադրեր ունի է-լեկտրոնային սարքավորումների և գիտատեխնիկական ոլորտներում: Ի տարրերություն մյուս հարևան պետությունների՝ Հայաստանում հեշտ կարելի է հաղորդակցվել անգլերեն: Ցուցահանդեսում Հայաստանը ներկայացրեց գյուղատնտեսական մրեղների լայն տեսականի՝ գինի, կոնյակ, գարեջուր, տարրեր մրգային հյութեր, առանց պարարտացման աճեցրած բնական մրգերից (մոշ, ելակ, ծիրան, դեղձ, խնձոր, վարդիթրիկներ և այլն) պատրաստված ջեմեր, մեղր, ծխախոտ, պահածոներ, չորացրած մրգեր, տոմատի մածովկ:

Վրյունաբերական ապրանքներից ներկայացված էին մշակված աղամանդներ, ոսկյա իրերի և արծաթի զարդերի լայն տեսականի, գործարաքանչափ (մետաքս, բամբակ), գորգեր, նաև շինարարական նյութերի և կիվածք (մետաքս, բամբակ), գորգերի լայն տեսականի, բազմազան սալաքարեր, օսարանկարժեք քարերի լայն տեսականի, բիմիական նիքսից և օրսիդիանից իրեր, հուշանվերներ, հաստոցներ, քիմիական արդյունաբերության ապրանքներ, համակարգչային տեխնոլոգիաներ»:

Երեք պետություններից իրենց ծառայությունները ներկայացրեցին 20-ից ավելի տուրիստական գործակալություններ: Նկարիչները ներկայացրեցին իրենց գործերը: «Հայաստանը առաջին երկիրն է, որն ընդունել է քրիստոնեությունը որպես պետական կրոն: Սպասվում է, որ բազմաթիվ եկեղեցիները, լեռնային ռելիեֆը, գեղեցիկ բնությունը, հյուրանոցների շինարարությունը և օդանավակայանի վերակառուցումը կապաստեն տուրիզմի զարգացմանը», – հաղորդվում է գրքույկում:

Ցուցահանդեսի նպատակն էր ճապոնացիներին և լայն միջազգային հասարակությանը, որոնք հետաքրքրվում են այս տարածաշրջանով, ներկայացնել Հայաստանը իր տարրեր տեսակետներից:

Այնուհետև՝ 2002 թ. սեպտեմբերին, Յոկոհամայում տեղի ունեցած միջազգային տուրիստական ցուցահանդեսին մասնակցեց Հայաստանի տուրիզմի զարգացման գործակալությունը, որը ներկայացրեց տուրիզմի հետ կապված ապրանքների և ծառայությունների համակարգ:

Ծարունակելով ավանդույթը՝ 2004 թ. սեպտեմբերի 21–26-ին երեք հայկական տուրիստական ֆիրմաներ Հայաստանի տուրիզմի զարգաց-

ման գործակալության ղեկավարությամբ մասնակցեցին Տոկիոյում տեղի ունեցած միջազգային ցուցահանդեսին:

Ոչ միայն տուրիզմի և արդյունաբերության, այլև մշակույթի ոլորտում տեղի ունեցած ցուցահանդեսները ծառայում են մեր ժողովուրդների բարեկամական կապերի ամրապնդման գործին:

2002 թ. նոյեմբերի 16-ից 30-ը Հայաստանի և ճապոնիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման տասնամյակի առթիվ ճապոնիայի դեսպանատունը, ճապոնական հիմնադրամը, Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը, Հայաստանի մշակույթի նախարարությունը, Երևանի հումանիտար ինստիտուտը, Հայաստանի ճարտարապետության ինստիտուտ-թանգարանը Երևանուն կազմակերպեցին «Նկարահանելով ճապոնիայի գեղատեսիլ վայրեր» ցուցահանդեսը:

Ցուցահանդեսը բացեց ճապոնական պատվիրակության ղեկավար, ճապոնիայի դեսպանության նախարար-դեսպանորդ պրն Տեցու Իտոն:

Ողջույնի խոսքում նա ասաց, որ ճապոնիայի և Հայաստանի միջև լայնացող բազմակողմանի հարաբերությունները առաջացնում են բարձրվածության գգացում և հույս են տալիս այս երկու երկրների միջև հարաբերությունների հետագա զարգացմանը, և ողջունեց ցուցահանդեսի բացման մասնակիցներին:

Պատասխան խոսքում Երևանի հումանիտար ինստիտուտի ռեկտոր, քանախիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Միքայել Ամիրիսանյանը իր շնորհակալությունը հայտնեց ճապոնական կողմին Հայաստանի հանդեպ ուշադրության և այսպիսի հետաքրքիր ցուցահանդեսի կազմակերպելու համար:

Ցուցահանդեսի բացմանը ներկա էին ՀՀ նախագահի անձնակազմի, Հայաստանի ԱԳՆ և կառավարության արտաքին կապերի վարչությունների պետերը, Ազգային ժողովի կրթության հանձնաժողովի նախագահը, մշակույթի նախարարի տեղակալը, Գերմանիայի դեսպանատան առաջին քարտուղարը, Չինաստանի դեսպանատան քարտուղարը և այլ պաշտոնական անձինք:

Ցուցահանդեսին ներկայացված էին ճապոնացի երեք հանրահայտ լուսանկարիչներ Յոսիիրո Կատանարեի, Քեն Ղոնանի և Յասուիրո Իսիմոտոյի 150 խոշոր պլանով լուսանկարներ:

Առաջ անցնելով նշենք, որ ճապոնական լուսանկարչության այս վավերագրական ցուցահանդեսը նորություն էր մեր հանդիսատեսի համար և շատ մեծ հետաքրքրության արժանացավ: Ցուցահանդեսի բացումից առաջ տպագրվեցին և տարածվեցին հրավիրատոմսեր և գովագդային վահանակ, իսկ ոուսալեզու «Նովոյե Վրեմյա» (16 նոյեմբերի

2002 թ.) թերթը Կ. Միքայելյանի հոդվածում ընթերցողին ծանոթացրեց ֆոտոարվեստի ճապոնացի վարպետների կենսագրության որոշ տվյալներին: Ներկայացնում ենք թերթի հոդվածը ամբողջությամբ, որպես վակերագրական ապացույց:

«Յոսիիո Վատանաբեն (1907 թ.) պրոֆեսիոնալ կրթությունը ստացել է Տոկիոյում, երկար տարիներ եղել է «Ֆոտո-Թայմ» ամսագրի խմբագիրը: Նրա՝ ավանդական ճապոնական ճարտարագետական կորողների լուսանկարները դարձել են գրեթե դասական: Նա լուսանկարչության սիրագործներից մեկն է, տասնյակ տարիներ դասավանդել է Տոկիոյի «Սիհոն» համալսարանի արվեստագիտական ֆակուլտետում, լուսանկարչության թանգարանի հիմնադիրներից մեկն է: 90-ական թվականներին նա առաջինն էր իր գործակիցներից, որ ստացավ մշակույթի վաստակավոր գործչի հեղինակավոր կոչումը:»

Յոսիիո Վատանաբենի բաժինը իր մեջ ընդգրկում է լուսանկարներ, որոնք նկարահանվել են իսե սինթոյական տաճարային կոնպլեքսում: Այն ստեղծվել է III-V դդ. և VII դարի վերջից սկսած ամեն քան տարին մեկ վերակառուցվում է ամենայն ճշտությամբ: Այդ սովորույթը խախտվել է միայն երկու անգամ: Լուսանկարները արված են հազվագյուտ գեղարվեստական տեխնիկայով՝ արծարե-ժելատինե տպագրությամբ: Ահա թե ինչու է ամեն գործ փայլում մետաղական փայլով, որը փոփոխվում է սև-սպիտակ ելեկտրոնի նույր երանգներով: Միայն մի տեղ է նկատվում այլ գույնի երանգ:

Վատանաբեն նկարահանում է առանց շտապելու, ինչը բնորոշ է իսկական վարպետին, ինչպիսիք են նաև Դյոնոնը և Խիմոնտոն: Ամեն կարող մանրամասն ստուգված և նախապատրաստված է: Ոչ մի ավելորդ քան, որը չի աշխատում գլխավոր նպատակի՝ գեղարվեստական գաղափարի միահամար: Տիեզերական կարգը և մաքրությունը, բնության և մարդու միաձուլումը, ծեռակերտ և բնական միջավայրի ներդաշնակությունը և միասնությունը, ահա թե ինչն է կարմիր թելով անցնում Վատանաբենի սև-սպիտակ և գունավոր լուսանկարների միջով: Ահա «Ներքին տաճարը և Մունամոնթի-հասիրան շրջապատող պարիսպը»: Դաստ ծառաբներ, արտահայտիչ արմատներ, խիճը գետնին և ոյուրաքակ տաճարը՝ լուսանկարի խորհրդավոր խորքում: Խոնավությանը լցված լություն և սոճիների հայտնաբերությունը: Կամ «Ներքին տաճարը Խոնավությունը պարիսպը»: Այս գիպական շրջյունը: Կամ «Ներքին տաճարը Խոնավությունը և կատարելությունը: Խոնավությունը պարիսպը»: Գեղեցկությունը և կատարելությունը: Խոնավությունը պարիսպը»: Այս գիպական շրջյունը եղեգնե շերեփի», «Միդե (մաքուր սպիտակ թղթի երկար կտորներ)»: Այս թուղթը պարանի վրա կարծես «կենդանի» է: Այսպիսի կաղրեր, հավանաբար, կարող եր նկարահանել միայն ճապոնացի լուսանկարիչը: Կաղրեր, որոնք ինչպես հոկկուի տողերը, մտքի հետք են:

Վատանաբեն հիանում է տաճարային կառույցների կազմվածքային տարրերի մերկացած գեղեցկությամբ և ստիպում հիանալ նաև հանդիսատեսին: Դա կարող է լինել և փայլեցրած կայս և «հինոկի» սոճու սեղմված կեղևից պատրաստված տանիքի մի հատված: Այն ամենը, ինչ պատկերում է վարպետը, ստանում է նոր որակ, նոր յուրահատուկ չափ:

ճապոնական լուսանկարչության հայրապետներից մեկը թեն Դոմոն է (1909–1990), որը հետպատերազմյան տարիներին ստեղծել էր մի նոր ուղղություն: Նրա ստեղծագործության նկատելի մասը նվիրված է ազգային ավանդական մշակույթին՝ սկսած Մուրոձի տաճարից մինչև Բունգակու տիկնիկային թատրոնը: Շատ տարիներ նվիրել է երկու հին մայրաքաղաքների՝ Նարայի և Կիոտոյի հայտնի «Ճին տաճարների» լուսանկարչությանը: Դա ռեալիզմի կողմնակից վարպետի արվեստի գագաթնակետն է:

Ցուցահանդեսի նորա բաժինը հին ճարտարապետության և տաճարների քանդակների սև-սպիտակ և գունավոր խոշոր լուսանկարներն են: Լուսանկարների մեջ կան 50 տարուց ավելի պատմություն ունեցողներոց: Անձակ կադրեր: Մուրոձի, Ջորյուձի, Կորյուձի և Սյոնձյոձի՝ մեկը մյուսից նրբագեղ: Կառույցները ամբողջովին միաձուլվում են բնության և շրջապատող այգիների հետ: Թեն Դոմոնը իսկական կախարդիչ է: Նրա՝ քանդակների լուսանկարները գուստ են և վեհ: Նա անշտապ և սրտի տրոփյունով է նախապատրաստում կադրը, հավանաբար երկար աշխատում է լուսի հետ: Արդյունքում քանդակները շնչում են, լինի դա Բուդդան, Բոդհիսատվան թե երջանկության յոթ աստվածներից մեկը՝ Դայկոկուտենը: Ճին բրոնզը շողով է չփանցող կյանքով «Բուդդայի կիսադեմ»—ում, ջերմություն են արձակում փայտն Յակուսիի ալ շուրթերը, ամպրոպի աստծո աչքերն են փայլում, ահարկու է զայրույթի մեջ երկնային արքա Տամոն–Գենը, մեջմ ժպտում է Կաննոն աստվածութին (ի դեպ՝ աստվածութու անունը լուսանկարչական հայտնի ֆիրմայի անունն է, հենց Կաննոն, ոչ թե ամերիկյան Կենոն): Դոմոնը կենդանացնում է և բրոնզը, և փայտը...

Վերջապես Յասուիկոր Իսիմոտոն (1921), որը ծնվել է ԱՄՆ–ում և սովորել Չիկագոյի դիզայնի համալսարանում հայտնի լուսանկարիչներ Կալլագանի և Սիսկինդի մոտ (ի դեպ, որպես ճապոնացի՝ նա նույնիսկ աքսորվել է երկրորդ աշխարհամարտի ժամանակ):

1953 թ. նա վերադարձավ իր պատմական հայրենիք և սկսեց լուսանկարել Կացուրա կայսերական պալատը (1620–1658):

1966 թ. վերջնականապես տեղափոխվեց ճապոնիա և սկսեց դասավանդել մայրաքաղաքի Արվեստի և դիզայնի համալսարանում: Իսիմոտոն նույնպես մշակույթի վաստակավոր գործչի կոչում ունի:

Իսիմոտոյի յուրաքանչյուր լուսանկար բնության և մարդու միաձուլման ճապոնական փիլիսոփայության արտացոլումն է: Յուրաքանչյուր լուսանկար ֆիքսում է կացարանի, միջավայրի, տան, մարդու և բնության հղեալական ներդաշնակությունը:

Զարմանալի սև-սպիտակ և գունավոր լուսանկարում պատկերված են նրբագույն արտաքին պարզությունը և ճապոնական ինտերերի բաց լինելը, ճարտարապետական և բնական ձևերի համաչափությունը: Այս իմաստով կացուրա տաճարը չափանիշ է, աշխարհի ճարտարապետական ժառանգության ամենայուրահատուկ գլուխգործոցներից մեկը: Այդ տաճարի ամեն մի դետալ հասցված է կատարելության: Ամեն քար, փայտ կառույց կամ այգու թփուտն այդպիսին է: Լուսանկարիչ և դիզայներ իսիմոտոն շատ ճշգրիտ լուսանկարներ է ստեղծում, և հենց այսպես կարելի է փոխանցել նյութի բնական ֆակտուրան և բնության աստվածային գեղեցկությունը: Վարաբեր բժախնդիր է և մաքենատիկորեն ճշգրիտ: «Լուսնով հիանալու համար պատշգամբ՝ լայն հովանոցի վրա» լուսանկարում ցանաքի կանաչն է և լճակի հարթ մակերեսը նրբագեղ պատի պատուհանի մեջ: Տարածքի հոսունության զգացում: «Ճին Սյոին: Ներքին սենյակներ». բղբե փայլատեր, խսիրների մակերևույթ, հղկված փայտ: «Նոր Գոտեն: Սյան ներքին մասը». փայտի մետաքսափայլ մակերես: «Ճին Սյոին: Քարե սալարկի և մամռապատ քարի մի մաս». գրանիտի բյուրեղակառուցվածքը և մամուռ, որը նման է հազարավոր աստղիկներից բաղկացած հաստ գորգի: Ուսկերչական մակարդակի նրբակերտ լուսանկարներ: Արծաթագործություն:

Անկասկած, այս ցուցահանդեսը ամենահաջողված ճապոնական միջոցառումն էր (իսկ մենք անքան էլ հաճախ բախտ չենք ունեցել դիտել ճապոնական արվեստ), որը երբեւ կազմակերպվել էր Երևանում, կարելի է ասել, լուսանկարների ցուցահանդեսներից ամենալավը: Այն բացարձակ հրաշալի է և համեմատության կարիք չունի: Այն ոչ միայն բացարձակ հրաշալի է և համեմատության կարիք չունի: Այն ոչ միայն բեղեցիկ է, այլև, անկասկած, իմացական: ճապոնիայի բնությունը, ճարտարապետությունը և արվեստը, որոնք տեսել և գօացել են մեծ վարպետները, ոչ թե նման են փայլուն գովազդային նկարների, այլ հրաշալի են որպես զարմանալի երկրի ինքնամփոփ կերպարներ: ճապոնացի լուսանկարիչները ներկայացնում են բարձր որակի աշխատանքներ և ապացուցում, որ լուսանկարչություն կոչվող արվեստի մեջ կարևորն է ոչ թե տեխնիկան, այլ մարդկային գործոնը:

Մնում է ավելացնել միայն, որ ցուցահանդեսը տեղի է ունեցել ճապոնիայի դեսպանության, ճապոնական իիմնադրամի, Յայաստանի ԱԳ նախարարության, Երևանի հումանիտար ինստիտուտի և Յայաստանի

ճարտարապետության ինստիտուտ-թանգարանի ջանքերի շնորհիվ: Եվ, իհարկե, ճապոնացի վարպետների ներշնչման, տաղանդի և վարպետության շնորհիվ»:

«Հայաստանի հանրապետություն» թերթը ցուցահանդեսի փակումից հետո տպագրեց մի համառոտ տեղեկատվություն: Այդտեղ գրված էր. «Ցուցահանդեսը հեռավոր, խորհրդավոր և միշտ ծգող Ծագող արևի երկրին շփվելու մի առիթ էր»:

Հայաստանի ճարտարապետության ինստիտուտ-թանգարանի տվյալներով՝ ցուցահանդես էին այցելել մոտ հազար մարդ, այդ թվում Ուսաստանի, Ֆրանսիայի, Իտալիայի, Արգենտինայի, Ավստրիայի, Վրաստանի քաղաքացիներ, Երևանի բուհերի, այդ թվում Երևանի պետական համալսարանի, ճարտարապետաշինարարական ինստիտուտի, Գեղարվեստի ակադեմիայի, հումանիտար ինստիտուտի ուսանողներ և դպրոցականներ: Մասնագիտական բուհերի ուսանողների համար կարդացվեց երեք դասախոսություն: Ցուցահանդես այցելեցին Հայաստանի դիզայներների, նկարիչների, ճարտարապետների, լրագրողների, նկարիչների, ֆոտոխրոնիկայի միությունների ներկայացուցիչներ: Ցուցահանդես այցելեց նաև Հայաստանի առաջին տիկինը:

Այսպիսով՝ Երևանում առաջին անգամ կազմակերպված «Նկարահանելով ճապոնիայի գեղատեսիլ վայրերը» ցուցահանդեսը մեծ հետաքրքրություն առաջացրեց այցելուների մոտ և արժանացավ հայ հասրակության ամենաբարձր գնահատականին:

ՅԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԽՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Պրոֆեսոր Հիրոյոսի Մեզավա

I. Ինչպես ես առաջին անգամ լսեցի ցեղասպանության մասին

Ես մասնագիտությամբ իրավագետ եմ և միջազգային իրավագիտություն եմ ուսումնասիրում: Փորձեմ պատմել, թե ինչպես պատահեց, որ ես սկսեցի ուսումնասիրել հայերի ցեղասպանությունը: Դոկտորանության ավարտելուց հետո երկար ժամանակ իմ հետաքրքրության կենտրոնում է եղել «Ցեղասպանության նախապայմանները» թեման: Այդ հետազոտությունները իրենց նպատակին հասցնելու համար ինձ անհրաժեշտ էր կոնկրետ փաստեր բերել: Դա մոտ 20 տարի առաջ էր: Այդ ժամանակ ՄԱԿ-ի արխիվներում ուսումնասիրում էի ցեղասպանու-

Թյունների հետ կապված նյութեր և համկարծ հանդիպեցի «1915 թ. հայերի ցեղասպանությունը» վերնագրով մի նյութի:

Ամոքալի է, բայց այն ժամանակ ինձ անձանոք էր «Հայաստան» անումը: Դիմա մտածում եմ, որ միջազգային իրավագետ լինելով հանդերձ պետք է որ իմանայի Հայաստանի մասին: Այդ օրվանից սկսեցի ջանասիրաբար Հայաստանի մասին նյութեր հավաքել: Սակայն այն տարիներին ճապոնիայում Հայաստանի մասին, առավել ևս հայերի ցեղասպանության վերաբերյալ նյութեր գրեթե չկային: Ենիշ նույն ժամանակ Կանսայի օտար լեզուների երկայնա համալսարանը, որտեղ ես դասավանդում էի, կազմակերպեց ուսանողների համար երկու մեկամսյա ճանապարհորդություն Հավայան կղզիներ, որը ԱՄՆ-ի տարածքն էր: Ես նշանակվեցի խմբի ղեկավար:

Հավայան կղզիներում ազատ ժամանակ գտա և այցելեցի տեղի համալսարանի գրադարանը, որը հայերի ցեղասպանության վերաբերյալ անգլերեն նյութերի մի գանձարան էր: Ես ամբողջ ազատ ժամանակս անց էի կացնում այդ գրադարանում, կարդում և պատճենահանում էի նյութերը, և իմ ուրախությանը սահման չկար: Տուն վերադառնալուն պես աճբողջովին կենտրոնացա այդ նյութերի վրա: Որքան կարդում էի, այդքան ավելի էի հասկանում թեմայի կարևորությունը, և չնայած սարսափով էի լցում որոշ նյութեր կարդալիս, հետզիեսե ավելի էր ուժեղանում հետազոտելու ցանկությունը: Ինձ մոտ տարբեր հարցեր էին առաջանում, օրինակ՝ ինչու ճապոնիայի դպրոցների քարձր դասարաններում (16–18 տարեկան) աշխարհի պատմությունը դասավանդելիս ոչինչ չի ասվում հայերի ցեղասպանության մասին, իսկ հրեաների ցեղասպանությունը ներկայացված է բավականին ծավալով: Իմ կարծիքով, այդ իրավիճակը չի կարելի արդարացնել ո՛չ հայերի ցեղասպանության զոհերի քիչ քանակով, ո՛չ էլ հանցանքի վաղենությամբ:

Ամեն դեպքում, բարերախտաբար թե դժբախտաբար, այս բախումնային դեպքի մասին իմանալուց ի վեր, գերազանցելով հետազոտողիս տեսակետը, մարդկության հանդեպ պատասխանատվության զգացումով դոդված, որոշեցի ինձ վրա վերցնել հայերի ապրած ողբերգության մասին անտեղյակ ճապոնացիների աչքերը բացելու պարտականությունը:

Բայց այս երկու տասնյակ տարին, որ ես գրադում եմ հայերի ցեղասպանության վերաբերյալ հետազոտություններով, շատ երկար և ոչ հարթ ճանապարհ էր: ճապոնիայում ոչ միայն իմ կոլեգաները, այլև ուրիշ գիտնականներ ինձ քննադատում էին, ոմանք ասում էին, որ իմ հետազոտությունները անհմաստ են: Չնայած դրան՝ ես խորապես համոզված էի, որ իմ հետազոտությունները անհմաստ են: Հայաստանում կարևոր են, համառորեն հոդված-

Ներ էի գրում, տպագրում դրանք գիտական ամսագրերում և հրապարակում գիտաժողովներում։ Երկար ժամանակ դրանք չեն արժանանում ճապոնացի գիտնականների ուշադրությանը, բայց այս տարի (2004 թ.) լույս տեսած «Հայերի նոռացված ցեղասպանությունը՝ հետազոտություն Եղեռնագործության կանխման և պատժի վերաբերյալ» վերնագրով գիրքը նշանափորեց հետազոտություններիս ավարտը։ Դա գուտ նաև ագիտական աշխատություն է, բայց ես փորձել եմ հնարավորին չափ խուսափել մասնագիտական չոր տերմիններից, արտահայտվել հասկանալի լեզվով, որ մատչելի լինի ճապոնացի ընթերցողին։ Շապիկի վրա տեղադրեցի Ծիծեռնակարերոյի Եղեռնի գոհերի հուշարձանի լուսանկարը, որն ինչս եմ նկարել, իսկ մյուս կողմը՝ Եջմիածնի խաչքարից մեկի լուսանկարը։

Այդ գիրքը ներկայացվեց Հայաստանի ազգային գիտությունների ակադեմիայում՝ որպես ճապոնիայում առաջին աշխատություն հայոց ցեղասպանության վերաբերյալ։ Ներկայացումն անցավ հանդիսավոր, բազմաթիվ գիտնականների և լրագրողների ներկայությամբ, որոնց հաղորդագրությունները հասան մինչև ճապոնիա, և իմ հայունակիցների մոտ, չնայած ուշացումով, հետաքրքրություն առաջացրեցին հայոց ցեղասպանության վերաբերյալ։

II. Հայերի ցեղասպանության իմ հետազոտության նպատակը

Հայերի ցեղասպանության հիմնական պատճառների և դրդառիքների մասին իմ մեկնարանությունը համընկնում է ուրիշ գիտնականների կարծիքների հետ, որի համար այսուել դրանց չեմ անդրադառնում։ Հետազոտություններիս ժամանակ աչքիս տակ անցկացրած գրականության և նյութերի ուշագրավ կետն այն էր, որ հեղինակների մեծ մասը կամ պատմաբաններ էին, կամ էլ միջազգային քաղաքականության պատմության մասնագետներ։ Եվ ահա, լինելով միջազգային իրավագետ, հայերի ցեղասպանությանը անդրադարձա ոչ թե պատմաբանի, այլ իրավագետի տեսակետից։ Եվ մտածեցի՝ չեմ կարող, արդյոք, իրավագետի նոր տեսակետից մոտենալով այդ շատ դժվար լուծնի խնդրին, մեկնարանել այն։

Չիշեցնեմ, որ ցեղասպանություն՝ «genocide», տերմինը մտցրել է միջազգային իրավագետ Ուֆայել Լեմկինը, որը լեհաստանցի հրեա է։ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, եթե նացիստական Գերմանիան գրավեց Լեհաստանը, և լեհերը փախուստի դիմեցին Ամերիկա, նա 1944 թ. Ամերիկայի ցամաքային ուժերի վարչության առաջարկով տպագրեց մի աշխատություն։ Այդ աշխատության մեջ առաջին

անգամ հնչեց «genocide» նոր տերմինը: «Genocide» բառը նա ստեղծել էր, միացնելով հունարեն «genos» («ազգ», «ցեղ») առաջին մասին լատիներեն «cidium» («սպամել») բառի «cide» բայական ձևը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի գլխավոր դաշնակից երկրները՝ ԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիան և Սովետական Միությունը, 1945 թ. օգոստոսի ուրին ստորագրեցին «Եվրոպայի առանցքային պետությունների կոնվենցիա՝ գլխավոր հանցագործների դատական հետապնդման և պատժելու նպատակով» փաստաթուղթը և նրան կից ընտրեցին «Միջազգային գինվորական տրիբունալ»: Այդ երկու համաձայնագործի հիման վրա առաջին անգամ պատմության մեջ միջազգային գինվորական տրիբունալի կողմից իրականացվեց Նյուրնբերգյան դատավարությունը, որը սկսվեց 1945 թ. նոյեմբերի 20-ին: Այդ դատավարության ժամանակ առաջին անգամ միջազգային ատյանում ցեղասպանության հանցագործությանը սահմանում տրվեց: Բայց ցեղասպանության հանցագործությունը դատապարտող օրինական փաստաթուղթը ընդունվեց ՄԱԿ-ի կողմից միայն 1948 թ.: Դա «Ցեղասպանության հանցագործության կանխման և մեղավորներին պատժելու վերաբերյալ կոնվենցիան» («Ցեղասպանության կոնվենցիան») էր: Այդ կոնվենցիան ուժի մեջ մտավ 1951 թ. հունվարի 12-ին: Կոնվենցիայում ցեղասպանությունը սահմանվեց որպես «այլանավորված գործողություններ, որոնց նպատակն է ազգային (national), եթիկական (ethnic), ռասայական (racial), կրոնական խմբերի լրիվ կամ մասնակի ոչնչացումը»: Տրված էր ցեղասպանության գաղափարի բացատրությունը, որում նշվում էր, որ ցեղասպանություն է համարվում «մարդկանց խմբերի ոչնչացման մտադրությունը (the intent to destroy an entire group), ռասայական, կրոնական հատկանիշներից ելնելով՝ վերոհիշյալ բնակչության խմբերի մի մասի ոչնչացման մտադրությունը (to eliminate portions of the population marked by their racial, religious...)»: Այսինքն՝ պարտադիր չէ, որ խումբը ոչնչացված լինի լրիվ: Սակայն եթե խումբը ոչնչացվել է մասամբ, դա ցեղասպանություն է համարվում, եթե «ոչնչացված մասի մեջ է գտնվել խմբի կարևորագույն մասը, օրինակ՝ ղեկավարները (a significant section of a group such as its leadership)», կամ «բավականին մեծ թվով մարդիկ են ոչնչացվել (imply reasonably significant number)»: Այսիսով՝ ցեղասպանություն համարվելու պայմանները, ինչպես տեսնում ենք, կարելի է բաժանել երեք մեծ վերոհիշյալ խմբերի:

Դիմովելով այդ պայմանների վրա՝ ցեղասպանությունը, միջազգային իրավունքի համաձայն, համարվում է հանցագործություն՝ անկախ նրանից՝ կատարվել է այն խաղաղ թե պատերազմական պայմաններում: Ցեղասպանության կանխելու և պատժի մասին ընդունված «Ցե-

դասպանության կոնվենցիայի» 2-րդ հոդվածի սահմանված վերոհիշյալ հիմունքներից ելնելով՝ 1915 թ. Օսմանյան կայսրության մեջ երիտրութերի կուսակցության կառավարության կողմից իրագործած հայերի կոտրածները պետք է որակել որպես ցեղասպանության հանցակազմ, որը պատժի է Ենթակա: Բացի դրանից, 4-րդ հոդվածում նշվում է, որ անկախ նրանից՝ հանցագործը, տվյալ երկրի սահմանադրության համաձայն, պատասխանատու քաղաքական գործիչ է, պաշտոնական ծառայող թե անհատ անձ, նա Ենթակա է պատժի: Ենտևաբար, հայերի ցեղասպանությունը պլանավորած և երիտրութերի կուսակցության ղեկավարները, և պաշտոնական ծառայողները, և անհատ անձինք պետք է պատիժ կրեն արվածի համար:

III. Յայոց ցեղասպանության խնդիրը

1915 թ. Օսմանյան կայսրության երիտրութերի կուսակցության կողմից իրագործած ցեղասպանությունը, որն ուղեկցվում էր կյանքի անտանելի պայմանների ստեղծումով, հայերի ստիպողական տեղափոխություններով, ստիպողական կրոնի փոխելու գործողություններով, մասսայական ջարդերով, տեղի էր ունեցել 1914 թ. սկսված Առաջին համաշխարհային պատերազմի կեսերին: Եվրոպական մեծ պետությունները, նույն քրիստոնյա ժողովրդի՝ հայերի օր ու գիշեր տևացող տառապանքների մասին իմանալով հանդերձ, իրենց երկրների շահերը միայն հետապնդելով, ոչ միայն մարդասիրական միջանտություն չձեռնարկեցին երիտրութերի կառավարության որպարծությունը կանխելու համար, այլև լուր համաձայնության գնացին:

Այն, որ XX դարի սկզբի այդ ցեղասպանությունը լրության էր մատնվել աշխարհում, որ մեծ պետությունները ականջները փակել էին հումանիստների բողոքի ծայները չլսելու համար, հանգեցրեց նրան, որ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ իրագործվեց հրեաների ցեղասպանություն (հոլոկոստը), որը համարվում է XX դարի ամենամեծ ողբերգություններից մեկը: Դոլոկոստի գաղափարախոս Ալուֆ Դիտլերը հրեաների ջարդերը սկսելու հրամանով Ենթականերին ուղարկած իր հեռագրում գրել է. «Ո՞վ է հիշում իմաս հայերի ջարդերի մասին»: Անկասկած, ինքը՝ Դիտլերը, շատ լավ էր հիշում հայերի եղեռնի մասին: Յայերի ցեղասպանությունն ու հոլոկոստը մի քանի նմանություններ ունեն:

Փորձեմ շարադրել, թե ինչն է, իմ կարծիքով, ընդհանուրը այդ երկու ցեղասպանությունների մեջ: Առաջինը՝ երկուսի սկսվելու նախապայմաններն են. 1) Թուրքիայում, ինչպես և Գերմանիայում, պետության

կողմից ստեղծվել էր կյանքին վտանգող միջավայր: 2) Չնայած էթնիկական մաքրումների թիրախն են եղել շարքային մարդիկ, նրանց հասարակական, տնտեսական դիրքը բարձրացնում է այն փաստը, որ նրանք պատկանում էին ազգային և կրողական խմբերի: 3) Չնայած երկու ոճուագրծությունները կատարվել են տարբեր ժամանակաշրջաններում, երկուսն էլ իրենցից ներկայացնում են համաշխարհային պատերազմների կետերին իրագործած էթնիկական մաքրումներ, որոնց իրականացնան հաջողությանը նպաստեցին միջազգային սանկցիաների և դատապարտության բացակայությունը: Ավելին՝ նախապայմանների այս երեք գլխավոր կետերից բացի կարելի է բերել ևս երկուսը: 4) Իդեոլոգիայի առկայությունն է: Ե՛վ Թուրքիայում, և՛ Գերմանիայում լեզուն, կրոնը, մշակույթը նույնատիպ դարձնելու, պետության կենտրոնաձիգ ուժերը ավելի ամրապնդելու նպատակով, էթնիկական մաքրումներ իրագործելու համար այդ իրագործողները որդեգրել էին համապատասխան զաղախարախոսություն՝ պանթյուրքիզմը Թուրքիայում և նացիզմը Գերմանիայում: 5) Ուժրագործների ընդհանուր կողմերից նաև այն է, որ երիտրուրքերի կուսակցության պարագլուխները և կուսակցության անդամները, ինչպես նաև նացիստները և Յիտլերն ու նրա կողմնակիցները, լրիվ նույնանձան չի հանդերձ, հասարակական տեսակետից կողմնապահ գաղափարախոսության մոլիի կողմնակիցներ էին, և դա ապացուցում է դրանց նույնությունը, ապացուցում են, որ դրանք նույնատիպ հիվանդագին ֆանատիկներ են եղել:

Նմանատիպ մեթոդներ հաջողությամբ կիրառվում են նաև ներկա միջազգային հանրության մեջ տարբեր երկրներում, տարբեր սոցիալական պայմաններում վտանգավոր բնույթի դիկտատորների կողմից՝ որպես պետության իշխանության գլուխ գալու միջոց: Դա ցույց է տալիս նորից, որ մեր ժամանակներում էլ վտանգավոր միջավայր և թաքցրած սպառնալիքներ կան: Այդ տեսակետից նաև չի կարելի մոռանալ բազմաթիվ տարածաշրջաններում իրագործված էթնիկական մաքրումների մասին, որոնք ցեղասպանության կոնվենցիայի ընդունելուց հետո միջազգային հանրության մեջ, միջազգային իրավագիտության կողմից սահմանված են որպես հանցագործություն: Մեր սերունդը, որն ապրում է XXI դարում, հայերի ցեղասպանությունը չկանխելու, ի սկզբանե նրա հիվանդ արմատները չկտրելու համար, միջազգային հանրության պատասխանատվությունը կրելով, պետք է ուղղակի կերպով դիմի ներկա Թուրքիայի կառավարությանը՝ ցեղասպանության հանցագործության փաստը ընդունելու պահանջով, և անուղղակի կերպով դիմի ՄԱԿ-ի հեղինակավոր գործող անդամներին՝ միջանական և ներպետական հանրություններում մարդու իրավունքի մասին գիտելիքների մակարդակը

բարձրացնելու նախագիծ պլանավորելու առաջարկով, որպեսզի այդ հանրություններում ուժեղ համոզմունք առաջանա, որ եթիկական մաքրումների սիմպտոմները տեսնելիս պետք է նարդասիրական միջամտություն սկսել, և դրանց հրաժարվել չի կարելի: Այդ նախապայմաններից հետո երևի թե կարելի լինի մեղքերը քավել ողբերգության ճանապարհով անցած հայերի, հրեաների և շատ ուրիշ սպանդների գոհերի առջև:

ԻՄ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Մասակո Ֆուջիսա

1996 թվականի օգոստոսի 28-ն էր, երբ առաջին անգամ այցելեցի Յայաստան: Դիմա էլ լավ եմ հիշում, թե ինչպես հնձ օդանավակայանում ծաղկեփնջերով դիմավորեցին Երևանի հումանիտար ինստիտուտի ռեկտորը, ճապոններնի դասախոսը և ուսանողները:

Դասավանդել սկսեցի սեպտեմբերի 9-ից չորսական ուսանող ունեցող չորրորդ և առաջին կուրսեցիներին, ինչպես նաև հատուկ դասընթացներ կազմակերպվեցին ավարտած ուսանողների համար:

Դասախոսների պակասության պատճառով երկրորդ և երրորդ կուրսում ուսանողներ չեն հավաքվել: Իմ Յայաստան գալու առիթը դարձավ մի նամակ, որը Տոկիոյի դասախոսների գործույթան կենտրոն էր եկել ԱՄՆ-ում Յայաստանի դեսպանատնից: Այնուղի գրված էր, որ այս ինստիտուտում դասախոսների պակասություն կա, ինչպես նաև ճապոնացի դասախոսի կարիք: Առաջին կուրսի ուսանողների նոր լեզու՝ ճապոններեն սովորելու խանդավառությունն ինձ էլ փոխանցվեց, և դասերը շատ հետաքրքիր ընթացք ստացան: Երեք ամիս անց ես նրանց հանձնարարություն տվեցի նամակներ գրել իմ ճապոնացի ընկերներին, որոնք մինչև հիմա պահում են. և հիերոգլիֆները, և նախադասությունները ճիշտ են գրված: Իսկ ինչ վերաբերում է չորրորդ կուրսեցիներին, նրանք բավականին տիրապետում են առօրյա ճապոներենին, բայց քանի որ թիւ էր շփումը ճապոնացիների հետ, և չկային համապատասխան դասագրքեր, նրանց կարողությունները բարդ բացատրությունների, ընթերցանության, շարադրությունների վերաբերյալ այնքան էլ բավարար չեն: Արդեն ինացած դասագրքերով հարստացնում էին իրենց բառապաշարը, զարգացնում գիտելիքները: Օգտագործում էին տարբեր միջոցներով ճապոնիայից հայթայթված դասագրքեր և ծայներիզմեր:

Այստեղ՝ Հայաստանում, ճապոներենի ֆակուլտետը բացվել էր ինստիտուտի ռեկտորի՝ ճապոնիայի հանդեպ ունեցած ջերմ վերաբերմունքի և ինքնուրույն ճապոներենը սովորած դասախոսի ջանքերի շնորհիվ:

Առաջին անգամ ինստիտուտ գալով շատ զարմացա. այնտեղ ուսումնական ձեռնարկներ համարյա չկային, և այդպիսի պայմաններում ճապոներենը դասավանդելը ոչ այլ ինչ էր, եթե ոչ մեծ հերոսություն: Դրանից հետո ճապոնական ֆոնդի կողմից որպես օգնություն ուղարկվեցին դասագրքեր, տեսանագնիտոֆոն, համակարգիչ, և ուսուցման գործընթացը մի քիչ կարգափորվեց: Նաև նույն ֆոնդի ծրագրով վերապատրաստման դասընթացների մասնակցելու համար ճապոնիա մեկնեց ճապոներենի դասախոս Կարինեն, և դա հետագայում շատ օգնեց նրան իր դասախոսի կարիերայում: Իսկ երկար ծմեռային արձակուրդների ժամանակ իմ բնակարանը դասասենյակի նման մի քան դարձրեցի, և ուսանողները հերթով գալիս էին այնտեղ պարապելու:

1997 թվականի ապրիլին ինստիտուտ այցելեցին Ուսասատանում ճապոնիայի դեսպանը, նրա կինը և դեսպանատան այլ աշխատակիցներ: Ինստիտուտում ջերմ ընդունելություն կազմակերպվեց, որի ժամանակ ուսանողները մեկ–մեկ ողջունում էին հյուրերին, կատարում ճապոնական երգեր՝ այդպիսով ցույց տալով ճապոներենում ունեցած իրենց հաջողությունները:

Իմ այստեղ գտնվելու երկրորդ տարում ընդունվեցին վեց առաջին կուրսեցիներ, իսկ շրջանավարտ Զարան սկսեց դասավանդել: Ինչպես նաև բացվեց մի հատուկ խումբ երեք կարատեիստների համար, որոնք ցանկություն ունեին ճապոներենը սովորել: Նրանք հետաքրքրվում էին չինական փիլիսոփայության «Չինգ օղակներով», ծեն–բուդյայականությամբ, որոնց մասին կարդացել էին ուսանողները ինչ ուսանողները թարգմանված գրքերում, հաճախ խորիմաստ հարցեր էին տալիս, և դա չեղ կարող ինձ չզարմացնել:

Իսկ եթե խստենք ուսանողների գիտելիքների մասին, պետք է ասեմ, որ որոշ ուսանողներ շատ գոհ էին, քանի որ ճապոնացի տուրիստների կողմից գովասանքի են արժանացել, ունանք ասում էին, թե ճապոներենը դժվար է և դրանով էլ՝ հետաքրքիր, ունանք էլ ամեն օր ջանասիրաբար շարադրություններ էին գրում և խնդրում, որ դրանք ստուգեմ:

Քիչ–քիչ սկսեցին իրականացվել դասախոսների վերապատրաստման դասընթացներ ճապոնիայում, ուսանողներ ուղարկվել այնտեղ, բայց մեր երկրների միջև համագործակցությունը դեռևս քիչ է: Մրտանց ցանկանում են, որ ավարտելուց հետո ուսանողները կարողանան ավելի շատ օգտագործել ճապոներենը աշխատանքում: Երկու տարի դասավանդելուց հետո ճապոնիայի աշխարհագրական միության անդամները Հայաստանում ճանապարհորդելու վերջում ինձ առաջարկեցին լի-

Ներ ուսանողական խոսքի ժյուրիի անդամ: Սա ծապոներենի բաժնի համար մեծ իրադարձություն էր և լավ առիթ ուսանողների համար՝ կատարելագործելու իրենց գիտելիքները:

1999 թվականի աշնանը՝ սեպտեմբերի 17-ից մինչև նոյեմբերի 16-ը, կրկին այցելեցի Հայաստան՝ կարճաժամկետ դասախոսություններ կարդալու: Մեկ տարի այնտեղ չէի եղել, և 1998 թ. ընդունված չորս հոգին և 1999 թ. ընդունված տասներկու հոգին դարձան իմ նոր ուսանողները: Վերջապես ծապոներենի բաժնում կար չորս կուրս: Այդ ժամանակ դասախոս Կարինեն դասազիրք գրելու նպատակով երկրորդ անգամ ճապոնիայում էր գտնվում, և ինստիտուտում դասավանդում էր հայերենին տիրապետող Հիկի Ակիկոն: Ես առաջին կուրսեցիներին «Ծապոներենի ներածություն» էի դասավանդում, իսկ չորրորդ կուրսեցիներն արդեն ծապոնական պոեզիա էին կարդում, ծապոներեն էին թարգմանում հայ հոչակավոր բանաստեղծ Խսահակյանի և այլոց գործերը: Նրանց հաջողված թարգմանությունները վերջում ընդգրկվեցին մի բրոյցուրի մեջ, որը կարելի էր առաջարկել Հայաստանի նկատմամբ հետաքրքրություն ունեցող ծապոնացիներին: Այդ դասից հասկացա, որ Հայաստանում բոլորը շատ են սիրում Ավետիք Խսահակյանին: Մետրոյի «Երիտասարդական» կայարանի մոտ գտնվող այգում կանգնած է նրա արձանը, և ես գրունելուց հաճախ էի գլուխ բարձրացնում՝ նրան նայելու: Միշտ հիշում եմ նրա բանաստեղծությունները չորս գագաթ ունեցող Արագած սարի մասին:

Հայաստանում գտնվելու ժամանակ շատ էի շփում տարբեր մարդկանց հետ: Անգամ չեմ կարող հաշվել, թե քանի անգամ եմ հրավիրվել դասախոսների, ուսանողների և նրանց ազգականների տուն: Խնջույքների ժամանակ ծանոթանում էի այլ հյուրերի հետ, մեծանում էր շփումը նոր մարդկանց հետ: Հայկական հյուրասիրությունը շատ բացարկի է. իրար հետևից համեղ կերակուրներ են մատուցում, դրանից հետո սկսում են պարել: Նույնիսկ ինձ էին համառորեն հրավիրում պարելու: Խնջույքների ժամանակ բոլորը բարեմաղթանքներ էին ասում: Ինձ միշտ հիացնում էր այն, որ եթե նոյնիսկ ծերեղը այնտեղ ներկա չէին լինում, անպայման նրանց առողջության համար կենաց էին խնում: Ես էլ, մտածելով, թե ոչ մի դժվար բան չկա դրա մեջ, հայերեն բարեմաղթանքի խոսքեր սովորեցի և ասում էի դրանք խնջույքների ժամանակ: Դա շատ էր զվարճացնում բոլորին, և մեր միջև մտերմությունն ավելի մեծացավ: Այդ ժամանակ ծապոնացիներ համարյա չկային, իսկ ծապոնական նշակույթի ներկայացնան պահանջը մեծ էր: ՀՄԿԸ-ում կազմակերպվեցին միջոցառումներ, որտեղ ներկայացվեցին գրույցներ օրիգամիի, կիմոնոյի, թեյի արարողության մասին, հեռուստացույցով ցուցադրվեցին կարուկի

և բոն պարեր, և դրանց ներկա էին նաև հեռուստալրագրողներ և թերթերի թղթակիցներ:

Իմ երկանյան կյանքը հաճելի դարձնող բաներից մեկն էլ Մատենադարանն էր: Այնտեղ կարելի է տեսնել հայկական մշակույթի անցյալը և ներկան: Քարե աստիճանների վերջում կանգնած է հայկական այրութենը ստեղծող Մեսրոպ Մաշտոցի, իսկ մյուս աստիճանների վերջում իրարկող շարված են Հայաստանը ներկայացնող գիտնականների արձանները: Միշտ էլ սիրել են մանրանկարչությունը և քանի անզամ են բարձրացել այդ քարե աստիճաններով, որ տեսնեմ այնտեղ ցուցադրված ծեռագրերը: Հիմա էլ հաճույքով են դիտում բաժանման ժամանակ ռեկուռնի նվիրած «Հայկական մանրանկարչություն» գիրքը և մի բրոյշյուր, որտեղ ներկայացված են Գրիգորի և Լս հինգ հայ մանրանկարիչների գործերը: Մատենադարանում կարելի է լսել պատմություն այն մասին, թե ինչպես երկու կին բուրքական ջարդերի ժամանակ կրակից գրքեր են փրկել: Մատենադարանն էլ ապացուց է, որ բազմից օտարների կողմից նվաճված հայերը, իրենց կյանքը չխնայելով, պահպանել են իրենց մշակույթը: Հաջորդ հետաքրքրությունն կապված է խաչքարների հետ, որոնք շատ խոր իմաստ ունեցող քարե հուշարձաններ են: Փորագրված զարդերի գեղեցկության հետ մեկտեղ դրանցում արտահայտված են նաև դարի առանձնահատկությունները: Սիրոս շատ ցավեց, երբ մի լուսնկարով տեսա անձրկի և քամու տակ լըված Զուլայի խաչքարերը:

Հանգստյան օրերին շատ վայրերում են եղել տարբեր մարդկանց ուղեկցությանք: Հիմա էլ պարզ հիշում են հին ավերակները, հյուրասեր և գեղեցիկ եկեղեցիները: Արագած լեռը, Սևանա լիճը, այնտեղ կերած խորովածի համան են հիշում այն հյուրասիրած մարդկանց դեմքերի հետ: Խորովածի համան են հիշում այն հյուրասիրած մարդկանց դեմքերի հետ: Հաստ են այցելել նաև քաղաքում գտնվող պատկերասրահներ, թանգառներ: Այդ ժամանակների լուսանկարները նայելով՝ այցելած վայրերաների հետ միասին կարողությ են ինձ այնտեղ տարած մարդկանց:

Շատ երջանիկ են նաև, որ կարողաց լինել Արցախուն ճապոնիայի աշխարհագրական միության աշխատակիցների հետ միասին: Տեսնելի աշխարհագրական միության աշխատակիցների հետ միասին: Տեսնելի մտածեցի, թե ինչքան խնդիրներ ունի այս երկիրը: Ապրիլին՝ եղեռնի օրը, ծաղկիկները ծեռքերին ծիծեռնակարերդ գնացող մարդկանց մի ազգի ցավերը, չես կարող լավ հասկանալ նրանց երաժշտությունը, կերպարվեստը, պոեզիան:

Երկանի կենտրոնում գտնվող օպերայի և բալետի շենքի մոտակայքը մարդկանց ժամանցի վայրերից է: Այստեղ–այնտեղ գտնվում են երա-

Ժիշտների, Ակարիչների, բանաստեղծների արձաններ, և այն վայել է արվեստ սիրող մարդկանց քաղաքին:

Երևի հիմա Հայաստանում աշուն է, և արահետները ուսկեցույն են դարձել:

ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ

Ալիկոն Հիկի

Հայաստանում գտնվելու ամբողջ ընթացքում ինձ բազմից հարցրել են, թե ինչն է Հայաստանում հետաքրքրություն առաջացրել իմ մեջ, կամ ինչու Հայաստան դեռ չայցելած՝ որոշեցի սովորել հայոց լեզուն: Հայաստանում հաճախ հարցնում են. «Որքանո՞վ եք վարձում բնակարանը», «Որքա՞ն է ծեր աշխատավարձը», իսկ ճապոնիայում առաջին հանդիպման ժամանակ այդպիսի հարցեր չեն տալիս, փորձում են խուսափել անձնական հարցերից, իսկ գլխավոր հարցերը ուղղված են մարդուն հասկանալուն և գուսապ բովանդակություն ունեն:

Առաջին անգամ Հայաստանի մասին ես իմացա Վիյամ Սարոյանի ստեղծագործություններին առնչվելով: ճապոնիայի բուհում դիպլոմային աշխատանքս գրեցի «Ամերիկյան գրողների պատմվածքների ժողովածու» գրքի հիման վրա: Այդ գրքում կար Սարոյանի պատմվածքը, որը գրված էր նրան բնորոշ կարծ ոճով: Յիշում են, որ Նոյի և Արարատ սարի մասին էր: Սարոյանը՝ որպես բավականին հայտնի գրող, քարտմանված էր ճապոններեն, նրա գրքերը կարելի էր գտնել գրադարաններում և գրախանութերում: «Bronz» նոր հրատարակչությունը տպագրել էր Սարոյանի հինգ գրքերից մի շարք, որոնք էին «Ին անուշ փոքրիկ», «Մայրիկ, ես քեզ սիրում են», «Փոքր երեխաներ», «Հայրիկ, որու խելագար ես», «Վենդին նյու Յորքում»: Ուրիշ հրատարակչությունների կողմից հրատարակված էին նույնպես «Մարդկային կատակերգություն», «Ին անունը Արամ է» Սարոյանի գլխավոր ստեղծագործությունները: ճապոններեն թարգմանված գործերը գրեթե բոլորը կարդալուց հետո ցանկություն առաջացավ կարդալ բնօրինակը: Քանի որ Սարոյանի ստեղծագործությունների մեջ անընդհատ հնչում էր հայունիքի կարոտի գաղափարը, սկսեցի կարդալ նաև մի գիրք Հայաստանի մասին:

Ճապոնիայում շատ են այն մարդիկ, որոնք ոչինչ զգիտեն Հայաստանի մասին: ճապոնիայի հեռուստատեսությամբ և թերթերում Հայաստանի մասին գրեթե ոչինչ չի ասվում, դեսպանատուն նույնպես չկա: Իմ ընկերների մեջ հազիվ գտնվեր մեկը հարյուր հոգուց, ով լսել էր Հայա-

տանի մասին: Ես էլ նրանց թվում էի, մինչև չկարդացի Սարոյանի ստեղծագործությունները:

Այսպիսով՝ 1997 թ. ամռանը ես առաջին անգամ այցելեցի Յայաստան: Ամերիկայի Միջիգանի համալսարանի նախաձեռնությամբ Երևանում հայոց լեզվին նվիրված դասընթացներ էին կազմակերպվել: Ես նույնպես մասնակցեցի այդ ծրագրին, որը տևեց երկու ամիս: Աշխատանքային օրերին առավոտից երեկո սովորում էինք հայերեն, իսկ ազատ օրերին հնարավորություն կար գնալ քաղաքից դուրս: Այդ տարիներին Երևանում երեկոյան մութ էր, և գրպանի լավտերիկը անհրաժեշտ էր: Փողոցում երթեկող մեքենաների ապակիների մեջ մասը ճարած էին, և ես կարծում էի, որ քաղաքը անվտանգ չէ: Սակայն որոշ ժամանակ անց, երբ ընտելացա քաղաքին և համոզվեցի, որ անվտանգ է, որոշեցի մնալ այստեղ ավելի երկար՝ ուսումն շարունակելու նպատակով:

Այսպես եղավ, որ ես 1998 թվականից սկսեցի այցելել ԵՊՀ հայոց լեզվի նախապատրաստական դասընթացներին, որն ավարտելուց հետո ընդունվեցի ԵՊՀ քանասիրականի ասպիրանտուրան, որն ավարտելուց հետո ճապոներեն եմ դասավանդել ոչ պետական կազմակերպությունում: Այսպիսով՝ ես ապրեցի Յայաստանում չորսուկես տարի՝ մինչև 2003 թ. մարտը: Իհարկե, երկարատև մնալու օտար երկրում շատ է տարբերվում կարծատև այցից: Երբ ես եկել էի Յայաստան Միջիգանի համալսարանի ծրագրով, պրոֆեսոր Վարդանյանի անձնական օգնության շնորհիկ մենք վարում էինք անհոգ կյանք, սակայն երբ այցելեցի երկրորդ անգամ ավելի երկար ժամկետով, ստիպված էի սեփական ուժերով կարգավորել իմ ապրուստը: Իրականում հեշտ չէր լինել արտասահմանցի ուսանող Յայաստանում, հաճախ ոգևորության անկում էի ապրում, լինում էին սրբային պահեր: Բայց հայոց լեզուն սովորելու ուժեղ ցանկությունը և օտար միայնակ արտասահմանցուն օգնելու պատրաստ մարդկանց առկայությունը ստիպում էին շարունակել մնալ Յայաստանում:

Նախապատրաստական դասընթացների ժամանակ իմ բաժնում սովորում էին նաև ուսանողներ Կանադայից, Չեխիայից, Անգլիայից, Ռումինիայից և այլ երկրներից: Կային նաև ուսանողներ, որոնք ավելի խորացված էին ուսումնասիրում Յայաստանը: Մեր դասախոսն էր նույն համալսարանի քանասիրական բաժնի շրջանավարտ Սոֆյա Բագումյանը, որն իմ ընտրած թեմայի վերաբերյալ ուղղություն էր տալիս: Յայաստանում մտադրություն չունեի այդքան խորը ուսումնասիրել հայ գրականությունը, սակայն լավ դասախոսների շնորհիկ իմ հայերենի գիտելիքները խորացնելու ցանկությունը ավելի ուժեղացավ:

Կարելի է ասել, որ հայ գրականությունը անծանոթ է ճապոնացուն: Ես, նույնպես, բացի Սարոյանից ուրիշ ոչ մի հեղինակի գործ կարդալու

հնարավորություն չունեի: Ինձ համար շատ հետաքրքիր էր XIX դ. վերջի, XX դ. սկզբի հայ գրականությունը: Իհարկե, դրանից ավելի վաղ դարաշրջանների գրականությունում ևս կան շատ հրաշալի գործեր, բայց ինձ՝ որպես արտասահմանցու, ավելի հեշտ է կարդալ արդի հայերենով: Հայոց գրականության մեջ ականավոր տեղ է գրադեցնում Հովհաննես Թումանյանը: Կարծում եմ, որ Թումանյանի ստեղծագործություններին առանձնահատուկ երանգ է տալիս տեղի խոսակցական բարբառը, այդ պատճառով էլ շատ ուրախ եմ, որ սովորեցի հայերենը: Թումանյանի ստեղծագործություններում կարևոր տեղ է գրադեցնում ոչ թե սյուժեի զարգացումը, այլ դիմացինի տրամադրության հասկանալը ու կարեկցանքը: Եենց այդ էլ մոտիկ է ճապոնացու սրտին: Բացի Թումանյանից, իմ կողմից շատ սիրվեցին երկու արևմտահայ գրող՝ Գ. Զոհրապն ու Դ. Վարուժանը: Հայկական բարբառներից մեկը հանդիսացող արևմտահայերենը ինձ համար շատ բարդ էր և դժվարությամբ էր առաջ գնում:

ԵՊՅ-ի վերապատրաստման բաժնում սովորում էին ընդամենը 13 ուսանող, որոնց հարուստ գիտելիքներով հայ գրականության ասպարեզում ես պարզապես հիացած եի: Դասընթացներին ամեն օր ուսանողներից մեկը պետք է ելույթ ունենար ընտրած թեմայով: Խմբում կային այնպիսի մարդիկ, որոնք շատ կարծ ժամանակահատվածում կարողանում էին պատրաստել հիանալի ելույթ: Ասպիրանտուրայի ավարտին պետք է գրեհնը թեկնածուական թեզ, որի թեման որոշում էինք ոչ թե ինքներս, այլ տրված ցուցակից ընտրում էինք այն թեման, որն ավելի հոգեհարազատ էր մեզ: Ես ընտրեցի Կոստան Զարյանի «Դարի պատմականությունը» թեման: Պատճառն էր ճապոնիայում տպագրված Յուկիո Ֆուօհինոյի «Ոլդերգության Հայաստան» հայոց պատմության գիրքը, որի վերջում տպագրված էր Կոստան Զարյանի կրծատ կենսագրությունը, այդ պատճառով դա ինձ ավելի մոտիկ էր: 2003 թ. վերադարձել եմ ճապոնիա՝ դրանով իսկ լրացնելով Հայաստանում իմ գտնվելու չորսուկես տարին: Իհարկե, այդ ժամանակահատվածում երևանի արտաքին տեսքը փոփոխություններ ունեցավ: Քաղաքում հայտնվեցին այնպիսի թանկ ավտոմեքենաներ, որոնց անգամ ճապոնիայում հազվադեպ կարելի է հանդիպել: Օպերայի շրջակայթից սկսած՝ քաղաքի ամբողջ կենտրոնում բացվեցին զանազան սրճարաններ և ռեստորաններ, գիշերային երևանը լուսավորվեց: Մյուս կողմից՝ աշխատավարձերի ուշացումն ու ցածր աշխատավարձը հասարակ մարդկանց թույլ չեն տալիս անգամ հիվանդանալու դեպքում դիմել բժշկի, որովհետև կան ուրիշ կարևոր ծախսեր, ինչպիսին են, օրինակ, լույսի կամ ուսման վարձը:

Վերադառնալով Հայաստանից ճապոնիա՝ զգացի, թե ինչքան հեռավոր և անհայտ երկիր է Հայաստանը ճապոնացիների համար: Ես

կարծում են որ կկարողանամ կրծատել այդ հեռավորությունը՝ ծանոթացնելով ճապոնացիներին հայկական մշակույթին:

Մշակութային հարաբերություն չէ՝ արդյոք այն, երբ հարգում և կարևորում ենք ուրիշ երկրի մշակույթը: Ես ցանկանում եմ, որ երկու երկների միջև կապերը ավելի ու ավելի զարգանան:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՅՈԿՈՂԱՍԱՅԻ ԱՐՏԱՍԱՐՍԱՆՑԻՆԵՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱԾՈՅ ԴԱՅԱՆԱ ԱԲԳԱՐԻ ՇԻՐՍԱԲԱՐԻ ՄՈՏ

Հիդեհարու Նակաձինա

Նախարան

Յայտնի է, որ Դայանա Աբգարը Յոկոհամայում օգնել է հայ փախստականներին՝ նրանց Ամերիկա տեղափոխվելու գործընթացին: Ոիչարդ Շովիաննիսյանի «Յայաստանի Յանրապետություն» (Richard Hovannisian, «The Republic of Armenia», V. 1-2, Univ. of California Press., 1971) գրքում ես կարդացի հետևյալ տողերը. «Յյուպատու Դահնա Աղարեկ Արգարը Յոկոհամայի իր գրասենյակը օգտագործում էր յանա վահանականների լեզալիզացնան և հետագայում Միացյալ Նահայ փախստականների լեզալիզացնան և հետագայում Նրանց՝ հանգներ տեղափոխելու համար, իսկ իր տունը տրամադրում էր նրանց՝ որպես ժամանակավոր ապաստարան»: Յետագայում NAAASR հրատակագիրը ժամանակավոր ապաստարանը: Յայաստանը հայության ժամանակավոր ապաստարանը՝ «Եվրոպական ինպերիալիզմի խաչին խաչված Յայաստանը»⁴³ գրքերը:

Երեք տարվա ընթացքում ես փնտորում էի այդ գրքերը, բայց ապարդյուն: Եվ ահա, 1988 թ. ճապոնիայի պաղամենտի գրադարանում գտաւ տկն Աբգարի «Խաղաղություն և ոչ խաղաղություն» գիրը (Yokohama, Japan Gazette Press, 1911), որի Վերջում նշվում էր հեղինակի հասցեն. Յոկոհամա, Յամատե թաղամաս, շենք 220:

Յիշում եմ 1988 թ. ամառային այդ չափազանց շոգ օրը: Ես իջա գնացքից Խսիկավանածի կանգառում և գնացի դեպի Շիկուրաուկա, որ դուրս գամ Յամատե թաղամասը: Յասկանում էի, որ հազիվ թե հասցեները անփոփոխ են մնացել, և այդ տունը գտնելը շատ դժվար կլինի,

43 The Murder of Armenia, Yokohama, Japan Gazette Press, 1916. On the Cross of Europe's Imperialism, Armenia Crucified, Yokohama, 1918.

բայց, այնուամենայնիվ, ուշադիր նայում էի փողոցի աջ կողմի շենքերի համարներին:

220 համարի տակ մի նորակառուց շենք էր, որում արտասահմանցիներ էին ապրում: Ես զանգահարեցի հարևան շենքի դուռը՝ ճապոնական ազգանունը ցուցանակին: Պարոն Կ-ի տան պատուհանները վերջապես լուսավորվեցին: Տան տերն ասաց, որ ծախսից վերջի տան բնակչները, հնարավոր է, որ ինձ տեղեկություններ տան: Ուրախացած շտապեցի այնտեղ և հանդիպեցի տան տիրուհու՝ տկն Լինա Դենտիխի հետ: Պարզվեց, որ տկն Դենտիխը ծնվել է 1923 թ., երբ տեղի էր ունեցել Կանքոյի մեծ երկրաշարժը: Մա ինձ պատմեց, որ Դայանայի ընտանիքը ընակվում էր ներկայումս պարոն Կ-ի տան տեղը գտնվող շենքում և հարևանությանը գտնվող ան մեկ առանձնատանը: Տկն Դենտիխը լավ հիշում էր, որ դարպասի վրա գրված էր 220 Ա համարը: Երեխա ժամանակ Դայանայի թոռնիկի խաղընկերուհին է եղել, բայց նրան գրեթե չի հիշում: Ես ենթադրեցի, որ Դայանայի շիրիմը պետք է որ գտնվի Յոկոհամայի արտասահմանցիների գերեզմանատանը, և տկն Դենտիխը բերեց գերեզմանատան քարտեզը՝ ազգանունների ցուցակով:

Սիամին մենք գտանք Արգար ազգանունը: 14 տեղամասում հանգչում են «Միքայել Ա. Արգարը, մահվան թիվը՝ 1906 թ. և Դայանա Ա. Արգարը, մահվան թիվը՝ 1937 թ.»: Բացատրության մեջ նշվում էր. «Արգարը եկել է ճապոնիա 1890 թ. և հիմնել է Կորե քաղաքում առևտրական ձեռնարկություն և Գրեյթ Իստերն հյուրանոցը»:

Քանի որ արդեն մքնում էր, ես շտապեցի արտասահմանցիների գերեզմանատուն: Թոփունչի անունով աշխատողը ուղեկցեց ինձ 14 տեղամաս, որտեղ Միքայելի և նրա ընտանիքի անդամների գերեզմանն էր: Ես տեսա Դայանայի տապանաքարը: Ազալիայի թփուտներում մարմար հաստ տապանաքարին հայերեն և անգլերեն փորագրված և արծի-ճով լցված էր հանգուցյալի անունը.

*«DIANA AGABEG APCAR.
October 17th 1859–July 8th 1937.
Out of Earth's Shadows unto Heaven's Glorious Day.
We Loved Her; but God Loved Her Best».*

Քանի որ Յոկոհամայի արտասահմանցիների գերեզմանատունը քաղաքի յուրատեսակ տեսարժան վայր է հանդիսանում, բնակչի մոտ նրա քարտեզի գտնվելը զարմանալի բան չէ (քարգմանչի մեկնաբանումը):

«ԴԻԱՆԱ ԱՂԱԲԵԿ ԱՊԿԱՐ»:

1857 թ. հոկտեմբերի 17–1937 թ. հուլիսի 8:

Հողի խավարից դեպի լուսի փառավոր օր:

Մենք սիրում էինք նրան, բայց Ասրբած ավելի էր սիրում»:

Ահա թե ինչ հաջողվեց ինձ գտնել ամառային արձակուրոի այդ վերջին օրը:

1. Օգնություն հայ գաղթականներին

Դայոց ցեղասպանության⁴⁴ հետևանքով առաջացած բազմաթիվ գաղթականների մի մասը, որոնք ծագումով Դայկական բարձրավաճակի արևելյան նահանգներից էին, փախան Ռուսաստան: Քանի որ Ռուսաստանը պառակտված էր հեղափոխությամբ և քաղաքացիական պատերազմով, գաղթականների մի մասը հատում էր այն Տրանսսիբիրյան երկարգծով՝ հասնելով Վլադիվոստոկ և չինական խարբին, որից հետո տեղափոխվում էին ճապոնիա և սպասում ԱՄՍ մեկնելու հնարավորությանը:

Դայանա Արգարը, որն իր ամուսնու առևտրական գործակալությունը օգտագործում էր որպես հյուպատոսական գրասենյակ, թույլ էր տալիս գաղթականներին բնակվել Յամատե թաղամասում գտնվող իր առանձնատանը, օգնում էր ժամանակավոր օթևան գտնել: 1919 թ. աշնանը նա նշանակվեց Դայաստանի Դանրապետության (1918–1920) հյուպատոսը ճապոնիայում: Որոշվել էր վստահել նրան միջազգային լիազորություններ: Իր երկիրը սարսափի ասպարեզ դարձրած Թուլքիայից հազարավոր կիլոմետր հեռավորության վրա, Ասիայի մյուս ծայրամասում ապրող Դայանա Արգարը օգնում էր գաղթականներին մուտքի թույլատվություն ստանալ, նավի և գնացքի տոմսեր հայթայել: Երբ ԱՄՍ-ի կառավարությունը խստացրեց ներգաղթի վերահսկողությունը, ընդունելով Զննութող–Շեյխի օրենքը, Դայանան, դրդված պատասխանատվության գգացումից, շարունակում էր հայերին ուղարկել ԱՄՍ բոլոր հնարավոր միջոցներով: Գաղթականների երեխաններին նա տեղավորում էր Յոկոհամայի դպրոցներ՝ սովորելու:

Ստորև բերում ենք մեջբերումներ գաղթականների բանավոր և գրավոր հիշողություններից՝ ըստ այն Գաբրիելյանի (Կալիֆոռնիայի

44 Դայոց ցեղասպանություն՝ 1915–1923 թթ. օսմանյան Թուլքիայի կառավարության և «Միացություն և առաջադիմություն» կուսակցության կողմից կազմակերպված հայերի լայնածավալ ջարդեր: Դաճախ անվանում են XX դարի սկզբի ցեղասպանություն (հետինակի մեկնարանում):

համալսարան) վկայության: Զորջ Կոշկարյանը (Կանադա) մինչ այժմ հիշում է ճապոներեն հաշիվը և պահում է թվականներով քարտեր, որոնք մնացել են ճապոնական դպրոցում վեց տարեկան հասակում սովորելու օրերից: Գաղթականներից ունաց ընտանիքները բաժանված են, ինչպես, օրինակ՝ Արիս Պետրոսյանը ստիպված սպասում էր Յոկոհամայում, իսկ նրա հայրը՝ Պոլ Միհազյանը, արդեն հաստատվել էր ԱՄՆ-ում և օգնում էր նրան նյութապես: Գաղթականներից մեկը, որն անվանում է Դայանային «Յոկոհամայի մեր փոքր մայրիկը», գրում է հիշողություններում. «Մենք 40 հոգի ենք: Վլադիկոստոկում նավ նստեցինք և ուղևորվեցինք Յոկոհամա»:

2. Նոր Զուլֆայի Յնդկաստան. Դայանայի ընտանիքը

Քիշենք՝ ինչ են ներկայացնում իրենցից այսպես կոչված «հայկական ուղիները», այսինքն՝ Դայկական բարձրավանդակից Դարավային Ասիա տանող ճանապարհները:

Դրանք ժամանակին մեծ առևտրական կենտրոն հանդիսացող Նոր Զուլֆա (Ներկայում՝ Պարսկաստանի Խսպահանն) քաղաքի հայ վաճառականների զցած ուղիներն են, որոնք ծգվում են մինչև Բոնքեյ, Մադրաս, Կալկաթա, Ռանգուն, Պինան (Ներկայում՝ Չորջթառուն), Սինգապուր, Բատավիա (Ներկայում՝ Ջակարտա), Սուլաբայա և ուրիշ ասիական քաղաքներ: Այդ նավահանգիստներում կարելի էր նաև նավերի համար քարածուխ ծեռք բերել:

Ի դեպ, հայերի տեղաշարժը Յնդկաստան սկսվել է XVII դարում: Դայ վաճառականները աջակցել են անգլիական և արևելահնդկական առևտրական ծեռնարկությունների զարգացմանը: 1560 թ. Խսկանդար անունով մի հայ վաճառական Մեծ մողոլների միապետության արքա Աքբարի (1556–1602) հրավերքով գալիս է Ագրա: Աքբարը շնորհեց նրան և նրա ժառանգներին առևտրի բացարձակ իրավունք: Յետազայում մի հայ կիմ՝ Մարիհան անունով, դարձավ Աքբարի կանանցից մեկը: Նրա մեծ քույր՝ հայտնի դեղագործ Զուլիհանան, կառուցեց 1562 թ. Ագրայում հայկական եկեղեցի, որը դարձավ Յնդկաստանուն առաջին հայկական եկեղեցին: Զուլիհանային թույլ տվեցին իիմնել եկեղեցիներ Ղելիում և Կալկաթայում: XVII դարից հետո, երբ հայերը ամրապնդեցին իրենց ազդեցությունը Մեծ մողոլների միապետության արքունիքում, նրանք, իիմնվելով Յնդկաստանի իրենց առևտրական տների վրա, հայացքն ուղղեցին դեպի Եվրոպական երկրներ և սկսեցին գործունեություն ծավալել այնտեղ: 1688 թ. հայկական վաճառատների և անգլիական Արևելահնդկական ընկերության միաձուլման հետևանքով հայերը

ստացան ամբողջ Հնդկաստանում առևտորի մենաշնորհ: Մեծ մողոլների միավետության իշխանությունները հաստատեցին, որ հայերի գործունեությունը իրենց երկրին վճար չի բերում, և թույլ տվեցին ընդլայնել առևտուրը՝ դուրս գալով միջազգային ասպարեզ, ինչը ծեռնոտու էր նաև մյուս գործընկերոջը՝ Անգլիային: XVIII–XIX դարերում հայերը իրականացնում էին թանկարժեք քարերի և ցորենի արտաքին և միջնորդական առևտուրը կամ էլ աշխատում էին որպես անգլիական ընկերությունների ներկայացուցիչներ:

Ահա այսպիսի միջավայրում էր ծնվել և մեծացել Դայանան:

3. Տեղափոխություն ճապոնիա

Դայանայի հայրը՝ Աղաբեկը, ինչպես և Արգարը, պարսկահայ էր: Դայանան ծնվել էր 1859 թ. հոկտեմբերին Ռանգունում (Բիրմա): Նա պարսկահայ Շովհաննես Աղաբեկի ընտանիքում յոթերորդ զավակն էր: XVIII դարում որոշ հայեր, որոնք հարստացել էին սուտակի առևտորի շնորհիվ, դարձել էին քարծոր զինվորական պաշտոնյաներ և խորհրդականներ Բիրմայի արքունիքում և դեկավար դեր խաղացին Բիրմայի միավորման գործում: Ռանգունում նույնպես կառուցվեց հայկական եկեղեցի: Շետագայում Դայանայի ընտանիքը մի խումբ հայերի հետ տեղախոխվեց Կալկաթա: Ի դեպ՝ XIX դարի երկրորդ կեսին Կալկաթայի բարձրագույն դատարանում ծառայող դատապահութանքում 33-ը հայեր էին: Նրանցին մեկն էլ Ալեքսանդր Աղաբեկյանն էր:

Դարություն Արգարյանը իր հերթին հիմնեց XIX դարում Messrs Arcar & Co ընկերությունը Բոմբեյում: 1830 թ. գործերի հանգամանքներով նա տեղափոխվեց Կալկաթա: Նույն ընտանիքի անդամ Միքայելը՝ ծնված 1855 թ. նոր Զուղայում, որը զբաղվում էր նավարկությամբ, միջազգային առևտորվ, ածխահանությամբ, հիմնել էր նաև Արևելյան Հնդկաստանից Շոլանդիա բրինձ առաքող ընկերություն: Միքայելը նույնպես տեղափոխվեց Կալկաթա՝ ընտանեական բիզնեսը շարունակելու, և այնտեղ ծանոթացավ Դայանայի հետ:

1889 թ. Դայանան ամուսնացավ Միքայել Արգարյանի հետ: Մեղրամիսը նրանք անցկացրին ծագող արևի երկրում: Այն ժամանակ էր որոշեցին ընդմիշտ տեղափոխվել ճապոնիա: 1890 թ. Ռանգունում ծնվեց նրանց առաջնեկը՝ Ռոզան (Գալուստյանի մայրը): 1891 թ. ընտանիքը տեղափոխվում է Կորե քաղաքը: Ծնվեց որդին՝ Միքայել-կրտսերը: Արգարյանը հիմնեց առևտորական հաստատություն, ծեռք բերեց Գրանդ Օթել հյուրանոցը: 1896 թ. ծնվեց երկրորդ աղջիկը՝ Ռութը: 1906 թ. Արգարյանը մահացավ: Դայանան վարում էր ամուսնու գործերը մինչ տղայի՝

Միքայել-կորտսերի չափահասության հասնելը, բայց որոշեց տեղափոխվել Յոկոհամա:

Լայնել Գալուստյանը՝ Ռոզայի որդին, որը ծնվել է 1913 թ. ճավայում, իսկ հինգ թվականում է ԱՄՆ-ում, հաստատում է, որ Յոկոհամայում ընտանիքը բնակվում է 220 շենքում, բայց Դայանան գնել է նաև հարեւան առանձնատունը՝ 219: Երբ Ռոզայի ընտանիքը (նրանց որդին՝ Լայնելը, 6 տարեկան էր) տեղափոխվեց ճավայից Յոկոհամա, ապա բնակվեց 220 Ա շենքում, իսկ մայրը մյուս երեխաների հետ տեղափոխվեց 219 շենք: Ուրեմն, հասցեն նշված էր ոչ ծիշտ, և 1923 թ. Կանքոյի մեջ երկրաշարժի ժամանակ քանդվել էր ոչ թե 220 Ա, այլ 219 շենքը:

1929 թ. Ռոզայի ընտանիքը տեղափոխվում է Սան Ֆրանցիսկո: Միքայելը ամուսնանում է, նրա դուստր Մարին մահանում է երեխս տարինում՝ 1923 թ.: 1937 թ. մահանում է նաև Դայանան: 1939 թ. Երկրորդ դուստրը՝ Ռութը, տեղափոխվում է ԱՄՆ: Այդիսով՝ նրանք կարողացան խուսափել Երկրորդ համաշխարհայինի ժամանակ ճապոնիայի դաժան ռմբակոծություններից: Բայց Միքայելի ընտանիքը շարունակում էր ապրել ճապոնիայում: 1941 թ., երբ սկսվեց պատերազմը ԱՄՆ-ի և ճապոնիայի միջև, Միքայելին համարեցին թշնամի և քանտարկեցին: Նույն թվին մահացավ շաքարախտից Միքայելի դուստր Ռորոտին: 1942 թ. Միքայելի ընտանիքը աքսորվեց Յոկոհամայից Կարուիձավա: Այնտեղ մյուս աքսորված արտասահմանցիների հետ միասին նրանք մնացին մինչև 1945 թ. ճապոնիայի կապիտուլացիան: 1945 թ. ամերիկյան ռմբակոծություններից այրվել էր նաև 220 Ա շենքը:

1945 թ. սեպտեմբերի վերջին Լայնել Գալուստյանը, որն աշխատում էր ամերիկյան ռմբակոծություններից հասցրած վնասը ուսումնասիրող կազմակերպությունում⁴⁵, գործուղվում է ճապոնիա աշխատանքային խնդիր կազմում: Այնտեղ նա փնտրում և գտնում է Միքայելին: Նույն թվի նոյեմբերի կեսին, վերադառնալով ԱՄՆ, նա սկսում է նախապատրաստել Միքայելի տեղափոխությունը ԱՄՆ: Միքայելի ընտանիքը մեկնեց Սան Ֆրանցիսկո 1945 թ. վերջում:

1984 թ., երբ Լայնել Գալուստյանը, այժմ՝ որպես Bechtel ֆիրմայի ներկայացուցիչ, գործուղվել էր Չինաստան, վերադարձի ճանապարհին այցելեց Յոկոհամա և եղավ արտասահմանցիների գերեզմանատանը:

45 Կազմակերպությունը գրադպում էր քանդված գործարանների, տների գրանցմանը, հավաքում էր ականատեսների ցուցմունքները՝ հասցրած վնասը հաշվարկելու համար:

4. Հայաստանի մասին Դայանայի պատկերացումները

Դիշենք՝ ինչ պատմական իրադարձություններ են տեղի ունեցել XIX դարի երկրորդ կեսին:

1857 թ. Անգլիան ճնշեց սիփահների ապստամբությունը, իսկ հաջորդ՝ 1858 թ. նա վերացրեց Արևելահնդկական ընկերությունը և հոչակեց Յնդկաստանը իր գաղութներից մեկը:

1879 թ. սկսված և 81 տարի տևած երկրորդ աֆղանական պատերազմի ընթացքում Անգլիան շարունակ փորձում էր գցել Աֆղանստանը իր պրոտեկտորատի տակ: Ապա՝ 1885–1886 թթ., Անգլիային հաջողվեց Յնդկաստանին միացնել Բիրման:

Անկասկած, այդ իրադարձությունները իրենց ազդեցությունն ունեցան Դայանայի միջավայրի վրա նրա մանկության և պատանեկության տարիներին: 1900 թ.՝ դարասկզբին, նա քառասուն տարեկան էր: Նա լավ գիտեր հայերեն, անգլերեն, Յնդկաստանի երկու լեզու, ճապոնեն, հոգվածներ էր գրում այդ լեզուներով:

Դայանայի աշխարհայացքի ծևավորնան վրա մեծ դեր խաղացին հակամագերիալիստական տրամադրությունները, Դայաստանի ազատագրական շարժումը, հայ եկեղեցու հանդեպ պատած խոր հարգանքն ու նվիրվածությունը, մարդասիրական և հումանիստական իդեալները: Նա իր աչքերով տեսել էր այն չարիքը, որ բերեց Յնդկաստանի ժողովրդին անգլիական տիրակալությունը, տեսել էր Բիրմայում անգլիական բանակի դամանությունները: Ենտևաբար, Թուրքիայի կառավարության բակողմից որդեգրած՝ փոքր ժողովուրդների հանդեպ բռնակալական քաղաքականությունը բողոքի զգացում էր առաջացնում նրա մեջ: Դայանան, լինելով Խոտալիայի և Գերմանիայի ժողովուրդների՝ հանուն միավորնան շարժման ականատեսք, ուշիուշով հետևում էր Թուրքիայում հայերի ազատագրական շարժման զարգացմանը: Նրա քաղաքական հայացքները, միահյուսվելով հոգևոր արժեքների հետ, ծևավորվեցին մարդասիրական գաղափարների ներքո:

